



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2514



84

4-46

15

2011

84
4-46

ԺԻՒԼ ՎԵՌՆ

ՄԵՒ-ՋՆԴԿԱՍՏԱՆ

ՄԵՊԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏԱՆ
Ղալաթիա, Սեղոս խան, Թիւ 5

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼՆԱՆ

معارف نظارت جليله سنك رخصتنامه سيده
طبع اولتمشدر .

2003

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՑ

1889



ՍԵՒ-ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՊԼՈՒՆ ԱՌԱՋԻՆ

— 0 —

ԵՐԿՈՒ ՀԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Պրն. ճ. Բ. Սդար, Ճարտարապետ,
30, Գէնընկէյդ
Էտիմպուրկ .

«Եթէ պարոն ձէյմա Սդար հաճի վա-
ղը երթալ Ապրիլի աճխահանքը, Տո-
չարդի գուբին Եարօու հորը, իրեն հա-
մար կարեւորութիւն ունեցող զեկոյց մը
պիտի լինի իրեն :

«Հարրի Ֆորա, նախկին գործավար
Սիմոն Ֆորաի որդին, օրն ի բուն պիտի
սպասէ պարոն ձէյմա Սդարի, Գէլէնաբրի
կայարանին մէջ :

«Կը խնդրուի ծածուկ պահել այս հը-
րաւէրը »

Աւասիկ այն նամակը զոր ձէյմա Սդար
ստացաւ առաջին թղթաբերով 18. դեկտ-

56561-ահ



1936-70
9-

3 Թուականաւ : Նամակը կը կրէր կնիքն Ապըրֆոյլի Թղթատարական գրասենեակէ կոմսութիւն Սղըրլինկի , Սկովտիա :

Ճարտարապետին հետաքրքրութիւնը ջերմապէս վառեցաւ : Մտքէն իսկ չանցուց թէ այս նամակը կրնար խաղ մը լինիլ : Ի վաղուց անտի կը ճանչէր զՍիմոն Ֆորտ , Ապըրֆոյլի ամխահանքաց գործադարներէ մին . ինքն , ձէյմս Սղար , քսան տարի անօրէնն եղած էր այդ ամխահանքերուն :

Ձէյմս Սղար պնդակազմ մարդ մ'էր , որ հազիւ քառասուն տարեկան կ'երեւէր , թէեւ յիսուն եւ հինգը թեւակոխած էր : Էտիմպուրկի վաղեմի ընտանեաց միոյն կը վերաբերէր , եւ նորա ամէնէն ականաւոր անդամներէ մին էր : Իր աշխատութիւնք պատիւ կը բերէին այն ճարտարապետաց արժանայարգ խմբին որք տակաւ առ տակաւ կ'սպառեն Մեծին Բրիտանիոյ ստորերկրեայ ամխահանքերն , ինչպէս ի Գարտիֆ և Նիւքեասլ , այնպէս եւ Սկովտիոյ ստորին կոմսութեանց մէջ : Սակայն Սղարի անունն ընդհանուր յարգանք վաստկած էր մասնաւորաբար Ապըրֆոյլի այն խորհրդաւոր ամխահանքերուն խորն , որք սահմանակից են Ալլօայի ամխահանքերուն եւ կը գրաւեն Սղըրլինկի կոմ-

սութեան մէկ մասը : Հոն անցած էր իւր թէ բոլոր կեանքը : Բաց աստի , ձէյմս անդամ էր սկովտիացի հնագիտաց Բնկերութեան , ոյր նախագահն անուանուած էր : Նմանապէս «Արքայական կաճառին» ամէնէն գործօն անդամներէն մին էր , եւ Էպիսկոպոս Էմմաիս յաճախ կը հրատարակէր նշանաւոր յօդուածներ նորաստորագրութեան ներքեւ : Ինչպէս կը տեսնուի , այն գործնական գիտուններէ մին էր նա որոց կը պարտի Անգլիա իր բարօրութիւնը : Բարձր դիրք մ'ունէր Սկովտիոյ այդ հին մայրաքաղաքին մէջ , որ ոչ միայն Ֆիզիքական , այլ և բարոյական տեսակէտով ալ արժանացած է «հիւսիսի Աթէնքն» անուան :

Յայտնի է թէ Անգլիացիները շատ նշանական անուան մը տուած են իրենց ընդարձակ ամխահանքերուն ամբողջութեան : «Սեւ-Հնդկաստան» կը կոչեն զայնս իրաւամբ եւ այդ Հնդկաստանը թերեւս Արեւելեան Հնդկաստանէն աւելի նպաստած է Մեծին Բրիտանիոյ զարմանահարչ հարստութեան աճեցման : Հոն , արդարեւ , հանքահաններու ամբողջ ժողովուրդ մը գիշեր ցերեկ կ'աշխատի բրտանական հողէն հանելու ածուխն , այդ թանկագին վառելանիւթն , անհրաժեշտ տարր ճարտարական կենաց :

Այդ թուականին, անխահանքերուն սպառման համար մասնագէտներու նշանակած պայմանաժամը դեռ շատ հեռու էր, և մերձաւոր ապագայի մէջ չէր վախճուեր հանքածուխի ներդրութենէ: Դեռ ընդարձակապէս շահագործելու էր երկուց աշխարհաց անխահանքերը: Գործարանները, շոգեկառքերը, շոգենաւերը, կազի գործարաններն և, հանքային վառելանիւթի պակասութեան մէջ գտնուելու մօտ չէին: Միայն թէ, սպառումն այնքան շատցած էր այդ վերջին տարիներն, որ քանի մը խաւեր հատած լմնցած էին մինչեւ իրենց ամէնէն բարակ երակներն: Այդ հանքերն, այժմ երեսի վրայ թողուած լինելով, վայրապար կը ծակէին և կ'ակօսէին հողն իրենց լքեալ հորերով և ամայի ներքնուղիներով:

Ճիշդ այդ վիճակին մէջն էին Ապըրֆոյլի անխահանքերը:

Տասն տարի առաջ, վերջին սակառին դուրս հանած էր այս հանքին անուխի վերջին տակառաջափը: «Ներսի» (*). կազմածները, ներքնուղեաց երկաթուղիներուն վրայ կառքերը քաշելու յատուկ

(*) Հանքի մը շահագործումը կը բաժնուի «ներսի» եւ «գուրկի» աշխատութեանց: Ոմանք խորը կը կատարուին, այլք հողն երեսը:

մեքենայներ, կառքեր, ստորերկրեայ թըրամուէյներ, հորերուն մէջ բանող վանդակներ, խողովակներ որոց ձնշեալ օդը կը բանեցնէր ծակիչ գործիներն, — ի մի բան, ամէն ինչ որ շահագործման կը ծառայէր, փոսերուն ալքերէն հանուած և հողին երեսը թողուած էր: Սպառած անխահանքը կը նմանէր անդրջրհեղեղեան խօլական մեծութեամբ գազանի մը դիակին, որուն կենսական զանազան գործարաններն հանելով՝ պարզապէս կմախքը թողած են:

Այդ գործիներէն մնացած էին միայն փայտեայ երկար սանդուղներ, որոցմով հանքածուխին խորերը կ'երթցուէր Եարօուի հորէն. այս միակ հորն էր ուսկից կը մտցուէր Տոշարդի գուրկին ստորին ներքնուղիներն, աշխատութեանց դադարումէն ի վեր:

Դուրսն, արտաքին աշխատութեանց յատկացեալ շէնքերը տակաւին ցոյց կուտային այն տեղն ուր այդ գուրկին հորերը փորուած էին. այդ գուրկն, ինչպէս նաև բոլոր միւս լքեալ գուրկերն, ամբողջութիւնը կը կազմէին Ապըրֆոյլի անխահանքերուն:

Տխուր օր մը եղաւ այն յորում, վերջին անգամը լինելով, հանքահանները

Թողուցին հանքն, որու մէջ ապրած էին այնքան տարիներ:

Ճէյմս Սդար ճարտարապետն ի մի վայր ժողոված էր այս հազարաւոր բանւորներն, որք անխահանքին ժրջան և քաջարի ժողովուրդը կը կազմէին: Գործավարք, կառավարք, կառուղիք, հիւսնք, ռահվիրայք, երկաթագործք, ատաղձագործք, ամէնքն ալ, կանայք, տղայք, ծերունիք, ներսի և դուրսի գործաւորք, հաւաքուած էին Տոչարդի գուբին լայնածաւալ գաւթին մէջ, որ երբեմն առլըցեալ էր հանքածուխով:

Այդ արի մարդիկը, զորս կենաց կարիքները պիտի ցրուէին դէս ու դէն, — իրենք որք, երկար տարիներ, յորդուոց որդի յաջորդած էին հնամեայ Ապլըրֆոյլի մէջ, — առ յաւէտ զայն թողլէ առաջ կ'ըսպասէին ճարտարապետին հուսկ յետին հրաժեշտին: Ընկերութիւնն իբր վարձատրութիւն իրենց բաշխած էր նոյն տարւոյ շահն: Իրօք, դոյզն բան մ'էր այդ, որովհետեւ հանքին արտադրութեան հասոյթը շատ քիչ աւելի եղած էր շահագործման ծախքերէն: Սակայն այդու պիտի կրնային սպասել մինչեւ որ այլուր գործ մը գտնէին, թէ՛ շրջակայ անխահանքաց և թէ՛ կոմսութեան ազա-

րակներուն կամ գործարաններուն մէջ:

Ճէյմս Սդար յոտին կանգնած էր, ընդարձակ յարկին դրան առջեւ, ուր այնքան ընդերկար բանած էին անխահանքի հորերուն շոգեշարժ հզօր մեքենայները:

Միմոն Ֆորտ, Տոչարդի գուբին գործավարն, որ այն ատեն յիսուն եւ հինգ տարեկան էր, եւ ուրիշ քանի մը վարպետներ շրջապատած էին զինքը:

Ճէյմս Սդար գլխարկն հանեց: Հանքահանները, գլուխնին բաց, խոր լուծիւն մը կը պահէին:

Այս հրաժեշտի տեսարանը սրտայոյզ հանգամանք մ'ունէր, որ լի էր վեհութեամբ:

«Բարեկամներս, ըսաւ ճարտարապետն, իրարմէ բաժնուելու վայրկեանն եկած է: Ապլըրֆոյլի անխահանքերն, որք, այնքան տարիներէ ի վեր զմեզ ի մի ժողոված էին միահամուռ աշխատութեան մը մէջ, այժմ սպառած են: Մեր խուզարկութիւնք չեն կրցած երեւան հանել նոր երակ մը, եւ գետնածուխի վերջին կտորն հանուեցաւ Տոչարդի գուբէն:»

Եւ, ի հաստատութիւն իր խօսքին, Ճէյմս Սդար ցոյց կուտար հանքահաններուն անուխի զանգուած մը որ պահուած էր սակառիի մը խորը:

«Այս գետնածուխի կտորը, բարեկամներս, շարունակեց ձէյմս Սդար, ածխահանքին երակաց մէջ շրջաբերող արեան վերջին կաթիլն է գողցես: Պիտի պահենք զայն, ինչպէս պահած ենք հարիւր յիսուն տարի առաջ Ապլըրֆոյլի հանքերէն հանուած գետնածուխի առաջին կտորն: Այս երկու կտորներուն մէջտեղ, աշխատաւորներու շատ սերունդներ յաջորդած են միմեանց մեր փոսերուն մէջ: Այժմ, լնացած է: Ձեր ճարտարապետին ձեզ ուղղած վերջին խօսքերն հրաժեշտի խօսքեր են: Դուք հանքէն ապրեցաք, որ ձեր ձեռքին տակ պարպուեցաւ: Աշխատութիւնը դժնդակ եղաւ, սակայն ո՛չ ձեզ համար անօգուտ: Մեր մեծ ընտանիքը պիտի ցրուի, եւ հաւանական չէ որ ապագայն նորէն ի մի հաւաքէ անոր ցանուցիր անդամները: Սակայն մի՛ մոռնաք թէ երկար ատեն միասին ապրեցանք, եւ թէ, Ապլըրֆոյլի հանքահաններուն քով, պարտականութիւն մ'է միմեանց օգնելը: Ձեր նախկին պետերն ալ չպիտի մոռնան զայդ: Երբ մարդ միատեղ աշխատած է, չկրնար օտարական լինիլ իրարու համար: Պիտի հսկենք ձեր վրայ, եւ ուր որ երթաք իբր պարկեշտ մարդիկ, մեր յանձնարարութեամբ պիտի օգնենք ձեզ: Ու-

րեմն երթաք բարո՛վ, բարեկամներս, և թող երկինք օգնական լինի ձեզ:»

Ձայս ըսելով, ձէյմս Սդար թեւերուն մէջ սեղմեց ածխահանքին ամէնէն ծեր գործաւորն, որուն աչերը թրջած էին արցունքով: Յետոյ, զանազան գուբերու գործավարներն եկան սեղմել ճարտարապետին ձեռքը, մինչ հանքահանները կ'երերցնէին իրենց գլխարկն եւ կը գոչէին.

«Մնաք բարո՛վ, ձէյմս Սդար, մեր պետն եւ բարեկամը:»

Այս հրաժեշտի ողջոյններն անկորնչելի յիշատակ մը պիտի թողուին այս բոլոր քաջարի սրտերուն մէջ: Սակայն, քիչ քիչ, հարկ եղաւ որ այդ ժողովուրդը տխրութեամբ մեկնի ընդարձակ գաւիթէն: Ձէյմս Սդարի շուրջ դատարկութիւնը տիրեց: Տոչարդի գուբը տանող արահետներուն սեւ հողը վերջին անգամ մը թընդաց հանքահաններուն ոտից ներքեւ, և լուռութիւն յաջորդեց այն մեծաշունդ ոգեւորութեան որ մինչեւ ցայն վար լցուցած էր Ապլըրֆոյլի ածխահանքը:

Միակ մարդ մը մնացած էր ձէյմս Սդարի մօտ:

Սիմոն Ֆորտ գործավարն էր այդ: Իրեն մօտ կեցած էր տասնեւհինգ տարեկան պարմանի մը, իր Հարրի գաւակն,

չոր արդէն քանի մը տարիէ ի վեր կը պարապէր ներսի աշխատութեանց :

Ճէյմս Սդար եւ Սիմոն Ֆորտ կը ճանչին եւ կը յարգէին զիրար :

— Մնաք բարով, ըսաւ ճարտարապետն :

— Երթաք բարով, պատասխանեց գործավարը, կամ մանաւանդ թող տուէք որ աւելցնեմ. կրկին տեսութիւն :

— Այո՛, կրկին տեսութիւն, Սիմոն, յարեց Ճէյմս Սդար : Գիտէք թէ միշտ գոհ պիտի ըլլամ զձեզ տեսնելով եւ ձեզ հետ խօսելով մեր վաղեմի Ապլըրֆոյլի անցելոյն վրայ :

— Գիտեմ, պարոն Ճէյմս :

— Իմ էտիմպուրկի տունս բաց է ձեր առջեւ :

— Էտիմպուրկ, հեռու է, պատասխանեց գործավարը գլուխն երերցնելով : Այո՛, հեռու է Տոչարդի գուրէն :

— Հեռո՞ւ, Սիմոն : Ուրեմն դուք ո՞ր պիտի հաստատուիք :

— Ծիլդ հոս, պարոն Ճէյմս : Չպիտի թողունք հանքը, մեր հին ստնտուն, որովհետեւ կաթն հատած է, կինս, զաւակըս, եւ ես այնպէս մը պիտի կարգադրենք որ հաւատարիմ մնանք իրեն :

— Ուրեմն մնաք բարով, Սիմոն, պատասխանեց երկրաչափն, որուն ձայնն

յակամայս կը մատնէր իր սրտայուզութիւնը :

— Ո՛չ, կը կրկնեմ ձեզ ի տեսութիւն, պարոն Ճէյմս, պատասխանեց գործավարըն, և ո՛չ երթաք բարով : Կ'երդնում որ Ապլըրֆոյլ վերստին պիտի տեսնէ զձեզ :

Ճարտարապետը չուզեց այս վերջին պատրանքը խլել գործավարէն : Ողջագուրեց զպատանին Հարրի, որ իրեն կը նայէր իր խոշոր յուզեալ աչքերով : Վերջին անգամ մը սեղմեց Սիմոն Ֆորտի ձեռքըն եւ վերջնապէս բաժնուեցաւ ամխահանքէն :

Աւասիկ ի՛նչ պատահած էր տասն տարի առաջ. սակայն, հակառակ գործավարին յայտնած փափաքին՝ որ մը վերստին զինքը տեսնելու, Ճէյմս Սդար ա՛լ իմացած չէր անոր խօսքը :

Եւ տասն տարուան բաժանումէ ետքն էր որ իրեն կը հասնէր Սիմոն Ֆորտի այս նամակն, որ կը հրաւիրէր զինքն անյապաղ ձեռք առնուլ Ապլըրֆոյլի հին ամխահանքերուն ճամբան :

Իրեն համար կարևորութիւն ունեցող զեկոյց մը, ի՞նչ էր արդեօք : Տոչարդի գո՛ւրն, Եարօուի հո՛րն : Անցելոյն ի՛նչ յիշատակները կ'արթնցնէին այս անուանք իր մտքին մէջ : Այո՛, լաւ ժամանակն էր

այն, աշխատութեան եւ մաքառման ժամանակն, — իր ճարտարապետի կենաց լաւագոյն ժամանակն:

Ճէյմս Սդար դարձեալ կը կարդար նամակն: Ամէն կողմ կը դարձնէր զայն: Իրօք, կը ցաւէր որ Սիմոն Ֆորտ տողմը աւելցուցած չէր: Կը նեղանար անոր այդչափ լակոնական եղած լինելուն դէմ:

Կարելի՞ էր ուրեմն որ ծերունի գործավարն երեւան հանած ըլլար շահագործելի նոր երակ մը: Ո՛չ:

Ճէյմս Սդար կը յիշէր թէ ի՛նչ մանրախոյզ հետազօտութեամբ կրկտուած էին Ապլըրֆոյլի անխահանքերը, նախ քան վերջնական դադարումն աշխատութեանց, ինքն անձամբ կատարած էր վերջին դրածակութիւնները (sondage) առանց նոր հանք մը գտնելու այդ հողին մէջ որ տարապայման շահագործմամբ մը սպառած լինցած էր Մինչեւ իսկ փորձած էին հանքածուխի գետինը փնտռել այն խաւերուն ներքեւ որք սովորաբար իրմէ ստորին են, ինչպէս տէվոնեան կարմիր աւազաքարը, սակայն առանց արդիւնք մը ձեռք բերելու: Հետեւաբար Ճէյմս Սդար թողած էր անխահանքըն այն բացարձակ համոզումով թէ ա՛լ վառելանիւթի ոչ մէկ կտոր կը պարունակէր:

«Ո՛չ, կը յեղյեղէր ինքնին, ո՛չ: Ի՞նչպէս կարենամ ընդունիլ որ իմ խուզարկութիւններէս խուսափածը Սիմոն Ֆորտի յայտնուած ըլլայ: Այսու հանդերձ, ծերունի գործավարը շատ լաւ գիտէ թէ աշխարհի մէջ միակ բան մը կարեւորութիւն ունի ինձ համար, եւ ինձ կ'ուղղէ այս հրաւերը, զոր պարտիմ ծածուկ պահել, Տոչարդի գուբն երթալու . . . »

Ճէյմս Սդար միշտ այդ կէտին կը վերադառնար:

Միւս կողմէ, ճարտարապետը կը ճանչէր զՍիմոն Ֆորտ իբր ճարտար հանքահան մը, որ մասնաւորապէս օժտեալ էր արհեստին բնազդմամբ: Ապլըրֆոյլի անխահանքերուն լքման թուականէն ի վեր տեսած չէր զնա: Չէր գիտեր իսկ թէ ծերունի գործավարն ի՛նչ եղած էր: Կ'անգիտանար թէ ինչո՛վ կը պարապէր նա, մինչեւ իսկ թէ ո՛ւր կը բնակէր իր կնոջն եւ զաւկին հետ: Իր գիտցածն այն էր թէ իրեն ժամադրութիւն տըրուած էր Եարօուի հորն, և թէ Հարրի, Սիմոն Ֆորտի որդին, Գէլլէնտըրի կայարանին մէջ պիտի սպասէր նմա յաջորդօրըն ի բուն: Ակնբերեալաբար, խնդիրը Տոչարդի գուբն այցելելու վրայ էր:

«Պիտի երթա՛մ, պիտի երթա՛մ» ըսաւ

ձէյմս Սդար, որ կ'զգար թէ իր գերբ-
ռութիւնը կ'աւելնար՝ ցորչափ ժամը կը
յառաջանար:

Այդ արժանայարգ ճարտարապետը կը
վերաբերէր այն կրքոտ մարդոց դասա-
կարգին, որոց ուղեղը միշտ բորբոքման
մէջ է, իբր հրաշէկ բոցի մը վրայ բռնուած
խալկին: Խալկիներ կան որոց մէջ գա-
ղափարները կ'եռան խոշոր պղպջակներով,
ուրիշներ յորս հանդարտօրէն կը քթքթան:
Արդ, այդ օրը, ձէյմս Սդարի գաղափար-
ները կ'եռային հրատոչոր:

Բայց, այդ միջոցին, շատ անակնկալ
պատահար մը տեղի ունեցաւ: Պաղ ջրոյ
կաթիլն եղաւ այս, որ վայրկեանբար
պիտի խտացնէր այդ ուղեղին բոլոր գո-
լորշիները:

Արդարեւ, երեկոյեան ժամ վեցին, եր-
րորդ թղթաբերով, ձէյմս Սդարի սպա-
սաւորը նոր նամակ մը բերաւ:

Այդ նամակը դրուած էր կոշտ պա-
հարանի մը մէջ որուն հասցէն յայտնի նը-
շան մ'էր գրչի գործածութեան անվարժ
ձեռքի մը:

Ձէյմս Սդար պատուեց այդ պահարա-
նը: Թղթի կտոր մը միայն կը պարունա-
կէր այն, ժամանակէն դեղնած, եւ որ
անգործածելի հին տոմարէ մը փրցուած
կը թուէր:

Այդ թղթին վրայ միակ պարբերու-
թիւն մը կար, սապէս խմբագրուած.

«Ձէյմս Սդար ճարտարապետն ա'լ
պէտք չունի անհանգիստ ըլլալու, քանի
որ Սիմոն Ֆորտի նամակն այժմ աննպա-
տակ է:»

Եւ ստորագրութիւն չկար:

ԳԼՈՒԽ Թ.

ՃԱՄԲԱՆ

Ձէյմս Սդարի գաղափարաց ընթացքն
յեղակարծուստ կասեցաւ, երբ կարգաց
այդ երկրորդ նամակն որ հակասական էր
առաջնոյն:

«Ի՞նչ կը նշանակէ այս» հարցուց ինք-
նին:

Ձէյմս Սդար վերստին ձեռք առաւ
կիսովին պատուած պահարանը: Միւս նա-
մակին պէս Ապրըֆոյլի նամակատան կնի-
քը կը կրէր: Ուրեմն Սդարլինկի կոմսու-
թեան նոյն կէտէն մեկնած էր: Ակներե-
ւաբար, ծերունի հանքահանը չէր զայն
գորող: Սակայն, ակներեւաբար ալ, երկ-
րորդ նամակին հեղինակը գիտէր գործա-
վարին գաղտնիքն, որովհետեւ բացորո-
շապէս ի դերեւ կը հանէր ճարտարապե-

տին եղած հրաւերն Եարօուի հորը երթալու :

Ուրեմն ճշմարիտ էր թէ այդ առաջին զեկոյցն աննպատակ էր այժմ : Կ'ուզէի՞ն արգելուլ զձէյմա Սդար որ անհանգիստ չլինի , կա՛մ ապարդիւն կերպով , կա՛մ օգտակարապէս : Կամ մանաւանդ չարամիտ դիտաւորութիւն մը չկա՞ր այդ տեղ ի դերեւ հանելու Սիմոն Փորտի ծրրադրերը :

Ձէյմա Սդար ճիշդ զայս մտածեց երկար խորհրդածութենէ յետոյ : Երկուց նամակաց միջեւ գտնուող այդ հակասութիւնն աւելի ջերմ փափաք մը ծնոյց յինքեան Տոչարդի գուրն երթալու : Մնաց որ , եթէ այս ամէնուն մէջ խաղ մը կար , լաւագոյն էր անձամբ անձին ապահով լինիլ այդ մասին : Սակայն ձէյմա Սդարի այնպէս կուգար որ աւելի պատշաճ էր հաւատ ընծայել առաջին քան երկրորդ նամակին , — այսինքն Սիմոն Փորտի պէս մարդու մը խնդրանաց քան նորա անանուն հակառակորդին խորհրդոյն :

« Իրօք , քանի որ կ'ուզեն ներգործել որոշմանս վրայ , ըսաւ ինքնին , ըսել է որ Սիմոն Փորտի զեկոյցը ծայրագոյն կարեւորութիւն մ'ունի : Վաղը , պիտի գըտնուիմ որոշեալ ժամադրութեան : »

Երեկոյին , ձէյմա Սդար իր մեկնման պատրաստութիւնները տեսաւ : Ըստ որում կրնար պատահիլ որ իր բացակայութիւնը քանի մը օր տւէր , նամակաւ մը ծանոյց « Արքայական կաճառին » նախագահ Սըր Ու. Էլֆիսդընի թէ չպիտի կրնար ներկայ գտնուիլ Ընկերութեան յառաջիկայ նստին : Ինքզինքն ազատեց նաեւ երկու երեք գործերէ որք ամբողջ շաբաթն իր սարապմունքը պիտի լինէին : Ապա , իր սպասաւորին հրամայելէ յետոյ որ ուղեւորութեան սնտուկ մը պատրաստէ , պառկեցաւ այնպիսի յուզման մը ներքեւ որ թերեւ գործին պէտք եղածէն աւելի էր :

Հետեւեալ օր , ժամ հինգին , ձէյմա Սդար անկողնէն դուրս կը նետուէր , տաք զգեստներ կը հագնէր , — որովհետեւ սառուցիկ անձրեւ մը կը տեղար , — եւ իր Գէնընկէյդի տունէն կը մեկնէր երթալու ի Կրէնդըն-Քիլըր չոգենաւ նստելու , որ , երեք ժամէն , Փորթհ գետէն վեր կ'ենէն մինչեւ Սդըրլինկ :

Թերեւս առաջին անգամը լինելով , ձէյմա Սդար , Գէնընկէյդէն (*) անցած ատեն , գլուխը չդարձուց դիտելու համար

(*) Գլխուրէ անուանի փողոց հին Էտիմպուրի :



Հողերու տը , Սկովտիոյ նախկին վեհապետներուն այդ պալատը : Պալատան դրան առջեւ շնչմարեց պահակներն որք սկովտիական վաղեմի զգեստն հագած են, կանաչ կերպասէ վտաւակ , քառեակներով վերարկու և այծի երկարաստեւ մորթէ մախալ՝ զիստին վրայ կախուած : Թէեւ մոլեռանդ սիրահար էր Վալթէր Սգոդի , որպէս է հնոյն Կալեդոնիոյ ամէն ճշմարիտ գաւակ , ճարտարապետան ակնարկ մը իսկ շնեռեց այն պանդոկին ուր իջաւ Ուալվորլի և յորում դերձակը բերաւ նմա այն պատերազմական հռչակաւոր զգեստն որուն վրայ այնքան միամտաբար կ'սքանչանար Յլոքհարդ այրին Նոյնպէս չողջունեց այն փոքրիկ վայրն ուր լեռնականք սարպեցին իրենց հրացանները , Թեկնածուին յաղթութենէն յետոյ , Յլոռա Մաք Իվորը սպաննելու վտանգն աչտընին առնելով : Բանտին ժամացոյցը փողոցին մէջ կ'երկարէր իր տխրատեսիլ չրջանակը : Հոն միայն նայեցաւ՝ ապահով լինելու համար թէ չպիտի փախցնէր մեկնման ժամը : Խոստովանելու է նաեւ թէ Նէլէբը-Պոուի մէջ շնչմարեց ձոն ֆնոքս մեծ բարենորոգչին տունը , միակ մարդն զոր Մաուի Սդիւարդի ժպիտները չիրցան հրապուրել : Հապա միայն , ժողովրդական Հայ-Սդրիդ փողոցին ճանբան բռնելով ,

որ այնչափ մանրակրկիտ կերպով նկարագրուած է Աբբոյն վէպին մէջ , շուտաքայլ յառաջացաւ դէպի Պրիճ-Սդրիդի վիթխարի կամուրջն որ կը միացնէ Էտիմպուրկի երեք բլրակները :

Քանի մը վայրկեան յետոյ , ձէյմս ըՍդար կը հասնէր երկաթուղւոյ կայարանն , եւ կառախումբը կէս ժամ յետոյ զինքը կը հանէր ի Նիւ-Ղէյվըն , ձկնորսաց սիրուն գիւղ , ժամ մը հետի լէյթէ , որ Էտիմպուրկի նաւահանգիստը կը կազմէ : Մակընթացութիւնը կը ծածկէր յայնժամ սեւորակ և ժեռուտ ծովափունքը : Առաջին կոհակները կը թրջէին շղթայներով բռնուած թումբ մը : Չախ կողմն , Էտիմպուրկի և Սդրըլինկի միջեւ բանող շոգեանաւերէ մին խարխոխ նետած էր :

Այդ վայրկեանին , Բ-էնս քը Կ-լի ծըլսնելոյցը սեւ մուխի յորձանքներ կը պոռթկար , և իր կաթսայն կը խորդար խուլ ձայնիւ : Ի ձայն զանգակին , որ քանի մը անգամ եւեթ հնչեց , յետամնաց ուղևորք փութացին վազեցին Ամբոխ մը կար հոն վաճառականներու , ագարակապաններու , քարոզիչներու : այս վերջինք դիւրաւ կը ճանչցուէին իրենց կարճ տաբատէն , երկար լօգիկէն , իրենց վզին շուրջը փաթթուած սպիտակ նուրբ երիզէն :

Ճէյմս Սդար ամէնէն ուշ մնացողներէն չէր : Եռութափութեամբ ցատքեց Բէէն՝ «բ Կալի նաւակամուրջին վրայ : Թէև սաստիկ անձրեւ կը տեղար , այդ ուղեւորներէն ոչ մին մտքէն կ'անցունէր ապաւինել շոգենաւուն սրահը : Ամէնքն ալ անչարժ կանգնած էին , իրենց ուղեւորութեան վերարկունքերուն մէջ փաթութուած , ոմանք մերթ ընդ մերթ իրենք զիրենք տաքցնելով իրենց շիշին ձնով կամ հոփսիով , — բան մը զոր իրենք կը կոչեն «ներսէն հագուիլ» : Զանգակի վերջին հարուած մը լսուեցաւ , պարանները քակեցին , եւ Բէէն՝ «բ Կալ սկսաւ շրջան ընել դուրս ելնելու համար փոքր աւազանէն որ զինքը կը պատսպարէր ընդդէմ Հիւսիսի ծովուն ալեաց :

Փըրթհ օվ Ֆորթհ , այս է անունը զոր կուտան հիւսիսի կողմէ Ծայֆ կոմսութեան եզերաց և հարաւի կողմէն Լինլիկօուի , էտիմպուրկի և Հատտինկըքնի կոմսութեանց եզերաց միջեւ գտնուած ծովախորշին : Այդ ծովախորշն իր մէջ կ'ընդունի գծորթհ , աննշան գետ մը , տեսակ մը Թամիզ կամ Մէրսի խորունկ ջրերով , որ , Պէն Լոմոնտի արեւմտեան կողերէն իջնելով ծովը կը թափի ի ֆինքարտայն :

Կրանդընի նաւամատոյցէն մինչեւ ծովախորշին ծայրն , ուղեւորութիւնը շատ կարճատեւ կը լինէր եթէ երկուց եզերաց զանազան կայարաններուն առջև կանգ առնլու հարկը չստիպէր զշոգենաւն բազմաթիւ շրջաններ ընելու : Քաղաքները , գիւղերը , փոքրիկ ամարանոցները կը տարածուին Ֆորթհի եզերաց վրայ , բարեբեր դաշտի մը ծառերուն մէջտեղ : Ճէյմս Սդար , նաւուն անուայարկերուն միջեւ ձգուած լայն կամրջակին տակ ապաստանած , չէր ջանար բան մը տեսնել այդ դաշտանկարին մէջ , որ անձրեւին մանրացնցուղ տարափին տակ կ'ողողուէր : Հապա ուշի ուշով կը դիտէր որ ուղեւորի մը ուշադրութիւնն իր վրայ դարձած չէ՞ր մասնաւորապէս : Արդարեւ գուցէ երկրորդ նամակին հեղինակը շոգենաւին վրայ էր : Սակայն ճարտարապետը չկրցաւ նշմարել ոչ մէկ կասկածոտ նայուածք :

Բէէն՝ «բ Կալ , Կրանդընի նաւամատոյցէն մեկնելով , ուղղուեցաւ դէպ այն անձուկ նեղուցն որ կը սողոսկի հարաւային Քուլինսֆէրրիի եւ հիւսիսային Քուլինսֆէրրիի երկու հրուանդաններուն մէջտեղ , որմէ անդին Ֆորթհ կը կազմէ տեսակ մը լճակ որ հարիւր տակառաջափնոց շոգենաւերուն մատչելի է : Խորի մշուշ-

ներուն մէջէն կ'երեւէին, կարճատե պայ-
ծառութեանց մէջէ, կրամբեան լերանց
ձիւնապատ կատարները:

Քիչ ատենէն, շոգենաւը տեսողութե-
նէ կորսնցուց Ապըրտուրի գիւղը, Գոլմի
կղզին որ տասներկուերորդ դարու մե-
նաստանի մը աւերակներն ունի իր բար-
ձանց վրայ, Պէրնպուկլի դղեկին մնա-
ցորդներն, յետոյ Տոնիպրիսդըն ուր սպան-
նուեցաւ Մըրրէյ խնամակալին փեսայն,
յետոյ կարվիի ամրոցապատ կղզեակը: Ան-
ցաւ Քուինսպէրրիի նեղուցը, ձախ կողմը
թողուց Րոզիթի դղեակն ուր երբեմն կը
բնակէր Սքիւարդներուն մէկ ձիւղն որուն
ազգական էր Գրոմուէլի մայրը. անցաւ
Պլաքնէս-Քեասլէն որ միշտ ամրացեալ է
Միութեան դաշնագրին յողուածոց միոյն
համաձայն, և քերեց Չարլդընի փոքր նա-
ւահանգստին քարափունքն, ուսկից կ'ար-
տահանուի Ղորտ էլճիինի քարահանքերուն
կիրը: Վերջապէս, Բուէնա ալ կուլի զանգա-
կը ծանոյց Գրոմպայ-Բոյինդի կայարանը:

Օդն յայնժամ կարի դժնդակ էր: Անձ-
րեւը, սաստիկ քամիի մը շունչին ներքեւ,
կը փոշիանար այն որոտագին ամպրոպնե-
րուն մէջտեղ որք թաթառներու պէս
կ'անցնէին:

Ճէյմս Սդար մտատանջութենէ զերծ

չէր: Սիմոն Ֆորտի զաւակը պիտի գըտ-
նուէր ժամագրութեան: Փորձառութեամբ
գիտէր թէ հանքահաններն, ածխահան-
քերու խորին հանդարտութեան վար-
ժուած, գործաւորաց կամ երկրագործաց
պէս չեն կրնար դիմագրաւել մթնոլորտին
այս մեծ խառնակութեանց: Գէլլէնտըրէն
մինչեւ Տոչարդի գուբն եւ Եարուի հորը,
չորս մղոնի չափ հեռաւորութիւն կար:
Ատոնք այնպիսի պատճառներ էին որք
մինչեւ մէկ աստիճան կրնային ետ կեցնել
ձերունի գործավարին զաւակն: Այսու
հանդերձ, ճարտարապետին մտահոգու-
թիւն պատճառով գաղափարն այն էր
մասնաւորապէս թէ առաջին նամակաւ
տրուած ժամագրութիւնն երկրորդ նա-
մակաւ ջնջուած էր: Իր գլխաւոր մտա-
ծումն այս էր:

Ամէն պարագայի մէջ, եթէ Հարրի
Ֆորտ կառախմբին ժամանման ատեն չը
գտնուէր ի Գէլլէնտըր, ձէյմս Սդար ո-
րոշած էր միայնակ երթալ Տոչարդի գու-
բըն, եւ մինչեւ իսկ, եթէ հարկ լինէր,
մինչեւ Ապըրֆոյլի գիւղը: Հոն անտարա-
կոյս տեղեկութիւն պիտի ստանար Սիմոն
Ֆորտի վրայ եւ պիտի իմանար թէ այժմ
ուր կը բնակէր ձերունի գործավարը:

Սակայն Բուէնա ոչ կուլ կը շարունակէր

խոշոր կոհակներ յառաջ բերել իր անուոյ տախտակներուն ներքև: Գետին երկու փուլնքը չէին բնաւ տեսնուեր, ո՛չ Գրոմպայ գիւղը, ո՛չ Դորրիպըրն, ո՛չ Դորրի-հաուզ, ո՛չ Նիւմիլս, ո՛չ Գարրիտըն-հաուզ, ո՛չ Քիրք-Կրէնձ, ո՛չ Սուդ-Բէնս, ալ կողմը: Պոռնէսի փոքր նաւահանգիստը, Կրէնձմաութհի նաւահանգիստն որ Գլայտի ջրանցիւն բերանը փորուած է, աներեւոյթ կը լինէին տամուկ մառախուղին մէջ: Գուլրոս հին աւանն եւ իր Սիդօ արքայարանին աւերակները, Քինքարտայն և իր նաւարաններն որոց առջեւ շոգենաւը կանգ առաւ, Էյրթհ-Քեասլ եւ իր տասներեքերորդ դարու քառակուսի աշտարակը, Գլաքմէններն եւ իր դղեակը զոր կառուցած է Բոպէրդ Պրուս, մինչեւ իսկ տեսանելի չէին լիներ անձրեւին խոտորնակ տարափին մէջէն:

Բ-էն՝ Խը կալ կանգ առաւ Ալլոայի նաւամատոյցին առջեւ՝ ցամաք հանելու համար քանի մը ուղեւորներ: Ճէյմսը ըստարի սիրտը սեղմուեցաւ՝ տասն տարուան բացակայութենէ յետոյ անցնելով այդ փոքր քաղաքին քովէն, կեդրոնատեղի կարևոր ածխահանքերու շահագործման, որք հանապազ կը սնուցանէին աշխատաւորներու յոգնախուռն ժողովուրդ

մը: Իր երևակայութիւնը կը տանէր զինքը դէպ այդ ստորերկրեայ աշխարհն, զոր հանքահաններու բրիչը կը փորէր տակաւին օգտակարապէս: Այդ Ալլոայի ածխահանքերն, որք գրեթէ կից էին Ալլոայի ֆոյլի ածխահանքերուն, կը շարունակէին հարստացնել կոմսութիւնը, մինչդեռ յարակից հանքերն, այնքան տարիներէ ի վեր սպառած, ո՛չ մէկ գործաւոր ունէին:

Շոգենաւն, Ալլոայէն մեկնելով, մըլուեցաւ այն ծամածուռ շրջաններուն մէջ զորս Ծորթհ կը կազմէ տասնեփնն մըն տեղութեամբ: Բ-էն՝ Խը կալ արագապէս կ'անցնէր երկուց եզերաց բարձրաբերձ ծառերուն մէջէն: Պահ մը, անձրեւադարի ատեն, երեւցան Գէմպուքիներթհի արքայարանին աւերակներն, որ տասն երկուերորդ դարուն շինուած է: Յետոյ եկան Սգըրլինկի դղեակն և արքայական համանուն դղեակն, ուր Ծորթհ, երկու կամուրջներէ կտրուելով, ա՛լ նաւարկելի չէ բարձրակայմ նաւուց համար:

Հազիւ Բ-էն՝ Խը կալ մերձեցած էր, ճարտարապետը թեթևոտն ցատքեց քարափին վրայ: Հինգ վայրկեան յետոյ կը հասնէր Սգըրլինկի կայարանը: Ժամ մը յետոյ կառախուժէն կ'իջնէր ի Գէլլէն-

տըր, որ թիթհի ճախ եզերքին վրայ կա-
ռուցուած մեծ գիւղ մ'է:

Հոն, կայարանին առջեւ, կ'սպասէր
երիտասարդ մը, որ անմիջապէս յառաջա-
ցաւ դէպի ճարտարագետն:

Հարրին էր այդ, Սիմոն Ֆորտի զա-
ւակը:

ՓԼՈՒՍ Փ.

ՄԵԾԻՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՍՏՈՐԵՐԿՐԵԱՅ ԽԱԿԸ

Այս պատմութեան հասկացողութեան
համար, հարկ է քանի մը բառով յիշել
թէ ի՛նչ է գետնածուխի ծագումը:

Երկրաբանական ժամանակաց ատեն,
երբ երկրագունտը տակաւին կաղմուելու
վրայ էր, թանձր մթնոլորտ մը կը շրջա-
պատէր զնա, բոլորովին յագեցեալ ջրի
գոլորչիներով եւ առատօրէն տոգորեալ
բնածխական թթուով: Տակաւ առ տակաւ,
այս գոլորչիները խտանալով փոխուեցան
ջրհեղեղեան անձրեւներու, որք տեղացին
իրբ թէ Սէլձի ջրի քանի մը միլիոն միլիառ
սրուակներու բերնէն դուրս կը թափէին:
Բնածխական թթուով թաթաղուն հեղուկ
մ'էր այս, որ հեղեղանման կը թափէր

մածան հողի մը վրայ. այդ անհաստատ
հողն, յանկարծակական կամ յամր ձևա-
գեղծութեանց ենթակայ, այդ կէս-հե-
ղուկ վիճակին մէջ կը մնար թէ՛ արեգա-
կան հրատապ ջերմութենէն և թէ՛ ներքին
զանգուածին կրակներէն: Պատճառն այն էր
որ ներքին տաքութիւնը տակաւին մթեր-
ուած չէր երկրագնդին կեդրոնը: Հո-
ղագնդին կեղեւն, որ բարակ էր և կատա-
րելապէս չէր կարծրացած, իր ծակտիկնե-
րէն դուրս կը փախցնէր այդ տաքութիւնն:
Ադկից յառաջ եկաւ վիթխարի բուսաբե-
րութիւն մը, — որպէս, անտարակոյս, յա-
ռաջ կուգայ ստորին մոլորակաց. Արուս-
եակի կամ Փայլածուի մակերեւոյթին վրայ,
որք երկրէն աւելի մօտ են ճաճանչաւէս
աստեղ:

Հետեւաբար, երկրագնդին հողն, որ
տակաւին անկայուն էր, ծածկուեցաւ ա-
հաջին անտառներով: Բնածխական թը-
թուն, որ այնքան նպաստաւոր է բու-
սային թաղաւորութեան զարգացման, ա-
ռատ էր յոյժ: Ուստի բոյսերը կ'աճէին
կ'ուռճանային ծառանման: Խոտեղէն ոչ
մէկ տունկ կար: Ամենուրեք ծառերու
հսկայական կոյտեր էին, առանց ծաղկի,
առանց պտուղի, մենակերպ երևոյթով, որք
չպիտի կրնային բաւել ոչ մէկ կենդանի

էակի մնուցման : Երկիրը տակաւին պատ-
րաստ չէր կենդանային թագաւորու-
թեան երւման :

Աւասիկ ի՛նչ էր այս անդրջրհեղեղեան
անտառաց կազմութիւնը : Բազմախորդ-
վակ գաղտասերներու դասակարգը կը
տիրապետէր անդ : Կալամիտներն , որք
ծառանման ձիաքիներու զանազան տե-
սակներն են , լեպիդոդենդրոններն , որք
հսկայական գետնամամուռներու տեսակ
մ'են քսան եւ հինգ կամ երեսուն մեդր
բարձրութեամբ եւ իրենց բունին կողմը
մէկ մեդր լայնութեամբ , աստղածաղիկք ,
պտերք , ահաքին մեծութեամբ սիկիլարք
որոց դրոշմները գտնուած են Սէնդ-Էդի-
էնի ածխահանքերուն մէջ , — ամէնքն
ալ վիթխարի տունկեր այն ատեն ,
որոց նմանները կը ճանչցուին բնակելի
երկրին ամէնէն խոնարհ օրինակներուն մէջ
եւեթ , — ասոնք էին , իրենց տեսակաց մէջ
քիչ պէտպիսութեամբ , այլ իրենց զար-
գացմանը մէջ ահաքին , այն բոյսերն որք
այդ ժամանակաց անտառները կը կազ-
մէին :

Այդ ծառերն յայնժամ իրենց արմատ-
ները կը մխրճէին տեսակ մը անհուն եղ-
տիւրի մէջ , որ չափազանց խոնաւ եղած
էր անուշ ջրերու եւ աղի ջղերու խառ-

նուրդէն : Անյագարար կ'իւրացնէին բնա-
ծուխը զոր առ սակաւ սակաւ կը ծծէին
մթնոլորտէն , որ տակաւին անյարմար էր
կենաց պաշտօնակատարութեան , եւ կա-
րելի է ըսել թէ սահմանուած էին զայն
մթերելու , գետնածուխի ձեւին տակ ,
երկրագնտին արւցը մէջ :

Ապաքէն երկրաշարժներու ժամանակն
էր այդ , հողին այն դղրդմանց , արդիւնք
ներքին յեղափոխութեանց եւ պլուտոնա-
կան աշխատութեան , որք յեղակարծուստ
կը փոխէին երկրագնդի մակերեւոյթին
տակաւին անստոյգ կերպարանքը : Հոս ,
ուռեցքներ կային որք լեռներ կը լինէին-
հոն , անդուռներ զորս ովկէաններ կամ
ծովեր կը ընուին : Եւ այն ատեն , ամբողջ
անտառներ կը խորագուգէին երկրային
կեղեւին մէջ , շարժուն խաւերուն մէջէն ,
մինչեւ որ կարենային գտնել յենակէտ մը ,
որպէս կրանիտահանգոյն ապառաժներու
նախնական հողն , կամ թէ , իրարու վրայ
կքելով , ամրապլինդ ամբողջութիւն մը կը
կազմէին :

Արդարեւ , երկրաբանական շէնքը սա
կարգաւ կը ներկայանայ երկրագնդին ա-
լուցը մէջ . նախնական հողն , որուն վրայ կը
գտնուի նախնական գետիններէն կազմեալ
քշուած հողն , յետոյ երկրորդական գետին-

ներն որոց ստորին յարկը կը գրաւեն ամ-
խահանքերն, յետոյ երրորդական գե-
տիններն, եւ անոնցմէ վեր, հին եւ
արդի ջրատուութեան (alluvion) գետինը:

Այդ ժամանակաց մէջ, ջուրերն, որք
տակաւին իրենց համար որոշ ընթացք մը
չունէին եւ զորս խտացումն յառաջ կը
կը բերէր երկրագնդիս ամէն կէտերուն
վրայ, գահավէժ կ'ընթանային՝ հազիւ
կազմուած ապառաժներէն խլելով թեր-
թաքարերն, աւազաքարերը, կրաքարե-
րը կազմելու յատուկ նիւթերը: Այդ
ջուրերը կը հասնէին կիզակառուտ անտառ-
ներուն վերեւ եւ անդ կը թողուին այդ
գետիններուն տարրերն որք հետզհետէ
պիտի բարձրանային հանքածխային գետնին
վրայ: Ժամանակին հետ մէկտեղ, — չըջան-
ներ որք միլիոնաւոր տարիներ կը հաշ-
ուուին, — այդ գետինները կարծրացան, ի-
րարու վրայ խաւեր կազմեցին, եւ կոպիճ-
ներու, թերթաքարերու, կարծր կամ
փխրուն աւազաքարի, խիճի, գայլախազի
թանձր պատեանի մը ներքեւ ծածկեցին
խորասուզեալ անտառներու բոլոր զան-
գուածը:

Ի՞նչ պատահեցաւ այդ հսկայական
հալոցին մէջ, ուր կը գիշուէր բուսային
նիւթը՝ զանազան խորութեանց մէջ

մարձեալ: Քիմիական ճշմարիտ գործողու-
թիւն մը, տեսակ մը զտում: Այդ բոյսե-
րուն պարունակած բոլոր բնածուխը կը
չեղջակուտուէր, եւ քիչ քիչ գետնածու-
խը կը կազմուէր՝ ահագին ճնշման մը եւ
ներքին կրակներուն, որք այդ ժամանա-
կին այնչափ մօտ էին իրենց, բարձր բա-
րեխառնութեան կրկնակ ազդեցութեան
ներքեւ:

Այսպէս ուրեմն թագաւորութիւն մը
կը փոխուէր ուրիշ թագաւորութեան մը,
այդ յամր այլ անդիմադրելի ընդդիմա-
գործութեան մէջ: Բուսայինը կը փոխուէր
հանքայինի: Այդ բոլոր տունկերն, որք
բուսային կեանքով ապրած էին առաջին
աւազք կորովի հիւթին ներգործութեամբ,
կը քարանային: Այդ լայնածաւալ բուսա-
րանին մէջ փակուած նիւթերէն ոմանք,
կատարեւապէս կերպարանափոխ չեղած,
իրենց դրոշմը կը թողուին աւելի շուտով
հանքացած ուրիշ նիւթերու վրայ, որք կը
ճնշէին զայնս որպէս պիտի ընէր անհաշ-
ուելի զօրութիւն ունեցող ջրաբաշխական
մեքենայ մը: Միանգամայն, խեցիներ,
կենդանաբոյսեր, որպէս ծովաստեղք,
բազմոտանիք, սպիրիփերք, մինչեւ իսկ
ջուրերէն վարեալ ձուկեր, մողեսներ, տա-
կաւին կակուղ գետնածուխին վրայ կը

Թողուին իրենց զուտ և հրաշագիծ դրոշմը: (*)

Ճնշումը կը թուի մեծ դեր մը խաղացած լինել գետնածուխի հանքերուն կազմութեան մէջ: Արդարև, նորա զօրութեան աստիճանին կը պարտինք գետնածուխի այն զանազան տեսակները զորս ճարտարութիւնը կը գործածէ: Այսպէս, հանքածխային գետնին ամէնէն ցած խաւերուն մէջ կ'երևայ ածխաքարն (anthracite), որ, գրեթէ բոլորովին զերծ ցընդական նիւթէ, մեծագոյն քանակութեամբ բնածուխ կը պարունակէ: Ամէնէն բարձր խաւերուն մէջ կ'երևին, ընդհակառակն, փայտաքարն (lignite) և բըրածոյ փայտն, որոց մէջ բնածուխի քանակութիւնն անհունապէս նուազ է: Այս երկու խաւերուն մէջտեղ, իրենց կրած

(*) Պէտք է դիտել որ այդ բոլոր տունկերն, որոց դրոշմները գտնուած են, կը վերաբերին այսօր երկրագնդիս հասարակածային գօտիներուն յատուկ տեսակներուն: Ուրեմն ասկից կարելի է եզրակացնել թէ, այդ ժամանակին, տաքութիւնն հաւասար էր ամբողջ երկրիս վրայ, կա՛մ տաք ջուրերու հոսանքէն տաքուելով, կա՛մ ներքին կրակները մակերևոյթին վրայ զգացուելով ծակոտկէն կեղեւին մեջէն: Այսպէս կը բացատրուի այն իրողութիւնը թէ գետնածուխի հանքերը կազմուած են երկրագնդիս ամէն լայնութեանց ներքև:

ճնշման աստիճանին համեմատ, կը գտնուին ուրուաքարի (graphite) երակները, պարարտ կամ ցամաք գետնածուխերը: Մինչև և իսկ կարելի է հաստատել թէ բաւականաչափ ճնշման մը չզոյուլթենէն է որ կիզակաւային ճահիճներու խաւը կատարելապէս փոխուած չէ:

Այսպէս ուրեմն, գետնածուխի հանքերու ծագումն, երկրագնդիս ս'ր կէտին վրայ ալ որ գտնուին, այս է. երկրաբանական ժամանակին մեծ անտառները խորասուզուած են երկրագնդիս կեղեւին մէջ, յետոյ ժամանակին հետ միասին այդ բոյսերն հանքի փոխուած են ճնշման և տաքութեան ազդեցութեամբ և բնածխական թթուին ներգործութեամբ:

Սակայն բնութիւնն, որ սովորաբար այնքան շոյլ է, քանի մը հազար տարուան սպառման բաւելու չափ անտառ թաղած չէ: Գետնածուխն օր մը պիտի պակսի, — ստոյգ է այս: Ամբողջ աշխարհի մեքենայները բռնի բանթոլի մը պիտի դատապարտուին ուրեմն, եթէ նոր վառելանիւթ մը չյաջորդէ գետնածուխին: Առաւել կամ նուազ հեռուոր ապագայի մը մէջ, ա՛լ ածխահանք չպիտի մնայ, բայց եթէ անոնք զորս սառոյցի մշտնջենական պատեան մը կը ծածկէ ի կրոն-

լանտ, Պաֆֆինի ծովուն շրջակայքը, եւ որոց շահագործումը գրեթէ անկարելի է: Անխուսափելի ճակատագիրն է այս: Ամերիկայի ածխահանքերն, որք հրաշալի ճոխութիւն մ'ունին տակաւին, Աղի լճին, Օրէկոնի, Գալիֆորնիոյ ածխահանքերն օր մը անբաւական արտադրութիւն մը պիտի ունենան: Այսպէս պիտի լինին նաեւ Պրիդըն հրուանդանին, Սէն-Լուանի, Ալլէկանիսի, Բէնսիլվանիոյ, Վիրճինիոյ, Իլլինոյիզի, Ինտիանայի, Միսուրիի ածխահանքերը: Թէեւ Հիւսիսային Ամերիկայի գետնածուխի հանքերն ամբողջ աշխարհի ածխահանքերէն տասնապատիկ աւելի մեծ են, սակայն հարիւր դար չ'անցած ճարտարութեան միլիոնաբերան հրէջը պիտի սպառէ երկրագնդիս գետնածուխին ամէնէն վերջին կտորը:

Հասկանալի է թէ նեղութիւնն աւելի շուտ պիտի զգացուի հին աշխարհին մէջ: Իրաւ է թէ հանքային վառելանիւթի խաւեր կը գտնուին ի Հապէշաստան, ի Նադալ, ի Զամպէզ, ի Մոզամպիք, ի Մատակասգար, սակայն իրենց կանոնաւոր շահագործումը մեծ դժուարութիւններ կ'ընծայէ: Պիրմանիոյ, Չինաստանի, Գոչինչինի, Ճաբոնի, Կեդրոնական Ասիոյ

ածխահանքերը շուտով պիտի սպառին: Անգլիացիք անտարակոյս պիտի պարպեն Աւստրալիոյ ածխահանքերն որք բաւական առատութեամբ թաղուած են իր հողին մէջ, դեռ Մեծին Բրիտանիոյ մէջ գետնածուխի պակասութեան օրը չեկած: Այդ ժամանակին արդէն, Եւրոպիոյ ածխահանքերուն երակները, մինչեւ իրենց վերջին կաթիլն սպառած, երեսի վրայ պիտի թողուին:

Հետեւեալ թուանշաններէն դատեցէք առաջին ածխահանքերուն երեւան ելնելէն ի վեր սպառած գետնածուխին քանակութիւնը: Ռուսիոյ, Մաքսոնիոյ և Պալիէրայի ածխահանքերը վեց հարիւր հազար եկտար տարածութիւն ունին. Սպանիոյ ածխահանքերն՝ հարիւր յիսուն հազար: Պոզեմիոյ և Աւստրիոյ ածխահանքերն՝ հարիւր յիսուն հազար: Պելճիոյ ածխահանքերն, որք քառասուն մղոն երկայնութիւն և երեք մղոն լայնութիւն ունին, նմանապէս հարիւր յիսուն հազար եկտար տարածութեամբ կը տարածուին Լիէժի, Նամբուրի, Մոնսի և Շառլըռուայի գետիններուն ներքեւ: Ի Ֆրանսա, Լուառի եւ Ռոնի մէջտեղ գտնուած ածխահանքերը, Ռիվ-տը-ժիէ, Սէնդ-Էդիէն, Փիվոռ, Էբինագ, Պլանզի,

Լը Գրէօզօ, — Կառի ածխահանքերն, Ալէ, Լա Կռան Գոմպ, — Ալէյրոնի ածխահանքերն յ'Օպէն, — Գառմոյի, Պասաքի, Կրէսէսաքի ածխահանքերն, — Հիւսիսի կողմն Անգէնի, Վալանսիէնի, Լէնսի, Պէթիւնի ածխահանքերն, իբր երեք հարիւր յիսուն հազար եկտար տարածութիւն կը գրաւեն:

Գետնածուխի կողմէ ամէնէն հարուստ երկիրն Անգլիան է անժխտելի կերպով: Մեծն Բրիտանիա, ի բաց առեալ Իռլանտա որ գրեթէ բոլորովին զուրկ է հանքային վառելանիւթէ, ունի գետնածուխի ահագին հարստութիւններ, — որք սակայն ամէն հարստութեանց պէս սպառելի են: Այս զանազան ածխահանքերուն ամէնէն կարեւորը, Նիւքեալի ածխահանքն, որ Նորթուսթիւմի կոմսութեան ընդերկրեաց խաւը կը գրաւէ, տարին մինչև երեսուն միլիոն տակառաջափ կ'արտադրէ, այսինքն անգլիական սպառման իբր մէկ երրորդն եւ Ֆրանսական արտադրութեան կրկինը: Կալէսի երկրին ածխահանքերն, որք հանքահաններու ամբողջ ժողովուրդ մը համախառնած են ի Գարտիֆ, ի Սուանսի, ի Նիւբորդ, տարեկան տասն միլիոն տակառաջափ կ'արտադրեն այն գետնածուխէն որ իր անունը կը կրէ եւ որ այն-

չափ կը փնտռուի: Կեդրոնին մէջ կը շահագործուին Եորքի, Լէնգաուրրի, Տէրպլի, Սըաֆֆորտի կոմսութեանց ածխահանքերն, որք թէեւ նոյնչափ արդիւնաբեր չեն, սակայն դարձեալ ահագին քանակութեամբ գետնածուխ կը մատակարարեն: Վերջապէս, Սկոտլոյ այն մասին մէջ որ էտիմպուրկի եւ Կլասկովի միջև կը գտնուի, ընդմէջ այն երկու ծովերուն որք իր մէջ յառաջացած են այնչափ խորապէս, կը տարածուի Մեծին Բրիտանիոյ ամէնէն ընդարձակ ածխահանքերէ մին: Այս զանազան ածխահանքերուն ամբողջութիւնը կը գրաւէ մէկ միլիոն վեց հարիւր հազար եկտար, եւ տարին կ'արտադրէ մինչև հարիւր միլիոն տակառաջափ վառելանիւթ:

Բայց ի՛նչ փոյթ: Սպառումն այն աստիճանի պիտի հասնի՝ ճարտարութեան եւ վաճառականութեան պիտոյից համար, որ այս հարստութիւնը պիտի սպառին: Բրիտոսի թուականին երրորդ հազարերորդ տարին չլրացած, հանքահանին ձեռքն եւրոպայի մէջ պիտի պարպէ այս մթերանոցներն, յորս կեդրոնացած է, ճշմարիտ փոխաբերութեան մը համեմատ, առաջին աւուրց արեգակնային ջերմու-

Թիւնը : (*)

Այդ, ճիշդ այն ժամանակ երբ այս պատմութիւնը կը պատահի, Սկովտիոյ ամէնէն կարևոր ածխահանքերէն մին սպառած էր չափազանց արագ շահագործմամբ մը : Արդարև, այն երկրին մէջ որ կը տարածուի ընդ մէջ էտիմպուրիի և Կլասկովի՝ տասնէն տասներկու մլոն լայնութեան մը վրայ, կը գտնուէր Ապըրֆոյլի ածխահանքն, որուն աշխատութիւնները վարած էր ձէյմա Սդար այնքան երկարատեան :

Տասն տարիէ ի վեր այդ ածխահանքը լքուած էր : Նոր հանք մը չէին կրցած գտնել, թէև դրածակութիւններ եղած էին մինչեւ հազար հինգ հարիւր և նոյն իսկ երկու հազար ոտք խորութեամբ, և երբ ձէյմա Սդար քաջուած էր, այն ըս-

(*) Աւասիկ, ի հաշիւ առնելով գետնածուխին սպառման յառաջատուութիւնը, վերջին հաշիւներն Եւրոպայի մէջ օրջափ ժամանակ նշանակած են հանքային վառելանիւթեիու սպառման .

Ֆրանսա	1140	տարիէն
Անգլիա	800	»
Պելճիա	700	»
Գերմանիա	300	»

Յ՛Ամերիկա, տարեկան 500 միլիոն տակառաջափ արտադրութիւն հաշուելով, ածխահանքերը պիտի կրնան գետնածուխ արտադրել գեա 6000 տարի :

տուգութիւնն ունէր թէ ամէնէն բարակ երակը շահագործուած էր մինչեւ ցկատարեալ սպառումն :

Ուրեմն ակներև էր թէ նմանօրինակ պայմանաց մէջ, նոր ածխահանքի մը գիւտըն Անգլիոյ ստորերկրեայ խորութեանց մէջ՝ նշանաւոր պատահար մ'էր : Սիմոն Ֆորտի ծանուցած զեկոյցն այսօրինակ իրողութեա՞ն մը կը վերարերէր : Ձէյմա Սդար զայս կը հարցնէր ինքնին, զայս կ'ուզէր յուսալ :

Ի մի բան, այս մեծահարուստ Սեւ-ձնդկաստանին մէջ ուրիշ անկի՞ւնն էր զոր ի նորոյ աշխարհակալելու կը կոչուէր . կ'ուզէր այսպէս հաւատալ :

Երկրորդ նամակը պահ մը դարձուցած էր զինք այս գաղափարներէն, այլ այժմ ա՛լ կարևորութիւն չէր տար այնմ : Մնաց որ, ծերունի գործավարին տղան հոն էր և իրեն կ'սպասէր որոշեալ ժամադրավայրը : Ուրեմն անանուն նամակն ա՛լ արժէք չունէր :

Այն վայրկենին ուր ճարտարապետն ոտքը դրաւ քարափին վրայ, երիտասարդն յառաջացաւ դէպ ի նա :

— Դո՛ւն ես Հարրի Ֆորտը, հարցուց աշխուժիւ ձէյմա Սդար, առանց ուրիշ խօսք զուրցելու :

—Այո, պարոն Սդար:

—Զքեզ չպիտի ճանչնայի, տղա՛ս: Ա՛հ, տասը տարուան մէջ ա՛լ խոշոր մարդ ես եղեր:

—Ես գձեզ ճանչցայ, պատասխանեց երիտասարդ հանքահանն, որ ի ձեռին բռնած էր գլխարկը: Դուք փոխուած չէք, պարոն: Ծիչդ այն անձն էք որ ողջագործեց զիս Տոչարդի գուբին հրաժեշտի օրը: Այո բաները չեն մոռցուիր:

—Գլխարկդ դի՛ր, Հարրի, ըսաւ ճարտարագետն: Հեղեղի պէս անձրեւ կուգայ և քաղաքավարութիւնը մինչեւ հարբուխ տանելու չէ:

—Կ՛ուզէ՞ք որ տեղ մը ապաստանինք, պարոն Սդար, հարցուց Հարրի Ֆորտ:

—Ո՛չ, Հարրի: Օդը աւրուած է, մինչեւ իրիկուն պիտի անձրեւէ, եւ ես ա՛ճապարեւու պէտք ունիմ: Մեկնինք:

—Պատրաստ եմ ձեր հրամաններուն, պատասխանեց երիտասարդը:

—Է՛յ, Հարրի, հայրդ աղէ՞կ է:

—Շատ աղէկ, պարոն Սդար:

—Մա՞յրդ:

—Մայրս ալ:

—Հա՞յրդ գրեց այն նամակը որով ժամադրութիւն կուտար ինձ Եարօուի հօրը:

—Ո՛չ, ես գրեցի:

—Ուրեմն Սիմոն Ֆորտ երկրորդ նամակ մը գրեց այդ ժամադրութիւնը ջնջելու համար, հարցուց ճարտարագետն աշխուժիւ:

—Ո՛չ, պարոն Սդար, պատասխանեց երիտասարդ հանքահանը:

—Լա՛ւ, պատասխանեց ձէյմս Սդար, առանց աւելի խօսելու անանուն նամակին վրայ:

Յետոյ, խօսքը վերսկսելով.

—Կրնա՞ս ըսել ինձ թէ ծերունի Սիմոնը ի՞նչ կ՛ուզէ ինձմէ, հարցուց երիտասարդին:

—Պարոն Սդար, հայրս ինք անձամբ պիտի ըսէ ձեզ:

—Բայց դուն գիտե՞ս:

—Գիտեմ:

—Է՛հ լաւ, Հարրի, ա՛լ աւելին չեմ հարցնել: Ուրեմն ճամբայ ելլենք, որովհետեւ կ՛ուզեմ ժամ առաջ խօսակցիլ Սիմոն Ֆորտի հետ:—Հա՛, աղէկ միտքս ինկաւ, ո՛ւր կը բնակի ինքը:

—Հանքին մէջ:

—Ի՛նչ, Տոչարդի գուբի՞ն մէջ:

—Այո, պարոն Սդար, պատասխանեց Հարրի Ֆորտ:

—Ինչպէ՛ս, ծնողքդ բաժնուած չե՞ն վաղեմի ամխահանքէն աշխատութեանց գաղարումէն ի վեր:

—Ոչ մէկ օր, պարոն Սդար, կը ճանչնաք հայրս: Հոն ծնած է, հոն կ'ուզէ մեռնիլ:

—Կը հասկնամ, Հարրի, կը հասկնամ: Իր հայրենի ածխահանքը, Չուզէր թողուլ զայն: Է՛յ, գո՞հ էք հոն:

—Ս.յո, պարոն Սդար, պատասխանեց երիտասարդ հանքահանն, որովհետեւ ջերմապէս կը սիրենք զիրար և շատ մեծ պէտքեր չունինք:

—Լաւ, Հարրի, ըսաւ ճարտարապետը ճամբայ ելնենք:

Եւ շէյմս Սդար, երիտասարդին հետեւելով, սկսաւ յառաջանալ Գէլլընտըրի փողոցներուն մէջէն:

Տասն վայրկեան յետոյ, երկուքն ալ դուրս ելած էին քաղաքէն:

ՔԼՈՒԽ Փ.

ՏՈՉԱՐԴԻ ԳՈՒԲԸ

Հարրի Ֆորտ խոշոր տղայ մըն էր քրտանակինգամեայ, առողջագեղ, պնդակազմ: Իր քիչ մը լուրջ դիմագծութիւնն և սովորաբար մտախոհ դիրքը, մանկութենէն ի վեր մասնաւոր տեղ մը տուած էին նմա իր ածխահանքի ընկերներուն

մէջ, իր կանոնաւոր դիմագծերը, խորին եւ անուշ աչերը, կարծր մազերն՝ աւելի շագականագոյն քան խարտեաշ, իր անձին բնական հրապոյրն, ամէն բան կը միանար՝ զինքը կատարեալ տիպարն ընելու Լուլէնտըրի, այսինքն դաշտաբնակ Սկոլմիտացւոյ գեղապանծ օրինակ մը: Տղայ տարիքէն ի վեր ածխահանքին աշխատութեան մէջ կարծրացած, ուժեղ ընկեր մը ու քաջարի եւ ուղղամիտ բնաւորութեան տէր երիտասարդ մըն էր միանգամայն: Հօրն առաջնորդութեամբ, իր անհատական բնագղումներէն վարեալ, աշխատած, կանուխէն ուսած էր, եւ այն տարիքին մէջ ուր այլք աչկերտ են լոկ, ինք կըրցած էր մէկը լինիլ, — իրեն վիճակակիցներուն առաջիններէն մին, — այնպիսի երկրի մը մէջ ուր տգէտները քիչ են, որովհետեւ ամէն բան կ'ընէ տգիտութիւնը ջընջելու համար: Թէեւ իր պատանեկութեան առաջին տարիներուն Հարրի Ֆորտ ձեռքէն չէր թողուց բրիչն, այսու հանդերձ երիտասարդ հանքահանը կրցաւ ձեռք բերել հարկ եղած ծանօթութիւնները՝ բարձրանալու համար ածխահանքին պաշտօնէութեան մէջ, եւ անշուշտ հօրը պիտի յաջորդէր իբր գործավար Տոչարդի գուբին մէջ, եթէ ածխահանքը չլքուէր:

ձէյմս Սդար դեռ լաւ քաղող մըն էր , սակայն չափաւ կրնար դիւրաւ հետեւիլ իր առաջնորդին եթէ սա չ'չափաւորէր իր քայլերը :

Անձրեւը կը տեղար յայնժամ նուազ սաստկութեամբ : Լայն կաթիլները կը փոշխանային՝ գետին հասնելէ առաջ : Թաց ամպրոպներ էին ասոնք առաւելապէս , որք օդին մէջ կը սուրային սաստկաշունչ քամիէ մը վարեալ :

Հարրի Ֆորտ եւ ձէյմս Սդար , — երկտասարդը ձեռքն առած ճարտարապետին թեթեւ ծրարը , — գետին ձախ ամուկքը քերեցին իբր մղոն մը երկայնութեամբ : Ոլորապտոյտ գետափունքին երկայնքով քալելէ յետոյ , ճամբու մը մէջ մտան որ կը խորատուգէր դաշտորէից մէջ՝ ջրաթաթաւ բարձրաբերձ ծառերուն ներքեւ : Ընդարձակ արօտավայրեր կը տարածուէին թէ՛ այս եւ թէ՛ այն կողմ , կղզիացեալ ագարակներուն շուրջ : Քանի մը երամակներ հանդարտօրէն կը ճարակէին դաշտային Սկովտիոյ այս մարգերուն մշտադաւար խոտը : Անեղջիւր կովեր էին ասոնք , կամ մետաքսաւէտ բուրդով փոքր ոչխարներ , որք մանկանց գոմերու ոչխարներուն կը նմանէին : Ոչ մէկ հովիւ կ'երևէր , անտարակոյս սպաւինած լինելով ծառի մը

խոռոչին մէջ . սակայն հուլին , որ Մեծին Իրիտանիոյ այս երկրին յատուկ շուն մըն է՝ իր արթնութեամբն հռչակաւոր , կը թափառէր արօտավայրին շուրջը :

Եարօուի հորն իբր չորս մղոն հեռի էր Գէլլըէնտըրէ : ձէյմս Սդար , ճամբուն վերայ , բազմադիմի տպաւորութեանց կ'ենթարկուէր : Տեսած չէր երկիրն այն օրէն ի վեր յորում Ապըրֆոյլի ածխահանքերուն վերջին տակառաջափը լեցուցած էին կըլասկովի երկաթուղոյն վահոններուն մէջ : Երկրագործական կեանքն այժմ յաջորդած էր ճարտարական կեանց որ միշտ աւելի մեծադղորդ , աւելի գործօն է : Հակապատկերն այնու մանաւանդ աչքի կը զարնէր որ , ձմեռը , դաշտաց աշխատութիւնք տեսակ մը անգործութեան կը դատապարտուին : Սակայն երբեմն , ամէն եղանակներուն , հանքահաններուն ամբօխը , թէ՛ հողին վրայ եւ թէ՛ հողին ներքեւ , կ'ողբուրէր այդ երկիրը : Գետնածուխի մեծ սառչերը կ'անցնէին դիշեր ցերեկ : Երկաթուղիներն որք այժմ թաղուած էին իրենց փրօտած պահանդներուն վրայ , կը ճոնչէին վահոններուն ծանրութեան ներքեւ : Հիմա , քարէ եւ հողէ ճանքան տակաւ սուտակաւ կը յաջորդէր շահագործման նախկին թրամուէյներուն : ձէյմս Սդարի

այնպէս կուգար թէ անապատէ մը կ'անցնի :

Ճարտարապետը չորս դին կը նայէր տիրահայեաց աչերով : Մերթ ընդ մերթ կը կասէր , շունչ առնլու համար : Մտիկ կ'ընէր : Օդն հիմակ ա'լ չէր լցուեր հեռաւոր սոյլերով եւ մեքենայներուն շնչասպառ ժխորով : Հորիզոնին վրայ , ոչ մին այն սեւորակ գոլորչիներէն որք մեծ ամպերուն կը խառնուին , եւ որոց հանդիպիլ կը սիրէ ճարտարագէտն : Ոչ մէկ գլանաձեւ կամ հատուածակողմեան ծխնելոյց որ մուխ պոռթկար , ոչ մէկ խողովակ որ անդուլ անընդհատ դուրս տար իր սպիտակ շողին : Հողն , որ յառաջագոյն աղտոտած էր գետնածուխի փոշիէն , մաքուր տեսք մ'ունէր որում վարժուած չէին ձէյմս Սդարի աչերը :

Երբ ճարտարապետը կանգ կ'առնուր , Հարրի Ֆորտ ալ կը կենար : Երիտասարդ հանքահանը լրիկ կ'ստլասէր : Քաջ կ'զգար թէ ինչ կ'անցնէր իր ուղեկցին մտքին մէջ , եւ ինքն ալ սաստիկապէս կ'զգար այդ տպաւորութիւնն ,—ինք , ամխահանքին մէկ զաւակն , ոյր բոլոր կեանքն անցած էր այդ հողին խորոց մէջ :

—Այո , Հարրի , այս ամէնը փոխուած է , ըսաւ ձէյմս Սդար : Սակայն պարպե-

լով պարպելով , օր մըն ալ գետնածուխի գանձերը պիտի սպառէին : Յաւելով կը յիշես այն ժամանակը :

—Այո , պարոն Սդար , պատասխանեց Հարրի : Աշխատութիւնը ծանր էր , սակայն շահագրգիռ էր , որպէս ամէն պայքար :

—Անշուշտ , տղա'ս : Ամէն վայրկեանի պայքարը , փուզմանց , հրդեհներու , ողորմանց , կայծակի պէս պայթող կեռնէ հարուածներուն վտանգը : Պէտք էր դիմադրաւել այս վտանգներուն : Աղէկ կ'ըսես : Պայքարն էր այն , և , հետեւաբար , սրտագրաւ կեանքը :

—Ալլօայի հանքահաններն Ապրիֆոյլի հանքահաներէն աւելի բաղդաւոր եղան , պարոն Սդար :

—Այո , Հարրի , պատասխանեց ճարտարապետը :

—Իրօք ցաւալի է որ , գոչեց երիտասարդը , բոլոր երկրագունդս միմիայն գետնածուխէ բաղկացած չէ : Քանի մը միլիոն տարուան կը բաւէր :

—Անտարակոյտ , Հարրի , սակայն պէտք է խոստովանիլ որ բնութիւնը նախագգուշութեամբ շարժած է՝ մեր երկրագունդը գլխաւորապէս կազմելով աւազաքարէ , կրաքարէ , հատաքարէ , զորս կրակը չկրնար սպառել :

—Ըսել կ'ուզէք, պարոն Սդար, թէ մարդիկ վերջ ի վերջոյ պիտի այրէին իրենց երկրագունդը:

—Այո՛: Ամբողջն ալ, տղաս, պատասխանեց ճարտարապետն: Երկիրս մինչեւ իր վերջին կտորը պիտի անցնէր վայրաշարժերու, շոգենաւերու, գործարաններու հնոցներուն մէջ, և, անշուշտ, օր մը այսպէ՛ս պիտի վերջանար աշխարհս:

—Այդ վախը չունինք, պարոն Սդար: Բայց նաև անխահանքերն անշուշտ պիտի սպառին, վիճակագիրներուն ցոյց տուածէն աւելի շուտ:

—Այդ այդպէս պիտի ըլլայ, Հարրի, և, ըստ իս, Անգլիա թերևս կը սխալի իր վառելանիւթը փոխանակելով միւս ազգաց ոսկւոյն հետ:

—Արդարև, պատասխանեց Հարրի:

—Գիտեմ թէ, յարեց ճարտարապետն, ո՛չ ջրաբաշխութիւնն, ո՛չ ելեկտրակա նութիւնն իրենց կատարելութեան ծայրագոյն աստիճանին հասած չեն դեռ, և օր մը աւելի կատարելագոյն յօգուտ ի կիր պիտի արկանեն այս երկու զօրութիւնները: Բայց ի՛նչ փոյթ: Գետնածուխը շատ գործնական է և դիւրաւ կը պատշաճի ճարտարութեան զանազան պիտոյից: Դժբաղդաբար, մարդիկ չեն կրնար ըստ

կամս յառաջ բերել զայն: Եթէ արտաքին անտառներն անդադար կ'աճին տաքութեան եւ ջրի ազդեցութեան ներքեւ, ներքին անտառները չեն բուսնիր, եւ երկրագունդս երբեք հարկ եղած պայմաններուն մէջ չ'պիտի գտնուի վերջստին կազմելու համար զայնս:

Ճէյմս Սդար և իր առաջնորդը, խօսակցելով հանդերձ, վերսկսած էին իրենց ընթացքն արագ քայլերով: Գէլլէնալըէ մեկնելէ ժամ մը յետոյ, Տոչարդի գուբը կը հասնէին:

Անտարբեր մը իսկ պիտի զգածուէր լքեալ հաստատութեան ներկայած տխուր տեսարանէն: Երբեմն կենդանի բանի մը կմախքն էր այս գոգցես:

Ընդարձակ շրջանակի մը մէջ, որ քանի մը ոսին ծառերով եզերեալ էր, հողն աներեւոյթ կը լինէր դեռ հանքային վառելանիւթի սեւ փոշոյն ներքեւ, բայց ա՛լ գետնածուխի ոչ մէկ կտոր կը տեսնուէր անդ: Ամէն բան վերցուած և սպառած էր շատոնց ի վեր:

Յած բլրակի մը վրայ կը տեսնուէր տախտակեայ հազին շէնք մը զոր արևն ու անձրեւը կը կրծէին յամրաբար: Այդ շէնքին կատարը կ'երեւէր թափծու ահագին անիւ մը, եւ աւելի փար կը նշմար-

ուէին այն խոշոր գլաններն որոց վրայ երբեմն կը փաթթուէին վանդակներն հողին երեսն հանող պարանները :

Ստորին յարկը կը տեսնուէր մեքենայից խաթարեալ սենեակն , որք երբեմն այնքան շողշողուն էին իրենց պողպատեայ կամ պղնձեայ մասերով : Տեղ տեղ պատը փլած էր , կոտրած եւ խոնաւութենէն կանանչցած մարդակներու մէջտեղ : Մնացորդներ կը շողշողու որոց զօդեալ էր ցամքեցուցիչ ջրհաններու ձողը , կոտրած կամ աղտոտած բարձիկներ , ատամաթափ անուակներ , ամբառնալեաց տակնուվրայ մեքենայներ , քանի մը սանդղամատունք որ մոյթերու վրայ հաստատուած էին եւ անդրջրհեղեղեան ձկնամողէղներու մեծ փուշի մը կը նմանէին , խորտակուած պահանդի մը վրայ երկաթուղիներ զորս տակաւին կը բռնէին երկու երեք խախուտ ցիցեր , թրամուէյներ որք չպիտի կրնային դիմադրել լեցուն վակոնիկի մը ծանրութեան , — այս էր ահա Տոջարդի գուբին թախծալից տեսարանը :

Քանահորին ճաթրտած քարերով եզնակն (margelle) աներեւոյթ կը լինէր թանձր մամուռներուն տակ : Աստ կը ճանչցուէին վանդակի մը նշխարներն , անդ մնացորդներն մթերանոցի մը ուր կը համբարէին

գետնածուխն , սպասելով որ զատուի իր տեսակին կամ խոշորութեան համեմատ : Վերջապէս , բեկորներ տակառաջափներու որոնցմէ կը կախուէր շղթայի ծայր մը , վիթխարի մոյթերու հատակտորք , ծակած կաթսայի մը կռածոյ երկաթէ թիթեղներ , գալարած միսոցներ , ջրհաններու հորին բերնին վրայ ծռած երկար կը շողշողու , հովէն երերացող անցարաններ (paserelle) , քայլերու տակ տատանող կամրջակներ , փեռեկեալ որմեր , կիսափուլ տանիքներ որք կը բարձրանային քայքայեալ աղիւսներով չմինէներու վրայ , հանդուսակ այն նոր թնդանօթներուն որոց յատակը ծածկուած է գլանածեւ ագոյցներով , — այս ամէնէն կ'երէր լքման , թշուառութեան , տխրութեան սաստիկ տպաւորութիւն մը , զոր ո՛չ քարաշէն հին գլեխակի մը աւերակներն , ո՛չ կործանած ամրոցի մը փլատակները կուտան :

« Ի՛նչ աւերած » ըսաւ ձէյյան Սդար երիտասարդին նայելով , որ չպատասխանեց : Երկուքն ալ յայնժամ մտան այն յարկին տակ որ կը ծածկէր Եարօուի հորին բերանն , որուն սանդուղներով տակաւին կ'երթցուէր մինչեւ գուբին ստորին ներքնուղիները :

Ճարտարապետը ծռեցաւ բերնին վրայ :

Ատենօք անկից դուրս կ'եւնէր օդափոխ գործիներուն քաշած օդին հզօր շունչը: Հիմա լռին անդունդ մ'էր այն: Կարծես թէ մարած հրաբուխի մը խառնարանին առջեւ էր մարդ:

Ճէյմս Սդար և Հարրի իրենց ոտքը դրին առաջին գաւթիկին վրայ:

Շահագործման ատեն, երթեւեկութեան ճարտարարուեստ մեքենայներ կը բանէին Ապըրֆոյլի ածխահանքերուն ինչ ինչ հորերուն մէջ, որք առ այս ամէն կատարելագործեալ գործիներն ունէին,— վանդակներ ինքնաշարժ անկարգեւէնքով որք փայտեայ լարծուն կռուանի վրայ կը բանէին, «մեքենայ-մարդ» անուանեալ ճօճական սանդուղներ որք, տատանման պարզ շարժմամբ մը, հանքահաններուն կարելի կ'ընէին անվտանգ վար իջնել կամ առանց յոգնութեան վեր ելնել:

Սակայն այս կատարելագործեալ մեքենայք վերցուած էին աշխատութեանց դադարումէն ի վեր: Եարօուի հորին մէջ մնացած էր միայն երկար յաջորդութիւն մը սանդուղներու, որք յիսուն ոտքէ յիսուն ոտք իրարմէ բաժնուած էին նեղ գաւթիկներով: Այսպէս ծայրէ ի ծայր գըրուած երեսուն սանդուղներով կ'իջնուէր ստորին ներքնուղոյ տափարակն, հազար

հինգ հարիւր ոտք խորութեամբ: Տոչարդի գուբին խորոց եւ հողին երեսին միջև հաղորդակցութեան միակ ճամբան այս էր: Իսկ օդափոխութիւնը կը կատարուէր Եարօուի հորէն, զոր ներքնուղիներն հաղորդակցութեան մէջ կը դնէին ուրիշ հորի մը հետ որուն բերանը կը բացուէր աւելի քարձր հարթերեսի մը վրայ.— այսպէս տաք օդը բնականաբար դուրս կ'եւնէր այս կերպիւ իւրիք գլխիվայր խողովակին միջոցաւ:

— Ես քեզ կը հետեւիմ, ըսաւ ճարտարագետը, նշան մ'ընելով երիտասարդին որ իրմէ առաջ անցնի:

— Պատրաստ եմ ձեր հրամաններուն, պարոն Սդար:

— Կանթեղք քովդ է:

— Այո. ո՛ւր էր թէ ապահովութեան կանթեղն ըլլար զոր երբեմն կը գործածէինք:

— Արդարեւ, պատասխանեց Ճէյմս ըՍդար, ա՛լ վախ չկայ կրիզուի պայթիւններու:

Հարրի պարզ կանթեղ մը առած էր, որու պատրոյգը վառեց: Ածխահանքին մէջ որ թափուր էր գետնածուխէ, նախընածխական թթուածնի կազի փախուստներ ա՛լ չէին կրնար առաջ գալ: Ուրեմն,

ոչ մէկ պայթման վախ չկար, և բնաւ հարկ չէր բոցին և մթնոլորտին մէջտեղ դնել այն մետաղական կտանն որ կ'արգելու կազը դուրսէն կրակ առնէ: Տէվիի կանթեղն, որ այն ատեն այնչափ կատարելագործեալ էր, գործածութեան տեղի չունէր հոս: Վտանգ չկար, որովհետեւ պատճառն անհետացած էր, և, այդ պատճառին հետ, վառելանիւթն ալ որ երբեմն Տոչարդի դուբին հարստութիւնը կը կազմէր:

Հարրի իջաւ վերին սանդուղին առաջին աստիճաններէն: Ճէյմս Սդար հետեւեցաւ նմա: Երկուքն ալ քիչ ատենէն խորատուզեցան մութ խաւարի մը մէջ զոր կանթեղին նշոյլը միայն կը փարատէր: Երիտասարդն իր գլխէն վեր բռնած էր կանթեղը, լաւագոյնս լուսաւորելու համար իր ընկերը:

Ճարտարապետն եւ իր առաջնորդը տասնի չափ սանդուղ իջան այն չափուած քայլով որում վարժ է հանքահանը:

Սանդուղները տակաւին լաւ վիճակի մէջ էին:

Ճէյմս Սդար հետաքրքրութեամբ կը դիտէր ինչ որ անբաւական լոյսը նշմարելի կ'ընէր նմա խաւարամած հորին պա-

տերէն, զորս կիսափուտ տախտակամած մը կը ծածկէր տակաւին:

Երբ տասն եւ հինգերորդ գաւթիկն, այսինքն ճամբուն կէսն հասան, քանի մը վայրկեան կանգ առին:

— Կը տեսնեմ որ քու սրունքներդ չունիմ, տղաս, ըսաւ ճարտարապետն երկար շունչ մը առնլով, բայց, վերջապէս, շատ գէշ չեն, դեռ կը դիմանան:

— Հաստատ կազմուածք մ'ունիք, պարոն Սդար, պատասխանեց Հարրի: Կը տեսնէք ահա թէ հանքին մէջ երկար ատեն ապրած ըլլալն ի'նչ օգուտ ունի:

— Իրաւունք ունիս, Հարրի: Առաջ, երբ քսան տարեկան էի, մէկ շունչով կրնայի իջնալ: Օ'ն, ճամբայ ելլենք:

Բայց այն պահուն ուր երկուքն ալ պիտի բաժնուէին գաւթիկէն, քանահորին խորերէն ձայն մը լսուեցաւ, հեռաւոր ձայն մը: Այդ ձայնը կը հասնէր իբր հնչուն կոհակ մը որ երթալով կ'ուռի, և հետզհետէ աւելի որոշ կը լինէր:

— Է'հ, ո՞վ է եկողը, հարցուց ճարտարապետը կեցնելով Հարրին:

— Չեմ կրնար հասկնալ, պատասխանեց երիտասարդ հանքահանը:

— Ծերունի հայրդ չէ՞:

— Ի'նք, պարոն Սդար, ո'չ:

—Ուրեմն դրացի մը :

—Իրացի չունինք գաւթին խորը , պատասխանեց Հարրի : Մինակ ենք , միս մինակ :

—Լա՛ւ , թող տանք որ այդ ինքնեկը անցնի , ըսաւ ձէյմս Սդար : Իջնողներու պարտքն է տեղի տալ վեր ելնողներուն :

Երկուքն ալ սպասեցին :

Ձայնն այժմ կը հնչէր հրաշալի շառագմամբ , եւ ընդհուպ սկովտիական երգի մը քանի մը խօսքերը բաւական որոշապէս հասան երիտասարդ հանքահանին ականջին :

—Լճերու ե՛րգը , գոչեց Հարրի : Ա՛հ , վստահ եմ թէ ձէք Րիանի բերնէն կ'եւնէ :

—Ո՞վ է այդ ձէք Րիանը որ այսպէս սքանչելի կերպով կ'երգէ , հարցուց ձէյմս Սդար :

—Ածխահանքի հին ընկեր մը , պատասխանեց Հարրի :

Յետոյ , գաւթիկէն վար ծռելով .

—է՛ , ձէ՛ք , պոռաց :

—Դո՞ւն ես , Հարրի , պատասխանեց ձայնը : Սպասէ՛ , եկայ :

Եւ երգը վերսկսաւ նոյն ոգեւորութեամբ :

Քանի մը վայրկեան յետոյ , քսան եւ

հինգ տարեկան մեծղի երիտասարդ մը , գուարթ դէմքով , ժպտուն աչերով , ծիծաղկոտ բերնով , ոսկեգիսակ մազերով , կ'երեւէր իր լապտերին արձակած լուսավառ կոնին խորը , եւ ոտք կը դնէր տասն եւ հինգերորդ սանդուղին գաւթիկին վրայ :

Իր առաջին գործն եղաւ ուժգնապէս սեղմել Հարրիի կարկառած ձեռքը :

—Ինչչա՛րի գոհ եմ ձեզի հանդիպելուս համար , գոչեց : Բայց , Սուրբ Մունիօ վկայ ըլլայ , եթէ գիտնայի որ այսօր հողին երեսը պիտի ելլաս , Եարօուի հորն իջնելու յոգնութիւնն յանձն չէի առնուր :

—Պարոն ձէյմս Սդար , ըսաւ յայնժամ Հարրի , իր կանթեղը դարձնելով դէպի ճարտարապետն որ ստուերին մէջ մնացած էր :

—Պարոն Սդա՛ր , պատասխանեց ձէք Րիան : Ա՛հ , պարոն ճարտարապետ , չպիտի ճանչնայի զձեզ : Գուբէն բաժնուելէս ի վեր աչերս առաջուան չափ վարժուած չեն մթութեան մէջ տեսնելու :

—Եւ ես հի՛մա կը յիշեմ անառակ տըղայ մը որ միշտ կ'երգէր , ասկից տա՛սն տարի առաջ : Դուն էիր այդ տղան , այնպէս չէ՞ :

—Ես ինքս , պարոն Սդար , եւ արհես-

տըս փոխելով՝ բնաւորութիւնս չփոխեցի,
կը տեսնէք ահա: Է՛հ, կարծեմ թէ աւելի
լաւ է խնդալ ու երգել քան լալ ու տըր-
տընջալ:

—Անշուշտ, ձէք Րիան: Հանքէն բաժ-
նուելէդ ի վեր ի՞նչ կ'ընես տեսնենք:

—Մէլրոզի ազարակը կ'աշխատիմ, Իր-
վայնի մօտ, Րէնֆրիուի կոմսութեան մէջ,
ասկից քառսուն մղոն հեռի: Ա՛հ, մեր Ա-
պըրֆոյլի ածխահանքերուն չհաւասարիւր
այս: Իրիչն աւելի լաւ կուգար ձեռքիս
քան բահը կամ խթանը: Ասկից զատ, վա-
ղեմի գուբին մէջ հնչուն անկիւններ,
զուարթ արձագանգներ կային որք հիա-
նալի կերպով քեզ ետ կը զրկէին երգերդ,
մինչդեռ հոն, վերք . . . : Ծերուկ Սիմո-
նին այցելութեա՞ն կ'երթաք, պարոն
Սդար:

—Այո, ձէք, պատասխանեց ճարտա-
բապետը:

—Արգելք չըլլամ ձեզի . . .

—Ի՞նչ պատճառաւ այսօր մեր հիւղա-
կը գացիր, ձէք, հարցուց Հարրի:

—Կ'ուզէի զքեզ տեսնել, ընկեր, պա-
տասխանեց ձէք Րիան, եւ հրաւիրել Իր-
վայնի տօնին: Գիտե՛ս, հովուական տիկը
ես կը փչեմ հոն: Պիտի երգե՛ն, պիտի
պարե՛ն:

—Շնորհակալ եմ, ձէք, բայց ինձ հա-
մար անկարելի է:

—Անկարելի՞:

—Այո, Պ. Սդարի այցելութիւնը կըր-
նայ երկարատեւ լինիլ, և վերադարձին
պարտիմ իրեն ընկերանալ մինչեւ Գէլլէն-
տըր:

—Է՛հ, Հարրի, Իրվայնի տօնին դեռ
ութ օր կայ: Մինչեւ այն ատեն, կ'են-
թադրեմ որ Պ. Սդարի այցելութիւնն ա-
ւարտի, և այն ատեն ա՛լ գործ մը չես
ունենար հանքին մէջ:

—Իրաւունք ունի, Հարրի, պատաս-
խանեց ձէյմս Սդար: Պէտք է օգուտ
քաղել ձէք ընկերօջէ հարաւէրէն:

—Է՛հ, լաւ, կ'ընդունիմ, ձէք, ըսաւ
Հարրի: Ութ օրէն դարձեալ կը տեսնուինք
Իրվայնի տօնին:

—Ո՛ւթ օրէն, որոշուեցա՛ւ, պատաս-
խանեց ձէք Րիան: Մնաս բարով, Հարրի:
Ծառայ եմ, պարոն Սդար: Ծատ գոհ ե-
ղայ վերստին զձեզ տեսնելով: Պիտի կըր-
նամ ձեր վրայօք լուր տալ բարեկամնե-
րուն: Ոչ ոք մոռցած է զձեզ, պարոն
ճարտարապետ:

—Եւ ես ոչ զոք մոռցած եմ, ըսաւ
ձէյմս Սդար:

—Ամէնուն կողմէ շնորհակալութիւն

կը յայանեմ, պատասխանեց ձէք Րիան :

—Երթաս բարով, ձէք, ըսաւ Հարրի վերջին անգամ մըն ալ սեղմելով իր ընկերոջ ձեռքը :

Եւ ձէք Րիան, իր երգը վերսկսելով, ընդհուպ անյայտ եղաւ քանահորին բարձրութեանց մէջ զորս իր կանթեղը կը լուսաւորէր ընդ աղօտս :

Քառորդ ժամ յետոյ, ձէյմս Սգար և Հարրի կ'իջնէին վերջին սանդուղն և ոտք կը դնէին գուբին վերջին յարկին հողին վրայ :

Եարօուի քանահորին խորոց բոլորչի հրապարակին շուրջ սկիզբ կ'առնուին գանազան ներքնուղիներ որք հանքին գետնածուխի վերջին երակին շահագործման ծառայած էին : Այդ ներքնուղիները կը խորասուզէին թերթաքարերու և աւազաքարի զանգուածին մէջ, ոմանք խոշոր անտաշ գերաններու տրապիղներով և այլ քարէ թանձր պատուարներով բռնուած : Ամենուրեք հողով լեցուցած էին շահագործման սպառած երակները :

Արհեստական մոյթերը կազմուած էին շրջակայ քարահանքերէն առնուած քարերով, և այժմ կը բռնէին հողն, այսինքն երրորդական և չորրորդական գետիներու կրկնակ յարկն որ երբեմն ձիւղ գետնա-

ծուխի զանգուածին վրայ կը հանգչէր : Մթութիւնը կը ընուր յայնժամ այս ներքնուղիներն որք յառաջագոյն լուսաւորուած էին կա՛մ հանքահանին կանթեղով, կա՛մ ելեկարական լոյսով, որուն գործածութիւնը վերջին տարիները մտցուած էր գուբերուն մէջ : Սակայն աղջամղջին փազուղիներն ա՛լ չէին հնչեր իրենց երկաթեայ գիծերուն վրայ թաւալող վակոնիկներուն ձռնչմամբ, ո՛չ յանկարծուստ գոցուող օդափոխ դռներուն աղմուկով, ո՛չ կառավարաց ձայներուն ժխորով, ո՛չ ձիերուն և ջորիներուն վրնջմամբ, ո՛չ գործաւորաց բրիչին հարուածներով, ո՛չ գետնածուխի զանգուածը պայթեցնող նիւթերուն որոտումով :

—Կ'ուզէ՞ք վայրկեան մը հանգիստ առնուլ, պարոն Սգար, հարցուց երիտասարդը :

—Ո՛չ, տղաս, պատասխանեց ճարտարապետն, որովհետեւ կ'ուզեմ ժամ առաջ հասնիլ ծերունի Սիմոնին բնակարանը :

—Ուրեմն ինձ հետեւեցէք, պարոն Սգար : Ես պիտի առաջնորդեմ ձեզ, թէև վստահ եմ որ կատարելապէս պիտի գտնէիք ձեր ճամբան ներքնուղիներու այս խաւարոջին բաւիղին մէջ :

—Այո, անշուշտ : Տակաւին մտքիս

մէջ է վազեմի գուբին բոլոր յատակա-
ձեւը :

Հարրի, առաջնորդելով ճարտարապե-
տին եւ իր կանթեղը վեր վերցնելով լա-
ւագոյնս լուսաւորելու համար զնա, խո-
րասուզեցաւ բարձր ներքնուղիի մը մէջ :
Երկուքին ալ ոտքերը կ'ընդհարէին փայտ-
եայ պահանդներուն որք երկաթեայ գի-
ծերը կը բռնէին շահագործման ժամա-
նակ :

Սակայն հազիւ յիսուն քայլ առած էին,
ահագին քար մը եկաւ ինկաւ ձէյմս
Սդարի ոտից առջեւ :

— Զգուշացէք, պարոն Սդար, դռնէց
Հարրի ճարտարապետին թեւը բռնելով :

— Քա՛ր մը, Հարրի. այս հինցած կա-
մարներն ա'լ պէտք եղածին չափ հաս-
տատ չեն տնտարակոյս, և . . .

— Պարոն Սդար, պատասխանեց Հար-
րի Փորտ, ինձ այնպէս կը թուի թէ այս
քարը նետուեցաւ . . . և մարդու մը ձե-
ռամբ նետուեցաւ :

— Նետուեցա՛ւ, գոչեց ձէյմս Սդար :
Ի՞նչ ըսել կ'ուզես, տղաս :

— Ոչինչ, ոչինչ . . . պարոն Սդար,
պատասխանեց Հարրի խուսափողական
կերպով, ոյր նայուածքն՝ որ լուրջ ար-
տայայտութիւն մը առած էր՝ գոգցես

կ'ուզէր ծակել այդ թանձր պատերը :
Շարունակենք մեր ճամբան : Թեւ տոնէք,
կ'աղաչեմ, և վախ չէք ունենար սխալ
քայլ առնլու :

— Ահա՛, Հարրի :

Եւ երկուքն ալ սկսան յառաջանալ,
մինչդեռ Հարրի ետին կը նայէր՝ իր կան-
թեղին լոյսն արձակելով ներքնուղոյն
խորութեանց մէջ :

— Մօտեցա՞նք, հարցուց ճարտարա-
պետը :

— Հազիւ տասն վայրկեան կայ :

— Լաւ :

— Բայց, կը մրմնջէր Հարրի, շա՛տ
զարմանալի է այս : Առաջին անգամ է որ
այսպիսի բան մը կը պատահի ինձ : Կար-
ծես թէ այդ քարը ճիշդ մեր անցնելուն
կ'սպասէր վար իյնալու համար :

— Հարրի, գիպուածի արդիւնք է այդ :

— Դիպուած . . . պատասխանեց երի-
տասարդը գլուխն երերցնելով : Այո . . .
դիպուած . . .

Հարրի կանգ առած էր : Մտիկ կ'ընէր :

— Ի՞նչ կայ, Հարրի, հարցուց ճարտարա-
պետը :

— Ինձ այնպէս թուեցաւ թէ մէկը կը
քալէ մեր ետեւէն, պատասխանեց երի-
տասարդ հանքահանն, որ աւելի ուշադրու-
թեամբ ունկն դրաւ :

Յետոյ .

—Ո՛չ, սխալած ըլլալու եմ, ըսաւ :
լաւ կրթնեցէք թեւիս, պարոն Սդար :
Իբր գաւազան գործածեցէք զիս . . .

—Հաստատուն գաւազան մը, Հարրի,
պատասխանեց ձէյմս Սդար : Քեզի պէս
պատուական տղէ մը աւելի լաւ գաւա-
զան չկայ :

Երկուքն ալ շարունակեցին լռիկ քայ-
լել խաւարամած ներքնուղւոյն մէջտեղէն :
Յաճախ, Հարրի, որ ակներեւ մտա-
տանջութեան մը մատնուած էր, ետին կը
դառնար կարենալու համար յանկարծակի
իմանալ հեռաւոր շջուկ մը կամ տեսնել
հեռաւոր նշոյլ մը :

Սակայն, իրենց առջին եւ ետին,
լռութիւն եւ աղջամուղջ միայն կը տի-
րէր :

ՔԱՌԻՆՈ Յ .

ՅՈՐՏ ԸՆՏԱՆԻՔԸ

Տասն փայրկեան յետոյ, ձէյմս Սդար
եւ Հարրի վերջապէս կ'եւնէին գլխաւոր
ներքնուղիէն :

Երիտասարդ հանքահանն եւ իր ըն-
կերն հասած էին բացաստանի մը խորը,
—եթէ սակայն այս բառը կրնայ նշանա-

կել ընդարձակ եւ խաւարոջին խոռոջ մը :
Այս խոռոջը սակայն բոլորովին զուրկ չէր
լոյսէ : Քանի մը ճառագայթներ կը հաս-
նէին նմա լեցեալ հորի մը բերնէն, որ
բարձրագոյն յարկերուն մէջ փորուած էր :
Տոչարդի գուբին օդափոխութիւնն այս
ճամբով կը կատարուէր : Իր զոյղն խտու-
թեան պատճառաւ, ներսի տաք օդը կը
քլուէր կ'երթար դէպի Եարօուի հորն :

Ուրե՛ն քիչ մը օդ եւ լոյս միանգա-
մայն թերթաքարի թանձր կամարէն կը
թափանցէին մինչեւ բացաստանը :

Հոն էր որ Սիմոն Փորտ կը բնակէր
տասն տարիէ ի վեր, իր ընտանեաց հետ
մէկտեղ, ստորերկրեայ բնակարան մը
թերթաքարի զանգուածին մէջ փորուած,
ճիշդ այն տեղն ուր երբեմն կը բանէին
հզօր մեքենայներն, որք Տոչարդի գուբին
մեքենական քարշումն ի գործ դնելու կը
ծառայէին :

Այս էր ահա այն բնակարանն ուր կը
մնար ծերունի գործավարը : Իր ունեցած
քիչ շատ կարողութեան շնորհիւ, —ար-
դիւնք աշխատալի երկար կենաց, —Սի-
մոն Փորտ կրնար ապրիլ արեգական տակ,
ծառերուն ներքեւ, երկրին ո՛ր քաղաքին
մէջ որ ուզէր . սակայն ինք եւ իրենները
նախամեծար համարած էին չբաժնուիլ

ածխահանքէն, ուր երջանիկ էին, միեւնոյն գաղափարները, միեւնոյն ճաշակներն ունենալով: Այո՛, սկովտիական հողին ներքեւ հազար հինգ հարիւր ոտք խորութեամբ թաղուած այդ բնակարանն հաճելի էր իրենց: Ուրիշ առաւելութիւններէ ի զատ, վախ չկար որ արքունի գանձուն տեսչութեան պաշտօնեայներն, որք զվսահարկն որոշելու պաշտօն ունին, գային անհանգիստ ընել այնտեղի բնակները:

Այդ ժամանակին, Սիմոն Ֆորտ, Տոչարդի դուբին նախկին գործավարն, առուգարար կը տանէր տակաւին իր վաթսուն և հինգ տարիները: Բարձրահասակ, անձեայ, հուժկու, գաւառակին ամէնէն նշանաւոր «ուշներէն» (1) մին կրնար նկատուիլ, այն գաւառակին որ այնչափ կորովի մարդիկ կը մատակարարէր Հայլէնաբըրներու զօրագունդերուն:

Սիմոն Ֆորտ կը սերէր հանքահաններու հին ընտանիքէ մը, և իր տոհմագրութիւնը կը հասնէր այն առաջին ժամանակներուն յորս շահագործուեցան Սկովտիոյ գետնածուխի հանքերը:

Առանց հնազանդութեան փնտռելու թէ

(1) Սունին, Սկովտիացին է, ինչպէս ճոն Պուլըն՝ Անգլիացին, և Բատտին՝ Իռլանտացին:

Յոյներն եւ Հոլովմայեցիները գետնածուխ գործածած են, թէ Չինացիք գետնածուխի հանքերն յօգուտ ի կիր կ'արկանէին Բրիտանի թուականէն շատ առաջ, առանց ջններու թէ հանքային վառելանիւթն իրօք իր անունը կը պարտի Հույնոս պայտարին (2) որ ի Պելճիա կ'ապրէր ժՖ դարուն, կարելի է հաստատել թէ առաջին անգամ Մեծին Բրիտանիոյ ածխահանքերու շահագործումը կանոնաւոր վիճակի մէջ դրուած է: Արդէն ժԱ դարուն, Գուլիէլմոս Աշխարհակալ իր զինակիցներուն միջեւ կը բաժնէր նիւքեասի ածխահանքին արդիւնքները: ԺԳ դարուն, «ժովային ածուխի» շահագործման արտօնութիւն մը տրուած էր Հենրիկոս Գ է: Վերջապէս, նոյն դարուն վերջերն, յիշատակուած են Սկովտիոյ եւ Կալլէսի երկրին ածխահանքերը:

Այդ ժամանակին էր որ Սիմոն Ֆորտի նախնիք մտան կալեդոնեան հողին ալուցը մէջ և ա՛լ յորդուոց որդի չեղան անկից: Պարզ գործաւորներ էին ասոնք: Թիապարտներու պէս կ'աշխատէին թանկագին վառելանիւթն հանելու: Մինչեւ իսկ կը

(2) Գետնածուխին Փրանսական անունն է houille.

կարծուի թէ հանքահաները, ճիշդ այդ ժամանակի աղագործներուն պէս, ճշմարիտ ստրուկներ էին յայնժամ: Արդարև, ժէ դարուն, այդ կարծիքն այնչափ հաստատուած էր ի Սկովտիա, որ, թեկնածուին պատերազմին հետ, վախցուեցաւ որ Նիւքեասլի քսան հազար հանքահաները չապստամբին՝ ձեռք ձգելու համար ազատութիւն մը, — գոր կը կարծէին թէ չունին:

Ինչ որ ալ ըլլայ, Սիմոն Ֆորտ կը հպարտանար սկովտիացի հանքահաններու այդ մեծ ընտանիքին վերաբերելուն համար: Իր ձեռքերով աշխատած էր հոն իսկ ուր իր պապերը գործածած էին քարհատը, լծակն և բրիչն: Երեսուն տարեկան եղած ատեն գործավար էր Տոչարդի գուբին, որ Ապըրֆոյլի ածխահանքերուն ամէնէն կարևորն էր: Ձերմասպէս կը սիրէր իր արհեստը: Երկար տարիներ, իր պաշտօնը կատարեց եռանդեամբ: Իր միակ վիշտն էր տեսնել որ խաւը կը նուազի և գուշակել այն մերձակայ ժամն ուր հանքին գետնածուխը պիտի սպառէր:

Այդ ատեն էր որ ինքզինքը նուիրեցնոր երակներ գտնելու Ապըրֆոյլի բոլոր գուբերուն մէջ, որք հողին տակէն հազորդակից էին իրարու: Շահագործման վերջին

ատենները մէկ երկու երակ գտնելու երջանկութիւնն ունեցած էր: Իր հանքահանի բնագոյն հրաշալի կերպով կը ծառայէր նմա, եւ ճէյմս Սդար ճարտարապետը շատ կը գնահատէր զնա: Կարծես թէ գետնածուխի զանգուածները կը կուահէր ածխահանքին ալուցը մէջ, ինչպէս ջրադէտ գործի մը կը կուահէ ակունքն հողի խաւին ներքեւ:

Սակայն, որպէս ըսինք, եկաւ ժամն յորում այրելի նիւթը բոլորովին սպառեցաւ ածխահանքին մէջ: Դրածակութիւններն ապարդիւն մնացին: Ակներեւ եղաւ թէ ածխահանքը բոլորովին հատած լինցած էր: Շահագործումը դադարեցաւ: Հանքահանները քաշուեցան դացին:

Պիտի հաւատա՞ք: Մեծ մասին համար անհնարին մորմոք մը եղաւ այս: Ամէն անոնք որ գիտեն թէ մարդս ներքնապէս կը սիրէ իր տանջանքը, չպիտի զարմանան առ այս: Սիմոն Ֆորտ ամէնէն աւելի ըզգածուեցաւ: Գերազանց տիպարն էր հանքահանին ոյր կեանքն անլուծելի կերպով կապուած է իր հանքին կենաց: Իր ծնունդէն ի վեր, անընդհատ հոն բնակած էր, և երբոր աշխատութիւնք երեսի վրայ թողուեցան, ուզեց տակաւին անդ մնալ: Մնաց ուրեմն: Իր Հարրի գաւկին

յանձնեց ստորերկրեայ բնակարանին պարենաւորման հոգն . իսկ ինք , տասն տարիէ ի վեր , տասն անգամ ելած չէր հողին երեսը :

«Վեր ելլալ : Ի՞նչ հարկ կայ» կը կըրկնէր , եւ բնաւ չէր հեռանար իր սեւ աշխարհէն :

Մնաց որ , այդ կատարելապէս առողջ միջավայրին մէջ , ուր միջակ բարեխառնութիւն մը կը տիրէր հանապազ , ծերունի գործավարը չէր ճանչնար ո՛չ ամրան տաքութիւններն , ո՛չ ձմրան ցուրտերը : Իրենները քաջառողջ էին : Ալ ուրիշ ի՞նչ բանի փափաքէր :

Սրտին խորէն սակայն մեծապէս տըխրած էր : Հառաչանօք կը յիշէր երբեմնի ոգեւորութիւնը , շարժումը , այնքան փութաջանութեամբ չահագործեալ գուբին մէջ : Այսու հանգերձ հաստատուն դազափար մը ոյժ կուտար նմա միշտ :

«Ո՛չ , ո՛չ , ածխահանքն սպառած չէ» կը յեղյեղէր :

Եւ եթէ մէկը Սիմոն Ֆորտի առջեւ տարկուսէր երբեք թէ վաղեմի Ապըրֆոյլն որ մը պիտի վերահենդանանայ , գէշ դիրքի մէջ պիտի գտնուէր : Երբեք յուսահատած չէր նոր խաւ մը գտնելէ որ իր նախկին պայծառութիւնը պիտի վերադարձնէր

ածխահանքին : Օ՛հ , եթէ հարկ ըլլար , սիրայօժար ձեռք պիտի առնուր վերստին հանքահանի բրիչն , եւ իր ծերունի բազուկներն որք կաշմբուռն էին տակաւին , ու ժգնութեամբ պիտի հարուածէին տապառաժը : Ուստի խաւարամած ներքնողիներուն մէջ կը թափառէր , մերթ միայնակ , մերթ իր զաւկին հետ , դիտելով , փնտռելով , եւ ամէն օր իր բնակարանը կը վերադառնար խոնջ եւ վաստակարեկ , բոցց ո՛չ յուսահատ :

Սիմոն Ֆորտի արժանաւոր ընկերուհին էր Մաճ , բարձրահասակ և պնդակազմ : Իր ամուսնոյն նման , Մաճ չէր ուզեր բաժնուիլ Տոչարդի գուբէն : Ի՛նք ալ կ'զգար նորա բոլոր յոյսերն ու ցաւերը : Կը քաջալերէր , յառաջ կը մղէր զնա , և կը խօսէր նմա տեսակ մը ծանր լրջութեամբ որ կը ջեռուցանէր ծերունի գործավարին սիրաբ :

«Ապըրֆոյլ քնացած է միայն , Սիմոն , կ'ըսէր նմա : Դուն իրաւունք ունիս : Ասիկա պարզ հանգիստ մըն է , ոչ թէ մահ :»

Մաճ եւս կարեւորութիւն չէր տար արտաքին աշխարհին և գիտէր երեք հոգւոյ կենցաղի մը երջանկութիւնը կեդրոնացնել մութ հիւզակին մէջ :

Ճէյմս Սդար անդ հասաւ :

Ճարտարագետին կ'սպասէին : Սիմոն Ֆորտ, իր դրան առջեւ կանգնած, երբ հեռուէն տեսաւ Հարրիի կանթեղն որ կը ծանուցանէր իր նախկին տնօրէնին գալուստն, յառաջացաւ դէպի նա :

« Բարի՛ եկաք, պարոն ձէյմս, գոչեց նմա ձայնով մը որ թերթաքարի կամարին ներքեւ կը հնչէր : Բարի՛ եկաք ծերունի գործավարին բնակարանը : Ֆորտ ընտանեաց տունը, թէև հողին տակ թաղուած հազար հինգ հարիւր ոտք խորութեամբ, ասպնջական է դարձեալ :

— Ի՞նչպէս էք, պատուական Սիմոն, հարցուց ձէյմս Սդար սեղմելով իր հիւրընկալին իրեն կարկառած ձեռքը :

— Շատ լաւ, պարոն Սդար : Ի՞նչպէս կ'ուզէք որ լաւ չըլլամ աստ, օդին ամէն գէշութիւններէն զերծ : Չեր տիկիններն որք ամառը կ'երթան օդ առնուլ ի նիւ Հէյլըն կամ Բորդօ-Պէլլօ (*), լաւագոյն կ'ընէին քանի մը ամիս անցունելով Ապըրֆոյլի ածխահանքին մէջ : Բնաւ վտանգ չէին ունենար խոշոր հարբուխ մը ձեռք ձգելու աստ, ինչպէս հնաւուրց մայրաքաղաքին խոնաւ փողոցներուն մէջ :

(*) Երկային բաղանեաց կայարանք էտիմպուրի շրջակայքը :

— Ես ալ բոլորովին համակարծիք եմ ձեզ, Սիմոն, պատասխանեց ձէյմս Սդար որ գոհ էր առաջուան պէս գտնելով գործավարը : Իրա՛ւ, կը հարցնեմ ինքնին թէ ինչո՞ւ համար Գէյնէնկէյլի տունս չեմ փոխեր ձերինին դրացի ուրիշ հիւղակի մը հետ :

— Պատրաստ ենք ձեզ ծառայելու, պարոն Սդար : Ես կը ճանչնամ ձեր նախկին հանքահաններէն մին որ մասնաւորապէս երջանիկ պիտի ըլլար ձեր եւ իմ միջեւ լուր պատ մը ունենալով :

— Մա՞ճ ի՛նչպէս է, հարցուց ճարտարագետը :

— Բարի կ'ինը ինձմէ ալ աղէկ է, եթէ այս կարելի բան է, պատասխանեց Սիմոն Ֆորտ, եւ հիմակուրնէ՛ ուրախութենէն ի՛նչ ընելը չգիտէ՛ զձեզ իւր սեղանին վրայ տեսնելու համար : Կարծեմ թէ ինքզինքը գերազանցած ըլլալու է զձեզ ընդունելու համար :

— Պիտի տեսնենք, Սիմոն, պիտի տեսնենք, ըսաւ ճարտարագետը, զոր լաւ ճաշի մը լուրը չէր կրնար անտարբեր թողուլ այս երկար ուղեւորութենէն յետոյ :

— Անօթի՞ էք, պարոն Սդար :

— Բոլորովին անօթի : Ճամբորդութիւնն ախորժակս բացաւ : Անտանելի օդով ճամբորդութիւն մը ըրի :

—Ա՛հ, վերը կ'անձրևէ, պատասխանեց Յորտ արգահատանաց յայտնի կերպարանքով մը:

—Այո՛, Սիմոն, և Յորթհի ջուերն այսօր ծովու մը պէս յուզեալ են:

—է՛հ, պարոն ձեյմս, հոս բնա՛ւ չանձրեւեր: Սակայն պէտք չունիմ ձեզ մի առ մի ըսելու այնպիսի առաւելութիւններ զորս դուք ինձմէ աղէկ գիտէք: Ահա հասանք մեր բնակարանն: Ամէնէն կարևորն այս է, և, կը կրկնեմ ձեզ, բարի՛ եկաք:

Սիմոն Յորտ, որում կը հետեւէր Հարրի, ներս մտցուց զձէյմս Սդար, որ ինքզինքը գտաւ ընդարձակ սրահի մը մէջ՝ լուսաւորեալ քանի մը կանթեղներով, որոց մին կախուած էր ձեղունին բազմերանգ մարդակներէն:

Սեղանը, բաց գոյն սփռոցով մը ծածկած, կոշնականներուն կ'սպասէր, որոց վերապահեալ էին հին կաշիով չորս աթոռներ:

—Բարե՛ւ, Մաճ, ըսաւ ճարտարապետը:

—Աստժու բարին, պարոն ձէյմս, պատասխանեց քաջարի Սկովտուհին, որ ոտք ելաւ ընդունելու համար իր հիւրը:

—Մեծ գոհունակութիւն կ'զգամ զձեզ վերստին տեսնելուս, Մաճ:

—Իրաւունք ունիք, պարոն ձէյմս, որովհետեւ հաճելի բան է ինքզինքը վերստին գտնել անոնց մէջ որոց նկատմամբ միշտ բարի գտնուած է մարդ:

—Ապուրը կ'սպասէ, կնի՛կ, ըսաւ յայնժամ Սիմոն Յորտ, և պէտք չէ սպասեցընել զայն, ոչ ալ զՊ. Յորտ: Հանքահանի անօթութիւն մ'ունի, և պիտի տեսնէ թէ մեր տղան բանէ մը պակաս չթողուր զմեզ մեր տանը մէջ:—Հա՛, աղէկ միտքս ինկաւ, Հարրի, յարեց ծերունի գործավարը զառնալով դէպի իր զաւակը, ձէք Րիան եկաւ զքեզ տեսնելու:

—Գիտեմ, հայր: Ետրօուի հորին մէջ հանդիպեցանք իրեն:

—Բարի և զուարթ ընկեր մըն է, ըսաւ Սիմոն Յորտ: Սակայն կարծես թէ վերը մտալով հաճոյք կ'զգայ: Երակներուն մէջ հանքահանի ճշմարիտ արիւն չունի:—Ի սեղան, պարոն ձէյմս, եւ առատօրէն ճաշեք, որովհետեւ կարելի է որ շատ ուշ ընթրենք:

Այն միջոցին երբ ճարտարապետն եւ իր հիւրընկալք ի սեղան պիտի բազմէին.

—Վայրկեան մը, Սիմոն, ըսաւ ձէյմս Սդար: Կ'ուզէ՞ք որ լաւ ասորժակով ճաշեմ:

—Մեծ պատիւ մը կ'ընէք մեզ այդու,

պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն ֆորտ :

—Լա՛ւ . ասոր համար պէտք է բնաւ մտատանջութիւն չունենալ:—Արդ, երկու հարցում ունիմ ձեզ ուղղելիք :

—Ըրէք, պարոն ձէյմս :

—Ձեր նամակը կը խօսի ինձ համար մեծ կարևորութիւն ունեցող զեկոյցի մը վրայ :

—Արդարեւ, մեծ կարևորութիւն ունեցող :

—Ի՞նձ համար :

—Ձեզ համար ալ, ինձ համար ալ, պարոն Սդար : Սակայն կը փափաքիմ ճաշէն յետոյ եւ տեղւոյն վրայ միայն ձեզ ընել այդ զեկոյցն : Առանց աղոր, չպիտի ուղեիք ինձ հաւատալ :

—Սիմոն, յարեց ճարտարապետը, լաւ նայեցէք ինձ . . . այդպէս . . . աչերուս մէջ : Կարեւորութիւն ունեցող զեկոյց մը . . . Այո՛ . . . Լա՛ւ : Աւելին չեմ հարցներ ձեզ, յարեց, որպէս թէ իր յուսացած պատասխանը կարդացած լինէր ծերունի գործավարին նայուածքին մէջ :

—Իսկ ե՞րկրորդ խնդիրն, հարցուց գործավարը :

—Գիտէ՞ք, Սիմոն, թէ ո՞վ է այն անձն որ զայս գրած է ինձ, պատասխանեց

ճարտարապետը, ներկայացնելով անանուն նամակը զոր ստացած էր :

Սիմոն ֆորտ առաւ նամակն եւ ուշի ուշով կարդաց :

Յետոյ, իր զաւկին ցոյց տալով զայն .

—Կը ճանչնաս այս գիրը, ըսաւ :

—Ո՛չ, հայր, պատասխանեց Հարրի :

—Եւ այս նամակն Ապրըֆոյլի նամակատան կնի՞քը կը կրէր :

—Այո, ձերինին պէս, պատասխանեց ձէյմս Սդար :

—Ի՞նչ կը մտածես այս բանին վրայ, Հարրի, ըսաւ Սիմոն ֆորտ ոյր ճակատը մթազնեցաւ պահ մը :

—Կը մտածեմ, հայր, պատասխանեց Հարրի, թէ մէկը շահ ունի արգիլելու զՊ. ձէյմս Սդար որ ձեր իրեն տուած Ժամագրութեան չգտնուի :

—Բայց ո՞վ, գոչեց ծերունի հանքահանը : Ո՞վ կրցած է այդչափ խոր թափանցել իմ մտածմանս մէջ . . . :

Եւ Սիմոն ֆորտ խորասուզեցաւ ծանր խոկմանց մէջ, ուսիկց ընդհուպ հանեց զինքն Մաճի ճայնը :

—Սեղան նստինք, պարոն Սդար, ըսաւ : Ապուրը պիտի պաղի : Հիմակու հիմա ա՛լ չմտածենք այդ նամակին վրայ :

Եւ, ծերուկ կնոջ հրաւէին վրայ, իւ-

բաքանչիւրը բազմեցաւ իր տեղը սեղանին առջեւ, — Ճէյմս Սքար Մաճի դէմ, պատուելու համար զնա, — եւ հայր ու որդի իրարու դէմ:

Սկովտիական լաւ ճաշ մը եղաւ այս: Նախ կերան հոգի մը, ապա որուն միտք կը լողար ընտիր արգանակի մը մէջ: Ծերունի Սիմոնի խօսքին նայելով, հոգի պատրաստելու մէջ ոչ ոք կրնար մրցիլ իր ընկերուհւոյն դէմ:

Քրիստոսի համար ալ կարելի էր այդպէս զուրցել: Քրիստոսի պրասով եւ աքաղաղի մտով համեմեալ կերակուր մըն էր, որ գովեստից միայն արժանի էր:

Այս ամէնը ուղղուեցաւ անգլիական գերընտիր գարեջրով մը, որ Սկոտիոյ գարեջրի լաւագոյն գործարաններէն էր ելած:

Սակայն գլխաւոր կերակուրն էր հաճիւք, ազգային կարկանդակ, մսէ եւ գարիի ալիւրէ պատրաստուած: Այս նշանաւոր կերակուրն, որ Պըրնս բանաստեղծին ներշնչեց իր լաւագոյն գեղծներէ մին, այս աշխարհիս գեղեցկագոյն բաներուն վերապահեալ բազմն ունեցաւ. — երազի մը պէս անցաւ:

Մաճ իր հիւրին անկեղծ մեծարանայ արժանացաւ:

Ճաշն աւարտեցաւ աղանդերով մը որ կը բաղկանար մսէ և նուրբ ճաշակաւ պատրաստուած խոզի (վարսակէ հաստեայ), ի միասին և քանի մը դաւաթ խոզի, հատիկներէ պատրաստուած ընտիր օղի որ քսանահինգ տարեկան էր, — ճիշդ հարրիի տարիքը:

Այս ճաշը տեւեց ճիշդ ժամ մը: Ճէյմս Սքար և Սիմոն ֆորա ոչ միայն լաւ կերած էին, այլ և լաւ խօսակցած, — մասնաւորապէս Ապըրֆոյի հնաւուրց անխահանքին անցելոյն վրայ:

Հարրի, ինք, աւելի՛ լուռ մնացած էր: Երկու անգամ սեղանէն և տունէն իսկ ելած էր: Ակներեւ էր թէ անհանգըստութիւն մը կ'զգար քարին պատահարէն ի վեր, և կ'ուզէր դիտել հիւղակին շրջակայքը: Անանուն նամակն ալ իր կասկածներն աւելցնելու հանգամանքն ունէր:

Նորա դուրս ելած մէկ միջոցին, ճարտարապետն ըսաւ Սիմոն ֆորտի և Մաճի.

— Ի՛նչ պատուական տղայ մը ունիք, բարեկամներս:

— Այո, պարոն Ճէյմս, բարի և անձնուէր տղայ մը, պատասխանեց աշխուժիւ ծերունի գործավարը:

— Ձեզի հետ մէկտեղ հաճոյք կ'զգայի հիւղակին մէջ:

— Չուզէր բաժնուիլ մեզնէ :

— Սակայն չը՞ պիտի ամուսնացնէք զինքը :

— Ամուսնացնե՛լ Հարրին, գոչեց Սիմոն Ֆորտ, Որո՞ւ : Վերի աղջիկներէն միո՞յն, որ սիրէ հանդէսները, պարն, որ իր գաւառը նախամեծար համարի մեր ածխահանքէն : Հարրի չուզէր այսպիսի բան :

— Սիմոն, պատասխանեց Մաձ, կարծեմ չպիտի պահանջես երբեք որ մեր Հարրին կին մը չառնու իրեն :

— Բան մը չպիտի պահանջեմ, պատասխանեց ծերունի հանքահանը, սակայն արտորալու պէտք չկայ : Ո՞վ գիտէ թէ իրեն համար չպիտի գտնենք . . . :

Հարրի ներս կը մտնէր այդ պահուն, և Սիմոն Ֆորտ լռեց :

Երբ Մաձ սեղանէն ելաւ, ամէնքն ալ հետեւեցան նմա և գնացին պահ մը նըստիլ տան դրան առջեւ :

— Էհ, Սիմոն, ըսաւ ճարտարապետը, մտիկ կ'ընեմ քեզ :

— Պարոն ձէյյան, պատասխանեց Սիմոն Ֆորտ, ձեր ականջներուն պէտք չունիմ ալ ձեր սրունքներուն :— Լաւ մը հանգըստացած էք :

— Լաւ հանգստացած և լաւ կազդուրուած եմ, Սիմոն : Պատրաստ եմ ձեզ ընկերանալու որ ուզէք :

— Հարրի, ըսաւ Սիմոն Ֆորտ դէպի եր զաւակը դառնալով, վառէ մեր ապահովութեան կանթեղները :

— Ապահովութեան կանթեղնե՛ր կ'առնուք, գոչեց ձէյյան Սդար բաւական զարմացեալ, որովհետեւ կրիզուի պայթումներու վախ չկար բնաւ գետնածուխէ բոլորովին զուրկ գուրի մը մէջ :

— Այո, պարոն ձէյյան, առ ի զգուշութիւն :

— Արդեօք հանքահանի զգեստ ալ հագնիլ չը՞ պիտի առաջարկէք ինձ, պատուական Սիմոն :

— Դեռ ոչ, պարոն ձէյյան, դեռ ոչ, պատասխանեց ծերունի գործաւորն ոյր աչերը տարօրէն իմն կը փողփողէին իրենց խորին կողիճներուն ներքեւ :

Հարրի, որ տուն դարձած էր, գրեթէ նոյնհետայն դուրս ելաւ, իր հետ բերելով ապահովութեան երեք կանթեղ :

Հարրի կանթեղներէն մին յանձնեց ճարտարապետին, միւսն իր հօր, եւ երրորդը կախեց իր ձախ ձեռքէն, մինչդեռ աջ ձեռքը կը զինուէր երկար գաւազանով մը :

— Ճամբայ ելնենք, ըսաւ Սիմոն Ֆորտ, որ տանը դրան առջեւ դրուած հաստատուն բրիչ մ'տուաւ :

— Ճամբայ՝ ելնենք, պատասխանեց ճարտարապետը: — Կրկին տեսութիւն, Մաճ:

— Աստուած օգնական ըլլայ ձեզ, պատասխանեց Սկովտուհին:

— Լաւ ընթրիք մը, կնիկ, կ'իմանա՞ս, գոչեց Սիմոն Ֆորտ: Վերադարձին անօթեցած պիտի ըլլանք, լաւ ընդունելութիւն մը պիտի ընենք սեղանիդ:

ՊԼՈՒԾ Զ.

ՔԱՆԻ ՄԸ ԱՆԲԱՅՍՏՐԵԼԻ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Յայտնի է թէ աւելորդապաշտական դաւանութիւնք ի՛նչ են վերին եւ ստորին Սկովտիոյ մէջ: Քանի մը գաւառներու մէջ, հողագործները՝ գիշերներն հաւաքուելով՝ կը սիրեն կրկնել գերհիւսիսային դիցաբանութենէն առնուած զրոյցները: Կրթութիւնը, թէեւ ընդարձակապէս եւ ազատական ոգւով տարածուած, չէ կրցած տակաւին իբր կեղծիք վանելայդ առասպելներն, որք կարծես հնոյն Կալեդոնիոյ հողէն անբաժան են: Ոգիներու եւ ուրուականներու, դեւերու եւ պարիկներու երկիրն է այդ տակաւին: Անդ կ'երևին միշտ չար ոգին որ դրամ առնելով միայն

կը հեռանայ, Հայլէնտըրներու Սիւն որ կրկնատեսութեան ձիրքով մը կը գուշակէ մօտալուտ մահերը, Մէյ Մուլլան որ թաւաստել թւերով մանկամարդ աղջկան մը կերպարանքին տակ կ'երևի եւ կ'ազդարարէ ընտանեաց իրենց ապագայ դժբաղդութիւնները, Պրէնչայ պարիկն որ չարաշուք պատահարները կը ծանուցանէ, Պրոնիներն որոց յանձնուած է ընտանեկան կահ կարասեաց պահպանութիւնն, Եոնի-ֆոն որ մասնաւորապէս կը յաճախէ Քէնդրայն լճին վայրի խորշերն, — եւ բազում ուրիշներ:

Աւելորդ է ըսել թէ սկովտիական ածխահանքերու ժողովուրդն ալ իր բաժինը պարտէր ունենալ այդ դիցաբանական առասպելներուն եւ առակներուն մէջ:

Եթէ Սկովտիոյ լեռները լեցուն են դիւթական էակներով բարի կամ չար, առաւելապէս խաւարամած ածխահանքերը բնակավայր լինելու էին մինչեւ իրենց վերջին խորութեանց մէջ: Ո՞վ կը դըրդեցնէ ածխահանքը մորկայոյց գիշերներուն, ո՞վ երեւան հանել կուտայ նոր երակներ, ո՞վ կը վառէ կրիզուն եւ կը պատրաստէ ահռելի պայթումներն, եթէ ոչ հանքի ոգի մը:

Գէթ այս կարծիքը տարածուած էր

այդ աւելորդապաշտ Սկովտիացւոց մէջ՝ Արդարեւ, հանքահաններուն մեծ մասը կը հաւատային գերբնական զօրութեանց, մինչդեռ իրօք Ֆիզիքական երեւոյթներ էին ասոնք եւեթ, եւ մարդ վայրապար պիտի յոգնէր անոնց կարծիքները ջրեւ ուզելով: Նանրահաւատութիւնն ո՞ր կըրնար աւելի ազատօրէն տարածուիլ քան այդ անդունդներուն խորը:

Արդ, Ապըրֆոյլի ածխահանքերն, առասպելներու երկրին մէջ շահագործուելնուն համար, աւելի յարմար էին նիւթ լինելու ամէն գերբնական ենթադրութեանց:

Հետեւաբար առասպելները կը վիստային անդ: Պէտք է ըսել նաեւ թէ ինչ ինչ երեւոյթներ, որք մինչեւ այն ատեն անբացատրելի մնացած էին, նոր պատճառ մը կը լինէին հանրային աւելորդապաշտութեան:

Տոջարդի գուբին նանրահաւատներուն առաջի կարգը կը բռնէր ձէք Ռիան, Հարրիի ընկերը: Գերբնականին ամէնէն մեծ կուսակիցն էր նա: Այդ բոլոր խօսական պատմութիւնները կը փոխէր երգերու, որք մեծ յաղթանակներ կուտային նմա ձմրան տքնութեանց մէջ:

Սակայն ձէք Ռիան չէր միայն աւելոր-

դապաշտը: Իր ընկերներն եւս մեծաբարբառ կը հաստատէին թէ Ապըրֆոյլի գուբերն ոգիներով պաշարուած էին, թէ ինչ ինչ անըմբռնելի էակներ յաճախակի կ'երեւէին անդ, ինչպէս կը պատահէր լեռնային Սկովտիոյ մէջ: Իրենց խօսքին նայելով, արտասովոր բանը այն կը լինէր եթէ այս այսպէս չըլլար: Կրդարեւ, այդ խաւարչուտ եւ խորին ածխահանքէն աւելի բարեյարմար տեղ մը կա՞ր ոգիներու, պարիկներու եւ ցնորական տուամներու ուրիշ դերակատարաց ընակութեան համար: Թատերաբեմը բոլորովին պատրաստ էր, ինչո՞ւ համար գերբնական էակները չ'գային անդ խաղալ իրենց դերը:

Այսպէս կը արամաբանէին ձէք Ռիան եւ իր Ապըրֆոյլի ածխահանքին ընկերները: Ըսուեցաւ թէ զանազան գուբերն իրենց մէջտեղ հաղորդակից էին ստորերկրեայ երկար ներքնուղիներով, որք երակներուն մէջտեղ բացուած էին: Այսպէս Սքըրլինի կոմսութեան միջեւ կը գտնուէր ահագին զանգուած մը ներքնուղիներով ախօսեալ, խոռոչներով ծակած, քանահորերով ձեղջուած, տեսակ մը ստորերկրեայ լաբիւրինթոս որ լայնաճաւալ մրջնոցի մը տեսիլը կ'ընծայէր:

Ուստի զանազան գուբերու հանքահաններն յաճախակի կը պատահէին միմեանց, թէ՛ երբ շահագործման աշխատութեանց երթային, թէ՛ երբ վերադառնալին անտի: Ադկից միշտ դիւրութիւն ունէին խօսքեր փոխանակելու և մէկ գուբէն ի միւսն չըջաբերելու պատմութիւններ որոց ծագումն առնուած էր անխահանքէն: Իրենց պատմութիւններն այսպէս կը փոխանցուէին հրաշալի արագութեամբ, բերնէ բերան անցնելով և բնականաբար ստուարանալով:

Սակայն երկու մարդիկ, միւսներէն աւելի ուսեալ և աւելի դրական բնաւորութեան տէր, միշտ դիմադրած էին այդ ընդհանուր հոսանքին: Բնաւ չէին ընդունիր ոգիներու, ուրուականներու և պարիկներու միջամտութիւնը:

Սիմոն Ֆորտն և իր զաւակն էին սոքա: Եւ ապացուցին զայդ շարունակելով բնակիլ խաւարամած խողոզին մէջ, Տոչարդի գուբին լքումէն յետոյ: Թերեւս բարին Մաճ հակում մը ունէր դէպի գերբնականն, որպէս ամէն Սկովտուհի լեբանց: Բայց հարկադրուած էր ինքն իրեն պատմելու այդ տեսիլքներու պատմութիւնները, բան մը զոր խղճի մտօք կ'ընէր, չկորուսանելու համար վաղեմի աւանդութիւնները:

Սիմոն և Հարրի Ֆորտ եթէ մինչեւ իսկ իրենց ընկերներուն ջափ դիւրահաւան լինէին, անխահանքը չ'պիտի թողուին ո՛չ ոգիներուն, ո՛չ պարիկներուն: Նոր երակ մը գտնելու յոյսը դիմագրաւել պիտի տար իրենց ոգիներու ամէն ցնորական խումբ: Մէկ կէտի մը համար միայն դիւրահաւան էին. չէին կրնար ընդունիլ որ Ապըրֆոյլի անխահանքը բողբոզին սպառած ըլլայ: Կարելի է իրաւամբ ըսել թէ Սիմոն Ֆորտ և իր զաւակն այս մասին «անխագործին հաւատքն» ունէին, այդ հաւատքն յԱստուած զոր ոչինչ կրնայ խախտել:

Ասոր համար, տասն տարիէ ի վեր, առանց օր մը զանց ընելու, յամառաբար, իրենց համոզմանցը մէջ անդրդուելի, հայրն և որդին կ'առնուին իրենց բրիչը, գաւազանն և կանթեղը: Այսպէս երկուքն ալ կ'երթային, փնտռելով, չոր հարուածով մը ցնցելով ժայռը, մտիկ ընելով թէ նպաստաւոր ձայն մը չէ՞ր տար:

Քանի որ դրածակութիւններն յառաջ տարուած չէին մինչեւ նախնական գետնին հատաքարը, Սիմոն և Հարրի Ֆորտ համաձայն էին թէ հետազօտութիւնն, որ այսօր աւելորդ էր, կրնար օգտակար լինիլ վաղը, և թէ հարկ էր վերսկսիլ զայն:

իրենց կեանքը պիտի անցունէին փորձելով Ապրիլի 1-ին անցանքին վերադարձնել իր նախկին բարօրութիւնը: Եթէ հայրն ընկճէր յաջողութեան ժամէն առաջ, տղան գործը պիտի վերսկսէր ինքն միայնակ:

Միանգամայն, անցանքին այս երկու պահնորդները կ'այցէին զնա իր պահպանութեան տեսակէտով: Ապահով կը լինէին խոռոչներուն մէջ լցուած հողին և կամարներուն հաստատութեան մասին: Կը փնտռէին թէ փլուզման մը երկիրը կա՞ր, և թէ ստիպողական հարկ կա՞ր լեցնելու փոսին մէկ մասը: Կը քննէին վերին ջրերուն մղման հետքերը, շաւղէն կը դարձնէին զայնս, և ջրանցներ շինելով կը տանէին մինչեւ ջրհոր մը: Վերջապէս իրենք զիրենք յօժարակամ պաշտպան և պահապան կարգած էին այս անպտուղ գետնին, ուսկից ելած էին ա՛յնքան հարստութիւններ, որք այժմ ցնդած էին մուխի ձեւին տակ:

Այդ պտոյտներու միոյն ժամանակ, Հարրի ապշութեամբ դիտեց ինչ ինչ երեւոյթներ որոց բացատրութիւնն ի զուր կը փնտռէր:

Այսպէս, քանի քանի անգամ, երբ անձուկ ներքնուղիէ մը կ'անցնէր, իրեն թը-

ուեցաւ լսել ձայներ, նման այն ձայներուն զորս խոռոչներուն մէջ լցուած հողին երեսին վրայ զարնուած բրջի ուժգին հարուածներ յառաջ պիտի բերէին:

Հարրի որ չէր սոսկար ո՛չ գերբնականէն, ո՛չ բնականէն, քայլերն երազած էր յանկարծակիի բերելու համար այս խորհրդաւոր աշխատութեան պատճառը:

Ներքնուղին ամայի էր: Երիտասարդ հանքահանը, պատին վրայ պտտցնելով կանթեղը, չտեսաւ բնաւ բրիջի հարուածի ո եւ է նորագոյն հետք: Հարրի կը հարցնէր ինքնին թէ ձայնատածութեան պատրանքի մը, կամ ո եւ է տարօրինակ ու խօլական արձագանգի մը խաղալիկը չէ՞ր լիներ:

Ուրիշ անգամներ, յանկարծակի լոյսն ուղղելով դէպի կասկածելի խոռոչ մը, կարծած էր տեսնել ստուեր մը, իրոյցած էր ընդ առաջ: Ոչինչ, — մինչեւ իսկ երբ ո եւ է ելք թոյլ չէր տար մարդկային էակի մը խուսափիլ իր հալածանքէն:

Ամսէ մ'ի վեր երկու անգամ, Հարրի, գուբին արեւմտեան մասն այցելելով, որոշակի իմացաւ հեռաւոր պայթիւններ, որպէս թէ հանքահան մը կը փռնկցնէր պայթուցիկ փամփուշտ մը,

Վերջին անգամուն, մանրակրկիտ խու-

զարկութիւններէ յետոյ, տեսած էր թէ մոյթ մը խորտակուած էր բռչի հարուածով մը:

Իր կանթեղին լուսով, Հարրի ուշի ուշով քննեց աւերեալ պատը: Այդ պատը վերջէն բերուած լցուած քարերով շինուած չէր, այլ թերթաքարի խառով մը, որ մինչեւ այդչափ խոր եկած հասած էր գետնածուխի զանգուածին վրայ: Արդեօք այդ հարուածին նպատակն էր նոր երա՞կ մը գտնել եթէ ոչ ուզած էին անխահանքին այդ մասը փլցնել: Հարրի զայս հարցուց ինքնին, երբ իրողութիւնն հօրը պատմեց. ո՛չ ծերունի գործավարն և ո՛չ ինք կրցան գոհացուցիչ կերպով լուծել խնդիրը:

— Զարմանալի է այս, կը յեղյեղէր Հարրի: Անկարելի կը թուի որ հանքին մէջ անծանօթ էակ մը ներկայ ըլլայ, և սակայն կարելի չէ տարակուսիլ այս մասին: Արդեօք մեզնէ ուրիշ մէ՞կն ալ կը փնտռէ նոր երակ մը: Կամ մանաւանդ, փորձ կը փորձէ ոչնչացնելու ինչ որ մնացած է Ապըրֆոյլի անխահանքէն: Բայց ի՞նչ նպատակաւ: Պիտի գիտնամ, մինչեւ իսկ մահս աչքս առնելով:

Տասնեւհինգ օր առաջ քան այն ցերեկն յորում Հարրի Ծորտ ճարտարապետին

կ'առաջնորդէր Տոչարդի գուբին բաւղին մէջէն, կարծած էր թէ կը հասնի իր հետազօտութեանց նպատակին:

Ածխահանքին հարաւ-արևմտեան ծայրը կը պտըտէր, լուսարձակ մեծ լապտեր մը ի ձեռին:

Յանկարծ, իրեն այնպէս թուեցաւ թէ լոյս մը նոյն վայրկենին մարեցաւ, իր առջեւէն հարիւր քայլի չափ հեռի, անձուկ ճամբու մը խորն, որ խոտորնակի կերպով կը կտրէր զանգուածը: Ընդ առաջ խոյսցաւ դէպի կասկածելի լոյսն . . .

Անօգուտ խուզարկութիւն: Ըստ որում Հարրի գերբնական մեկնութիւններ չէր ընդուներ Փիզիքական բաներու համար, աստի եզրակացուց թէ ապահովապէս անծանօթ էակ մը կը թափառէր գուբին մէջ: Սակայն, ինչ որ ալ ըրաւ, ամէնէն ծայրագոյն խնամօք խուզարկելով, ներքնուղւոյն ամէնէն փոքր խոռոչները կրկտելով, իր ջանքերն ապարդիւն մնացին, և չկրցաւ ո և է ստուգութիւն ձեռք բերել:

Հետեւաբար Հարրի գործը բաղդին յանձնեց այս գաղտնիքը լուսաբանելու համար: Հեռուէն հեռու, վերստին տեսաւ լոյսեր որք մէկ տեղէ ի միւսն կը թռչկոտէին շրջմովիկ հուրի պէս. սակայն

իրենց երեւումն փայլակի մը արագութիւնը կ'ունենար, և հարկ եղաւ հրաժարիլ անոնց պատճառը գտնելէ :

Եթէ ձէք Րիան եւ անխահանքին միւս աւելորդապաշտները նշմարած ըլլային այս խօսական նշոյլներն, անշուշտ մեծաբարբառ պիտի հռչակէին ուրուականներու ներկայութիւնը :

Սակայն Հարրի մտքէն իսկ չէր անցուներ այդպիսի բան մը, ո՛չ ալ ծերունի Սիմոնը : Եւ երբ երկուքն ալ կը խօսէին այդ երեւոյթներուն վրայ, որք անշուշտ ֆիզիքական պատճառէ մը յառաջ կուգային սոսկ :

—Տղաս, կը պատասխանէր ծերունի գործավարը, սպասենք, Այս ամէնն օր մը կը պարզուի :

Սակայն պէտք է գիտե՛լ թէ բնաւ, մինչեւ այն ատեն, ո՛չ Հարրի եւ ո՛չ իր հայրը բռնական գործի մը առարկայ չէին եղած :

Եթէ ձէյմս Սդարի ոտից առջեւ ինկնող քարը չարագործի մը ձեռքով նետուած էր, այսօրինակ առաջին ոճրագործութիւնն էր այս :

Ձէյմս Սդար, այս մասին հարցափորձուելով, կարծիք յայտնեց որ այդ քարը ներքնուղւոյն կամարէն փրթած էր : Սա-

կայն Հարրի չընդունեց այդչափ պարզ բացատրութիւն մը : Ըստ իրեն, քարն ինկած չէր, այլ նետուած էր : Եթէ քարը արտաքին մղմամբ մը յառաջ վարեալ չլինէր, շրջան մը չպիտի ընէր :

Ուստի Հարրի այդ բանին մէջ ուղղակի փորձ մը կը տեսնէր իրեն եւ հօրը դէմ, կամ նոյն իսկ ճարտարապետին դէմ : Պատմուած իրողութիւններէն յետոյ, հասկնալի է որ իրաւունք ունէր այդպէս կարծելու :

ՊԱՌԻՆ Է :

ՍԻՄՈՆ ՖՈՐՏԻ ՄԷԿ ՓՈՐՁԸ

Սրահին փայտեայ հին ժամացոյցը կէս օր կը զարնէր, երբ ձէյմս Սդար եւ իր երկու ընկերները դուրս ելան տունէն :

Լոյսը, օդափոխութեան հորին մէջէն թափանցելով, ընդ աղօտս կը լուսաւորէր բացաստանը : Հարրիի կանթեղն աւելորդ էր յայնժամ, սակայն ընդհուպ օգտակար պիտի լինէր, որովհետեւ ծերունի գործավարը Տոչարդի գուրին ծայրը կ'առաջնորդէր ճարտարապետին :

Երկու մղոն տեղ գլխաւոր ներքնուղւոյն հետեւելէ յետոյ, երեք խուզարկուները, —պիտի տեսնուի թէ ճիշդ խուզար-

կութիւն մ'էր այս, — անձուկ փապուղւոյ մը բերանն հասան, Փապուղւոյն կամարը բռնուած էր սպիտակ մամուռով մը ծածկուած փայտերով: Գրեթէ ճշգրտապէս կը հետեւէր այն գծին զոր Ծորթ-հ գետին ընթացքը կը գծէր հազար հինգ հարիւր ոտք վեր:

Այն պարագային ուր ձէյմա Սգար աւաջուան չափ վարժ չլինէր Տոչարդի գուրին լարիւրինթոսին, Սիմոն Ծորտ կը յիշեցնէր նմա ընդհանուր յատակածեւին տրամադրութիւններն, հողին աշխարհագրական պատկերին բողբատելով զայնս: Ձէյմա Սգար եւ Սիմոն Ծորտ կը քալէին ուրեմն խօսակցելով,

Առջեւէն, Հարրի կը լուսաւորէր ճամբան: Յանկարծակի լոյսն արձակելով դէպի խաւարամած խոռոչները, կը ջանար երեւան հանել ո եւ է կասկածելի ստուեր:

— Դեռ այսպէս շատ պիտի երթա՞նք, ծերունի Սիմոն, հարցուց ճարտարապետը:

— Դեռ կէս մղոն ալ, պարոն ձէյմա: Յառաջագոյն այս ճամբան կ'անցնէինք կառքով շոգեչարժ թրամուէյներուն վրայ: Սակայն այդ ժամանակներն ո՛րչափ հեռի են:

— Ուրեմն դէպի վերջին երակին ծայրը կ'երթանք, հարցուց ձէյմա Սգար:

— Այո: Կը տեսնեմ որ դեռ լաւ կը ճանչէք ածխահանքը:

— Է՛հ, Սիմոն, պատասխանեց ճարտարապետն, եթէ չեմ սխալիր, անկարելի է աւելի հեռուն երթալ:

— Արդարեւ, պարոն ձէյմա: Մեր բրիչներն հոն խլեցին գետնածուխի վերջին կտորը: Այնպէս կը յիշեմ իբր թէ դիմացս ըլլայ: Ես տուի այդ վերջին հարուածն, որ աւելի ուժգնաբար թնդաց կուրծքիս քան սպառածին վրայ: Մեր շուրջն ամէն բան աւազաքար կամ թերթաքար էր ա՛լ, ե երբ վակոնիկը թաւալեցաւ դէպի արտահանման հորը, սրտայոյզ հետեւեցայ նմա, ինչպէս մարդ կը հետեւի աղքատի մը դադաղին: Ինձ այնպէս կը թուէր թէ հանքին հոգին էր որ անոր հետ մէկտեղ դուրս կ'ելնէր:

Ծերունի գործավարին այս խօսքերուն ծանր շեշտը մեծ տպաւորութիւն գործեց ճարտարապետին վրայ, որ մասնակից էր այդօրինակ զգացմանց: Իր աւերեալ նաւը լքող նաւաստւոյն, իր նախահարց տան կործանումը տեսնող հողագործին խօսքերըն էին ասոնք:

Ձէյմա Սգար սեղմեց Սիմոն Ծորտի ձեռքը: Սակայն գործավարն ալ ճարտարապետին ձեռքը բռնեց, եւ ուժգնութեամբ սեղմելով զայն:

—Այդ օրը մենք ամէնքս ալ խաբուած էինք, ըսաւ : Ո՛չ, Հնաւուրց ածխահանքը մեռած չէր : Դիակ մը չէր այն զոր հանքահանները կը լքանէին, եւ կը համարձակիմ հաւաստել, պարոն ձէյմս, թէ իր սիրտը կը բաբախէ տակաւին :

—Խօսեցէք ուրեմն, Սիմոն : Նոր երա՞կ մը երեւան հանած էք, գոչեց ճարտարապետն այլապէս եղած : Գիտէի՛ : Ձեր նամակն ուրիշ բան չէր կրնար նշանակել : Ինձ հազորդուելիք զեկո՛յց մը, եւ Տոչար-գի՛ գուբին մէջ : Եւ ինձ համար ուրիշ ի՞նչ բան կարեւորութիւն ունէր եթէ ո գետնածուխի նոր խաւի մը գիւտը :

—Պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորա, չուզեցի ձեզմէ զատ ուրիշ մարդու մը իմաց տալ . . .

—Շատ լաւ ըրիք, Սիմոն : Բայց ըսէք, ի՞նչպէս, ի՞նչ գրածակութիւններով ապահով եղաք . . .

—Մտիկ ըրէք, պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորա : Ես նոր երակ մը չգտայ :

—Հապա ի՞նչ :

—Հապա միայն նիւթական ապացոյցը թէ այդ երակը գոյութիւն ունի :

—Եւ այդ ապացոյցը . . .

—Կրնա՞ք ընդունիլ որ հորին խորերէն

կրիզու ելնէ, եթէ հոն գետնածուխ չը գտնուի զայն յառաջ բերելու համար :

—Անշուշտ ո՛չ, պատասխանեց ճարտարապետը, եթէ գետնածուխ չըլլայ, կրիզու ալ չըլլար : Առանց պատճառի արգիւնք չըլլար :

—Ինչպէս մուխ չելլար առանց կրակի :

—Եւ նորէ՞ն հաստատեցիք նախ բնածխական թթուածինի գոյութիւնը :

—Ինձ նման հնաւուրց հանքահան մը չխարուիր, պատասխանեց Սիմոն Ֆորա : Ծանցայ մեր հին թշնամին, կրիզուն :

—Բայց եթէ ուրի՛շ կազ մըն է, ըսաւ ձէյմս Սդար : Կրիզուն գրեթէ անհոտ, անգոյն է : Իր ներկայութիւնն յայտնի կ'ընէ պայթմամբ միայն :

—Պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորա, ներեցէք որ պատմե՛մ թէ ի՞նչ ըրի : Եւ ի՞նչպէս ըրի . . . իմ գիւտցած կերպովս, ներողամիտ ըլլալով երկրաբանութեանցս համար :

ձէյմս Սդար կը ճանչնար ծերունի գործավարն, եւ գիտէր թէ լաւագոյն էր թող տալ որ գիացածին պէս ընէ :

—Պարոն ձէյմս, շարունակեց Սիմոն Ֆորա, տասն տարիէ ի վեր, օր մը չէ անցած որ Հարրի եւ ես չը խորհէինք ածխահանքին վերադարձնելու իր նախ-

կին բարորութիւնը, — ո՛չ, օ՛ր մը չէ ան-
ցած : Եթէ տակաւին երակ մը կը մնար,
որոշած էինք երեւան հանել զայն : Ի՞նչ
միջոց գործածելու էր : Դրածակութիւն-
նե՞րը : Կարելի բան չէր այս մեզ համար .
տակայն հանքահանի բնագոյն ունէինք, և
մարդ յաճախ ուղիղ դէպի նպատակն
կ'երթայ աւելի բնագոյն մամբ քան դատո-
ղութեամբ : — Գէթ, իմ դաղափարս այս
է . . .

— Ես ալ համակարծիք եմ քեզ, պա-
տասխանեց ճարտարագետը :

— Արդ, աւասիկ հարրի ի՞նչ դիտած
էր մէկ երկու անգամ իր պտոյտներու
միջոցին՝ անխահանքին արեւմտեան մա-
սին մէջ : Լոյսեր, որք յանկարծ կը մա-
րէին, կ'երեւնային մերթ թերթաբարին
կամ արտաքին ներքնուղեաց լցուած մա-
սերուն մէջէն : Այս լոյսերն ի՞նչ պատ-
ճառաւ կը վառէին : Չէի կրնար եւ տա-
կաւին չեմ կրնար ըսել : Բայց վերջապէս,
այդ լոյսերուն պատճառը կրիզուին ներ-
կայութիւնն էր ապահովապէս, եւ, ինձ
համար, կրիզուն, գետնածուխի երակն էր :

— Այդ լոյսերն որ եւ է պայթում յա-
ռաջ չէի՞ն բերեր, հարցուց ճարտարա-
պետն աշխուժիւ :

— Այո, մասնակի փոքր պայթումներ,

պատասխանեց Սիմոն Ֆորտ, ինչպէս որ
ես ինքնս ալ յառաջ կը բերէի երբ կ'ու-
զէի հասկնալ այդ կրիզուին ներկայու-
թիւնը : Կը յիշէք թէ յառաջագոյն ի՞նչ
եղանակաւ կը ջանային հանքաց մէջ պայ-
թումներուն առաջքն առնուլ, մեր պա-
հապան հրեշտակը, Հրմֆրի Տէվլին չհնա-
րած իր ապահովութեան կանխիկը :

— Այո, պատասխանեց ձէյմս Սդար :
«Ապաշխարող» ին վրայ խօսիլ կ'ուզէք : Սա-
կայն ես երբեք տեսած չեմ զինքն իր
պաշտօնին կիրառութեան մըջ :

— Արդարեւ, պարոն ձէյմս, հակա-
ռակ ձեր յիսուն եւ հինգ տարեկան լի-
նելուն, այս բանը տեսած լինելու չափ
տարիքոտ չէք : Բայց ես, որ ձեզմէ տասն
տարու մեծ եմ, տեսած եմ անխահանքին
վերջին ապաշխարողին պաշտօնավարելը :
Այսպէս կը կոչէին զինքն որովհետեւ վա-
նականի երկար պատմութեան մը կը հագնէր :
Իր բուն անունն էր Ֆրայֆ, հրոյ մարդ :
Այդ ժամանակին, չարաչուք կազը ջնջե-
լու ուրիշ միջոց չունէին բայց եթէ փոքր
պայթումներով տարաղնել զայն, գետ
իր թեթեւութիւնը մեծ քանակութեամբ
չդիզած զայն ներքնուղիներուն բարձանց
մէջ : Ուստի ապաշխարողը, դէմքը ծած-
կած, գլուխը թանձր կնգուզի մը մէջ ա-

ուած, բոլոր մարմինը սեղմած իր խոշոր ասուէ պատմութեանին մէջ, սողալով կ'երթար հողին վրայ: Ստորին խաւերուն մէջ շունչ կ'առնուր, որոց օդը մաքուր էր, և իր աջ ձեռքով գլխէն վեր կը պտտցնէր բոցավառ ջահ մը: Երբ կրիզուն օդին մէջ տարածուէր այնչափ որ պայթուցիկ խառնուրդ մը կազմէր, պայթումն յառաջ կուգար առանց աղիտաբեր լինելու, և, յաճախակի կրկնելով այս գործողութիւնը, կը յաջողէին աղետից առաջըն առնուլ Մերթ, ապաշխարողը, կրիզուի հարուածէ մը զարնուելով, կը մեռնէր իր գործին մէջ: Ուրիշ մը կը յաջորդէր նմա: Այսպէս շարունակուեցաւ այս մինչեւ այն ժամն ուր Տէվիի կանթեղն ընդունուեցաւ բոլոր ածխահանքերուն մէջ: Սակայն ես գիտէի այդ դրութիւնն, և զայն գործածելով է որ ճանչցայ կրիզուին ներկայութիւնն, և, հետեւաբար, գետնածուխի նոր երակի մը գոյութիւնը Տոչարդի գոբին մէջ:

Ապաշխարողին նկատմամբ ձերունի գործավարին պատմածը բոլորովին ճիշդ էր: Ատենօք ճիշդ այդպէս կ'ընէին ածխահանքին մէջ՝ մաքրելու համար ներքնուղիներուն օդը:

Կրիզուն, այսինքն նախընածխական

ջրածինը կամ գորշ հուրը, անգոյն, գրեթէ անհոտ, լուսատու քիչ կարողութիւն ունեցող, բոլորովին անյարմար է շնչառութեան: Հանքահանը չկրնար ապրիլ այս աղիտաբեր կազով լցուած միջավայրի մը մէջ, ինչպէս որ կարելի չէ ապրիլ լուսաւորութեան կազով լցուած կազարանի մը մէջ: Բաց աստի, ճիշդ լուսաւորութեան կազին պէս, կրիզուն պայթուցիկ խառնուրդ մը կազմէ՝ երբ օդը անոր մէջ մտնէ ութ և թերեւս իսկ հինգ առ հարիւր համեմատութեամբ: Եթէ այս խառնուրդը ո և է կերպով բռնկի, պայթում յառաջ կուգայ, որում գրեթէ միշտ կը յաջորդեն զարհուրելի աղէտներ:

Տէվիի գործիքն այս վտանգին առաջը կ'առնու կանթեղներուն բոցը կղզիացնելով մետաղական կտաւէ խողովակի մը մէջ, որ կազը կը վառէ խողովակին ներքսակողմն, առանց թոյլ տալու որ բոցավառութիւնը դուրս ծաւալի: Այս ապահովութեան կանթեղը կատարելագործուած է քսան եղանակաւ: Եթէ կերպով մը խորտակի, ինքնին կը մարի: Եթէ, հակառակ բացորոշ արգելքին, հանքահանն ուզէ բանալ զայն, դարձեալ կը մարի: Ուրեմն ինչո՞ւ պայթումներն յառաջ կուգան: Պատճառն այն է որ ոչինչ կրնայ առաջըն առնուլ

գործաւորի մը անխոհեմութեանն որ կ'ուզէ անպատճառ փստել իր ծխափողն, ոչ ալ գործիքին ընդհարման, որ կրնայ կայծ մը յառաջ բերել:

Ամէն անխաճանքերն ալ կրիզուով աւազականեալ չեն: Այն անխաճանքերու մէջ ուր կրիզուն չարտադրիր, սովորական կանթեղի գործածութիւնն արտօնեալ է: Այսպէս է, ի մէջ այլոց, Թիէրի գուրը, Անդէնի անխաճանքաց մէջ: Սակայն, երբ չահագործեալ անխաճանքին գետնածուխը պարարտ է, կը պարունակէ բաւական քանակութեամբ ցնդական նիւթեր, եւ կրիզուն կրնայ խուսափիլ մեծ առատութեամբ: Ապահովութեան կանթեղը միայն կրնայ առաջըն առնուլ պայթմանց, որք մանաւանդ այնու եւս առաւել ահռելի են զի կրիզուի հարուածէն ուղղակի կերպով չզարնուած հանքահանները վայրկենապէս անչնչանալու վտանգին մէջ կը գտնուին, որովհետեւ ներքնուղիները կը լեցունին բոցավառութենէն յետոյ կազմուած մահարեք կազով, այսինքն բնածխական թթուով:

Քալեւով հանդերձ, Սիմոն Ֆորտ իմացուց ճարտարագետին թէ ինչ ըրած էր այդ նպատակին հասնելու համար, ինչպէս համոզուած էր թէ կրիզուն կ'ար-

տադրուէր գուրին ծայրագոյն ներքնուղուոյն խորն, իր արեւմտեան մասին մէջ, ինչ եղանակաւ թերթաքարերու թերթերուն հաւասարութեամբ յառաջ բերած էր քանի մը մասնակի պայթումներ, կամ մանաւանդ բորբոքումներ որք բնաւ տարակոյս չէին թողուր կազին բնութեան վրայ, որուն արտադրութիւնը կը կատարուէր փոքրաքանակ, այլ յարատեւ կերպով:

Տունէն մեկնելէն ժամ մը յետոյ, ձէյմս Սդար և իր երկու ընկերները կտրած անցած էին չորս միլոնի հեռաւորութիւն մը: Ճարտարագետը, փափաքէն և յոյսէն վարեալ, այդ ուղեւորութիւնը կատարած էր առանց բնաւ մտքէն անցունելու ճամբուն երկարութիւնը: Կը մտածէր ծերունի հանքահանին զուրցածներուն վրայ: Մտքով կը կշռէր այն փաստերը զորս Սիմոն Ֆորտ կուտար ի նպատ իր գիւտին: Անոր հետ միասին կը հաւատար թէ նախընտրած ջրածնի այդ յարատեւ արտադրութիւնն ստուգապէս ցոյց կուտար գետնածուխի նոր երակի մը գոյութիւնը: Եթէ կազով լեցուն տեսակ մը խոռոչ լինէր այն, ինչպէս կը պատահի մերթ թերթերուն միջև, շուտով կը պարպուէր, եւ երեւոյթը կը դադրէր յառաջ գալէ: Սակայն ընդհա-

կառաւին, Սիմոն Ֆորտի խօսքին համաձայն, ջրածինն յառաջ կուգար անդադար, և առկիւյ կարելի էր եզրակայնել կարևոր երակի մը գոյութիւնը: Հետեւաբար, Տոչարդի գուբին հարստութիւնները կրնային բոլորովին սպառած չըլլալ: Միայն թէ, այդ խաւն աննշա՞ն արտադրութիւն մը պիտի ունենար, թէ ահագին տարածութիւն գրաւող երակ մըն էր: Ամէնէն մեծ խնդիրն այդ էր ստուգիւ:

Հարրի, որ իր հօր եւ ճարտարապետին առջեւէն կ'երթար, կանգ առած էր: — Ահա հասանք, գոչեց ծերունի հանքահանը: Վերջապէս շնորհիւ Աստուծոյ, պարոն ձէյմս, հոս էք, եւ հիմա պիտի իմանանք:

Ծերունի գործաւորին այնքան հաստատա ձայնը թեթեւ ինն կը դուրսար:

— Իմ պատուական Սիմոնս, ըսաւ նմա ճարտարապետն, հանդարտեցէք: Ես ալ ձեզ չափ յուզուած եմ, սակայն պէտք չէ փամանակ կորսնցնել:

Այդ տեղը, գուբին ծայրագոյն ներքնուղին դէպի ներս քաշուելով տեսաի մը խաւարորչին անձաւ կը կողմէր: Ոչ մէկ քանահոյր փորուած էր վանդուածին այդ մասին մէջ, եւ ներքնուղին որ խորապէս բացուած էր հողին ալուցը մէջ, ուղղակի

հաղորդակցութիւն չունէր Ադըրլինկի կոմսութեան մակերեւոյթին հետ:

Ձէյմս Ադար, հետաքրքրութիւնը ջերմապէս վառած, լուրջ աչօք կը դիտէր իր գտնուած վայրը:

Այս խոռոչին աւարտած երեսին վրայ տակաւին կը տեսնուէին բրջի վերջին հարուածներուն հետքն և մինչեւ իսկ փամփուշտներու քանի մը ծակեր որքայառաջ բերած էին ապառաժին պայթումը, դէպի շահագործման վերջերը: Այս թերթաքարային նիւթը չափազանց կարծր էր, և հարկ չէր եղած նեցուկներով ամրապընդել այս խոռոչն որուն խորը կանգ առած էին աշխատութիւնք: Ըն, արդարև, հատած էր գետնածուխի երակն, երրորդական գետնին թերթաքարերուն և աւազաքարերուն միջեւ: Հոն, ձիւղէ այն տեղն, հանուած էր Տոչարդի գուբին վառելանիւթի վերջին կտորը:

— Հոս է որ, պարոն ձէյմս, ըսաւ Սիմոն Ֆորտ վեր առնլով իր բրիչն, հոս է որ վերստին պիտի յարձակինք ֆայլին (1) վրայ, որովհետև, այս պատին ներքև, ա-

(1) «Ֆայլ»ը զանգուածին պի մասն է ուր երակը կը պակսի, և սովորաբար կը բաղկանայ թերթաքարէ և աւազաքարէ:

ուսուել կամ նուսզ ահագին խորութեամբ, ապահովապէս կը գտնուի նոր երակն ուրոյ գոյութիւնը կը հաստատեմ:

—Այս ապառաժներու մակերեւոյթին վրայ է որ հաստատեցիք կրիզուին ներկայութիւնն, հարցուց ձէյմս Սդար:

—Ճիշդ հոս, պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորտ, և կրցայ բռնկցնել զայն կանթեղա մօտեցնելով թերթերուն ծայրին: Հարրի ալ ինձ պէս ըրած է:

—Ո՞ր բարձրութեամբ, հարցուց ձէյմս Սդար:

—Հողին երեսէն տասն ոտք բարձրութեամբ, պատասխանեց Հարրի:

Ձէյմս Սդար ժայռի մը վրայ նստած էր: Կարծես թէ, խոռոչին օդը ծծելէ յետոյ, երկու հանքահաններուն կը նայէր, որպէս թէ սկսած ըլլար տարակուսիլ անոնց խօսքերուն վրայ, որք այնքան հաստատական էին սակայն:

Պատճառն այն էր որ, արդարեւ, նախքան խոսկան ջրածինը բոլորովին անհոտ չէ, եւ ճարտարագետը զարմացած էր նախ եւ առաջ որ իր հոտատելիքն, որ շատ սուր էր, իրեն զգացնել չէր տուած պայթուցիկ կազին ներկայութիւնը: Ամէն պարագայի մէջ, եթէ այդ կազը խառնուած էր մթնոլորտին հետ, շատ դոյզն

քանակութեամբ ըլլալու էր: Ուրեմն, վախ չկար պայթման, եւ կարելի էր առանց վտանգի բանալ ապահովութեան կանթեղն՝ այս փորձն ընելու համար, ինչպէս ծերունի հանքահանն ըրած էր արդէն:

Ինչ որ այդ պահուն ձէյմս Սդարի մտահոգութիւն կը պատճառէր. այն չէր թէ չափազանց կազ խառնուած էր օդին, այլ թէ պէտք եղածին չափ չէր խառնուած, —եւ մինչեւ իսկ բնաւ չէր խառնուած:

«Սխալած են արդեօք, միմիջեց: Ո՛չ: Այս մարդիկը կը հասկնան: Եւ սակայն . . . »

Ուրեմն անձութեամբ կ'սպասէր որ Սիմոն Ֆորտի նշանակած երեւոյթը կատարուի իւր ներկայութեան: Սակայն, այդ պահուն, կ'երեւի թէ իր դիտածը, այսինքն կրիզուին նշանական հոտին բացակայութիւնն Հարրիի ալ զգալի եղած էր, որովհետեւ սա խոսովեալ ձայնով մը ըսաւ.

—Հայր, ինձ այնպէս կը թուի թէ ա՛լ կազ չխուսափիր թերթաքարի թերթերուն մէջէն:

—Ա՛լ չխուսափիր, դոչեց ծերունի հանքահանը:

Եւ Սիմոն Ֆորտ, չրթներն ուժով մը սեղմելէ յետոյ, ուժգնութեամբ շնչեց թէն, մէկ երկու անգամ:

Յետոյ , յանկարծ , ընդոստ շարժմամբ մը .

—Տուր կանթեղը , Հարրի , ըսաւ :

Սիմոն Ֆորտ կանթեղն առաւ դողդաղացող ձեռքով մը : Պատրոյգը չըջապատող մետաղական կտաւին պտուտակը քակեց , եւ բոցը վառեցաւ արծակ օդին մէջ :

Ինչպէս կ'սպասուէր՝ պայթում յառաջ չեկաւ . սակայն , ինչ որ աւելի ծանր էր , մինչեւ իսկ յառաջ չեկաւ այն թեթեւ շշուկն որ կը յայտնէ փոքրաքանակ կրիզոլին ներկայութիւնը :

Սիմոն Ֆորտ առաւ Հարրիի գաւազանըն , եւ կանթեղն անոր ծայրն հաստատելով , օդոյ բարձրագոյն խտեբուն մէջ բարձրացուց զայն , հոն ուր կազն , իր տեսակարար թեթեւութեան պատճառաւ , գիզուած ըլլալու կը , մինչեւ իսկ ամենադոյզն քանակութեամբ :

Կանթեղին ուղիղ եւ սպիտակ բոցը նախընթացական ջրածնի ոչ մէկ հետք չ'յայտնեց :

—Պատին վրայ տար , ըսաւ Հարտարագետը :

—Այո , պատասխանեց Սիմոն Ֆորտ , կանթեղը տանելով պատին այն մասին վրայ ուր իր գաւակն եւ ինք առջի օրն

հաստատած էին կազին արտադրութիւնը :

Մերունի հանքահանին թեւը կը դողար , մինչդեռ կը ջանար կանթեղը պտըտցնել թերթաքարի թերթերու ձեղճուածներուն բարձրութեամբ :

—Դո՛ւն առ կանթեղն , Հարրի , ըսաւ :

Հարրի առաւ գաւազանն եւ յաջորդաբար կանթեղը տարաւ պատին զանազան կողմերը . սակայն գլուխը կ'երերցնէր , որովհետեւ խուսափող կրիզոլին յատուկ այն թեթեւ ճարձատիւնը չէր հասներ իր ականջին :

Բորբոքումը չկատարուեցաւ : Ուրեմն ակներև էր թէ կազի ոչ մէկ հիւլէ կ'եւնէր պատին մէջէն :

—Ոչի՛նչ , գոչեց Սիմոն Ֆորտ , ոյր բունցքը երկարեցաւ աւելի՛ զայրոյթի քան յուսախաբութեան տպաւորութեան մը ներքեւ :

Յայնժամ աղաղակ մը դուրս ելաւ Հարրիի շրթունքէն :

—Ի՞նչ ունիս , հարցուց ձէյմս Սքարնշխուժիլ :

—Թերթաքարին ձեղճուածները գոցե՛ր են :

—Իրա՞ւ կ'ըսես , գոչեց ծերունի հանքահանը :

—Տեսէ՛ք , հայր :

Հարրի չէր սխալած : ձեզքուածներուն խցողութիւնն յայտնապէս տեսանելի էր կանթեղին լոյսով : Կրով եղած նոր ծեփ մը պատին վրայ ցոյց կուտար գորշագոյն երկար հեաք մը , որ գէշ աղէկ ծածկուած էր անուխի փոշոյ խաւի մը ներքեւ :

— Ի՛նքն է , գոչեց Հարրի : Ի՛նքն է , այո , եւ ոչ ուրիշ ոք :

— Ի՛նքն , կրկնեց ձէյմս Սգար :

— Այո , պատասխանեց երիտասարդն , այն խորհրդաւոր էակն որ կը պտըտի մեր բնակութեան մէջ , այն որում հարիւր անգամ սպասած եմ լրտեսելով , առանց կարենալու ձեռք անցունել զինքն , ակներև հեղինակն այն նամակին որ կ'ուզէր զձեզ արգելուլ հօրս տուած ժամադրութեան գալէ , այն , վերջապէս , որ քարը նետեց մեզ Եարօուի հորին ներքնուզւոյն մէջ : Ա՛հ , ոչ մէկ տարակոյս կարելի է : Մարդու մը ձեռքը կայ այս ամէնուն մէջ :

Հարրի խօսած էր այնպիսի ազդուութեամբ մը , որ իր համոզումը վայրկենապէս եւ ամբողջովին անցաւ ճարտարապետին մտաց մէջ : Գալով ծերունի գործավորին , նա արգէն համոզուած էր : Մնաց որ , անժխտելի իրողութեան մը հանդէպ կը գտնուէին . ձեզքուածներուն խցումն որոց մէջէն կազն ազատօրէն կը խուսափէր սուղի օրը :

— Ա՛ն բրիչդ , Հարրի , գոչեց Սիմոն Տորտ : Ուսերուս վրայ ելի , տղաս : Քեզ տանելու չափ հաստատուն եմ տակաւին :

Հարրի հասկցաւ : Հայրը կրթնեցաւ պատին : Հարրի նորա ուսերուն վրայ ելաւ , այնպէս որ բրիչը կարենար քեռթել ծեփին բաւականապէս տեսանելի հետքը : Յետոյ , ուժգին հարուածներով , սկսաւ բրել թերթաքարային ժայռին ծեփուած մասը :

Նոյն հետայն թեթեւ շշուկ մը յառաջ եկաւ , նման այնմ զոր Եամբանեայի գինին յառաջ կը բերէ երբ շիշէ մը կը խուսափի , — շշուկ որ , անգլիական անխահան քերուս մէջ , նմանաձայնական բլծ անուամբ ծանօթ է :

Հարրի բռնեց յայնժամ իր կանթեղն , եւ ձեզքուածքին մտակցուց :

Թեթեւ պայթում մը լսուեցաւ , եւ կարմիր փոքր բոց մը՝ ծայրերը քիչ մը կապտորակ , թուշխտեցաւ պատին վրայ , ինչպէս պիտի ընէր շրջմովիկ հուր մը :

Հարրի անմիջապէս գետին ցատքեց , եւ ծերունի գործավորը , շկնալով ուրախութիւնը զսոգել , բռնեց ճարտարապետին ձեռներն եւ գոչեց .

— Հուրրա՛ , հուրրա՛ , հուրրա՛ , պարոն

ձէյմս : Կրիզոսն կը վառի : Ուրեմն երա-
կը հոն է :

ԳՂՈՒՍ Է .

ՀԱՐՈՒՍԾ ՄՐ .

Մերունի գործավարին ծանուցած փոր-
ձըն յաջողած էր : Նախընթացական ջրա-
ծինն , ինչպէս յայտնի է , գեանածուխի
զանգուածներուն մէջ ի յայտ կուգայ :
Հետեւաբար , թանկագին վառելանիւթին
երակի մը գոյութիւնը չէր կրնար տարա-
կոյսի տակ մնալ : Ի՞նչ էր այդ երակին
կարեւորութիւնն եւ տեսակն . վերջէն
պիտի հասկնային զայդ :

Ճարտարապետն այդ հետեւութիւն-
ներն եզրակացուց իր գիտած երեւոյթէն :
Ամենեւիմբ համաձայն էին Սիմոն Ֆորտի
արդէն եզրակացուցած հետեւութեանց :

— Այո , ըսաւ ինքնին ձէյմս Սդար , այս
պատին ետեւ կը տարածուի գեանածու-
խի խաւ մը ուր մեր դրածակութիւնը չեն
կրցած հասնիլ : Ցաւալի է այս , որովհե-
տեւ այժմ վերստին կազմակերպելու է
հանքին բոլոր սարուածը որ լքուած էր
տասն տարիէ ի վեր : Ի՞նչ փոյթ : Վերըս-
տին դտանք երակն որ սպառած կը կար-
ծուէր , եւ , այս անգամ , մինչեւ հաս-
նիլը պիտի շահագործենք զայն :

— Է՛հ լաւ , պարոն ձէյմս , հարցուց
Սիմոն Ֆորտ , ի՞նչ կը մտածէք մեր գիւ-
տին վրայ : Իրաւունք չունէի՞ր զձեզ ան-
հանգիստ ընելու : Կը ցաւի՞ք ձեր այս
վերջին այցելութեան վրայ ճոջարդի գու-
բին մէջ :

— Ո՛չ , ո՛չ , իմ ծերունի ընկերս , պա-
տասխանեց ձէյմս Սդար . մեր ժամանակը
չկորսնցուցինք , այլ հիմա պիտի կորսնցը-
նենք եթէ անմիջապէս տուն չվերադառ-
նանք : Վաղը , դարձեալ հոս պիտի գանք :
Պիտի պայթեցնենք այս պատը : Երեւան
պիտի բերենք նոր երակին ծայրն , եւ ,
կարգ մը դրածակութիւններէ յետոյ ,
եթէ խաւը կարելոր երեւի ինձ , պիտի
վերակազմեմ նոր-ԱլլըրՖոյլի Ընկերու-
թիւն մը , ի մեծ գոհունակութիւն հին
բաժնետեարց : Երեք ամիս չանցած , պէտք
է որ գեանածուխի առաջին սակաւիննե-
րը վեր բարձրանան նոր ածխահանքէն :

— Լաւ խօսեցաք , պարոն ձէյմս , գո-
չեց Սիմոն Ֆորտ : Ուրեմն հնաւուրց ած-
խահանքը պիտի երիտասարդանայ , որպէս
այրի մը որ վերստին կ'ամուսնանայ : Հին
օրերու ոգեւորութիւնը պիտի վերսկսի
բրջի հարուածներով , քարտրագի հար-
ուածներով , պայթման հարուածներով ,
վահոններու թաւալումով , ձիերուն վը-

րընջմամբ, սահառիներուն ճռնչիւններով՝ մեքենայից որոտումով: Այս ամէնը վերջոտի՛ն պիտի տեսնեմ ես: Կը յուսամ թէ, պարոն ձէյմս, տարիքիս պատճառաւ ձեռքէս չպիտի առնուք գործավարի պաշտօնս:

—Ոչ, պատուական Սիմոնս, ո՛չ անչուչտ: Դուք ինձմէ աւելի երիտասարդ մնացած էք, վաղեմի ընկերս:

—Եւ, Ս. Մուսիօն պահապան ըլլայ մեզ, դուք նորէն մեր տնօրէնը պիտի ըլլաք: Աստուած տար որ նոր չահագործումը երկար տարիներ տեւէր, եւ անոր վախճանը չտեսած մեռնելու մխիթարութիւնն ունենայի:

Ծերունի հանքահանին ուրախութիւնը կը զեղուր: Ձէյմս Սդար ի սրտէ մասնակից էր այդ ուրախութեան, սակայն թող կուտար որ Սիմոն Փորտ երկուքի տեղ խանդավառի:

Հարրի միայն մտախոհ կը մնար: Իր մտաց առջեւ կը բերէր այն դարմանալի և անբացատրելի պարագայից յաջորդութիւնն որոց մէջտեղ կատարուած էր նոր երակին գիւտը: Ապագային համար, մտատանջութիւն կը պատճառէր այս իրեն:

Ժամ մը յետոյ, ձէյմս Սդար եւ իր երկու ընկերները տուն դարձած էին:

Ճարտարագետն ընթրեց մեծ ախորժակով, շարժմամբ հաւանութիւն յայտնելով այն ամէն ծրագրերուն զորս կը պարզէր ձերունի հանքահանն, եւ եթէ յաջորդ օրուան անձկայրեաց սպասելու անհուն փափաքը չըլլար, երբեք աւելի լաւ չպիտի քնանար քան հիւզակին այդ բացարձակ հանդարտութեան մէջ:

Յաջորդ օրն, ահրատէ մը ետք, ձէյմս Սդար, Սիմոն Փորտ, Հարրի և նոյն իսկ Մաճ վերատին կը հետեւէին առջի օրն անցուած ճամբուն: Ամէնքն ալ կ'երթային իբր ճշմարիտ հանքահաններ: Իրենց հետ կը տանէին զանազան գործիներ և փամփուշտներ, օդն հանելու համար գետնածուխի զանգուածին աւարտական պատը: Հարրի, լուսաշող մեծ լապտերէ մը զատ առաւ ապահովութեան կանթեղ մը որ կրնար վառիլ տասն երկու ժամ: Պէտք եղածէն աւելի էր այս երթևեկի ուղեւորութիւնը կատարելու համար, մէջն առնելով նաև խուզարկութեան համար հարկ եղած դադարներն, — եթէ խուզարկութիւն մը կարելի ըլլար:

—Ի դո՛րժ, գոչեց Սիմոն, երբ ընկերներն և ինք հասան ներքնուղոյն ծայրը:

Եւ իր ձեռքը բռնեց ծանր բրիչ մը զոր ուժգնութեամբ կը ճօճեցնէր:

—Վայրկեան մը, ըսաւ յայնժամ ձէյմս Սդար: Դիտենք թէ ու է փոփոխութիւն եղած չէ՞ և թէ կրիզուն միշտ կը խուսափի՞ պատին թերթերուն մէջէն:

—Իրաւունք ունիք, պարոն Սդար, պատասխանեց Հարրի: Ինչ որ երէկ խըցուած էր, կրնայ այսօր եւս խցուած ըլլալ:

Մած, ժայռի մը վրայ նստած, ուշադրութեամբ կը դիտէր խոռոչն և ձեղքուելիք պատը:

Հաստատուեցաւ թէ իրերն այն վիճակին մէջ կը գտնուէին յոր թողուած էին: Թերթերուն ձեղքուածքներն որ և է խաթարում կրած չէին: Նախքան յաւանքը ջրածինը դուրս կ'ելնէր անոնց մէջէն, բայց թեթեւ գօրութեամբ: Ասոր պատճառն այն էր անշուշտ որ, առջի օրէն ի վեր, ազատ անցք մը գտած էր տարածուելու և ծաւալելու: Միայն թէ այդ արտադրութիւնն այնչափ քիչ էր, որ չէր կրնար պայթուցիկ խառնուրդ մը կազմել ներքին օդին հետ: Ընդամ Սդար և իր ընկերներն հետեւաբար պիտի կրնային ձեռն ի գործ արկանել ամենայն ապահովութեամբ: Մնաց որ, այդ օդն հետզհետէ պիտի զտուէր Տոչարդի գուբին վերին խաւերը բարձրանալով, և այդ մըթ-

նտրտին մէջ կորսուած կրիզուն չպիտի կրնար ու է պայթում յառաջ բերել:

—Ի գործ ուրեմն, կրկնեց Սիմոն Տորտ: Եւ նոյն հետայն, ապառաժն, իր բըրձին ուժգին հարուածներուն ներքեւ սկըսաւ կտոր կտոր փշրուել:

Չանդուածին այդ մասը գլխաւորապէս կը բազկանար քաղցրէն որք աւազաքարին և թերթաքարին մէջտեղ կը գտնուին, ինչպէս յաճախ կը տեսնուի գետնածուխի երակներուն երեսը:

Ընդամ Սդար կ'առնուր գործիքին փըշրած կտորները, եւ ուշի ուշով կը քննէր՝ յուսալով գետնածուխի նշան մը գտնել անոնց վրայ:

Այս առաջին աշխատութիւնը տեւեց իբր ժամ մը: Աւարտական պատին մէջ բաւական խոր ծակ մը բացուեցաւ այսպէս:

Ընդամ Սդար ընտրեց յայնժամ այն տեղն ուր պիտի բացուէին պայթման ծակերն, աշխատութիւն մը որ արագապէս կատարուեցաւ Հարրիի ձեռքին տակ: Փամիւլչոններ մտցուեցան այդ ծակերուն մէջ: Երրորդ անգ ղետեղեցին խայծղանով պատած երկար պատրոյղն որ բամբակի վառօդի փամիւլչոնի մը կը յանգէր, պատրոյղը վառեցին: Ընդամ Սդար եւ իր ընկերները մէկ կողմ քաշուեցան:

—Ա՛հ, պարոն ծէյմս, ըսաւ Սիմոն Ֆորտ ճշմարիտ սրտայուզութեան մը մատնուած գոր չէր կրնար ծածկել, բնա՛ւ, ո՛չ, բնա՛ւ իմ ծերունի սիրտս այսչափ արագ բարախած չէ: Հիմակուընէ կը փափաքիմ երակին վրայ նետուիլ եւ կոտորուեալ զայն:

—Համբերութի՛ւն, Սիմոն, պատասխանեց ճարտարապետը: Կարծեմ յաւակնութիւն չունիք այս պատին ետեւ գըտնելու բոլորովին բաց ներքնուղի մը:

—Ներեցէք, պարոն ծէյմս, պատասխանեց ծերունի գործավարը: Ես բոլոր կարելի յաւակնութիւններն ունիմ: Եթէ Հարրի եւ ես բարեբաղդութիւն ունեցանք այս երակը գտնելու, ինչո՞ւ համար այս բարեբաղդութիւնը չտեւէ մինչեւ վերջը:

Պայթումը տեղի ունեցաւ: Խուլ որոտում մը տարածուեցաւ ընդերկրեայ ներքնուղեաց բաւղին մէջ:

Ծէյմս Սդար, Մաճ, Հարրի եւ Սիմոն Ֆորտ անմիջապէս վերադարձան խոռոչին պատին քով:

—Պարո՛ն ծէյմս, պարո՛ն ծէյմս, գոչեց ծերունի գործավարը: Տեսէ՛ք, դուռը բացուած է:

Սիմոն Ֆորտի այս բաղդատութիւնը

կ'արդարանար խոռոչի մը երեւմամբ, որուն խորութիւնը կարելի չէր հաշուել: Հարրի բացուածքէն ներս պիտի խոյանար:

Ճարտարապետը, մեծապէս զարմացած այդտեղ այդ խոռոչը գտնելուն, բռնեց երիտասարդ հանքահանը:

—Ժամանակ թո՛ղ որ ներքին օդը մաքրուի, ըսաւ:

—Սյո, զգուշանալու է ֆֆէքներէն⁽¹⁾, գոչեց Սիմոն Ֆորտ:

Ֆառորդ ժամ մը անցաւ անձկալի սպասման մը մէջ: Լապտերը, գաւազանի մը ծայրն անցուելով, մտցուեցաւ յայնժամ խոռոչին մէջ եւ շարունակեց վառիլ անաղարտ փայլով:

—Գնա՛, Հարրի, ըսաւ ծէյմս Սդար, մենք կը հետեւինք քեզ:

Պայթմամբ յառաջ եկած բացուածքը մարդու մը անցնելուն բաւական էր:

Հարրի, լապտեր ի ձեռին ներս մտաւ առանց վարանելու և աներևոյթ եղաւ աղջամղջին մէջ:

Ծէյմս Սդար, Սիմոն Ֆորտ և Մաճ անշարժ կ'սպասէին:

Վայրկեան մը, — որ շատ երկար թուե-

(1) Ածխահանքերուն մէջ ժանտ արաշնչութեանց տրուած անուն:

ցաւ իրենց, — անցաւ : Հարրի չէր երևեր , չէր կոչեր : Խոռոչին բերնին մօտենալով , ձէյմա Սդար շնչմարեց իսկ լապտերին նշոյն որ լուսաւորելու էր այդ խաւարամած անձաւը :

Արդեօք գետինն յանկարծ պակաս՞ծ էր Հարրիի ոտից ներքև : Երիտասարդ հանքահանը խորափիտի մը մէջ ինկած էր : Իր ձայնն ա՛լ չէ՞ր կրնար հասնիլ մինչեւ իր ընկերներուն :

Ծերունի գործավարն , առանց բանի մը անսալու , ծակէն ներս մտնելու կը պատրաստուէր , երբ երեւցաւ լոյս մը , նախ տարտամ , որ հետզհետէ զօրացաւ , և Հարրի սա բռռերն արտասանեց .

— Եկէ՛ք , պարոն ձէյմա , եկէ՛ք , հայր : Ծամբան ազատ է նոր-Ապրֆոյլի մէջ :

ՔԱՌԻՍ Ը :

Եթէ , գերմարդկային զօրութեամբ մը , ճարտարապետներ կարենային մէկ զանգուածով եւ հազար ոտք խորութեամբ վերցնել երկրային կեղեւին այն մասն որ կը կրէ Սդըրլինկի , Տըմպարդընի եւ Բէնֆրիուի կոմսութեանց լճերն , գետերն , ծովախորշերն եւ գետեզերեայ գետիններն , այդ անհուն կափարիչին ներքև

պիտի գտնէին ահագին խոռոչ մը , որուն նմանն աշխարհի մէջ հատ մը միայն կայ որ կարենայ անոր հետ բաղդատուիլ, — Մամմութի հուշակաւոր քարայրն ի ֆէնթըքի :

Այս խոռոչը կը բաղկանար ամէն ձևով և ամէն մեծութեամբք քանի մը հարիւր խորշերէ : Կարծես փեթակ մ'էր , իր բըջիջներու բազմաթիւ յարկերով որք ըստ հաճոյս գետեղուած էին , սակայն ընդարձակ հիման մը վրայ շինուած փեթակ մը , և որք , փոխանակ մեղուներու , պիտի բաւէին բովանդակելու երկրաբանական ժամանակին բոլոր ձկնամողէսները , մեծագագաններն և մաշկամատները :

Ներքնուղեաց լապիւրինթոս մը , ոմանք մայր-եկեղեցեաց բարձր կամարներէն աւելի բարձր , այլք նման տաճարաց գաւիթներու , կձկեալ և ոլորապտոյտ , ոմանք հորիզոնական գծի մը հետեւելով , այլք խոտորնակի բարձրանալով կամ իջնելով ամենայն ուղղութեամբք, — կը միացնէին այս խոռոչներն և ազատ հաղորդակցութիւն կը թողուին անոնց մէջտեղ :

Նեցուկներն որք կը բռնէին այս կամարներն , որոց կորութիւնն ամէն ոճով ձեւեր կ'ստանար , ներքնուղեաց մէջտեղ հաստատապէս հիմնուած թանձր պատե-

ըը, բացավայրերն իսկ, երկրորդանգան
գետիններու այս յարկին մէջ, աւագա-
քարէ եւ թերթաքարային ժայռերէ կազ-
մուած էին: Սակայն, այս անօգուտ խա-
ւերուն մէջտեղ կը գտնուէին գետնածու-
խի սքանչելի երակներ, իբր թէ այս ար-
տակարգ ածխահանքին սեւ արիւնը շըր-
ջարերէր. այս անեւանելի բաւղին մէջ:
Այս երակները կը ծաւալէին քառասուն
հազար ոտք տարածութեամբ հիւսիսէն ի
հարաւ, եւ մինչեւ իսկ կը խորատուգէին
Հիւսիսի ջրանցին ներքեւ: Գետնածուխի
այս զանգուածին կարեւորութիւնը դրա-
ծակութիւններէ յետոյ միայն կարելի էր
հաշուել, սակայն աւելի ըլլալու էր Գար-
տիֆի ածխահանքերուն խաւերէն. կալէսի
երկրին մէջ, եւ Նիւքեսալի ածխահանքե-
րէն, Նորթու մպէրլանտի կոմսութեան մէջ:

Պէտք է յարել թէ այս ածխահանքին
չահագործումը զարմանալի կերպով պիտի
դիւրանար, որովհետեւ, երկրորդական
գետիններուն տարօրինակ դասակարգու-
թեամբ մը, երկրաբանական շրջանին ժա-
մանակ այդ զանգուածին պնդացած ատեն
հանքային նիւթերուն մէկ անբացատրելի
կծկմամբ մը, բնութիւնը բազմաթիւ ներք-
նուղիներ եւ փապուղիներ բացած էր Նոր-
Ապրիլի մէջ:

Այո, բնութիւնը միայն: Նախ և ա-
ռաջ պիտի կարծուէր թէ դարերէ ի վեր
լքուած շահագործում մը երեւան ելած է:
Այդպէս չէր բնաւ: Մարդ երեսի վրայ
չթողուր այդպիսի հարստութիւններ:
Մարդկային մրջիւնները տակաւին կրծած
չէին Սկովտիոյ այդ ստորերկրեայ մասը,
և բնութիւնն էր որ այդպէս կարգա-
դրած էր իրերը: Սակայն, կը կրկնենք,
եգիպտական ժամանակաց ոչ մէկ գետ-
նափորք, հռոմէական թուականին ոչ մէկ
գետնադամբան կրնար բաղդատուիլ նմա,
—բայց եթէ միայն Մամուլթի հսգակաւոր
քարայրներն որք, քսան մղոնէ աւելի եր-
կայնութեան մը վրայ, ունին երկու հա-
րիւր քսանևվեց ներքնուղի, տասնևմէկ
լիճ, եօթն գետակ ութ ջրվէժ, երսուն
երկու անյատակ անդունդ և յիսուն եօ-
թըն գմբեթ, որոց ոմանք կախուած են
չորս հարիւր յիսուն ոտքէ աւելի բարձ-
րութեամբ:

Այդ քարայրներուն նման, Նոր-Ա-
պրիլի ոչ թէ մարդոց, այլ Արարչին
գործն էր:

Այսպէս էր ահա նոր գետինն, անզու-
գական հարստութեամբ մը օժտեալ, որ
գիւտը կը վերարբերէր ձերունի գործա-
վարին: Տասն տարուան բնակութիւնն

հնաւորաց ամխաճանքին մէջ, խուզարկութեանց հազուադիւր յարատեւութիւն մը, բացարձակ հաւատք մը, հանքահանի հրաշալի բնագոյի մը աջակցութեամբ, — այս ամէն միացեալ պայմաններն հարկ եղած էին նմա յաջողելու համար յայնմ ուր այնքան ուրիշներ ի դերեւ ելած էին: Շահագործման վերջին տարիները, ձէյմա Սդարի տնօրինութեան ներքեւ կատարուած դրածակութիւններն ինչո՞ւ համար ճիշդ կանգ առած էին այդ տեղ, ճիշդ նոր ամխաճանքին սահմանադրին վրայ: Դիպուածի արդիւնք էր այս, ոյր բաժինը մեծ է այսօրինակ խուզարկութեանց մէջ:

Ինչ որ ալ ըլլայ, Սկովտիոյ հողին ներքեւ տեսակ մը ստորերկրեայ կոմսութիւն կար, որում կը պահսէին միայն, բընակելի լինելու համար, արեգական ճառագայթներն, կամ, առ ի չգոյէ նոցին, մասնաւոր աստղի մը պայծառութիւնը:

Ձուրն անդ համախռնուած էր ինչ ինչ խոռոչներու մէջ, որք ընդարձակ լճակներ կը կազմէին, կամ մինչեւ իսկ Քէդրայնի լճէն աւելի մեծ լճեր, որ ճիշդ վերեւը կը գտնուէր: Անշուշտ այս լիճերը չունէին ջուրց շարժումն, հոսանքները, ծփանքը: Գոթական վաղնջուց դղելի մը

ստուերը չէին թողուր անոնց մակերևոյթին վրայ, չոգենաւերը չէին ցոլացներ իրենց մէջ: Յարասիներն և կաղնիները չէին կախուեր անոնց ափանց վրայ, լեւներն երկար ստուերներ չէին ակօսերով զանոնք, ոչ մէկ լոյս կը նշուէր իրենց ջուրց մէջ, արեգակը չէր լուսաւորեր զանոնք իր պայծառափայլ ճաճանչներով, լուսինը չէր բարձրանար բնաւ անոնց հորիզոնին վրայ: Եւ սակայն այս խոր լճերն, որոց միապաղաղ հանդարտութեան վրայ քամին խորշմներ յառաջ չէր բերեր, հրապոյրէ զուրկ չպիտի ըլլային ի լոյս ելեկտրական աստղի մը, եւ ջրանցներու ցանցով մը միացած, պիտի լրացնէին այս տարօրինակ գետնին աշխարհագրութիւնը:

Թէեւ բուսական արտադրութեան անյարմար, այս գետնափորքը կրնար սակայն իբր բնակավայր ծառայել ամբողջ ժողովրդեան մը: Եւ ո՞վ գիտէ թէ, անփոփոխ բարեխառնութեամբ օժտեալ այդ միջավայրերուն մէջ, Ապլըֆոյլի այս ամբխաճանքերուն խորը, ինչպէս եւ Նիւքեասլի, Ալլոսայի կամ Գարտիֆի ամխաճանքերուն մէջ, երբ իրենց գետնածուխն սպառի, — ո՞վ գիտէ թէ Մեծին Բրիտանիոյ աղքատ դասն օր մը ապաստան չպիտի գտնէ:

ԵՐԹ ԵՒ ՎԵՐԱԳԱՐՁ

Ի ձայն Հարրիի, ձէյմս Սդար, Մաճեւ Սիմոն Ֆորտ ներս մտած էին այն անձուկ ծակէն որ հաղորդակցութեան կը դնէր Տոչարդի գուրը նոր ամխահանքին հետ :

Բաւական լայն ներքնուղւոյ մը բացուածքին առջև կը գտնուէին յայնժամ : Կարելի էր կարծել թէ մարդու ձեռամբ բացուած էր այն, թէ բրիչն և քարուրապը ծակած էին զայն՝ նոր ամխահանքի մը շահագործման համար : Սուզարկուները պարտէին իրենք իրենց հարցընել թէ, տարօրինակ դիտուածով մը, փոխադրուած չէի՞ն հին ամխահանքի մը մէջ որուն գոյութիւնն երբեք գիտցած չէին կոմսութեան ամէնէն հին հանքահանները :

Ո՛չ : Երկրաբանական խաւերն էին որք բացած էին այս ներքնուղին, այն ժամանակ որ կը կազմուէին երկրորդական գետինները : Թերևս հեղեղիչ մը անկից անցած էր ատենօք, երբ վերին ջուրերը կ'երթային խառնուիլ խորասուզեալ բոյսերուն : սակայն այժմ, այնչափ չոր էր որ չափ եթէ մարդոց ձեռամբ ծակուած ըլլար, քանի մը հաղար ոտք աւելի խորու-

թեամբ, հատաքարային ժայռերուն մէջ : Միանգամայն, օդը կը շրջաբերէր անդ ազատօրէն, — բան մը որ ցոյց կուտար թէ ինչ ինչ բնական ծակուածքներ հաղորդակցութեան մէջ կը դնէին զայն արտաքին մթնոլորտին հետ :

Այս գիտողութիւնը, զոր ճարտարապետն ըրաւ, արդարացի էր, եւ կ'զգացուէր թէ օդափոխութիւնը դիւրաւ կը կատարուէր նոր ամխահանքին մէջ : Փալով այն կրիզուին որ յառաջագոյն կը սողոսկէր պատին թերթաքարերուն մէջէն, կ'երեւէր թէ լոկ խոռոչի մը մէջ պարունակուած էր, այժմ դատարկ, եւ ակնբերել էր թէ ներքնուղւոյն մթնոլորտն ու է նշան չէր պարունակեր անկից : Սակայն, առ ի զգուշութիւն, Հարրի հետն առած էր ապահովութեան կանթեղը միայն, որ տասն ժամուան լրասաւորութիւն կ'ապահովէր իրեն :

Ձէյմս Սդար եւ իր ընկերները կատարեալ ուրախութիւն մը կ'զգային յայնժամ : Իրենց բաղձանաց ամբողջ գոհացումն էր այս : Իրենց չորս բոլորքը, ամէն բան գետնածուխ էր : Սրտայուզութիւնն անխօս դարձուցած էր զիրենք : Սիմոն Ֆորտ իսկ կը զսպէր ինքզինքը : Իր ուրախութիւնը կը զեղուր ո՛չ թէ երկար պար-

բերութիւններով այլ փոքր ձայնարկութեամբք :

Իրենց համար թերևս անխոհեմութիւն մ'էր այսչափ խորապէս յառաջանալ խոռոչին մէջ : Բա՛հ, բնաւ չէին մտածեր վերադարձին վրայ : Ներքնուղին անցանելի էր, շատ քիչ ոլորապտոյտ Ոչ մէկ ձեղքուածք արգելք կը լինէր անցքին . ժանտ արտաշնչութիւնք բնաւ չկային անդ : Պառճառ մը չկար ուրեմն կանգ առնուլ, և ժամու մը չափ, ձէյմն Սդար, Մաճ, Հարրի և Սիմոն Ֆորտ այսպէս գնացին, առանց բնաւ գիտնալու այս անձանօթ փապուղւոյն ճշգրիտ ձամբան :

Եւ անշուշտ այսպէս շատ հեռու պիտի երթային եթէ չհասնէին այս լայն ձամբուն ծայրն որում կը հետեւէին ածխահանքին մէջ մտնելնէն ի վեր :

Ներքնուղին կը յանգէր ահագին անձաւի մը, որուն ո՛չ բարձրութիւնն և ո՛չ խորութիւնը կրնային չափել : Այս անձաւին կամարն ի՞նչ բարձրութեամբ կը բոլորչխանար, հանդիպակաց պատն ի՞նչ հեռաւորութեամբ կը գտնուէր . անդ տիրող աղճամուղն անհնար կ'ընէր հասկնալ : Սակայն, կանթեղին լուսով, խուզարկուները կրցան հաստատել թէ կամարը կը ծածկէր անշարժ ջրոց ընդարձակ տա-

րածութիւն մը, — ճակ կամ լիճ, — ոյր նըկարագեղ ափունքը, բարձր ժայռերով ծածկուած, կը կորսուէին մթութեան մէջ :

— Կենանք, գոչեց Սիմոն Ֆորտ, յանկարծակի կանգ առնլով : Եթէ քայլ մըն ալ աւելի առնունք, անդունդի մը մէջ գլորինք գուցէ :

— Հանգիստ առնունք ուրեմն, բարեկամներս, պատասխանեց ճարտարապետն : Պէտք է միանգամայն ի հաշիւ առնուլ թէ տուն վերադառնալու ենք :

— Մեր կանթեղը դեռ տասը ժամ կըրնայ լուսաւորել զմեզ, պարոն Սդար, Եսաւ Հարրի :

— Է՛հ լաւ . կենանք, յարեց ձէյմն Սդար, կը խոստովանիմ թէ սրունքներս պէտք ունին հանգստեան, Հապա դուք, Մաճ, միթէ յողնութիւն չզգայի՞ք այսչափ երկար ուղեւորութենէ :

— Ոչ այնչափ, պարոն ձէյմն, պատասխանեց կորովի Սկովտուհին : Մենք սովորութիւն ունէինք ամբողջ օրեր խուզարկել Ապլըֆոյլի հին ածխահանքը :

— Բա՛հ, յարեց Սիմոն Ֆորտ, Մաճ տասն անգամ այս ձամբան կարող է առնուլ եթէ հարկ ըլլայ : Սակայն կը պնդեմ, պարոն ձէյմն, ի՛ր զեկո՞յցս կ'արժէր ձեզի հազարդուելու : Համարձակեցէք ո՛չ ըսել,

պարոն ձէյմս, համարձակեցէք ո՛չ ըսել :

— Է՛հ, ծերունի ընկերս, երկար ատենէ ի վեր այսպէս ուրախութիւն զգացած չէի, պատասխանեց ճարտարապետը : Այս հրաշալի ածխահանքին այսչափ քիչ խուզարկուած մասը ցոյց կուտայ թէ իր տարածութիւնը շատ մեծ է, գէթ երկայնութեամբը :

— Լայնութեամբն եւ երկայնութեամբն ալ, պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորտ :

— Վերջէն պիտի տեսնենք զայս :

— Եւ ես, կը վստահեցնեմ զձեզ այս մասին : Վստահեցէք իմ ծերունի հանքահանի բնագրիս, որ երբեք խաբած չէ զիս :

— Կ'ուզեմ հաւատալ ձեզ, Սիմոն, պատասխանեց ճարտարապետը ժպտելով : Բայց վերջապէս, որչափ կրնամ դատել այս կարճ խուզարկութենէն, դարեր տեւելիք շահագործման մը օարրերն ունինք պատրաստ :

— Դարե՛ր, գոչեց Սիմոն Ֆորտ : Կը հաւատա՛մ, պարոն ձէյմս : Հազար տարիէն աւելի պիտի անցնի մինչեւ որ գետնածուխի վերջին կտորն հանուի մեր նոր ածխահանքէն :

— Աստուա՛ճ լսէ ձայնդ, պատասխանեց ձէյմս Սդար : Գալով գետնածուխին տեսակին . . .

— Աքանջելի՛ է, պարոն ձէյմս, սքանչելի՛, պատասխանեց Սիմոն Ֆորտ : Դուք անձամբ տեսէ՛ք :

Եւ, զայս ըսելով, բրջի հարուածով մը կտոր մը խլեց սեւ ժայռէն :

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, կրկնեց՝ իր կանթեղին մօտեցնելով զայն : Այս գետնածուխի կտորին վրան փայլուն է, Այստեղ պարարտ եւ կարային նիւթերով հարուստ գետնածուխ մը պիտի ունենանք, եւ ի՛նչ պէս կտոր կտոր պիտի բաժնուի, գրեթէ առանց փոշոյ : Ա՛հ, պարոն ձէյմս, քսան տարի առաջ, այս ածխահանքն ի՛նչ ծանր մրցում մը պիտի ընէր Սուանսիի եւ Գարտիֆիի Է՛հ լաւ, հնոցպանները դարձեալ ձեռքէ ձեռք պիտի խլեն զայն, եւ եթէ հանքէն դուրս հանելու ծախքը քիչ ըլլայ, դուրսն աւելի աժան պիտի ծախուի :

— Արդարեւ, ըսաւ Մաճ, որ ձեռքն առած էր գետնածուխի կտորն եւ կը քննէր զայն իբր փորձագէտ : Ընտիր տեսակէ գետնածուխ է այս :— Հետդ պա, Սիմոն, տուն տանինք : Կ'ուզեմ որ գետնածուխի այս առաջին կտորը մեր կրակարանին մէջ վառի :

— Լա՛ւ ըսիր, կնի՛կ, պատասխանեց ծերունի դորձավարն, եւ պիտի տեսնես թէ սխալած չեմ :

—Պարոն Սդար, հարցուց յայնժամ՝
Հարրի, գաղափար մը ունի՞ք այս երկար
ներքնուղւոյն ճամբուն վրայ որում կը
հետեւինք նոր ածխահանքին մէջ մտնելէս
ի վեր :

—Ո՛չ, տղաս, պատասխանեց ճարտա-
րապետը : Կողմնացոյցով մը թերեւս կա-
րենայի հասկնալ անոր ընդհանուր ուղ-
ղութիւնը : Բայց, առանց կողմնացոյցի,
արձակ ծովուն վրայ, մառախուղներու մէջ
գտնուող նաւաստիի մը նման եմ, երբ արե-
գական բացակայութիւնը թոյլ չտար նմա
ուղղել իր գիրքը :

—Անշուշտ, պարոն ձէյմս, պատաս-
խանեց Սիմոն Ֆորտ, բայց, կ'աղաչեմ,
մեր կացութիւնը մի՛ բողբոստէք նաւաստ-
ւոյն կացութեան, որ միշտ եւ ամենու-
րեք անդունդն ունի իր ոտից ներքեւ :
մենք հոս հաստատ հողի վրայ ենք, եւ
բնաւ վախ չունինք ընկղմելու :

—Այդ վիշտը չպիտի՞ պատճառեմ ձեզ,
ծերունի Սիմոնս, պատասխանեց ձէյմս
Սդար : Հեռի՛ ինձմէ անարդար բողբոս-
տութեամբ մը Ապըրֆոյլի նոր ածխա-
հանքին արժէքը կոտրելու մտածումն :
Բան մը միայն ուզեցի ըսել, սա թէ չենք
գիտեր ո՛ւր ենք :

—Սդըրլինկի կոմսութեան տակն ենք,

պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորտ,
եւ զայս կրնամ հաստատել իբր թէ . . .

—Մտի՛կ ըրէք, ըսաւ Հարրի ընդմիջե-
լով ծերունի գործավարին խօսքը :

Ամէնքն ալ ականջ դրին, որպէս կ'ը-
նէր երիտասարդ հանքահանն : Իր սուր
լսողութիւնն իմացած էր խուլաղմուկ մը,
իբր թէ հեռաւոր մրմունջ մը լինէր : Ձէյ-
մս Սդար, Սիմոն և Մաձ ևս իմացան
ընդհուպ : Զանգուածին բարձրագոյն խա-
ւերուն մէջ տեսակ մը թաւալում յառաջ
կուգար, որուն յաջորդական ելեւէջն ո-
րոշակի կ'իմացուէր, որչափ ալ տկար ըլ-
լար :

Չորսն ալ քանի մը վայրկեան մնացին
ականջնին տնկած, առանց խօսք մը ար-
տասանելու :

Յետոյ, յանկարծ, Սիմոն Ֆորտ գոչեց .

—Է՛հ, Ս. Մունկօն վրայ ըլլայ, արդ-
եօք վակոններն արդէն սկսե՞ր են թաւա-
լիլ նոր-Ապըրֆոյլի երկաթուղեաց վրայ :

—Հայր, պատասխանեց Հարրի, ինձ
այնպէս կը թուի թէ ծովափան վրայ ջուրը
թաւալման յառաջ բերած աղմուկն է այս :

—Սակայն ծովուն տակը չենք, գոչեց
ծերունի գործավարը :

—Ո՛չ, պատասխանեց ճարտարապետը,
սակայն անկարելի չէ որ Քէդրայնի լճին
յատակին տակ չգտնուինք :

—Ուրեմն այդ տեղ կամարը շատ հաստ ըլլալու չէ, որովհետեւ ջրերուն աղմուկը կը լսուի:

—Սրդարեւ շատ հաստ չէ, պատասխանեց ձէյմա Սդար, և այս է պատճառն որ այս խոռոչն այնչափ ընդարձակ է:

—Իրաւունք ունիք, պարոն Սդար, ըսաւ Հարրի:

—Բաց աստի, դուրսն այնչափ դժընդակ օդ կ'ընէ, յարեց ձէյմա Սդար, որ լճին ջուրերը փորթհի ծովախորշին ջուրերուն պէս յուզեալ ըլլալու են:

—Էհ, որո՞ւ հոգ, պատասխանեց Սիմոն ֆորտ: Գետնածուխի խաւը լճի մը տակ գտնուելուն համար գէշ չըլլար: Առաջին անգամ չէ որ գետնածուխը պիտի փնտռուի Ուկիանոսին յատակին ներքեւ իսկ: Նոյն իսկ եթէ շահագործելու ելլանք Հիւսիսի ջրանցին բոլոր ստորերկրեայ տարածութիւնն, ի՞նչ վնաս կ'ըլլայ:

—Կա՛ւ ըսիր, Սիմոն, գոչեց ճարտարապետն, որ չկրցաւ ժպիտը զսպել դիտելով եռանդնաբորբ գործավարը: Մեր ներքնուղիները բանանք ծովուն ջուրերուն տակ: Ծակե՛նք պատռենք Ատլանտեանի յատակը: Բրջի հարուածներով երթանք միանալ մեր Միացեալ-Նահանգաց եղբայրներուն, Ուկիանոսին տակէն: Ծա-

կենք մինչեւ երկրագնտին կեդրոնն, եթէ հարկ ըլլայ, անկից խլելու համար իր գետնածուխի վերջին կտորը:

—Կը ծաղրէ՞ք, պարոն ձէյմա, հարցուց Սիմոն ֆորտ յանձնապատան դէմքով մը:

—Ե՛ս, ծաղրե՛մ, ծերունի Սիմոնս: Ո՛չ, Սակայն դուք այնչափ եռանդոտ էք որ կը քաշէք կը տանիք զիս մինչեւ անկարելին: Օ՛ն, դառնանք իրականութեան, որ արդէն գեղեցիկ է: Աստ թողունք մեր բրիչները, զոր սւրիշ օր մը կը գտնենք նորէն, և տան ճամբան բռնենք:

Առ այժմ ուրիշ բան չկար ընելիք: Ետքէն, ճարտարապետն, հանքահաններու ջոկատի մը ընկերակցութեամբ և հարկ եղած կանթեղներով և գործիներով զինեալ, պիտի վերսկսէր Նոր-ԱլպըրՖոյլի խուզարկութիւնը: Սակայն հարկ էր ժամ առաջ վերադառնալ Տոչարդի գուբը: Մընաց որ, ճամբան դիւրին էր: Ներքնուղին անարգել կ'ընթանար զանգուածին մէջէն՝ մինչեւ պայթմամբ յառաջ եկած ծակն: Ուրեմն բնաւ վախ չկար մոլորելու: Բայց, այն միջոցին ուր ձէյմա Սդար կ'ուզուէր դէպի ներքնուղին, Սիմոն ֆորտ կասեցուց զնա:

—Պարոն ձէյմա, ըսաւ, կը տեսնէ՞ք

այս անհուն խոռոչն, այս ստորերկրեայ լիճը, այս լճափունքն գորս ջուրերը կուգան թրջել մեր ոտից ներքե՛ւ: Է՛հ լաւ, կ'ուզեմ հոս փոխադրել մեր բնակարանն, հոս պիտի կառուցանեմ ինձ համար, նոր տուն մը, եւ եթէ քանի մը քաջարի ընկերներ ուզեն օրինակիս հետեւիլ, տարի մը չանցած նոր աւան մըն ալ պիտի հաշուուի մեր վաղեմի Անգլիոյ մէջ:

Ճէյմս Սդար, ժպիտով մը հաւանութիւն յայտնելով Սիմոն Ֆորտի ծրագրերուն, նորա ձեռքը սեղմեց, եւ երեքն ալ, Մաճէն առաջ անցնելով, խորասուզեցան ներքնուղւոյն մէջ, Տոչարդի գուբը վերադառնալու համար:

Առաջին մղոնին, ոչ մէկ միջադէպ պատահեցաւ: Հարրի առջեւէն կ'երթար, կանթեղը գլխէն վեր բռնած: Զգուշութեամբ կը հետեւէր գլխաւոր ներքնուղւոյն, առանց խոտորելու անձուկ փապուղիներուն մէջ որք յաջ եւ յահեակ կը ձիւղաւորէին: Հետևաբար, այնպէս կ'երևէր թէ վերադարձն այնչափ դիւրութեամբ պիտի կատարուէր որչափ երթն, երբ ձախող դիպուած մը պատահեցաւ, որ շատ ծանր կացութեան մէջ թողուց խուզարկուները:

Արդարեւ, այն վայրկեանին ուր Հարրի

վեր կ'առնուր իր կանթեղը, օդոյ ուժգին տեղափոխութիւն մը յառաջ եկաւ, իբր թէ անտեսանելի թեւերու բարախումէ մը առթուած ըլլար: Կանթեղը, շեղակի զարնուելով, թռաւ Հարրիի ձեռքէն, ներքնուղւոյն ժեռուա հողին վրայ ինկաւ և կոտրեցաւ:

Ճէյմս Սդար և իր ընկերներն յանկարծակի խորասուզեցան բացարձակ խաւարի մը մէջ: Իրենց կանթեղն, որուն իւղը թափած էր, ա՛լ չէր կրնար բանի մը ծառայել:

—Է՛յ, Հարրի, գոչեց Սիմոն Ֆորտ, հիմա ի՞նչ պիտի ընենք, չորս կողմերնի՞ս պիտի կոտրտենք տուն դառնալու համար:

Հարրի չպատասխանեց, կը մտածէր, Խորհրդաւոր էակի մը մա՞տը կար նորէն այս վերջին միջադէպին մէջ: Ուրեմն այս խորութեանց մէջ թշնամի՞ մը կը գբտնուէր, որուն անբացատրելի հակառակութիւնը կրնար օր մը ծանր դժուարութիւններ յարուցանել: Մէկը շա՞ն ունէր պաշտպանելու գետնածուխի նոր հանքն ընդդէմ շահագործման ո եւ է փորձի: Ստուգիւ, արտառոց բան մըն էր այս, սակայն իրողութիւնք ինքնին կը խօսէին, եւ կը յաջորդէին այնպէս որ պարզ են-

Թագրութիւններն ստուգութեանց կը փոխէին :

Սուզարկուներուն կացութիւնը բաւական գէշ էր : Պէտք էր որ, այդ խոր աղ-ջամըջին մէջ, իբր հինգ մղոն տեղ հետեւէին ներքնուղւոյն որ դէպի Տոչարդի գուբը կը տանէր : Յետոյ, դեռ ժամ մը ճամբայ պարտէին առնուլ տուն հասնելէ առաջ :

— Շարունակենք, ըսաւ Սիմոն Ֆորտ : Վայրկեան մը չունինք կորսնցնելիք : Խարխափելով պիտի երթանք, կոյրերու պէս : Կարելի չէ մոլորիլ : Մեր ճամբուն վրայ բացուող փապուղիները խլորդի բնակարաններու կը նմանին, եւ, գլխաւոր ներքնուղւոյն հետեւելով, անխուսափելի կերպով պիտի հասնինք այն բացուածքին ուսկից անցանք : Անկէ անդին հնաուրց ածխահանքն է : Կը ճանչնանք զայն, եւ առաջին անգամը չէ որ Հարրի եւ ես մթութեան մէջ պիտի գտնուինք անդ : Մնաց որ, անդ պիտի գտնենք մեր թողած կանթեղները : Ճամբայ ելնենք ուրեմն : Հարրի, առաջ անցիր : Պարոն ծէյ-մըս, հետեւեցէք իրեն : Մաճ, դուն անկից ետքը եկուր, եւ ես ամէնէդ վերջը կը քալեմ : Մանաւանդ չբաժնուինք իրարմէ, եւ զգանք իրարու ներբանները, եթէ ոչ արմուկները :

Ուրեմն, կը մնար միայն համակերպիչ ծերունի գործավարին հրահանգներուն : Ինչպէս ինք կ'ըսէր, խարխափելով կարելի չէր մոլորիլ : Միայն թէ աչերուն տեղ ձեռները գործ պիտի տեսնէին, և վստահելու էր այն բնազդին որ, Սիմոն Ֆորտի և իր զուկին քով, երկրորդ բնութիւն մը դարձած էր :

Հետեւաբար, ծէյմն Սգար և իր ընկերներն սկսան յառաջանալ որոշեալ կարգաւ : Չէին խօսեր, բայց կը մտածէին : Ակներև էր թէ թշնամի մը ունէին : Սակայն ո՞վ էր, և ինչպէ՞ս պաշտպանելու էր իրենց անձն ընդդէմ այդ յարձակմանց որք այնքան խորհրդաւոր կերպով կը պատրաստուէին : Այս տագնապալի դաղափարները կը ընուին իրենց ուղեղները : Բայց վճատելու ժամանակ չէր :

Հարրի, ձեռները տարածած, կը յառաջանար վստահ քայլերով : Ներքնուղւոյն մէկ պատէն միւսը կ'երթար յաջորդաբար : Խոռոչ մը, կողմնակի բացուածք մը պատահածին պէս, ձեռքով կը հասկընար թէ պէտք չէր անդ մտնել, և այսպէս ուղիղ ճամբուն մէջ կը պահէր ինքզինքն :

Այդ մթութեան մէջտեղ որում աչերը չէին կրնար վարժուիլ, քանի որ բացար-

ձակ էր այն, այդ դժուարին վերադարձը տեւեց իբր երկու ժամ: Հաշուելով անցած ժամանակը, ի նկատ առնելով նաեւ թէ գնացքը չէր կրցած արագ լինիլ, ձէյմս Սդար կը կարծէր թէ Սիմոն ֆորտ եւ ընկերները շատ մօտ լինելու էին ելքին:

Արդարեւ, գրեթէ նոյնհետայն, Հարրի կանգ առաւ:

—Վերջապէս հասա՞նք ներքնուղւոյն ծայրն, հարցուց Սիմոն ֆորտ:

—Այո, պատասխանեց երիտասարդ հանքահանը:

—Է՛հ, չգտա՞ր այն ծակն որ հաղորդակցութիւնը կը հաստատէ Նոր-Ապլըրֆոյլի եւ Տոչարդի գուբին մէջտեղ:

—Ո՛չ, պատասխանեց Հարրի, ոյր կծկեալ ձեռները պատի մը լեցուն մակերեւոյթին միայն կը հանդիպէին:

Ծերունի հանքահանը քանի մը քայլ առաջ անցաւ եւ եկաւ ինքն իսկ շօշափելու թերթաքարային ժայռը:

Ազաղակ մը ելաւ շրթունքէն:

Կա՛մ խուզարկուները մոլորած էին վերադարձին ժամանակ, կա՛մ պայթմամբ պատին մէջ բացուած նեղ ծակը խցեր էին քիչ առաջ:

Ինչ որ ալ ըլլայ, ձէյմս Սդար եւ իր ընկերները բանտարկուած էին Նոր-Ապլըրֆոյլի մէջ:

ՀՐԵՂԷՆ ԿՍՆՍՅՔ

Այս դէպքերէն ութ օր յետոյ, ձէյմս Սդարի բարեկամները մեծ մտատանջութեան մէջ կը գտնուէին: Ճարտարապետն աներեւոյթ եղած էր, առանց շարժառիթ մը վերագրուիլ կարենալու այս անյայտացման: Իր սպասաւորք քննելով իմացած էին թէ կրանդընի նաւամատոյցէն նաւ նստած էր, եւ Բէն-ը Կալ շոգե-նաւուն նաւապետէն դիտէին թէ Սդըրլինկ ելած էր: Սակայն, այդ վայրկենէն սկսեալ, ո՛չ մէկ հետք կար ձէյմս Սդարէ: Սիմոն ֆորտի նամակը գաղտնապահութիւն պատուիրած էր իրեն, եւ ինքն ալ Ապլըրֆոյլի անխահանքերը երթալը չէր զուրցած ուրիշի:

Ուրեմն, յէտիմպուրկ, ա՛լ միակ խընդիրն եղաւ ճարտարապետին անբացատրելի բացակայութիւնը: Արքայական Կաճառին նախագահ Սըր Ու. Էլֆիտըն իր պաշտօնակցաց հաղորդեց այն նամակը զոր ձէյմս Սդար ուղղած էր իրեն, ներողութիւն խնդրելով որ չպիտի կրնար ներկայ գտնուիլ Ընկերութեան յառաջիկայ նըստին: Երկու երեք անձինք ալ յառաջ բերին նմանօրինակ նամակներ: Սակայն եթէ

այդ թուղթերը կ'ապացուցանէին թէ ձէյմա Սղար մեկնած էր Էտիմպուրկէն, — բան մը զոր արդէն գիտէին, — ոչ մէկ բան կը յայտնէր թէ ինչ եղած էր նա : Արդ, այդօրինակ մարդու մը՝ հակառակ իւր սովորութեանց՝ բացակայութիւնը նախ զարմանք և ապա անհանգստութիւն պիտի պատճառէր, որովհետև կ'երկարածըգուէր :

Ճարտարապետին բարեկամներէն ոչ ոք կրնար ենթադրել թէ ԱպլըրՖոյլի ածխահանքերը գացած ըլլայ նա : Գիտէին թէ հաճելի չպիտի ըլլար իրեն վերստին տեսնել իր աշխատութեանց նախկին թատերավայրը : Աշխատութեանց դադարման օրէն ի վեր ոտք չէր դրած անդ : Սակայն, քանի որ շոգենաւը ցամաք հանած էր զինքն Սղըրլինկի նաւամատոյցը, հետազոտութիւններ կատարեցին այդ կողմէն :

Հետազոտութիւնք ապարդիւն մնացին : Ոչ ոք կը յիշէր տեսած ըլլալ ճարտարապետն երկրին մէջ : Ընթ Րիան միայն, որ հանդիպած էր նմա Հարրիի հետ Եարօուի քանահորին գաւթիկներէն միոյն վրայ, կրնար գոհացնել հանրային հետաքրքրութիւնը : Սակայն, ինչպէս գիտենք, զուարթ երիտասարդը կ'աշխատէր Մէլրոզի ագա-

րակին մէջ, Րէնֆրիուի կոմսութեան հարաւարեւմտեան կողմը քառսուն մղոն հեռաւորութեամբ, և մտքէն չէր անցնէր թէ ի՞նչ մտատանջութիւն կը տիրէր ձէյմա Սղարի անհետացման համար : Հետեւաբար, ածխահանքին տուած այցելութենէն ութօր յետոյ ձէյք Րիան պիտի շարունակէր անշուշտ նոյն ոգեւորութեամբ երգել Իրվայնի գաւառին գիշերային հանդէսներուն ժամանակ, — եթէ ինքն ալ չունենար մտատանջութեան ծանր պատճառ մը որուն վրայ ընդհուպ պիտի խօսուի :

Ընթ Սղար շատ նշանաւոր մարդ մըն էր, ո՛չ միայն իր քաղաքին, այլ բովանդակ Սկովտիոյ մէջ, և և իրեն վերաբերեալ պատահար մը չէր կրնար անըզմարելի անցնիլ : Էտիմպուրկի քաղաքային առաջին դատաւորը, քաղաքային պաշտօնեայք, քաղաքային խորհրդականք, որոց մեծ մասը բարեկամ էին ճարտարապետին, փութանակի հետազոտութիւններ սկսել տուին : Ոստիկաններ ճամբայ հանուեցան, սակայն ոչ մէկ արդիւնք ձեռք բերուեցաւ :

Ուստի հարկ եղաւ Մեծին Բրիտանիոյ գլխաւոր լրագրաց մէջ զեկոյց մը հրատարակել ձէյմա ճարտարապետին Սղարի նկատմամբ, հանդերձ իր նկարագրու-

Թեամբ, և էտիմալըրկէն մեկնման թուականաւ, եւ ա՛լ սպասեցին: Այդ սպասումը լի էր անձկութեամբ: Անգլիոյ գիտական աշխարհը կ'սկսէր հաւատալ իր նշանաւորագոյն անդամներէ միոյն վերջնական անհետացման:

Մինչ այսպէս անհանգիստ կը լինէին ձէյմս Սդարի համար, Հարրիի անձն ալ ոչ նուազ սաստիկ մտահոգութեանց նիւթ կը լինէր: Միայն թէ, փոխանակ հանրային կարծիքը գրաւելու, ծերունի գործավարին զաւակն իր ձէք Րիան բարեկամին զուարթութիւնը միայն կը խուզէր:

Կը յիշուի թէ, Եարսուի քանահորին մէջ միմեանց պատահած ատենին, ձէք Րիան հրաւիրած էր Հարրին ութ օր յետոյ երթալ Իրվայնի տօնին: Հարրի հաւանած եւ բացարձակ խոստում տուած էր երթալու: ձէք Րիան փորձառութեամբ գիտէր թէ իր ընկերը խօսքին տէր մարդ էր: Իր տուած խօսքը կը պահէր:

Արդ, Իրվայնի տօնին, ոչ մէկ բան պակասած էր, ո՛չ երգերն, ո՛չ պարերն, ո՛չ ամենազգի խրախճանութիւնք, ոչինչ, — եթէ ոչ Հարրի Փորտ:

ձէք Րիան նախ նեղացած էր նորա գէմ, որովհետեւ իր բարեկամին բացա-

կայութիւնը կ'ազդէր իր զուարթութեան վրայ: Մինչեւ իսկ յիշողութիւնը կորսնցուց իր երգերէն միոյն մէջտեղ, եւ, առաջին անգամ լինելով, անճարացաւ կաքաւի մը ատեն: որ սովորաբար արժանաւոր ծափահարութիւններ կը բերէր նմա:

Պէտք է ըսել աստ թէ ձէյմս Սդարի վերաբերեալ զեկոյցն որ լրագրաց մէջ հըրատարակուած էր, տակաւին հանդիպած չէր ձէք Րիանի աչքին: Հետեւաբար այս պատուական սղան Հարրիի բացակայութեան վրայ միայն կը մտածէր, ըսելով ինքնին թէ ծանր պարագայ մը միայն արգելք եղած ըլլալու էր նորա խոստմնապահութեան: յսպէս, Իրվայնի տօնին հետեւեալ օրը, ձէք Րիան մտադրած էր կլասիօուի երկաթուղին նստիլ՝ Տոչարդի գուբն երթալու համար, և պիտի ընէր զայս, — եթէ չըսնուէր արկածով մը որ մազ մնաց մահուանը պատճառ պիտի ըլլար:

Աւասիկ ի՛նչ պատահած էր դեկտեմբեր 12 ի գիշերը: Իրօք, իրողութիւնն այնպիսի հանդամանք մ'ունէր որ իրաւունք կուտար գերբնականին ամէն կուսակիցներուն, եւ ասոնք բազմաթիւ էին Մէլրոզի ագարակին մէջ:

Իրվայն, ծովային փաքը քաղաք Բէնֆ-

րիւնի կոմսութեան, որ իբր եօթն հազար բնակիչ կը հաշուէ, կառուցուած է սկովտիական եղերաց մէկ յանկարծական դարձուածքին մէջ, Գլայտի ծովախորշին գրեթէ բերանը: Իր նաւահանգիստն, որ բաւական լաւ պատուարեալ է ընդդէմ արձակ ծովուն հովերուն, լուսաւորուած է հզօր փարոսով մը որ ցոյց կուտայ ցամաք ելնելու տեղերն, այնպէս որ զգոյշ նաւաստի մը բնաւ չկրնար սխալիլ անդ: Ուստի, նաւարեկութիւնք հաղուադէպ էին ծովեզերաց այս մասին վրայ, և նաւարկուք կրնային անվտանգ նաւարկել, նոյն իսկ խաւարտչուտ գիշերները:

Երբ քաղաք մը ունի պատմական անցեալ մը, որքան ալ չնչին լինի այն, երբ իր դղեակն ատենօք պատկանած է Բոպէրդ Սդուարդի մը, անշուշտ քանի մը աւերակներ կ'ունենայ:

Արդ, ի Սկովտիա, բոլոր աւերակները պաշարուած են ոգիներով:— Գէթ այս կարծիքը կը տիրէ դաշտային և լեռնային Սկովտիոյ մէջ:

Այս ծովեզերաց ամէնէն հին եւ ամէնէն չարահամբաւ աւերակներն էին ճիշդ այդ Բոպէրդ Սդուարդի դղեկին աւերակներն, որք Տընտոնալա-Քեսաըլ կը կոչուին:

Այդ ժամանակին, Տընտոնալտի դըժ-

եակն, ապաստան գաւառին բոլոր թափառաչրջիկ ուրուականներուն, կատարեալ լքման մատնուած էր: Շատ քիչ անգամ կ'երթային այցելել զայն բարձրաբերձ ապառաժին վրայ զոր կը գրաւէր ծովուն վերեւ, քաղաքէն երկու մղոն հեռի: Թերեւս օտարականք ոմանք այցելէին պատմական այդ վաղեմի բեկորները, բայց յայնժամ միայնակ կ'երթային անդ: Իրվայնի բնակիչք երբեք անդ չպիտի առաջնորդէին անոնց, ինչ գնով ալ ըլլար: Արդարեւ, պատմութիւններ կը պտտէին ինչ ինչ «Հրեղէն կանանց» վրայ որք կը բնակէին հնաւուրց դղեկին մէջ:

Ամէնէն աւերդապաշտները կը հաստատէին թէ տեսած էին, իրենց աչերով տեսած էին այդ ցնորական կակները: Բնականաբար, ձէք Բիան ալ ադոնցմէ էր:

Ճշմարիտ էր թէ մերթ ընդ մերթ երկար բոցեր կ'երեւէին, մերթ կիսափուլ պատի մը երեսին վրայ, մերթ Տընտոնալա-Քեսալի աւերակաց ամբողջութեանը տիրող աշտարակին գագաթը:

Այս բոցերը մարդկային ձեւ ունէի՞ն, որպէս կը հաւատէին: Արժանի՞ էին այն «Հրեղէն կանայք» անուան զոր նոցա տուած էին ծովեզերաց Սկովտացիք: Ակներեւ էր թէ դիւրահանութեան հակա-

մէտ ուղիղներու մէկ պատրանքն էր այս , եւ գիտութիւնը պիտի կրնար Ֆիզիքօրէն բացատրել այդ երեւոյթը :

Ինչ որ ըլլայ , Հրեղէն կանայք ամբողջ գաւառին մէջ սա ընդհանուր համբաւը կը վայելէին թէ հին դղեկին աւերակները կը յաճախէին և մերթ անդ կը խաղային տարօրինակ կաքաւներ , մանաւանդ աղջամղջին գիշերները : Ընթ Րիան , որչափ ալ յանդուգն ըլլար , չպիտի համարձակէր երբեք ընկերանալ անոնց ի ճայն իր հովուական տիկին :

— Ծերունի նիքը կը բաւէ իրենց , կ'ըսէր , և ինձ պէտք չունի լրացնելու համար իր դժոխային նուագախումբը :

Աւելորդ է ըսել թէ այս արտակարգ տեսիլները գիշերային տքնութեանց ատեն նիւթ կը լինէին պատմութեանց : Այսպէս , ընթ Րիան ամբողջ պաշար մը ունէր առասպելներու Հրեղէն կանանց վրայ , և երբեք անպատրաստ չէր գըտնուեր երբ խնդիրն անոնց մասին բան մը պատմելու վրայ ըլլար :

Ուրեմն , այն վերջին գիշերն , որ գարեջրով , պրանդով և հոփով լաւ մը թրջուած էր և որ աւարտած էր իրվայնի սօնը , ընթ Րիան փութացած էր ձեռք առնլու իւր սիրական նիւթն , ի

մեծ գոհունակութիւն և թերևս ի մեծ սարսափ իր ունկնդրաց :

Երեկոյթը կ'անցնէր Մէլրոզի ագարակին մէկ ընդարձակ ամբարանոցին մէջ , ծովեզերքին ծայրը : Գետնածուխի լաւ կրակ մը կը վառէր երկաթեայ թիթեղէ լայն եռոտանի մը մէջ , ժողովքին մէջտեղը :

Դուրսը մրրիկը կը գոռար : Թանձր մառախուղներ կը թաւալէին կոհակաց վրայ , զորս հարաւարեւմտեան սաստիկառնչ քամի մը կը վարէր կը բերէր արձակ ծովէն : Խաւարամած գիշեր մը , ամպոց մէջ ոչ մէկ բացավայր , երկիրն , երկինքն եւ ջուրը միմեանց խառնուած խոր աղջամղջին մէջ ,— այս ամէնն իրար միացած՝ շատ դժուարին դարձնելու էին նաւու մը ցամաք մօտենալն իրվայնի ծովախորշին մէջ , եթէ նաւ մը համարձակէր անդ մտնել այդ հովերուն որք ծովափունքը կը կոծէին :

Իրվայնի փոքր նաւահանգիստը շատ յաճախեալ չէ , գէթ բաւական մեծ տարողութիւն ունեցող շոգենաւներէ : Քիչ մ'աւելի հիւսիսակողմն է որ առւերական շոգենաւները կամ առագաստանաւերը ցամաքին կը մօտենան , երբ կ'ուզեն Գըլայտի ծովախորշին մէջ մտնել :

Այդ երեկոյին սակայն , ծովափին վրայ յամեցած ձկնորս մը զարմացմամբ պիտի

նշմարէր նաւ մը որ դէպի ծովեզերքը կ'ուզողէր: Եթէ յանկարծ լայ ծագէր, ոչ թէ զարմացմամբ, այլ սոսկմամբ պիտի տեսնուէր այս նաւն որ հողին մըմամբ ընդ առաջ կը խոյանար: Եթէ չկրնար բռնել ծովախորշին բերանը, ծովեզրին ահռելի ժայռերուն մէջ ոչ մէկ ապաւէն կար: Եթէ այդ անխոհեմ նաւը կը յամառէր աւելի եւս մօտենալ անոնց, ի՞նչպէս պիտի յաջողէր ետ դառնալ:

Երեկոյթը պիտի աւարտէր ձէք Րիանի մէկ վերջին պատմութեան վրայ: Իր ունկընդիրք, ոգիներու աշխարհին մէջ փոխադրուած, ամէն բանի հաւատարու վիճակի մը մէջ կը գտնուէին, եթէ պարագայն ներկայանար:

Յանկարծ, աղաղակներ թնդացին դուրսէն:

Ձէք Րիան անմիջապէս դադրեցուց իր սպասմութիւնն, և ամէնն ալ վաղվաղակի դուրս ելան ամբարանոցէն:

Գիշերը չտորին էր Անճրելի և հողմի երկար ամպրոպներ և սուտակն հագափանց երեսէն:

Երկու երեք ձկնորս, ապառաժի մը մօտ կրթնած լաւագոյնս դիմադրելու համար օդին մըմանց, կը կոչէին բարձրածայն:

Ձէք Րիան և իր ընկերներն անոնց քով վազեցին:

Այս աղաղակներն ազարակին բնականաց չէր որ կ'ուզուէին, այլ նաւուն որ, առանց գիտնալու, իր կորստեան կը դիմէր:

Արդարեւ, մութ զանգուած մը կ'երեւէր չիտթ իմն, քանի մը հարիւր մեդր հեռի: Նաւ մըն էր, որ դիւրաւ կը ճանչցուէր իր կրակներէն, որովհետեւ իր թակաղաղի կայմին վրայ ճերմակ կրակ մը կար, կանաչ կրակ մը յառաջակողմը, և կարմիր կրակ մըն ալ յետսակողմը: Հետեւաբար յառաջակողմէն կը տեսնէին զինքն, եւ ակներեւ էր թէ մեծ արագութեամբ կ'ուզողէր դէպի ծովեզերքն:

—Վտանգի մէջ նա՞ւ մը, հարցուց ձէք Րիան:

—Այո, պատասխանեց ձկնորսներէն մին, եւ հիմակ եթէ ետ դառնալ իսկ ուզէ, չկրնար:

—Նշա՛ն ընենք, նշա՛ն ընենք, գոչեց Սկովտիացուց մին:

—Ի՛նչ նշան, պատասխանեց ձկնորսը: Այս փոթորիկին, կարելի չէ վառ ջահ մը պահել:

Եւ մինչդեռ այս խօսքերը կը փոխանակուէին արագօրէն, նոր աղաղակներ

արձակուեցան : Սակայն ի՞նչպէս պիտի կրնային լսելի ըլլալ այդ փոթորկին մէջտեղ : Նաևուն մարդիկն ա՛լ բնաւ ազատում չունէին նաւարեկութենէն :

— Ինչո՞ւ համար այսպէս կը շարժի, կը գոչէր նաւաստի մը :

— Կ'ուզէ դիտմամբ խրի՞լ ծովեզերքին վրայ, կ'ըսէր ուրիշ մը :

— Նաւապետը տեղեկութիւն չունի՞ Իրվայնի փարոսէն, հարցոց ծէք Րիան :

— Այդպէս ըլլալու է, պատասխանեց ձկնորսներէ մին, միայն եթէ սխալած չըլլայ . . .

Ձկնորսը դեռ չէր աւարտած խօսքն երբ ծէք Րիան գարհուրելի սղաղակ մը կ'արձակէր : Նաևէն լսուեցա՛ւ այդ ազաղակն : Ամէն պարագայի մէջ, շատ ուշ էր, եւ նաւը չէր կրնար ետ դառնալ կոչակաց գծէն որ սպիտակ կ'երեւէր աղջամիջոց մէջ :

Սակայն ծէք Րիանի նպատակը չէ՛ր հուսկ յետին ազդարարութիւն մը հասցնել նաևուն, որպէս կրնար կարծուիլ : Ծէք Րիան յայնժամ կրնակը կը դարձնէր ծովուն : Իր ընկերներն եւս կը դիտէին ծովեզերքէն դէպի ներս կէս մղոն հեռաւորութեամբ գտնուած կէտ մը :

Տընտոնալտի գղեակն էր այս : Երկար

բոց մը կը գալարէր ամպրոպներուն ներքեւ, հնաուրց աշտարակին գագաթը :

« Հրեղէն կի՛նը » գոչեցին այս բոլոր աւելորդապաշտ Սկովտիացիք սարսափաշար :

Ճշմարտապէս խօսելով, բաւական երեւակայութիւն պէտք էր մարդկային երեւոյթ մը գտնելու համար այդ բոցին : Քամիին ներքեւ լուսավառ դրօշի մը պէս տարուբերելով, մերթ գոգցես կը թռէր աշտարակին կատարէն, իբր թէ շիջանելու վրայ ըլլար, եւ յաջորդ վայրկենին վերստին անոր կը յարէր իր կապտորակ շրջագիծով :

« Հրեղէն կի՛նը, Հրեղէն կի՛նը » կը գոչէին ձկնորսներն և գիւղացիները պակուցեալ :

Ամէն բան կը մեկնուէր այսու : Ակնբերեւ էր թէ նաւը, մառախուղներուն մէջ ուղեկորոյս, սխալ ճամբայ բռնած էր և Տընտոնալտի գղեկին կատարը վառած բոցը նկատած էր իբր Իրվայնի փարոսը : Կը կարծէր թէ ծովախորշին բերանն էր՝ որ տասն մղոն աւելի հիւսիսակողմն էր, և կը դիմէր դէպ այնպիսի վայր մը որ ոչ մէկ ապաստան ունէր իրեն համար :

Ի՞նչ կարելի է ընել զինքը փրկելու համար, եթէ տակաւին ժամանակ

կար: Թերեւս հարկ էր ելնել մինչեւ աւերակներն և ջանալ մարեւ այդ կրակն, որպէս զի կարելի չըլլար այլ եւս շիթեւել զայն իրվայնի նուահանգստին փարոսին հետ:

Անշուշտ, այսպէս պէտք էր ընել, առանց յապաղելու, սակայն այդ Սկովտիացիներէն ո՞վ խորհուրդ և ապա յանդգնութիւն պիտի ունենար դիմագրաւելու Հրեղէն կնոջ: Ճէք Րիան Թերեւս, որովհետեւ քաջասիրտ էր, և իր աւելորդապաշտութիւնն որչափ ալ սաստիկ ըլլար, չէր կրնար կասեցնել զինքն վեհանձն գործի մը մէջ:

Շատ ուշ էր: Ահուելի ճայթիւն մը որոտաց տարերց ժխորին մէջտեղ:

Նաւն յետասկողմէն նստած էր աւազին վրայ: Իր կրակները մարած էին: Կոհակաց սպիտակ գիծը պահ մը կտրուեցաւ: Նաւը կողին վրայ կը պառկէր եւ ժայռերուն մէջ տեղ կը քայքայուէր:

Եւ ճիշդ այդ վայրկենին, զուգադիպութեամբ մը որ դիպուածի միայն վերագրելի էր, երկար բոցն անհետացաւ, իբր Թէ սաստիկ ամպրոպով մը յաժշտակուած լինէր: Ծովը, երկինքը, ծովափն անմիջապէս վերըսկզպացան: Նաւարի մէջ:

«Հրեղէն կի՛նը» գոչած էր վերջին ան-

գամ ճէք Րիան, երբ այս երեւոյթն, որ իրեն եւ իր ընկերաց համար գերբնական էր, անյայտացաւ յեղակարծուտ:

Բայց յայնժամ, այն քաջութիւնը զոր այս նանրահաւատ Սկովտիացիք չ'պիտի կրնային ունենալ ընդդէմ մտացածին վտանգի մը, ունեցան հանդէպ իրական վտանգին, հիմակ որ խնդիրն իրենց նմանները փրկելու վրայ էր: Շղթայագերծ տարերք չ'կասեցուցին զիրենք: Կոհակաց մէջ արձակուած չուաններու միջոցաւ, նետուեցան յօգնութիւն նաւարկելոց, — այնքան դիւցազնական որքան աւելորդապաշտ եղած էին:

Բարերազգարար յաջողեցան: Թէեւ ունանք, — եւ յանդուգն ճէք Րիան ասոնց մէջ էր, — բաւական վիրաւորեցան ժայռերուն վրայ, սակայն նաւապետն եւ ութ նաւաստիները կրցան ողջ առողջ բերուիլ ծովափան վրայ:

Այդ նաւն էր նորվեկիական Մուլա երկկայմը, հիւսիսի փայտ բեռցած, դէպի Կուսկօ ուղեւորելով:

Ենթադրուելի էր լատ ճիշդ էր: Նաւապետը, Տընտոնաւտի դղեկին աշտարակին վրայ վառուած այս կրակէն սխալելով եկած էր խրիլ ծովեղերքին վրայ, փոխանակ Գլայտի ծովախորը մտնելու:

Եւ այժմ, Մարտի, բեկորներ միայն մնացած էին, զորս կոհակները կը շարունակէին ջարդուփշուր ընել ծովափան ժայռերուն վրայ:

ՔԼՈՒԽ ԺԱ.

Ճէֆ ՐԻԱՆԻ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

Ճէֆ Րիան և իր ընկերներէն երեքն, իրեն պէս վիրաւորեալ, փոխադրուած էին Մէլրոզի ագարակին սենեակներէն միոյն մէջ, ուր անմիջապէս ամէն խնամք տարուեցաւ իրենց:

Ճէֆ Րիան ամէնէն աւելի չարչրկուածն էր, որովհետեւ այն պահուն ուր չուանը մէջքէն կապած ծով նետուած էր, կատաղի ալիքներն ու ժգնութեամբ գլորած էին զինքը ժայռերուն վրայ: Մինչև իսկ քիչ էր մնացեր որ իր ընկերներն անկենդան փոխադրէին զինքը ծովափան վրայ:

Հետեւաբար քաջարի տղան քանի մը օր գամուած մնաց անկողնոյն վրայ, — եւ այս բանս կատղեցուց զինքը: Սակայն երբ իրեն թոյլ առին ուզածին չափ երգել, համբերութեամբ սկսաւ տանիլ իր հիւանդութիւնն, եւ Մէլրոզի ագարակն ամէն ժամ թնդաց իր ձայնին զուարթ

հնչիւններով: Այլ ճէֆ Րիան այս արկածէն ետք սկսաւ աւելի սաստիկ երկիւղ զգալ Պրօֆէսորներէն եւ ուրիշ ուրուականներէն որք բան գործ ըրած են խեղճ մարդիկը նեղացնել, եւ զայնս պատասխանատու բռնեց Մարտի աղէտին: Մարդ ի զուր պիտի յագնէր եթէ պնդէր անոր առջեւ թէ Հրեղէն կանայք գոյութիւն չունէին, և թէ աւերակաց մէջ այդպէս յեղակարծ արձակուած բոցը Ֆիզիքական երեւոյթի մը արդիւնք էր լի: Իր ընկերներն իրմէ աւելի յամառ էին իրենց աւելորդապաշտութեան մէջ, Իրենց խօսքին նայելով, Հրեղէն կանանց մին չարութեամբ ծովեզերք քաշած էր Մարտին: Գալով զայն պատժելու խորհրդոյն, փոթորիկը տուգանքի դատապարտել ուզելու կը նմանէր: Դատաւորները կրնային իրենց ուզած վճիռներն արձկել դատ բանալու համար: Բոց մը չ'բանտարկուիր: անչօջափելի հակ մը չզթայի չ'գարնուիր: Եւ եթէ հարկ է ըսել, վերջէն կատարուած քննութիւնք կործես իրաւունք տուին, — գէթ ըստ երեւոյթին, — իրերը մեկնելու այս աւելորդապաշտ եղանակին:

Արդարեւ, Մարտի կորստեան մասին քննութիւն մը բանալու պաշտօն ունեցող դատաւորն եկաւ հարցաքննել աղէտին

գանազան վկայները : Ամէնքն ալ համա-
ձայն էին սա կէտին վրայ թէ նաւարե-
կուծիւնն հետեւանք էր Հրեղէն կնոջ գեր-
բնական երեւման , Տընտոնալտի դղեկին
աւերակաց մէջ :

Աւերորդ ըսել թէ դատական իշխա-
նութիւնը չէր կրնար ընդունիլ նմանօրի-
նակ պատճառներ : Տարակոյս չկար բնաւ
թէ զուտ Ֆիզիքական երեւոյթ մը պա-
տահած էր այդ աւերակներուն մէջ : Սա-
կայն պատահա՞ր էր այն թէ թշնամու-
թիւն . դատաւորը զայս պիտի ջանար
հաստատել :

Թող այս «թշնամութիւն» բառը չզար-
մացնէ : Արմսրիքեան պատմութեան
չատ հիները երթալու պէտք չկայ , անոր
արդարացումը գտնելու համար : Պը-
դոնեան ծովեզերաց շատ աւարառուք
նաւերը ծովեզերք քաշելու արհեստն ի
գործ դրած են , որպէս զի իրենց մէջ
բաժնեն անոր կողոպուտը : Մերթ ուեա-
նաւոր ծառոց պուրակ մը գիշերանց վառ-
ուելով , նաւուն կ'առաջնորդէր խորշերու
մէջ ուսկից ա'լ չէր կրնար ելնել : Մերթ ,
ցուլի մը եղջիւրներուն կապուած եւ ա-
նանոյն քմահաճոյից համեմատ պտտցուած
ջահ մը կը մտրրեցնէր նաւն իր բռնելիք
ճամբուն վրայ :

Այս շրջաններուն արդիւնքն էր ան-
խուսափելի նաւարեկութիւնն մը , ուսկից
աւարառուք կ'օգտուէին : Դատական իշ-
խանութեան միջամտութիւնն եւ խիստ
օրինակներ հարկ եղած էին այս բարբա-
րոս սովորութիւնները ջնջելու համար :
Արդ , չէ՞ր կրնար լինիլ որ , այս պարա-
գայիս մէջ , ոճրագործ ձեռք մը վերսկը-
սած լինէր ծովեզերքի աւարառուաց հին
աւանդութիւնները :

Ոստիկանութեան մարդիկը զայս կը
մտածէին , ինչ որ ալ ըսէին ձէք Քիան և
իր ընկերք : Երբ սոքա իմացան քննու-
թեան խօսքն , երկու մասի բաժնուեցան .
ոմանք շատացան ուսերնին . թո՞թուելով .
այլք , աւելի երկչոտ , ծանուցին թէ անտա-
րակոյս նոր աղէտներ յառաջ պիտի դային
այսպէս գրգռելով գերբնական էակիերը :

Հակառակ այսմ , քննութիւնը կատարուե-
ցաւ մեծ խնամքով Ոստիկանութեան մար-
դիկը գնացին Տընտոնալտի դղեակն և ա-
մենախիստ հետազօտութեանց ձեռնար-
կեցին :

Դատաւորն ուղեց նախ հասկնալ թէ
հողը ոտից հետքեր պահա՞ծ էր , ուրուա-
կաններու ոտքերէն տարբեր ոտից վերա-
գրելի : Անհնար եղաւ ամենաթեթեւ հետք
մը գտնել , ո՛չ հին ո՛չ նոր , թէեւ հողը

որ առջի իրիկուան անճրեւներէն թաց էր տակաւին, պիտի պահէր ամենադոյզն հետքը:

— Պահանջներու հետքեր, գոչեց ձեք Րիան երբ իմացաւ առաջին քննութեանց անյաջողութիւնը: Ընչդ կը նմանի շրջմովի հուրի մը հետքերը գտնել ուղեւոր ճահիճի մը ջրին վրայ:

Քննութեան այս մասն ո եւ է արդիւնք չունեցաւ ուրեմն: Հաւանական չէր որ երկրորդ մասն աւելի բան մը արտադրէր:

Արդարեւ, հասկնալու էր թէ կրակն ի՛նչպէս կրցած էր վառուիլ հնաուրց աշտարակին կատարը, ի՛նչ տարրեր մատակարարուած էին այրեցողութեան, եւ վերջապէս այդ կրակն ի՛նչ աճիւն թողած էր:

Առաջին կէտին վրայ, ոչինչ, ո՛չ լուցկիի մնացորդներ, ո՛չ քուրջեր, ո՛չ թուղթ, որ կրակ մը վառելու ծառայած ըլլար:

Երկրորդ կէտին վրայ, դարձեալ ոչինչ: Չգտնուեցան ո՛չ չորցած խոտեր, ո՛չ փայտի կտորներ, ուսկից սակայն մեծապէս սնած լինելու էր գիշերուան կրակը:

Գարով երրորդ կէտին, ա՛յն ալ չլուսարանուեցաւ: Աճիւնի և վառելանիւթի ո և է մնացորդի բացակայութիւնը կարև-

լի իսկ չըրաւ գտնել այն տեղն ուր հնոցն հաստատուած էր: Ոչ մէկ սեւցած ծխոտած տեղ կը գտնուէր, ո՛չ հողին, ո՛չ ապառաժին վրայ: Ուրեմն աղկից եղբակացընելու էր թէ կրակը շարագործի մը ձեռքով բռնուած էր: Ըշմարտանման չէր այդ, որովհետեւ, ականատես վիսյից խօսքին նայելով, բոցն հակայական մեծութիւն մ'ունէր, այնպէս որ Մոսկալի նաւազները կրցեր էին տեսնել զայն քանի մը մղոն հեռուէն, հակառակ մատախուղին:

— Է՛հ, գոչեց ձեք Րիան, Հրեղէն կինը լուցկիի պէտք չունի: Կը փչէ, և այս կը բաւէ միջնօրրաբ բռնկցնելու համար, և իր հնոցը բնաւ մոխիր չթողուր:

Այս ամէնուն հետեանքը սա եղաւ որ դատաւորներն ի զուր աշխատեցան նոր առասպել մը աւելցաւ միւս այնքան առասպելներուն վրայ, — առասպել որ պիտի յաւերժացնէր Մոսկալի աղէտին յիշատակն և աւելի անժխտելի կերպով պիտի հաստատէր Հրեղէն կանանց երևումն:

Սակայն ձեք Րիանի պէս առոյգ կազմուածքի տէր և քաջարի տղայ մը չէր կրնար երկար ատեն պառկած մնալ: Քանի մը ճմլուածքներ և սիրբուքներ չէին կրնար պէտք եղածէն աւելի անկողին

պառկեցնել զինքն : Ժամանակ չունէր հիւ-
ւանդ լինելու : Արդ, երբ այդ ժամանակը
կը պակսի, մարդ երբեք հիւանդ չէ դաշ-
տային Սկովտիոյ այդ առողջաւէտ դա-
ւառաց մէջ :

Ճէք Րիան արագապէս առողջացաւ
ուրեմն : Ոտքի ելածին պէս, Մէլրոզի ա-
գարակին մէջ իր գործը վերսկսելէ ա-
ռաջ, ուղեց ի գործ դնել իր մտադրու-
թիւնն, այն էր երթալ այցելութիւն տալ
իր Հարրի ընկերոջ, իմանալու համար
թէ ինչո՛ւ չէր եկած Իրվայնի տօնին :
Հարրիի պէս մարդու մը համար, որ
տուած խօսքն անպատճառ կը պա-
հէր, այս բացակայութիւն անբացա-
տրելի էր : Մնաց որ, կարելի բան
չէր որ ծերունի գործավարին տղան իմա-
ցած չըլլար Մոռալի աղէտը, զոր լրա-
գիրք ամէն մանրամասնութեամբ հրատա-
րակած էին : Ադկից գիտնալու էր թէ Ճէք
Րիան մասնակցած էր ազատարարութեան
գործին, թէ գլխուն ի՛նչ եկած էր, եւ
Հարրիի կողմէ չափազանց անտարբերու-
թիւն էր մինչեւ ազարակը չի գալ՝ իր
Ճէք Րիան բարեկամին ձեռքը սեղմելու,
Հետեւաբար եթէ Հարրի եկած չէր, պատ-
ճառն այն էր որ չէր կրցած գալ : Ճէք
Րիան աւելի՛ պիտի ուրանար Հրեղէն կա-

նանց գոյութիւնը քան հաւատար Հարրիի
անտարբերութեան իր նկատմամբ :

Ուստի, աղէտէն երկու օր յետոյ, Ճէք
Րիան մեկնեցաւ ագարակէն թեթեւօտն,
իբր պնդակազմ երիտասարդ մը բնաւ չէր
զգար իր վերքերը : Կոկորդալիր զուար-
թագին յանկերգով մը թնդացուց խարա-
կին արձագանգներն եւ զնաց ի կայարանն
երկաթուղւոյն որ Կլասկօն կը տանի
Սքըրլինկ եւ Գէլլէնտըր :

Հոն, մինչդեռ կայարանին մէջ կ'սպա-
սէր, աչքին հանդիպեցաւ նախ յայ-
տարարութիւն մը որ բազմաթիւ օրինակ-
ներով փակցուած էր պատին վրայ եւ որ հե-
տեւեալ ազդը կը պարունակէր :

«Անցեալ դեկտեմբեր 4 ին, Ճէյմս
Սքար ճարտարագետն, յէտիմպուրկէ,
Կրանդընի նաւամատոյցէն նստեր է Բըէն-
ոլ կաւ շոգեմալը : Նոյն օրն իսկ ցամաք
ելած է ի Սքըրլինկ : Այդ ժամանակէն ի
վեր, իրմէ լուր չկայ :

«Կը խնդրուի իր մասին ո եւ է տե-
ղեկութիւն հասցնել առ նախագահն Ար-
քայական կաճառին, յէտիմպուրկ :»

Ճէք Րիան, այս յայտարարութեան մի-
ոյն առջեւ կանգ առած, երկու անգամ
կարդաց դայն, սաստկագոյն զարմացման
նշաններ յայտնելով :

—Պարոն Սդա՛ր, գոչեց: Բայց ճիշդ դեկտեմբեր 4 ին ես իրեն հանդիպեցայ Հարրիի հետ Եարօուի սանդուղներուն վրայ: Ասկից տա՛նն՝ օր առաջ: Եւ այդ օրէն ի վեր, ա՛լ երեւցած չէ: Արդեօք ա՛յս է պատճառն որ ընկերս չերեւցաւ Իրվայնի տօնին:

Եւ, առանց նամակաւ տեղեկութիւն հասցնելու Արքայական կաճառին Նախագահին՝ իր ձէյմս Սդարի նկատմամբ գիտցածին վրայ, քաջարի աղան կառախմբին մէջ ցատքեց, նախ եւ առաջ Եարօուի քանահօրն երթալու հաստատ մտադրութեամբ: Յետոյ պիտի իջնէր մինչեւ Տօչարդի գուրին խորն, եթէ հարկ ըլլար, գտնելու համար Հարրին եւ անոր հետ միատեղ ձէյմս Սդար ճարտարագետը:

Երեք ժամ յետայ, կառախմբէն կ'ենէր Գէլլէնտըրի կայարանին մէջ, և շուտաքայլ կ'երթար դէպի Եարօուի հորը

—Չեն երեւցած, կ'ըսէր: Ինչո՞ւ համար: Արդեօք արդե՛րք մը ելած է իրենց դէմ կարեւոր աշխատութի՞ւն մը ունին որ մինչեւ հիմա ամխահանքին խորը կը պահէ զիրենք: Պիտի իմանա՛մ:

Եւ ձէք Րիան, քայլերը մեծցնելով, մէկ ժամէն հասաւ Եարօուի հորը:

Դուրսէն, ոչ մէկ բան փոխուած էր:

Նոյն լուսթիւնը կը տիրէր գուրին բոլորտիքը: Ոչ մէկ կենդանի էակ այդ անպատին մէջ:

Ձէք Րիան մտաւ կիսափուլ յարկին ներքեւ որ կը ծածկէր քանահօրին բերանը: Նայուածքը մխեց այդ անդունդին մէջ... Բան մը չլսեց:

—Բայց իմ կանթե՞ղս, գոչեց: Ա՛լ իր տեղը չէ՞:

Սյն կանթեղը զոր ձէք Րիան կը գործածէր իր այցելութեանց միջոցին, սովորաբար դրուած էր անկիւն մը, առաջին սանդուղին գաւթիկին մօտ:

Սյդ կանթեղն անյայտացած էր:

—Աւասիկ առաջին կնճռոտութիւն մը, ըսաւ ձէք Րիան, որ սկսաւ անհանդիստ լինիլ:

Յետոյ, առանց վարանելու, որչափ ալ աւելորդապաշտ ըլլար:

—Պիտի իջնե՛մ, ըսաւ, մինչեւ խօսեթէ գուրին մէջ աւելի մութ ըլլայ քան դժոխոց խորխորատին մէջ:

Եւ սկսաւ իջնել սանդուղներու երկար յաջորդութիւնն որք կը խորանուզէին խաւարամած քանահօրին մէջ:

Ձէք Րիան կորուսած լինելու չէր բընաւ իր հանքահանի նախկին սովորութիւններն եւ լաւ ճանչնալու էր Տօչարդի

գուրն, այս համարձակութիւնն ունենալու համար: Մնաց որ, խոհեմութեամբ կ'իջնէր: Իր ոտքը կը շօշափէր իւրաքանչիւր աստիճաններն, որոց ոմանք որդնակեր ցեցաւէս էին: Մէն մի սխալ քայլ մահացու անկում մը պիտի պատճառէր հազար հինգ հարիւր ոտքի այդ դատարկութեան մէջ: Ճէք Րիան ուրեմն կը հաշուէր իր թողած գաւթիկներուն իւրաքանչիւրն, յաջորդ յարկն իջնելու համար: Գիտէր թէ իր ոտքը գուրնն յատակին պիտի դպչէր, երեսուներորդ գաւթիկն անցնելէ յետոյ: Անգամ մը հոն հասնելէ ետք, կը մտածէր թէ դժուարութիւն չպիտի ունենար գտնելու ծերունի գործավարին տունն, որ, ինչպէս յայտնի է, գլխաւոր ներքնուղւոյն ծայրը կը գըտնուէր:

Ճէք Րիան այսպէս հասաւ քսանեւեցերորդ գաւթիկն, եւ, հետեւաբար, առ առաւելն երկու հարիւր ոտք կը բաժնէին զինքը խորէն:

Այդտեղ, սրունքն իջեցուց քսանեւ եօթներորդ սանդուղին առաջին աստիճանը գտնելու համար: Սակայն սրունքը, պարապութեան մէջ որորուելով, ոչ մէկ յենակէտ գտաւ:

Ճէք Րիան գաւթիկին վրայ ծունր

դրաւ: Ուզեց ձեռքով բռնել սանդուղին ծայրն: Ի զո՛ւր:

Ակներեւ էր թէ քսան եւ եօթներորդ սանդուղն իր տեղը չէր գտնուեր, և, հետեւաբար, խլուած էր տեղէն:

—Կ'երեւի թէ ծերուկ նիքը ասկից անցեր է, ըսաւ ինքնին, սարսափի զգացմամբ մը:

Յոտին, ձեռները խաչածև, ուզելով միշտ ձեղքել այդ անթափանցելի խաւարը, Ճէք Րիան սպասեց: Յետոյ միտքն ինկաւ թէ, եթէ ինք չէր կրնար վար իջնել, ածխահանքին բնակներն ալ չէին կրցած վեր ելնել: Արդարև, կոմսութեան հողին և գուրնն խորութեանց մէջտեղ ոչ մէկ հաղորդակցութիւն կար: Եթէ Եարօուի քանահորին ստորին սանդուղներն իր վերջին այցելութենէն յետոյ հանուած էին, Սիմոն Ֆորտ, կինը, զառակն և ճարտարապետն ի՞նչ եղած էին: Ճէյմս Սդարի երկարատեւ բացակայութիւնն ակներևաբար կ'ապացուցանէր թէ գուրէն մեկնած չէր այն օրէն ի վեր յորում Ճէք Րիան հանդիպած էր նմա Եարօուի քանահորին մէջ: Աղկից ի վեր ի՞նչպէս եղած էր Սիմոն Ֆորտի տան պարէնաւորումն: Ուտեստը պակասած չէ՞ր այս տարաբաղըներուն որք հազար հինգ հարիւր

ոտք խորութեամբ թաղուած էին հողին ներքեւ :

Այս ամէն խորհրդածութիւններն անցան ձէք Րիանի մտքէն : Հասկցաւ թէ ինք անձամբ բան մը չէր կրնար ընել մինչեւ Սիմոն ֆորտի տունն հասնելու համար : Հաղորդակցութեանց այս ընդհատման մէջ չարակամութիւն կար : Տարակուսելի չէր թուեր այս իրեն : Ամէն պարագայի մէջ դատաւորներն հարկ եղածը պիտի ընէին, սակայն հարկ էր կարելի եղածին չափ շուտ տեղեկութիւն հասցնել իրենց :

Ճէք Րիան գաւթիկէն վար ծռեցաւ :

— Հարրի՛, Հարրի՛, գոչեց իր հզօր ձայնով :

Արձագանդները քանիցս ետ դրկեցին Հարրիի անունը, որ վերջապէս մարեցաւ եարօւի քանահորին վերջին խորոց մէջ :

Ճէք Րիան արագապէս ելաւ վերին սանդուղներն, եւ վերստին տեսաւ ցերեկսեան լոյսն : Վայրկեան մը չկորսնցուց : Մէկ շունչով գնաց Գէլլէնտըրի կայարանը : Քանի մը վայրկեան միայն սպասեց էտիմպուրիկի ճեպընթաց կառավարին անցնելուն, եւ, միջօրէէն յետոյ ժամ երեքին, կը ներկայանար մայրաքաղաքի քաղաքային առաջին դատաւորին :

Հոն, իր յայտարարութիւնն ընդունուեցաւ : Իր տուած մանրամասն տեղեկութիւնք կասկած չէին վերցնէր իր ճշմարտախօսութեան վրայ : Անմիջապէս տեղեկութիւն տրուեցաւ Արքայական Կաճառին նախագահ Սըր Ու. Էլֆիտըլնի, որ ոչ միայն պաշտօնակիցն այլ մասնաւոր բարեկամն էր Ճէյմս Սքարի, և որ խնդրեց վարել հետազոտութիւններն որք անյապաղ պիտի լինէին Տոչարդի գուբին մէջ : Նորա տրամադրութեան ներքեւ դրին քանի մը ոստիկաններ, որք կանթեզներ, բրիչներ, չուանէ երկար սանդուղներ, առին միասին, առանց մոռնալու ուտեստ եւ կազդուրիչ ըմպելիներ : Յետոյ, Ճէք Րիանի առաջնորդութեամբ, անմիջապէս բռնեցին Ապըրֆոյլի անխահանքերուն ճամբան :

Նոյն իրիկունն իսկ, Սըր Ու. Էլֆիտըլն, Ճէք Րիան և ոստիկաններն հասան եարօուի քանահորին բերանն, և իջան մինչեւ քսանեւեթներորդ գաւթիկն, որուն վրայ Ճէք կանգ առած էր քանի մը ժամ առաջ :

Կանթեզներն երկար չուաններու ծայրը կապելով իջեցուցին քանահորին խորութեանց մէջ, և յայնժամ կրցան հաստատել թէ վերջին չորս սանդուղները կը պակսէին :

Տարակոյս չկար բնաւ թէ Տոչարդի գուբին ներսին և դուրսին միջեւ ու և է հաղորդակցութիւն դիտմամբ խզուած էր:

— Ինչի՞ կ'սպասենք, պարոն, հարցուց անհամբերն ձէք Րիան:

— Կ'սպասենք որ այս կանթեղները վեր հանուին, տղաս, պատասխանեց Սըր Ու. Էլֆիսդըն: Յետոյ պիտի իջնենք մինչեւ վերջին ներքնուղւոյն գետինն, և պիտի առաջնորդես մեզ...

— Սիմոն Ֆորտի տո՛ւնը, գոչեց ձէք Րիան, և, եթէ հարկ ըլլայ, մինչեւ գուբին վերջին անդունդները:

Կանթեղները վեր առնուելուն պէս, ոստիկանները գաւթիկին պնդեցին չուանէ սանդուղներն, որք քանահորին մէջ երկնցան: Ստորին գաւթիկները կեցած էին տակաւին: Այսպէս կրցան մէկէն միւսն իջնել:

Մեծ դժուարութեամբ եղաւ այս ձէք Րիան ամէնէն առաջ կախուած էր այս երերուն սանդուղներէն, եւ, ամէնէն առաջ, ի՛նք ոտք դրաւ ածխահանքին յատակին վրայ:

Սըր Ու. Էլֆիսդըն եւ ոստիկաններն ընդհուպ միացան նմա:

Եարօուի քանահորին յատակի բոլորէի հրապարակն ամայի էր, սակայն Սըր Ու.

Էլֆիսդըն մեծապէս զարմացաւ իմանալով ձէք Րիանի գոչելը:

— Աւասիկ սանդուղի քանի մը կտորներ, եւ ասոնք կիսովին այրած կտորներ են:

— Այրած, կրկնեց Սըր Ու. Էլֆիսդըն: Արդարեւ, աւասիկ երկար ատենէ ի վեր մարած մոխիրներ:

— Կը խորհի՞ք, պարոն, հարցուց ձէք Րիան, թէ ձէյմս Սդար ճարտարապետն շահ ունեցած ըլլայ այս սանդուղներն այրելու եւ դուրսի հետ ու եւ է հաղորդակցութիւն կտրելու:

— Անշուշտ ոչ, պատասխանեց Սըր Ու. Էլֆիսդըն, որ մտախոհ մնաց: Օ՛ն, տղաս, տո՛ւն երթանք: Հոն պիտի իմանանք ճշմարտութիւնը:

ձէք Րիան գլուխն երերցուց, տարակուսեալ մարդու մը պէս: Սակայն, կանթեղ մը առնլով ոստիկաններէն միոյն ձեռքէն, արագապէս յառաջացաւ Տոչարդի գուբին գլխաւոր ներքնուղւոյն մէջէն:

Ամէնքն ալ հետևեցան նմա:

Քառորդ ժամ մը յետոյ, Սըր Ու. Էլֆիսդըն և իր ընկերներն հասած էին այն խոռոչն, որուն խորը կառուցուած էր Սիմոն Ֆորտի տունը: Ոչ մէկ լոյս կը լուսաւորէր անոր պատուհանները:

Ճէք Րիան խոյացաւ դէպի դուռը, զոր ուժգնութեամբ հրեց:

Տունն երեսի վրայ թողուած էր:

Պտրտեցան խաւարամած բնակարանին սենեակներն: Ի ներքուստ, բռնաբարութեան ոչ մէկ հետք: Ամէն բան կարգին էր, իբր թէ ծերունին Մաճ հոն լինէր տակաւին: Ուտեստներու պահեստը մինչեւ իսկ առատ էր, և դեռ քանի մը օր կրնար բաւել Ֆորտ ընտանեաց:

Ուրեմն տան բնակիչներուն բացակայութիւնն անբացատրելի էր: Սակայն կրնայի՞ն որոշ կերպով հաստատել թէ ո՞ր ժամանակ թողած էին զայն:—Այո, որովհետեւ այդ միջավայրին մէջ ուր ո՛չ գիշերք, ո՛չ ցերեկք կը յաջորդէին միմեանց, Մաճ սովորութիւն ունէր խաչով մը նշանակելու իր օրացոյցին իւրաքանչիւր օրը:

Այս օրացոյցը կախուած էր սրահին պատէն: Արդ, վերջին խաչն եղած էր դեկտեմբեր 6 թուականաւ, այսինքն ձէյմս Սդարի գալուստէն օր մը յետոյ,—ինչպէս հաւաստեց ձէք Րիան: Ուրեմն աղընյայտ էր թէ դեկտեմբեր 6 էն ի վեր, այսինքն տասն օրէ հետէ, Սիմոն Ֆորտ, կինը, զաւակն և իր հիւրը մեկնած էին տունէն: Ճարտարապետին ձեռամբ սկըս-

ուած նոր հետազօտութիւն մը կրնա՞ր արդարացնել այսքան երկար բացակայութիւն մը: Անշուշտ ո՛չ:

Սըր Ու. էլֆիսդըն այսպէս մտածեց գէթ: Մանրակրկիտ կերպով խուզարկեց յետոյ տունը, վարանոտ մնաց թէ ի՛նչ պիտի ընէր:

Սթութիւնը կատարեալ էր: Կանթեղներուն լոյսը միայն, որ ոստիկանաց ձեռաց մէջ կը խաղար, ընդ աջօտս կը լուսաւորէր այս անթափանցելի աղջամուղջները: Յանկարծ, ձէք Րիան աղաղակ մը արձակեց:

—Հո՛ն, հո՛ն, ըսաւ:

Եւ իր մատը ցոյց կուտար բաւական սաստիկ լոյս մը, որ ներքնուղւոյն մթին հեռաւորութեան մէջ կ'երերար:

—Բարեկամներս, դէպ այդ լոյսը վազենք, ըսաւ Սըր Ու. էլֆիսդըն:

—Պրօ-նի բո՛ց մը գոչեց ձէք Րիան: Ի՛նչ օգուտ: Երբեք չպիտի հասնինք իրեն:

Արքայական Կաճառին նախադաճն և ոստիկաններն, որք բնաւ հակամէտ չէին դիւրահաւանութեան, խոյացան դէպի շարժուն լոյսին ցոյց տուած ուղղութիւնն: Ձէք Րիան, քաջութիւնն ի ձեռին առնըլով, ամենէն ետքը մնացողներէն չէր:

Երկար և խոնջեցուցիչ հետապնդում
մ'եղաւ այս: Լուսավառ լապտերը գող-
ցես կը տարուէր նկնահասակ այլ տարօ-
րէն իմն դիւրաշարժ էակէ մը: Ամէն վայր-
կեան, այդ էակն աներևոյթ կը լինէր խո-
ռոչի մը ետև. յետոյ, վերստին կը տես-
նէին զինքը կողմնակի ներքնուղւոյ մը
խորը: Ճամբու յանկարծական փոփոխ-
մունք տեսողութենէ հեռի կը կացուցա-
նէին զինքն ապա: Վերջնականապէս ան-
հետացած կը թուէր, և, յանկարծ, իր
լապտերին լոյսը նորէն կ'արձակէր սաս-
տիկ պայծառութիւն մը: Ի մի բան, շատ
քիչ կը մօտենային նմա, և ճէք Րիան ի-
րաւամբ կը հաւատար թէ երբեք չպիտի
հասնէին նմա:

Ժամ մը այս անոգուտ հետապնդումէն
յետոյ, Սըր Ու. Էլֆիսդըն և իր ընկեր-
ները խորասուզեցան Տոչարդի գուբին
հարաւ-արեւմտեան մասին մէջ: Իրենք իսկ
վերջ ի վերջոյ կը հարցնէին ինքնին թէ
գործերնին շրջմովիկ անըմբռնելի հուրի մը
հետ չէ՞ր:

Այդ վայրկենին սակայն, թուեցաւ թէ
հեռաւորութիւնը կ'սկսէր նուազիլ շրջմո-
լիկ հուրին և իրենց մէջտեղ: Ասոր պատ-
ճառը խուսափուկ էակին յոգնութիւնն
էր, թէ այդ էակը կ'ուզէր Սըր. Ու. Էլ-

Ֆիսդընն և ընկերները տանիլ հոն ուր
ածխահանքին բնակիչները թերևս ինք-
եանք իսկ տարուած էին: Դժուար էր
լուծել այս խնդիրը:

Միայն թէ ոստիկաններն, ուզելով նը-
ուազեցնել այս հեռաւորութիւնը, կըրկ-
նապատկեցին իրենց ջանքերը: Լոյսն որ
միշտ երկու հարիւր քայլ առաջ նշուած
էր, հիմակ հազիւ յիսուն քայլ հեռու էր
Այս անջրպետն ևս առաւել նուազեցաւ:
Լապտերակիրն ևս առաւել տեսանելի ե-
ղաւ: Մերթ, երբ գլուխը կը դարձնէր,
կարելի էր ճանչնալ մարդկային դէմքի մը
տարտամ ուրուագիծն, և եթէ միայն ոգի
մը այդ ձեւն առած չ'ըլլար, ճէք Րիան
յակամայս կը համոզուէր թէ գերբնական
էակ մը չ'էր այդ:

Եւ յայնժամ, աւելի արագ վազելով.

—Օ՛ն, ընկերք, կը գոչէր: Կը յոգնի՛:
Քիչ ատենէն պիտի հասնինք իրեն, եւ
եթէ այնչափ լաւ խօսի որչափ կը վազէ,
պիտի կրնայ շատ բան զուրցել մեզ:

Սակայն հետապնդումն յայնժամ աւելի
դժուարին կը լինէր: Արդարև, գուբին
վերջին խորութեանց մէջ, անձուկ փա-
պուղիները զիրար կը կտրէին՝ լաբիւրին-
թոսի մը ուղիներուն պէս: Այդ բաւզին
մէջ, լապտերակիրը կրնար դիւրաւ պըր-

ծիլ ոստիկաններուն ձեռքէն կը բաւէր իրեն լազաւորը մարել և մէկ կողմ նեաննի՝ խաւարոջին ապաստանարանի մը խորը :

— Իրօ՛ք . կը մտածէր Սըր Ու . Էլֆիսդըն , եթէ կ'ուզէ մեր ձեռքէն ճողոպրել , ինչո՞ւ չընէր :

Այդ սնըմբունելի էակը մինչեւ այն ատեն չէր ըրած դայդ . բայց այն վայրկենին երբ այդ մտածումը կ'անցնէր Սըր Ու . Էլֆիսդընի մտքէն , լոյսն յանկարծուստ անհետացաւ , և ոստիկանք , իրենց հետապնդումը շարունակելով , գրեթէ նոյն բողբոջին հասան անձուկ բացուածքի մը առջեւ զոր թերթաքարային ժայռերը կը թողուն իրենց մէջտեղ , նեղ ճամբու մը ծայրը :

Իրենց կանթեղներն արծարծելէ յետոյ անդ սպրդիլ և իրենց առջև բացուող այդ ծակին մէջ խոյանալ , վայրկեանի մը գործ եղաւ Սըր Ու . Էլֆիսդընի , ձէք Ռիանի և իրենց ընկերաց համար :

Սակայն հարիւր քայլ առած չէին նոր ներքնուղւոյ մը մէջ որ աւելի լայն և աւելի բարձր էր , երբ յանկարծ կանգ առին :

Հոն , պատին քով , չորս մարմիններ տարածուած էին հողին վրայ , — գուցէ չը՛րս գիտակներ :

— Ձէյմա Սդա՛ր , ըսաւ Սըր Ու . Էլֆիսդըն :

— Հարրի՛ , Հարրի՛ , գոչեց ձէք Ռիան , իր ընկերոջ մարմնոյն վրայ նետուելով ,

Սրդա՛րեւ ճարտարապետը , Մաճ , Սիմոն և Հարրի Փորա էին որք անդ փրուած էին էին անշարժ :

Բայժ յայնժամ այդ մարմիններէն մին ուղղուեցաւ , և իմացան ծերունի Մաճի ուժասպառ ձայնն որ այս բառերը կը մըրմնջէր .

— Նա՛խ , նա՛խ իրենք :

Սըր Ու . Էլֆիսդըն , ձէք Ռիան , ոստիկանները ջանային ոգեւորել ճարտարապետն և ընկերներն , կաղզուրիչ ըմպելւոյ քանի մը կաթիլ կլեցնելով իրենց , Գրեթէ նոյնհետայն յաջողեցան Այդ տարազդներն , որք տասն օրէ ի վեր բանտարկուած էին Նոր-Սպրդֆոյլի մէջ , անսուաղութենէ կը մեռնէին :

Եւ եթէ այդ երկար բանտարկութեան մէջ չէին մեռած , — Ձէյմա Սդար հաղորդեց զայս Սըր Ու . Էլֆիսդընի , — պատճառն այն էր որ երեք անգամ հաց մը և սափոր մը ջուր գտած էին իրենց քով : Անշուշտ , գերբնական էակն որում կը պարտէին իրենց կեանքը , չէր կրցած ազկից աւելին ընել :

Սըր Ու. էլ Ֆիսդըն հարցուց ինքնին թէ այդ գործին հեղինակը չէ՞ր այն շրջմովիկ անըմբռնելի հուրն որ իրենց առաջնորդած էր ճիշդ այն տեղն ուր փռուած էին ձէյմս Սդար և իր ընկերները :

Ինչ որ ալ ըլլայ, ճարտարապետը, Մաճ, Սիմոն և Հարրի Ֆորտ ազատած էին : Տուն տարուեցան, վերստին անցնելով այն անձուկ ելքէն զոր լապտերակիր էակն ուզած էր ցոյց տալ Սըր Ու. էլ Ֆիսդընի :

Եւ եթէ ձէյմս Սդար և իր ընկերները չէին կրցած գտնել պայթմամբ յառաջ եկած ներքնուղւոյն բերանը, պատճառն այն էր որ այդ բերանն հաստատապէս խցուած էր իրարու վրայ դրուած քարերով, զորս, այդ խոր մթութեան մէջ, իրենք չէին կրցած գտնել ո՛չ ալ խախտել :

Այսպէս ուրեմն, մինչդեռ իրենք կը խուզարկէին լայնածաւալ գետնափորքը, թշնամի ձեռքով մը ամէն հաղորդակցութիւն դիտմամբ փակուած էր Հին և Նոր Ապըրֆոյլի մէջտեղ :

ՓԼՈՒԽ ԹՔ.

ԳՈՒ-ՍԻԴԻ

Պատմուած դէպքերէն երեք տարի յետոյ, Ժոանի կամ Մըրրէյի Առաջնորդները, իբր հետաքրքրական գերագոյն ինչ, Սդըրլինկի կոմսութիւնը պտըտող բազմաթիւ զբօսաշրջիկներուն կը յանձնարարէին քանի մը Ժամուան այցելութիւն Նոր-Ապրիֆոյլի անխահանքերուն :

Ոչ մէկ հանք, նոր կամ հին աշխարհին ո եւ է երկրին մէջ, աւելի հետաքրքրական երեւոյթ մը կ'ընծայէր :

Նախ և առաջ այցելուն առանց վտանգի և յոգնութեան կը փոխադրուէր մինչեւ շահագործման տեղը, կոմսութեան երեսին տակ հազար հինգ հարիւր ոտք խորութեամբ :

Արդարեւ, Գէլլէնտըրի հարաւարեւմտեան կողմը, եօթն մղոն հեւի, շեղ թիւնէլ մը որ հսկայական մուտք մ'ունէր աշտարակներով, կեռիքներով և որմածակերով, հողին երեսին կը դպչէր : Այս թիւնէլը, մեղմ զառիվայրով, կուգար ուղղակի կը յանգէր այդ խոռոչին որ այնքան տարօրէն կերպիւ փորուած էր ըսկովտիական հողին զանգուածին մէջ :

Կրկին երկաթուղի մը, որուն վակոն-

ները կը շարժէին ջրաբաշխական զօրութեամբ, ժամը անգամ մը կ'երթեւեկէր այն գիւղն որ հիմնուած էր կոմսութեան ներքեւ, «Գոլ-Սիդի»՝ այսինքն Գեանածիոյ քաղաք փառասիրական անուան ներքեւ :

Այցելուն, երբ Գոլ-Սիդի հասնէր, ինքզինքը կը գտնէր միջավայրի մը մէջ ուր ելեկտրականութիւնն առաջին դեր կը կատարէր, իբրեւ բաշխիչ ջերմութեան և լուսոյ :

Ապաքէն, օդածգութեան հորերը, թէեւ բազմաթիւ էին, չպիտի կրնային պէտք եղածին չափ լոյս խառնել Նոր-ԱպրըՖոյլի խորին մթութեան : Սակայն սաստիկ լոյս մը կը ընուր այն խաւարամած միջավայրն, ուր ելեկտրական բազմաթիւ սկաւառակներ արեգական սկաւառակին տեղը կը բռնէին : Կամարներէն կախուած, բնական մայրերուն կառչած, ամէնքն ալ բուծանելով ելեկտրո-մագնիսական մեքենայից արտադրած յարատեւ հոսանիւթերէն, — ոմանք արեգակներ, այլք աստղեր, — մեծապէս կը լուսաւորէին այս աշխարհը : Երբ հանգստեան ժամը կը հասնէր, խափանարար գործի մը կը բաւէր արհեստական գիշեր մը յառաջ բերելու անխափանքին այդ խոր անդունդներուն մէջ :

Այս բոլոր մեծ ու պզտիկ գործիները կը բանէին պարապութեան մէջ, այսինքն թէ իրենց լուսաւոր աղեղները ոչ մէկ կերպով կը հաղորդակցէին մթնոլորտին հետ : Այնպէս որ, եթէ մթնոլորտը կրիզուով խառնուած լինէր պայթուցիկ համամատութեամբ, ոչ մէկ պայթման երկիւղ կար : Ուստի ելեկտրականութիւնն արհեստական և ընտանեկան կենաց բոլոր պէտքերուն կը գործածուէր, թէ՛ Գոլ-Սիդիի տուներուն և թէ՛ Նոր-ԱպրըՖոյլի շահագործեալ ներքնուղիներուն մէջ :

Ամէն բանէ առաջ պէտք է ըսել թէ Ճէյմս Սդարի գուշակութիւններն, — ի մասին նոր անխափանքին շահագործման, — ի դերեւ ելած չէին բնաւ : Ածխաբեր երակներուն ճոխութիւնն անհաշուելի էր : Հանքահաններն իրենց բրիչը զարկած էին խոռոչին արեւմտակողմը, Գոլ-Սիդիէն քառորդ մղոն մը հեռի : Գործաւորաց քաղաքը շահագործման կեդրոնը չէր գրաւեր ուրեմն : Ներսի աշխատութիւնք ուղղակի կցուած էին դուրսի աշխատութեանց հետ օդածգութեան եւ արտահանման հորերով, որք հանքին զանազան յարկերն հաղորդակցութեան մէջ կը դնէին հողին հետ : Մեծ թիւնէն, ուր կը բանէր ջրաբաշխական զօրութեամբ

չարժող երկաթուղին, Գոլ-Սիդիի բնակչաց փոխադրութեան միայն կը ծառայէր:

Կը յիշուի թէ ի՛նչ տարօրինակ ձեւ ունէր այս լայնածաւալ խոռոչն ուր ծերունի դորձավարն եւ իր ընկերք կանգ առած էին իրենց առաջին խուզարկութեան միջոցին: Անդ, իրենց գլխուն վերեւ, ջլանային (ogival) կորութիւն ունեցող կամար մը կը բոլորչեանար: Զայն բռնող մոյթերը կ'երթային կորսուիլ թերթաքարային դմբեթիւն մէջ, երեք հարիւր ոտք բարձրութեամբ, — բարձրութիւն որ գրեթէ հաւասար էր Վընթըբիի քարայր ներուն Մամմութ կամարին:

Յայտնի է թէ այս ահագին գետնափորքն, — որ ամերիկեան գետնափորերուն ամէնէն մեծն է, — կրնայ դիւրաւ բովանդակել հինգ հազար հոգի: Նոր-Սպըրֆոյլի այս մասին մէջ, նայն համեմատութիւնըն և նոյն տրամադրութիւնը կար: Սակայն, հոչակաւոր քարայրին հրաշալի շթաքարերուն հակառակ, նայուածքն աստ անդ կը հանդիպէր ամխարեր երակներու ուռեցքներու որք կարծես բոլոր պատերէն դուրս կը ցայտէին թերթաքարային ժայռերուն ձնշման ներքեւ:

Այս կամարին ներքեւ կը տարածուէր լիճ մը որ իր ընդարձակութեամբ կրնար

համեմատուիլ Մամմութի քարայրն Մեռեալ լճին, — խորին լիճ, ոյր թափանցիկ ջուրերը կը վստային աչազուրկ ձկներով, և որում ճարտարապետը Մալգոմի լիճ անուներ տուաւ:

Սիմոն Ֆորտ իր նոր բնակարանը կառուցած էր այս բնական ահագին խոռոչին մէջ, եւ զայն չը պիտի փոխանակէր էտիմպուրկի Իշխանաց փողոցի գեղեցկագոյն ապարանքին հետ: Այս բնակարանը կառուցուած էր լճին եզրն, և իր հինգ պատուհանները կը բացուէին նսեմաստուեր ջուրց վրայ որք կը տարածուէին աչաց տեսողութեան սահմանէն ալ անդին:

Երկու ամիս յետոյ, երկրորդ տուն մը բարձրացեր էր Սիմոն Ֆորտի տան քով: Ճէյմս Սգարի տունն էր այս: Ճարտարապետն հոգւով մարմնով ինքզինքը տուած էր Նոր-Սպըրֆոյլի: Ինք ալ ուզած էր հոն բնակիլ, եւ չափազանց կարեւոր գործեր ունենալու էր որ դուրս ելնելու հաւանէր: Հոն, արդարեւ, իր հանքահաներու աշխարհին մէջ էր:

Նոր երակներուն գիւտէն ի վեր, նախկին ամխահանքին բոլոր գործաւորները փութացած էին թողուլ արօրն ու բահը՝ վերստին ձեռք առնլու համար բրիչը

կամ քարուրազը Այն ստուգութեամբ թէ աշխատութիւնը չպիտի պակսէր իրենց, և շահագործման բարօրութեան ջնորհիւ իրենց ստանալիք բարձր թուշակէն հրապուրեալ, հողին երեսը թողած էին տակն իջնելու համար, և տեղաւորուած էին ածխահանքին մէջ, որ իր բնական տրամաբուութեամբ, այս գետեղման կը յարմարէր:

Հանքահանաց այս տուներն, աղիւսով շինուած, հետզհետէ կառուցուած էին նկարագեղ դիրք մը առնելով, ոմանք Մալգոմի լճին ափանց վրայ, այլք այդ կամարներուն ներքեւ, որք կարծես եղած էին դիմադրելու համար գմբեթներուն ճնշման, որպէս կաթուղիէի մը դիմադիր որմերն: Ժայռերը խորտակող գործաւորք, ածուխը փոխադրող կառապանք, աշխատութեանց վարիչք, ներքնուղիները տախտակներով ամրացնող ատաղձագորք, ռահվիրայք որոց յանձնուած է ճամբայներուն պահպանութիւնը, այն գործաւորներն որք շահագործեալ մասանց մէջ գետնածուխին տեղ քար կը լեցնէին, այն բոլոր գործաւորք վերջապէս, որք մասնաւորապէս կը պատահին ներսի աշխատութեանց, իրենց բնակութիւնն հաստատեցին Նոր Ապրըֆոյլի մէջ և տակաւ առ

տակաւ կանգնեցին Գոլ-Սիդիին, որ Գէդրայնի լճին արեւմտեան ժայռին ներքեւ կը գտնուէր, Սքըրլինկի կոմսութեան հիւսիսակողմը:

Ուրեմն տեսակ մը Փլաման գիւղ էր այս որ բարձրացած էր Մալգոմի ափանց վրայ: Յանուն սուրբ Ժիլի կառուցեալ մատուռ մը կը տիրապետէր այս ամբողջութեան վրայ բարձր ժայռի մը կատարէն, ոյր ոտորտաը կը թրջէր այդ ստորերկրեայ ծովուն ջուրց մէջ:

Երբ այս ստորերկրեայ աւանը կը լուսաւորուէր սկաւառակներուն արծակած սաստիկ ճառագայթներով, դիւթական կերպարանքի մը տակ կը ներկայանար, արտակարգ տեսիլքով մը, որ կ'արդարացնէր ժոռանի կամ Մըրրէյի Առաջնորդներու ն յանձնարարութիւնն: Ուստի եւ այցելուք գունդագունդ կը դիմէին:

Աւելորդ է ըսել թէ Գոլ-Սիդիի բնակիչք կը պարծենային իրենց բնակութեան վրայ. ուստի շատ քիչ անգամ կը թողուին գործաւորաց քաղաքն, այսպէս հետեւելով Սիմոն Ֆորտի որ բնաւ չէր ուզեր դուրս ելնել: Ծերունի գործավարք կը պնդէր թէ վերը միշտ կ'անձրեւէր, և, ի նկատ առնելով Մեծին Բրիտանիոյ կլիմայն, պէտք է ըսել թէ բոլորովին անիրաւ չէր:

Նոր Ապրիլի ընտանիքները բարո-
րութեան մէջ էին ուրեմն : Երեք տա-
րիէ ի վեր, բաւական դիւրակեցու-
թեան հասած էին զոր բնաւ չպիտէ կըր-
նային ձեռք բերել կոմսութեան երեսին
վրայ Շատ մանուկներ, որք աշխատու-
թեանց վերսկսման թուականին ծնած էին,
դեռ բնաւ չէին չնչած արտաքին օդը :

— Ահա տասնհազար ձեռք է որ ա՛լ չեն
ծծեր իրենց մօր ստինքն, և սակայն դեռ
լոյս տեսած չեն :

Այս առթիւ պէտք է յիշել թէ ճար-
տարապետին կոչին ամէնէն առաջ պա-
տասխանողներէն մին եղած էր ձէք Րիան :
Այդ զուարթ ընկերը պարտ անձին հա-
մարած էր վերսկսիլ իր նախկին արհես-
տըն : Հետեւաբար Մէլրոզի ագարակը կո-
րուսած էր իր սովորական երգիչն եւ
հովուական տիկն ածողը : Սակայն ըսելէ
թէ ձէք Րիան ա՛լ չէր երգեր : Ընդհա-
կառակն, եւ Նոր Ապրիլի հնչուն ար-
ձագանգներն իրենց քարեղէն թոքերը կը
մաշեցնէին նմա պատասխանելու համար :

Ձէք Րիան տեղաւորուած էր Սիմոն
Ֆորտի նոր տան մէջ : Սենեակ մը տուած
էին նմա եւ առանց կովմալու ընդունած
էր, ինչպէս կը վայլէր իր պարզ եւ ան-
կեղծ բնաւորութեան : Ծերունին Մած կը

սիրէր զնա իր բարի սրտին եւ զուար-
թութեանն համար : Քիչ շատ մասնակից
էր անոր գաղափարաց ի մասին այն ցնո-
րական էակաց որք կը ընակէին ածխա-
հանքին մէջ, եւ երկուքն ալ, երբ մինակ
էին, իրարու կը պարզէին սարուռ պատ-
ճառող պատմութիւններ, որք արժանի
մնային ճոխացնելու գերհիւսիսային դիցա-
բանութիւնը :

Ձէք Րիան այսպէս տանն ուրախու-
թիւնն եղաւ : Մնաց որ պնդակազմ գոր-
ծաւոր մըն էր : Աշխատութեանց վերս-
կըսման թուականէն վեց ամիս յետոյ,
ներսի աշխատութեանց խումբի մը պետն
էր :

— Ի՛նչ լաւ աշխատութիւն, պարոն
Ֆորտ, կ'ըսէր իր տեղաւորումէն քանի
մը օր յետոյ : Նոր երակ մը գտաք, և թէեւ
մազ մնաց որ ձեր կեանքը վրայ տայիք
այս գիւտին համար, է՛հ, շատ սուղի
չնստաւ ձեզի :

— Ո՛չ, ձէք, ընդհակառակն շատ ա-
ժան ազատեցանք, պատասխանեց ծերու-
նի գործավարը : Բայց ո՛չ Պ. Սդար, ոչ
մենք չպիտի մոռնանք թէ քեզ կը պար-
տինք մեր կեանքը :

— Բայց ո՛չ, ըսաւ ձէք Րիան : Ձեր
Հարբի որդւոյն կը պարտիք վայդ, որով-

հետեւ լաւ գաղտփարն ունեցաւ Իրվայնի տօնին հրաւէրս ընդունելու . . .

— Եւ հոն չերթալու, այնպէս չէ՞, պատասխանեց Հարրի, իր ընկերոջ ձեռքը բռնելով. Ոչ, ձէք, քե՛զ կը պարտինք, քե՛զ որ, հազիւ վերքերէդ առողջացած, առանց օր մը, ժամ մը կորսնցնելու, եկար ողջ գտար զմեզ անխահանքին մէջ:

— Է՛ն ո՛չ, պատասխանեց յամառ տղան. Թող չպիտի տամ որ չեղած բաներն ըսէք: Փութանակի վազեցի եկայ ինչ եղած լինելդ գիտնալու համար, Հարրի, և աւելի ոչինչ: Սակայն, եթէ հարկ է ամէնուն տալ իր իրաւունքը, պիտի աւելցնեմ թէ առանց այն անըմբռնելի ոգւոյն . . .

— Ա՛հ, նորէն հոն եկանք, գոչեց Սիմոն Ֆորտ: Ոգի՛ մը:

— Ոգի՛ մը, Պրօֆէ մը, ուրուական մը, կրկնեց ձէք Ռիան, Հրեդէն կանանց թոռ մը, կուրիսք մը, ինչ որ կ'ուզէք վերջապէս: Ակներեւ է սակայն թէ, առանց անոր, չպիտի կրնայինք մտնել այն ներքնուղւոյն մէջ ուսկից դուք չէիք կըրցած դուրս ելնել:

— Անշուշտ, ձէք, պատասխանեց Հարրի: Կը մնայ գիտնալ թէ այդ էակն այնչափ գերբնական է որքան դուն կ'ուզես հաւատալ:

— Գերբնական, գոչեց ձէք Ռիան. Սակայն կա՞յ աւելի գերբնական բան մը քան շըրջմովի էակ մը որ լապտերնի ձեռին կը վազէ, որ ուրուականի մը պէս կը խուսափի հետապնդումէդ, որ ստուերի մը նման կը նուաղի: Հանդարտէ՛, Հարրի, օր մը չէ օր մը նորէն պիտի տեսնենք զայն:

— Է՛ն լաւ, ձէք, պատասխանեց Հարրի Ֆորտ, շըրջմովի էակ կամ ո՛չ, պիտի ջանանք վերստին գտնել զայն, և պէտք է որ այդ բանին մէջ օգնես մեզ:

— Շատ գէշ գործ մը կ'ընէք ադով, պարոն Ֆորտ, պատասխանեց ձէք Ռիան:

— Լա՛ւ, թո՛ղ որ ինք դայ, ձէք:

Դիւրին է հասկնալ թէ Նոր-Ապրիլոյ յայս տարածութիւնն ո՛րչափ ընտանի եղաւ ընդհուպ Ֆորտ ընտանեաց անդամներուն, մասնաւորապէս Հարրիի: Սա քիչ ատենէն ճանչցաւ անոր ամէնէն ծածուկ ուղիները, Մինչեւ իսկ այն կէտին հասաւ որ կրնար ըսել թէ հոգին մակերեւոյթին ո՛ր մասը կը համապատասխանէր անխահանքին այս ինչ կամ այն ինչ մասին: Գիտէր թէ այդ խաւին վերեւ կը տարածուէր Գլայտի ծովախորշը, թէ անդ կը ժուլէր Լոմոնտի կամ Քէդրայնի լիճն: Այդ մոյթերը, կրամբեան լերանց մէկ հանդիպալոյսին էր որ կը բռնէին: Այդ

կամարը կը ծառայէր իբր նեցուկ Տըմպար-
դընի : Այդ ընդարձակ լճակին վերև կ'անց-
նէր Պէլլոչի երկաթուղին : Անդ կը վեր-
ջանար սկովտիական հովեղերքը : Հոն կ'ըս-
կըսէր ծովը , որուն շառաչիւնը կը լուէր
որոշակի , գիշերահաւասարի մեծ փոթո-
րիկներու միջոցին : Հարրի հրաշալի ա-
ռաջնորդ մը պիտի ըլլար այս բնական
գետնափորքին մէջ , և ինչ որ կ'ընեն
Ալպեանց առաջնորդները ձիւնապատ կա-
տարներուն վրայ , արձակ լուսոյն մէջ , ինք
պիտի կրնար ընել ածխահանքին մէջ , կա-
տարեալ մթութեամբ պաշարեալ , բնազդ-
ման անբաղդատելի ապահովութեամբ մը :

Ինչպէ՛ս կը սիրէր այս Նոր-Ապըրֆոյլը :
Քանի՛ անգամներ , կանթեղը գլխարկին
կապած , կ'երթար մինչեւ անգամ ամէնէն
ծայրագոյն խորութիւնները : Կը խուզար-
կէր անոր լճակները մոկոյկի մը մէջ զոր
ճարտարապէս կը վարէր : Կ'որսար իսկ ,
որովհետեւ բազմաթիւ վայրի թռչուններ
մտած էին խուռչին մէջ , ջրակտցարք ,
բադք , որք կը սնանէին այս սեւ ջուրե-
րուն մէջ վխտացող ձկներով : Կարծես թէ
Հարրիի աչերը վարժուած էին խաւարտ-
չին անջրպետներուն , որպէս նաւաստիի մը
աչերն հեռաւոր հորիզոններու :

Բայց , այսպէս քայլելով , Հարրի գող-

ցես անդիմադրելի կերպով վարեալ էր
խորհրդաւոր էակը վերստին գտնելու յոյ-
սէն , այն էակն որուն միջամտութիւնը ,
ճշմարիտը խօսելով , ուրիշ ո և է բանէ
աւելի ազատած էր զինքն և իբենները :
Պիտի յաջողէ՞ր : Այո՛ , տարակոյս չունէր ,
եթէ հաւատար իր նախագագմանց : Ո՛չ ,
եթէ հարկ էր եզրակացնել այն քիչ յաջո-
ղութենէն զոր իր խուզարկութիւնք ձեռք
բերած էին ցայն վայր :

Գալով այն յարձակմանց որք ծերունի
գործավարին ընտանեաց դէմ ուղղուած
էին Նոր-Ապըրֆոյլի գիւտէն առաջ , կըրկ-
նուած չէին ադոնք :

Գործերն այսպէս կ'երթային այդ տա-
րօրինակ բնակութեան մէջ :

Պէտք չէ կարծել թէ մինչեւ իսկ այն
ժամանակ երբ Գոլ-Սիդիի փողոցներն հա-
զիւ կը գծուէին , ամէն զբօսանք սարա-
կայ էր ստորերկրեայ քաղաքէն և թէ
կեանքը միօրինակ էր հոն :

Այդպէս չէր բնաւ : Այդ ժողովուրդը ,
նոյն բնազդները , նոյն ճաշակները , գրեթէ
նոյն դիւրակեցութիւնն ունենալով , կեր-
պիւ իւրք մեծ ընտանիք մը կը կազմէր :
Կը ճանչէին զիրար , օրն ի բուն իրարու
կը հանդիպէին , և դուրս երթալու զուար-
ճութիւն փնտռելու պէտքը շատ քիչ ըզ-
գայի կ'ըլլար :

Մնաց որ, ամէն կիրակի, շրջագայու-
թիւնք ածխահանքին մէջ, պրոպոսիտներ
լճերուն եւ լճակներուն վրայ, հաճելի
զբօսանքներ էին :

Յաճախ նաեւ կը լսուէր հօփուական
տիկի ձայներուն հնչելը Մալգոմի լճին
ափանց վրայ : Սկովտիացիները կը փազէին
ի կող իրենց ազգային նուագարանին : Կը
պարէին, եւ, այդ օրը, ձէք Ռիան, իր
Հայկեստըրի զգեստն հագած, հանդիսին
թագաւորն էր :

Վերջապէս, այս ամէնէն այն կը հե-
տեւէր, Սիմոն Ֆորտի խօսքին նայելով,
թէ Գոլ-Սիդի կրնար մրցակից հանդիսա-
նալ Սկովտիոյ մայրաքաղաքին, որ ձմրան
ցուրտին, ամրան տաքուն, անտանելի
կլիմայի մը անբարեխառնութեանց են-
թարկուած էր, եւ որ, իր գործարանաց
մուխին աղտոտ մթնոլորտին մէջ, իրա-
ւամբք կ'արդարացնէր իր «Օլտ-Րիքի»
մականունը :

ԳԼՈՒԽ ԺԿ.

ԹԵԼԷ ՄԸ ԿԱԽՈՒԱԾ

Այս պոյմանաց մէջ, իր սիրեւագոյն
բազմանքները կատարուած, Սիմոն Ֆորտի
ընտանիքն երջանիկ էր : Սակայն, զիտելի

էր թէ Հարրի, որ արդէն քիչ մը մաւյլ
բնաւորութիւն ունէր, հետզհետէ աւելի
կը մթագնէր : Ձէք Ռիան, հակառակ իր
այնքան դիւրահաղորդ զուարթութեան,
չէր յաջողեր պայծառացնել անոր դէմքը :

Կիրակի մը, յունիս ամսուն, երկու
բարեկամները կը պտըտէին Մալգոմի լճին
եզերաց վրայ : Գոլ-Սիդին հանգիստ կ'ը-
նէր : Գուրը փոթարիկ կը տիրէր : Սաս-
տիկ անձրեւներ տաք գոլորչի մը հանել
կուտային հողէն : Շունչ չէր ասնուեր
կոմսութեան երեսին վրայ :

Ընդհակառակն, ի Գոլ-Սիդի, կատար-
եալ հանդարտութիւն, եղի բարեխառ-
նութիւն, ո՛չ անձրեւ ո՛չ հով : Գուրսի
տարերաց սգորումը բնաւ ազդեցութիւն
չէր ըներ հոն : Ուստի, Սդըրլինկի եւ
շրջագայից ձեմողներուն մէկ մասը եկած
էր քիչ մը զովութիւն փնտտել ածխա-
հանքին խորութեանց մէջ :

Ելեկտրական սկաւառակները կ'ար-
ձկէին փայլ մը որում անշուշտ պիտի նա-
խանձէր բրիտանական արեւն, որ աւելի
մառախլապատ էր քան որչափ կը պատ-
շաճի կիրակի աւուր արեւի մը :

Ձէք Ռիան իր Հարրի ընկերոջ զիտել
կուտար այցելուաց այս յոգնախուռն բազ-
մութիւնը : Սակայն Հարրի շատ գոյգն

ուչադրութիւն մը կը նուիրէր նորա խօսքերուն :

—Տե՛ս, Հարրի, կը գոչէր ձէք Րիան ի՛նչ եւանդ գալու զմեզ տեսներու : Օ՛ն, ընկեր, վանէ՛ քիչ մը սա տխուր գաղափարներդ, աւելի լաւ հարկեւորելու համար մեր հիւրերը : Դուն անանկ կարծել պիտի տաս այս վերի մարդոց թէ իրենց վիճակին կը նախանձիս :

—Ձէ՛ք, պատասխանեց Հարրի, դուն ինծի մի՛ նայիր : Դուն երկուքի տեղ զըուարթ ես, այս կը բաւէ :

—Ծերուկ նիքը առնէ տանի՛ գիս, պատասխանեց ձէք Րիան, եթէ քու մեղամաղձութիւնդ վերջ ի վերջոյ իմ վրաս ալ չազդէ : Աչքերս կը մթննան, շրթունքս կը սեղմուին, խնդուքս կոկորդիս մէջ կը մնայ, երգերս միտքէս կ'ելլան : Տեսնե՛նք, Հարրի, ի՞նչ ունիս :

—Դուն գիտես, ձէք :

—Միշտ այդ մտածո՞ւմդ :

—Միշտ :

—Ա՛հ, խեղճ բարեկամս, պատասխանեց ձէք Րիան ուսերը թոթուելով, եթէ դուն ալ ինձ նման այս ամէնը ածխահանքին ոգիներուն հաշուոյն անցունէիր, միտքդ աւելի հանդարտ կ'ըլլար :

—Լաւ գիտես, ձէք, թէ ոգիները

քու երեւակայութեանդ մէջ միայն գոյութիւն ունին, եւ թէ աշխատութեանց վերահսումէն ի վեր, անոնցմէ ոչ մէկ հաս երեւցած է Նոր-Ապրիլոյի մէջ :

—Թող այդպէս ըլլայ, Հարրի. սակայն եթէ պրօֆէսորները չեն երեւար, ինձ կը թուի թէ անոնք իսկ որոց կ'ուզես վերագրել դուն այս ամէն արտասովոր բաներն, անո՛նք ալ չեն երեւար :

—Ես պիտի գտնեմ զանոնք, ձէք :

—Ա՛հ, Հարրի՛, Նոր-Ապրիլոյի ոգիները դիւրաւ ձեռք չեն լյնար :

—Ես պիտի գտնեմ այդ քու կարծեցեալ ոգիներդ, յարեց Հարրի ազդուօրոյն համոզման շեշտով մը :

—Եւ միտքդ դրեր ես պատժե՞լ . . .

—Պատժել եւ վարձատրել, ձէք : Եթէ ձեռք մը բանտարկեց զմեզ այս ներքնուղոյն մէջ, չեմ մոռնար թէ ուրիշ ձեռք մըն ալ օգնեց մեզ : Ո՛չ, չեմ մոռնար :

—Է՛հ, Հարրի, պատասխանեց ձէք Րիան, վստա՞հ ես թէ այդ երկու ձեռքերը միեւնոյն մարմնոյն չեն վերաբերիր :

—Ինչո՞ւ համար, ձէք : Ո՛ւսկից ծագում կ'առնու այդ գաղափարը :

—Իրա՛ւ որ . . . գիտես . . . Հարրի . . . այս անդունդներուն մէջ բնակող էակները մեզի պէս չեն :

—ձիչդ մեզի պէս են, ձէք:

—Ո՛չ, Հարրի, ո՛չ... Մնաց որ, կարելի չէ՞ ենթադրել թէ խենդ մը յաջողած ըլլայ հոս մտնել...

—Խե՛նդ մը, պատասխանեց Հարրի: Խե՛նդ մը որ իր գաղափարաց մէջ ա՛յնչափ կապակցութիւն ունենայ: Խե՛նդ մը, այն չարագործն որ Եարօուի քանահորին սանդուղները խզելու օրէն ի վեր անդադար չարիք հասուցած է մեզ:

—Իսոյց ա՛լ բան մը չըներ, Հարրի: Երեք տարիէ ի վեր, ոչ մէկ չարութիւն ըրած է ո՛չ քեզ գէմ, ո՛չ քուկիներուդ գէմ:

—Փոյթ չէ, ձէք, պատասխանեց Հարրի: Ես նախազգացումն ունիմ թէ այդ չար էակն, ով որ ալ ըլլայ, իր գիտաւորութիւններէն ետ կեցած չէ: Այս մտածումն ի՞նչ բանի վրայ կը հիմնեմ, չեմ կրնար ըսել: Ուստի, ձէք, յօգուան նոր շահագործման, կ'ուզեմ գիտնալ թէ ո՛վ է և ո՛ւր կ'իջ կուգայ:

—Յօգուան նոր շահագործման, հարցուց ձէք Ռիան բաւական զարմացած:

—Այո, ձէք, պատասխանեց Հարրի: Չեմ գիտեր թէ կը սխալիմ, սակայն այս բոլոր գործին մէջ մերինին հակառակ շահ մը կը տեսնեմ: Յաճախ մտածած եմ այս

բանիս վրայ, եւ ինձ այնպէս կուգայ թէ չեմ սխալիր: Միտքդ բեր այն անբացատրելի դէպքերուն շարքն, որք միմեանց կը շղթայուին այնչափ տրամաբանական կերպով: Այդ անանուն նամակն որ հօրս նամակին հակառակը կը պատուիրէր, կ'ապացուցանէ նախ թէ մարդ մը ծանօթացած է մեր ծրագիրներուն եւ ուզած է արգելք լինիլ անոնց կատարման: Պ. Սդար կուգայ մեզ այցելութիւն տալ Տոչարդի գուբին մէջ: Հազիւ հոն մտած, ահագին քար մը կը նետուի մեր վրայ, եւ ամէն հաղորդակցութիւն անմիջապէս կը կտրուի Եարօուի քանահորին սանդուղներուն խզմամբ: Մեր խուզարկութիւնը կ'սկսի: Այն փորձն որ երեւան պիտի հանէր նոր երակին գոյութիւնն, անհնար կը լինի յայնժամ թերթաքարի ծերպերուն խցմամբ: Այսու հանդերձ, գործողութիւնը կը կատարուի, երակը գտնուած է, ետ կը դառնանք: Մեծ շունչ մը յառաջ կուգայ օդին մէջ: Մեր կանխեղը կը խորտակուի: Սաւարը կը տիրէ մեր չորս կողմը: Սակոյն կը յաջողինք հետելիլ մթամած ներքնուղոյն...

Իսկոյն ելլալու ճամբայ չկայ: Ծակը գոցուած էր: Բանտարկուած էինք: Է՛հ լաւ, ձէք, այս ամէնուն մէջ եղբունական մտա-

ծում մը չե՞ս տեսներս Այո, էակ մը, որ մինչեւ ցարդ անըմբռնելի մնացած է, այլ գերբնական չէ ինչպէս դուն յամառաբար կը հաւատաս, ածխահանքին մէջ պահուած էր: Անհասկանալի շահու մը համար, կը ջանար անոր մուտքն արգելել մեզ: Ինք հոն էր... Նախագագուցում մը կ'ըսէ ինձ թէ հոն է տակաւին, և ո՞վ գիտէ թէ սոսկալի հարուած մը չպատրաստեր:— Է՛հ լաւ, ձէք, մինչեւ իսկ եթէ կեանքս վտանգի ենթարկեմ, երեւ'ն պիտի հանեմ զնա:

Հարրի այնպիսի համոզմամբ մը խօսած էր որ ծանրապէս խախտեց իր ընկերոջ գաղափարները:

Ձէք Րիան կ'զգար թէ Հարրի իրաւունք ունէր,— գէթ անցելոյն համար: Այս արտասովոր դէպքերը բնական թէ գերբնական պատճառ մը ունենային, ակներեւ էին ամէն պարագայի մէջ:

Սակայն, քաջարի տղան այս դէպքերն իր գիտցածին պէս բացատրելէ չէր հրաժարեր: Բայց հասկնալով որ Հարրի երբեք չպիտի ընդունէր խորհրդաւոր էակի մը միջամտութիւնը, խօսքը դարձուց այն միջադէպին վրայ որ անհաշտելի կը թուէր Գորտ ընտանեաց դէմ ուղղուած շարակամ զգացման հետ:

— Լաւ, Հարրի, եթէ հարկադրուած

եմ քեզ իրաւունք տալ ինչ ինչ կէտերու վրայ, խոստովանէ՛ թէ բարերար ոգի մը, հաց եւ ջուր բերելով ձեզ, կրցաւ ազատել զձեզ...

— Ձէք, պատասխանեց Հարրի ընդմիջելով անոր խօսքն, այն բարերար էակը զոր կ'ուզես գերբնական ոգի մը համարիլ, այնչափ իրական է որքան յիշեալ չարագործն, եւ երկուքն ալ պիտի փնտռեմ մինչեւ ածխահանքին ամէնէն հեռաւոր խորութեանց մէջ:

— Սակայն նշա՞ն մը ունիս որ կարենայ քեզ առաջնորդել խուզարկութեանց մէջ, հարցուց Ձէք Րիան:

— Թերեւս, պատասխանեց Հարրի: Լա՛ւ մտիկ ըրէ ինձ: Նոր-Ապրիլի արեւմտեան կողմը, հինգ մղոն հեռի, Լոմոնտի լիճը բռնող զանգուածին ներքեւ, բնական հոր մը կայ որ ուղղաճօրէն կը խորասուզի գետնածուխի զանգուածին ալուցը մէջ: Ութ օր կայ, ուղեցի չափել անոր խորութիւնը: Արդ, մինչդեռ կապարս կ'իջնէր, երբ ես ալ ծած էի հորին բերնին վրայ, ինձ այնպէս թուեցաւ թէ օդը կը յուզուէր ներսէն, որպէս թէ թևերու մեծ հարուածներով ձեծուած ըլլար:

— Ածխահանքին ստորին ներքնուզիներուն մէջ մոլորած թռչուն մըն էր, պատասխանեց Ձէք:

—Ամէնն այս չէ, ձէք, յարեց Հարրի :
Այս առաւօտ իսկ, նորէն գացի այդ հո-
րին քով, եւ ահանջս տնկելով, տեսայ մը
հեծութեան ձայն եկաւ ահանջիս :

—Հեծութիւն, գոչեց ձէք : Սխալած
ըլլալու ես, Հարրի : Օղի շարժում մը ը-
լալու է . . միայն եթէ ոգի մը . . .

—Վաղը, ձէք, յարեց Հարրի, պիտի
հասկնամ այս ամէնը :

—Վաղը, պատասխանեց ձէք իր ըն-
կերոջ նայելով :

—Այո : Վաղը այդ անդունդին մէջ
պիտի իջնեմ :

—Հարրի, ատիկա զԱստուած փոր-
ձել է :

—Ո՛չ, ձէք, որովհետեւ նորա օգնու-
թիւնը պիտի հայցեմ հոն իջնելու համար :
Վաղը երկուքս ալ այդ հորը պիտի եր-
թանք քանի մը ընկերներու հետ : Երկայն
չուանով մը, որուն պիտի կապուիմ, զիս
պիտի իջեցնէք եւ վեր քաշէք որոշեալ նշան
մը տալուս պէս :—Կրնամ փտահ ըլլալ
վրադ, ձէք :

—Հարրի, պատասխանեց ձէք Բիան
գլուխը թոթուելով, ինչ որ կ'ուզես պի-
տի ընեմ, եւ սակայն, կը կրկնեմ, կը
սխալիս :

—Աւելի լաւ է բան մը ըրած ըլլալու

սխալն ունենալ քան չըրած ըլլալու խղճի
խայթն, ըստ Հարրի հաստատ ձայնով մը :
Ուրեմն, վաղն առտու, ժամ վեցին, մար-
դու բան մի՛ զուրցեր : Մնաս բարով,
ձէք :

Եւ, չչարունակելու համար խօսակցու-
թիւնն յորում ձէք Բիան տակաւին պիտի
փորձէր դէմ խօսիլ իր ծրագիրներուն,
Հարրի յանկարծ բաժնուեցաւ իր ընկերէն
և տուն դարձաւ :

Պէտք է սակայն խոստովանիլ թէ ձէ-
քի երկիւղները չափազանցեալ չէին : Եթէ
անձնական թշնամի մը կ'սպառնար Հարրիի,
եթէ նա կը գտնուէր այդ հորին խորն ուր
երիտասարդ հանքահանը պիտի երթար
փնտուել զայն, Հարրի ինքզինքը փտանգի
կ'ենթարկէր : Սակայն, ի՞նչ հաւանակա-
նութիւն կար որ այս այսպէս ըլլար :

—Եւ, բաց ատի, կը կրկնէր ձէք
Բիան, ի՞նչ հարկ կայ, ինչո՞ւ համար այն
չափ չարչրկուիլ բացատրելու համար դէպ-
քերու յաջորդութիւն մը, որք այնքան
դիւրաւ կը բացատրուին հանքին ողիներ-
րուն գերբնական միջամտութեամբ :

Ինչ որ ալ ըլլայ, յաջորդ օրը, ձէք
Բիան եւ իր խմբին հանքահաններէն երեք
հոգի Հարրիի ընկերակցութեամբ կը հաս-
նէին կասկածելի հորին բերանը :

Հարրի իր դիտաւորութեան մասին բան մը ըսած չէր ո՛չ ձէյմս Սգարի, ո՛չ ծերունի գործավարին: Իր կողմէ ալ, ձէք Ռիան բերանը չէր բացած: Միւս հանքահանները, նորա մեկնիլը տեսնելով, խորհած էին թէ պարզ խուզարկութիւն մըն էր այդ գետնածուխի երակին, իր ուղղադիժ կտրուածքին համեմատ:

Հարրի երկու հարիւր ոտք երկայնութեամբ չուան մըն էր առած իր հետ: Այդ չուանը հաստ չէր, բայց ամրապինդ էր: Հարրի իր ձեռքով չպիտի իջնէր կամ ելնէր: Կը բաւէր որ չուանն իր ծանրութիւնը վերցնելու չափ զօրաւոր ըլլար: Իր ընկերներուն կ'իյնար զնա անդունդին մէջ սահեցնելու, եւ վեր քաշելու հոգը: Չուանին տրուած ցնցում մը իբր նշան պիտի ծառայէր իրենց և անոր մէջ տեղ:

Հորը բաւական լայն էր, իր բացուածքին վրայ տասներկու ոտք տրամագիծով: Մէջտեղը գերան մը դրուեցաւ, կամուրջի մը պէս, այնպէս որ չուանն անոր վրայէն սահելով կարենար ինքզինքը պահել հորին առանցքին մէջ: Ձեռք առնուելիք անհրաժեշտ ուղղութիւն մըն էր այս, որպէս զի Հարրի, իջնալու ատեն, կողմնակի պատերուն չզարնուէր,

Հարրի պատրաստ էր:

—Այս անդունդը խուզարկելու դիտաւորութեանդ վրայ կը պնդե՞ս, հարցուց նմա ձէք Ռիան ցած ձայնով:

—Այո, ձէք, պատասխանեց Հարրի: Չուանը նախ կապուեցաւ Հարրիի մէջքին, յետոյ անցուեցաւ անութներուն տակէն, որպէս զի մարմինը չտատանէր:

Այսպէս կապուած, Հարրի կրնար ազատօրէն գործածել իր երկու ձեռները: Մէջքէն ապահովութեան կանթեղ մը կախեց, քովէն ալ այն սկովտիական լայն դանակներէ մին որք կաշեսոյ պատեանի մը մէջ անցուած են:

Հարրի յառաջացաւ մինչեւ գերանին մէջտեղն, որուն բոլորտիքն անցուեցաւ չուանը:

Յետոյ, ընկերները կամաց կամաց վար սահեցնելով չուանը, Հարրի յամրաբար խորասուզեցաւ հորին մէջ: Ըստ որում չուանը թեթեւակի կը դառնար, կանթեղին լոյսն յաջորդաբար կը ցոլար պատերուն ամէն կէտին վրայ, եւ Հարրի կրցաւ խնամով քննել զայն:

Այս պատերը բաղկացած էին գետնածխային թերթաքարէ: Այնչափ ողորկ էին որ անհնար էր քաշլուտուիլ անոնց երեսին վրայ:

Հարրի հաշուեց թէ չափաւոր արա-

գուժեամբ կ'իջնէր — իբր մէկ ոտք մէկ մանրերկրորդի մէջ : Հետեւաբար կարելիութիւն կար լաւ տեսնելու, եւ դիւրութիւն ունէր պատրաստ գտնուելու ամէն պատահարի :

Երկու վայրկեան յետոյ, այսինքն իբր հարիւր քսան ոտք խորութեամբ, վայրէջքը կատարուած էր առանց միջադէպի : Հորին պատին մէջ ոչ մէկ կողմնակի ներքնուղի կար, և հորն հետզհետէ կը նեղնար, ձագասի ձևով, Բայց Հարրի կ'սկսէր աւելի զով ոտք մը գգալ որ վարէն կուգար. — ուսկից եզրակացուց թէ հորին ստորին ծայրը կը հարորդակցէր խոռոչին վերին յարկին մէկ ուղւոյն հետ :

Չուանը միշտ կը սահէր : Խաւարը բացարձակ էր, լռութիւնը միահեծան : Եթէ ո եւ է կենդանի էակ ապաւէն փնտրուած էր այս խորհրդաւոր ու խորախոր անդունդին մէջ, հոն չէր յայնժամ, կամ ոչ մէկ շարժում կը մատնէր նորա՝ ներկայութիւնը :

Հարրի, որ աւելի կասկածոտ էր ցորչափ վար կ'իջնէր, դանակն հանած էր պատեանէն եւ աջ ձեռքովը բռնած :

Հարիւր ութսուն ոտք խորութեամբ, Հարրի զգաց թէ հասած էր յատակին, որովհետեւ չուանը թուլցաւ եւ ալ չթաւակեցաւ :

Հարրի վայրկեան մը շունչ առաւ : Իր ունեցած երկիւղներէ մին չէր իրականացած, այսինքն թէ, իր վայրէջքի միջոցին, չուանը շարուէր իր վերեւ : Մնաց որ ոչ մէկ խոռոչ տեսած էր պատերուն մէջ որ կարենար ո եւ է էակ թաքուցանել :

Հորին ստորին ծայրը շատ անձուկ էր :

Հարրի, կանթեղը գօտիէն հանելով, գետնին վրայ պտտուց զայն : Իր ենթաթաղբուրութեանց մէջ չէր սխալած :

Կողմնակի նեղ ճամբայ մը կը խորասուզէր ստորին յարկին մէջ : Հոն մտնելու համար հարկ էր ծուլ և յափսիթերս քաշքըջուիլ :

Հարրի ուզեց տեսնել թէ այդ ներքնուղին ի՞նչ ուղղութեամբ կը ճիւղաւորէր և թէ անդունդի՞ մը կը յանգէր :

Գետնին վրայ պառկեցաւ և ոկտաւ սղալ : Սակայն ընդ հուպ խոչնդոտ մը ելաւ դիմացը :

Իր շօշափելիքով զգաց թէ մարմին մ'էր որ ճամբան կը դոյնէր :

Հարրի նախ ետ քաշուեցաւ, նողկանքի սաստիկ զգացմամբ մը, յետոյ վերադարձաւ :

Իր զգայարանքները խաբած չէին զինքը : Ինչ որ զինքը կատեցուցած էր, մարմին մըն էր արդարև : Բռնեց զայն, և

հասկցաւ որ թէ պէտ ծայրերը սառած էին, տակաւին բոլորովին չէր պաղած:

Չայն իրեն քաշել, հորին խորը տանիլ, անոր վրայ արձկել կանթեղին լոյսը, բոպէի մը գործ եղաւ Հարրիի համար:

— Տղայ՛ մը, գոչեց երիտասարդը:

Այդ անդունդին խորը քանուած տղան կը շնչէր տակաւին, սակայն շունչն այնքան տկար էր որ Հարրի կարծեց թէ պիտի դադարէր: Ուրեմն հարկ էր, առանց վայրկեան մը կորսնցնելու, այդ հէգ փոքրիկ էակը տանիլ հորին բերանն եւ անկից տուն փոխադրել, ուր Մաճ հարկ եղած ինամքը պիտի տանէր նմա:

Հարրի, ուրիշ ու է հոգ մտնալով, չուանը նորէն անցսւց մէջքին, կանթեղը կապեց, տղան գիրկն առնլով ձախ ձեռքովը սեղմեց կուրծքին վրայ, և իր աջ ձեռքն ազատ ու զինեալ պահելով, որոշեալ նշանը տուաւ, որպէս զի չուանը կամաց կամաց վեր քաշուէր:

Չուանը պրկուեցաւ, և վերելքն սկըսաւ կանոնաւորապէս:

Հարրի չորս դին կը դիտէր կրկնապատիկ ո՛ւ շաբրութեամբ: Հիմակ, մի միայն ինք չէր վտանգի ենթարկուած:

Ամէն բան լաւ գնաց վերելքի առաջին վայրկեաններուն. կ'երեւէր թէ ոչ մէկ մի-

ջաղէպ պիտի պատահէր, երբ Հարրիի այնպէս թուեցաւ թէ հզօր շունչ մը կը տեղափոխէր ոգոյ խաւերը հորին խորութեանց մէջ: Վար նայեցաւ, եւ, կիսասուտերին մէջ, զանգուած մը նշմարեց, որ, հետզհետէ բարձրանալով, անցած տաներ իրեն դպաւ:

Ահագին թռչուն մըն էր այս, որուն տեսակը չկրցաւ ճանչնալ, եւ որ թեւերուն մեծ բարախումներով կը բարձրանար:

Հրէշային թռչունը կանգ առաւ, պահ մը մնաց հողաթեւ, յետոյ Հարրիի վրայ սրացաւ վայրագ մոլեգնութեամբ:

Հարրի իր աջ ձեռքը միայն կրնար գործածել՝ անասնոյն սոսկալի կտուցին հարուածներուն դիմադրելու համար:

Հարրի ինքզինքը պաշտպանեց ուրեմն, կրցածին չափ ալ պահպանեց մտնուկը: Սակայն թռչունը ո՛չ թէ մանկան, այլ իրեն՝ վրայ կը յարձակէր: Չուանին դառնալէն նեղուելով, չէր յաջողեր մահացու կերպով զարնել զնա:

Կուրը կ'երկարէր: Հարրի թօքերուն բոլոր ուժովը պոռաց յուսալով որ իր ազազակները պիտի լուէին վերէն:

Արդարեւ ալ այսպէս եղաւ, որովհետեւ չուանը նոյնհետայն սկսաւ քաշուիլ աւելի արագօրէն:

Կը մնար դեռ ութսուն ոտքի բարձրութիւն մը : Թռչունն յայնժամ աւելի կատաղութեամբ նետուեցաւ Հարրիի վրայ : Սա , իր դանակին մէկ հարուածով , թեւէն վիրաւորեց զայն . Թռչունը , խորապօտ ձայն մը արձկելով , անհետացաւ հորին խորութեանց մէջ :

Սակայն , ահաւելի՛ պարագայ , Հարրի , թռչունը զարնելու համար անաղկը ձօնեցուցած ատեն , դանակը դպած էր չուանին , որուն մէկ հիւսքը կտրուած էր այժմ :

Հարրիի մտքերը տնկուեցան գլխուն վրայ :

Չուանն հեղհեղ տեղի կուտար , անդունդին խորէն հարիւր ոտք բարձրութեամբ :

Հարրի յուսահատ ազազակ մ'արձկեց : Երկրորդ հիւսք մը բրդաւ՝ կիսովին կտրած չուանին կրկին բեռան տակ :

Հարրի թողոց դանակն , և գերմարդկային ճգամը մը , այն բոպէին ուր չուանն ա՛լ պիտի բրդէր , յաջողեցաւ ա՛յլ ձեռքովը բռնել բրդած անդէն վերի մասը : Այլ , թէն իր բագուկն երկաթի լինէր , զգաց որ չուանը քիչ քիչ կը սահէր իր մատնե-րուն մէջէն :

Կրճար այդ չուանը բռնել երկու ձեռ-

քերովը , զոհելով տղան զոր մէկ թևովը բռնած էր . . . Մտքէն իսկ չանցուց :

Սակայն ձէք Րիան և իր ընկերները , Հարրիի աղաղակներէն գրգռուած , աւելի արագ կը քաշէին :

Հարրի հասկցաւ թէ չպիտի կրնար դիմանալ մինչեւ որ հորին բերանն հասնի : Բոլոր արիւնը գլուխն ելաւ : Պահ մը աչերը գոցեց , սպասելով որ անդունդին մէջ իյնայ , յետոյ բացաւ զայնս :

Բայց , այն միջոցին երբ թող պիտի տար չուանը զոր ա՛լ ծայրէն բռնած էր , տղուն հետ միասին բռնեցին և գետնին վրայ հանեցին զինքը :

Հակազդեցաւ թիւնը տեղի ունեցաւ յայնժամ , և Հարրի զգայազիրկ ընկաւ իր ընկերներուն թևոց մէջ :

Գ Լ Ո Ւ Ն Ս Ե Գ .

Ն է Լ

Երկու ժամ յետոյ , Հարրի , որ անմիջապէս ուշաբերած չէր , և տղան , որուն տկարութիւնը տարապայման էր , տուն կը հասնէին ձէք Րիանի և իր ընկերներուն օգնութեամբ :

Հոն , այս դէպքերուն պատմութիւնն հաղորդուեցաւ ձերուներ գործավարին , և

Մաճ իր խնամքները շապլեց խեղճ էակին զոր իր զաւակն ազատած էր :

Հարրի դարձած էր թէ տղայ մը հանած էր անդունդէն : Առ առաւելն տասն և հինգ տասնևինգ տարեկան աղջիկ մըն էր նա : Իր զարմացկոտ ու տարտամ նայուածքը, տառապանքէն երկնցած նիհար գէմքն, իր խարտեաշ գոյնը զոր լոյսն երբեք չէր ողորդած գոգցես, իր նուրբ ու փոքրիկ հասակն, ամէն բան տարօրինակ ու միանգամայն հըրապուրիչ էակ մը կ'ընծայէր զնա : Ճէք Րիան, քիչ շատ իրաւամբ, գերբնական երևոյթով ճեւեղիկի մը նմանցուց զնա : Պատճառն այն մասնաւոր պարագայից ու բացառիկ միջավայրի՞ն էր յորում նորատի աղջիկն ապրած էր ցայն վայր, բայց այնպէս կը թուէր թէ կիսովին կը վերարթրի մարդկութեան : Իր աչքերը, զորս տան կանթեղներուն լոյսը կը յողնեցնէր կարծես, շփոթ իմն կը նայէին, որպէս թէ ամէն բան նոր լինէր իրենց համար :

Ամէնէն առաջ ծերունի Սկովտուհին խօսքն ուղղեց այդ նորանշան էակին, որ յայնժամ Մաճի անկողնոյն վրայ գետեղուած էր եւ որ ուշաբերեցաւ որպէս թէ երկար քունէ մը կ'երնէր :

— Անունդ ի՞նչ է, հարցուց :

— Նէլ (1), պատասխանեց դեռատի աղջիկը :

— Նէլ, յարեց Մաճ, հիւա՞նդ ես, մէկ տեղդ Կը ցաւի՞ :

— Անօթի եմ, պատասխանեց Նէլ : Բան մը չեմ կերած . . . :

Իր արտասանած այս քանի մը բառերէն կը տեսնուէր թէ Նէլ վարժուած չէր խօսելու : Իր գործածած լեզուն կաշիւան այն հին բարբառն էր զոր Սիմոն փորտ եւ իրեններն յաճախ կը գործածէին :

Նորատի աղջկան պատասխանին վրայ, Մաճ անմիջապէս ուտելիք բերաւ նմա : Նէլ անօթութենէն կը մեռնէր, երբէ՞ն ի վեր հորին խորը կը գանուէր, կարելի չէր ըսել :

— Բանի՞ օր մնացիր հոն, աղջիկս, հարցուց Մաճ :

Նէլ չպատասխանեց, կարծես չէր հասկնար իրեն ուղղուած հարցումը :

— Բանի՞ օրէ ի վեր . . . յարեց Մաճ :

— Օ՞ր . . . պատասխանեց Նէլ, որուն համար այս բառը ամէն նշանակութեան զուրկ կը թուէր :

Յետոյ, գլուխն երերցուց իբր մարդ

(1) Նէլ էլէնայի համառօտութիւնն է :

մը որ չը հասկնար իրեն հարցուած բանը :
Մաճ ձեռքին մէջ առած էր Նէլի ձեռ-
քնն եւ կը շոյէր, վստահութիւն ազդե-
լու համար նմա :

—Քանի՞ տարեկան ես, աղջիկս, հար-
ցուց նմա վստահալից անուշ աչուըներով :
Նէլ նոյն բացասական նշանն ըբաւ :

—Այո՛, այո՛, քանի՞ տարեկան :

—Տարեկա՞ն . . . պատասխանեց Նէլը
եւ այս բառը, «որ» բառին պէս, նը-
շանակութենէ զուրկ էր մատաղատի աղ-
ջկան համար

Սիմոն Ֆորոս, Հարրի, ձէք Րիան և
իւր ընկերները կը նայէին նմա կարեկցու-
թեան և համակրութեան կրկին զգաց-
մամբ : Այս խեղճ էակին վիճակը, հաստ
կտաւ է ողորմելի շրջազգեստ մը հագած,
իրենց սրտին կը դպչէր :

Հարրի, ամէնէն աւելի, անդիմադրելի
կերպով հրապուրուած էր ճիշդ Նէլի տա-
րօրինակութենէն :

Յայնժամ մտեցաւ, իր ձեռաց մէջ ա-
ռաւ այն ձեռքը զոր Մաճ թողած էր :
Շեշտակի նայեցաւ Նէլի, ոյր շրթունքը
աեսակ մը ժպիտ ուրուագրեցին, և ըսաւ
նմա .

—Նէ՛լ . . . հո՞ն . . . ածխահանքին
մէջ . . . մինա՞կ էիր :

—Մինա՛կ, մինա՛կ, դուչեց դեռատի
աղջիկն ուղղուելով :

Իր դէմքը սոսկում կ'արտայայտէր :
Աչերն, որք անուշցած էին երիտասարդին
նայուածքին ներքեւ, վերստին վայրագ ե-
րևոյթ մը առին :

—Մինա՛կ, մինա՛կ, կրկնեց, և Մաճի
անկողնոյն վրայ ինկաւ, իւր թէ բոլորո-
վին ուժասպառ եղած ըլլար :

—Այս խեղճ աղջիկը դեռ մեր հարց-
մանց պատասխանելու չափ ոյժ չունի,
ըսաւ Մաճ նորատի աղջիկը պառկեցնելէ
յետոյ : Քանի մը ժամուան հանգիստ եւ
քիչ մը լաւ սնունդ իր ոյժերը պիտի վե-
րադարձնեն իրեն : Եկուր, Սիմոն, եկու՛ր,
Հարրի, եկէ՛ք, բարեկամք, եւ թողունք
որ քնանայ :

Մաճի խորհրդոյն վրայ, Նէլ մինակ
թողուեցաւ, և վայրկեան մը յետոյ աե-
սան թէ խոր քունով կը ննջէր :

Այս դէպքը մեծ աղմուկ յարուց, ո՛չ
միայն ածխահանքին, այլ եւ Սդըրլինկի
կոմսութեան, եւ քիչ յետոյ, բոլոր Անդ-
լիոյ մէջ : Նէլի տարօրինակութեան համ-
բաւն այդու անեցաւ : Եթէ թերթաքա-
րային ժայռին մէջ փակուած գտնէին նո-
րատի աղջիկ մը, որպէս մին այն անդըր-
ջըրհեղեղեան էակներէն զորս բրշի հար-

ուած մը կ'ազատէ իրենց քարեղէն պատեանէն, գործն աւելի աղմուկ չպիտի հանէր :

Առանց գիտնալու, Նէլ բոլորովին նորոյթ մը եղաւ : Աւելորդապաշտ մարդիկ պատճառ մը գտան այդու իրենց առասպելային պատմութեանց : Սիրայոժօթար կը մտածէին թէ Նէլ Նոր-Ապրիլի ոգին էր, եւ երբ ձէք Րիան կ'ըսէր զայս իր Հարրի ընկերով :

— Թող այդպէս ըլլայ, կը պատասխանէր երիտասարդը խօսքը լննցնելու համար, Թող այդպէս ըլլայ, ձէք : Բայց, ամէն պարագայի մէջ, բարի ոգին է : Այս այն է որ օգնեց մեզ, որ հաց եւ ջուր բերաւ մեզ, երբ անխահանքին մէջ բանտարկուած էինք : Գալով չար ոգիին, եթէ անխահանքին մէջ մնացած է, օր մը չէ օր մըն ալ զայն երեւան պիտի բերենք :

Աւելորդ է ըսել թէ ամէնէն առաջ տեղեկութիւն հաղորդուած էր ձէյմս Սդարի՝ այս դէպքերուն վրայ :

Գեռատի աղջիկը, տան մէջ մտնելուն յաջորդ օրն իսկ բոլորովին կաղզուրուած ըլլալով, անկից հարցաքննուեցաւ մեծ հոգածութեամբ : Այնպէս թուեցաւ նմա թէ կ'անգիտանայ կենաց իրերուն մեծագոյն մասը : Սակայն մտացի էր, չու-

տով տեսան զայս, այլ ինչ ինչ տարրական ծանօթութիւնք կը պակսէին նմա ի մէջ այլց ժամանակին ծանօթութիւնը : Կը տեսնուէր թէ երբեք վարժուած չէր ժամանակը բաժնելու ո՛չ ժամերով, ո՛չ օրերով, եւ թէ այս բառերն անծանօթ էին իրեն : Բաց աստի, իր աչերն, որք խաւարի վարժուած էին, դժուարաւ կը դիմանային ելեկտրական սկաւառակներուն պայծառութեան : այ, մթութեան մէջ, իր նայուածքը կը պահէր արտասովոր սրութիւն մը, եւ իր բիրը, խոշոր բացուած, թոյլ կուտար նմա տեսնել ամէնէն թանձր աղջամղջին մէջ : Նմանապէս տեսնուեցաւ թէ իր ուղեղը բնաւ կրած չէր արտաքին աշխարհի տպաւորութիւնները, թէ անխահանքէն տարբեր հորիզոն մը երբեք պարզուած չէր իր աչաց առջեւ, թէ իրեն համար ամբողջ մարդկութիւնն ամբողջութեամբ էր այդ խաւարամած խոռոչին մէջ : Այդ խեղճ աղջիկը գիտէ՞ր թէ արեգակ մը և աստղեր կային, քաղաքներ և դաշտեր, տիեզերք մը որուն մէջ աշխարհները կը վխտային : Կը տարակուսէին այս մասին, մինչեւ այն վայրկեանն ուր ինչ ինչ բառեր, զորս տակաւին կ'անգիտէր, որոշ նշանակութիւն մը պիտի առնուին իր մտաց մէջ :

Գալով այն խնդրոյն թէ նէլ մինա՞կ կ'ապրէր Նոր-Ապրիլֆոյլի խորութեանց մէջ, ճէյմս Սդար ստիպուեցաւ ետ կենալ զայն լուծելէ: Արդարեւ, այս մասին ամէն ակնարկութիւն սոսկում կ'ազդէր այդ արտակարգ բնութեան: Նէլ կա՛մ չէր կրնար, կա՛մ չէր ուզեր պատասխանել սակայն ապահովապէս, գաղտնիք մը կար հոն զոր կրնար յայտնել:

— Կ'ուզե՞ս մեզ հետ մնալ, կ'ուզե՞ս հոն դառնալ ուր որ էիր, հարցուցած էր նմա ճէյմս Սդար:

Այս հարցմանց առաջնոյն, «ո՛հ, այո՛» ըսած էր դեռատի աղջիկը: Երկրորդին, սոսկման աղաղակով մը պատասխանած էր, սակայն աւելի ոչինչ:

Այս յամառ լուութեան առջեւ, ճէյմս Սդար, և իրեն հետ մէկտեղ Սիմոն և Հարրի Ֆորտ, երկիւղ կ'զգային: Չէին կրնար մոռնալ այն անբացատրելի իրողութիւններն որք ընկերացած էին անխահանքին գիւտոյն: Արդ, թէ և երեք տարիէ ի վեր ոչ մէկ միջազէպ պատահած էր, միշտ կ'սպասէին սակայն նոր յարձակման մը իրենց անտեսանելի թշնամւոյն կողմէ: Ուստի ուզեցին խուզարկել խորհրդաւոր հորը: Ուստի ըրին զայս, լաւ զինեալ և լաւ ընկերակցութեամբ:

Սակայն ոչ մէկ կասկածելի հետք գտան հոն: Հորք կը հաղորդակցէր խոռոչին անխաբեր խաւին մէջ փորուած ստորին յարկերուն հետ:

Ճէյմս Սդար, Սիմոն և Հարրի յաճախ կը խօսակցէին այս բաներուն վրայ: Եթէ մէկ կամ երկու չարագործ էակներ պահուած էին անխահանքին մէջ, եթէ թակարդ մը կը պատրաստէին, նէլ պիտի կրնար ըսել զայս թերեւս, սակայն չէր խօսեր: Նորատի աղջկան անցելոյն մասին ամենադոյզն ակնարկութիւն տազնապաներ կը պատճառէր, և լաւ համարուեցաւ բնաւ չպնդել այս մասին: Ժամանակին հետ մէկտեղ, իր գաղտնիքն իրմէ պիտի խուսափէր անշուշտ:

Տուն հասնելէն տասնեւհինգ օր յետոյ, նէլ ծերունի Մաճին ամէնէն մտացի եւ ամէնէն եւանդոտ օգնականն էր: Ակներեւարար, բնաւ չթողուլ այդ տունն ուր այնքան գթութեամբ ընդունուած էր, բոլորովին բնական կը թուէր իրեն, եւ աւելորդ է ըսել թէ, այս պատուական մարդոց մտքին մէջ, այն վայրկեանէն ուր նէլ տունը մտած էր, իրենց որդեգիրն եղած էր նա:

Նէլ արդարեւ հրապուրիչ էր: Իր նոր կենցաղը կը գեղեցկացնէր զինքն: Ան-

չուշտ իր կենաց առաջին երջանիկ օրերն էին ասոնք : Երազ աագիտութեամբ լի կ'զգար ինքզինքն անոնց նկատմամբ որոց կը պարտէր զայս : Մտք մասնաւորապէս բուրովին մայրական համակրութիւն մը կ'զգար նորա համար : Ծերունի գործավարն ալ կը սիրէր զինքն : Ճէք Րիան բարեկամը մէկ բանի համար միայն կը ցաւէր , թէ ինք չէր ազատած զնա : Յաճախ տուն կուգար : Կ'երգէր , եւ նէլ , որ բնաւ երգ լած չէր , շատ գեղեցիկ կը գտնէր զայս . բայց տեսան թէ դեռատի աղջիկը Ճէք Րիանի երգերէն նախամեծար կը համարէր Հարրիի աւելի լուրջ խօսակցութիւններն , որ , տակաւ առ տակաւ , սովորեցուց նմա ինչ որ կ'անգիտանար տակաւին արտաքին աշխարհի իրաց մասին :

Պէտք է ըսել թէ , յորմէ հետէ նէլ երեւցած էր իր բնական ձեւին ներքեւ , Ճէք Րիան բռնի խոստովանած էր թէ ոգիներու մասին իր ունեցած դաւանանքը բաւական կը տկարանար : Բաց աստի , երկու ամիս յետոյ , իր աւելորդապաշտութիւնը նոր հարուած մը ստացաւ :

Արդարեւ , այդ ժամանակներն , Հարրի բաւական անակնկալ գիւտ մ'ըբաւ , որ մասամբ կը բացատրէր Հրեղէն կանանց երևումը Տընտոնալտի դղեկին աւերակաց մէջ , յիշուայն :

Օր մը , ածխահանքին հարաւային մասին մէջ երկար խուզարկութենէ մը յետոյ , որ քանի մը օր տեւած էր այս ահագին գետնափորքին վերջին ներքնուղեաց մէջ , Հարրի տաժանելի կերպով մագլցած էր անձուկ ներքնուղոյ մը մէջ որ թերթաքարին ժայռին մէկ խոտորնակ մասին մէջ փորուած էր :

Յանկարծ , մեծապէս զարմացաւ արձակ օդին մէջ գտնելով զինքը : Ներքնուղին , դէպի հողին մակերևոյթը շեղակի բարձրանալէ յետոյ , ճշդիւ կը յանգէր Տընտոնալտ-Քեալի աւերակներուն : Ուրեմն գագտնի հազորդակցութիւն մը գոյութիւն ունէր Նոր-Ապրիլիոյի և հնաւուրց դղեկին բլրակին միջև : Այս ներքնուղոյն վերին բերանն անհնար էր երևան հանել գուրսէն , այնչափ խցուած էր քարերով և մացառներով : Ուստի , ուտիկանական քննութեան ատեն , դատաւորները չէին կրցեր անդ մտնել :

Քանի մը օր յետոյ , Ճէյմս Սդար , Հարրիի առաջնորդութեամբ , եկաւ ինքն ալ տեսաւ գետնածխային զանգուածին այս բնական տրամագրութիւնը :

— Աւասիկ , ըսաւ , ածխահանքին աւելորդապաշտներն համոզելու նշանաւոր փաստ մը : Երթան բարո՛վ որոնք ներք , ոգիներն և Հրեղէն կիները :

—Չեմ կարծեր, պարոն Սդար, պատասխանեց Հարրի, որ այս մասին խընդակցելու պատճառ մը ունենանք: Անոնց փոխանորդներն աւելի չեն արժեր և կըրնան աւելի գէշ լինիլ:

—Սյդպէս է, Հարրի, պատասխանեց ճարտարապետն, այլ ի՞նչ ընելու է: Ապահովպէս, այն էակներն որք կը պահուրտին ամխահանքին մէջ, այս ներքնուզիէն կը հաղորդակցին հողին երեսին հետ: Ասոնք էին անշուշտ որ, ջահ ի ձեռին, այդ փոթորկալից գիշերին մէջ, Մարտին յանկուցին եզերաց վրայ, և հին աւարառուներուն նման, պիտի գողնային բեկորները, եթէ ձէք Բիան և իր ընկերներն հոն չգտնուէին: Ինչ որ ալ ըլլայ, ամեն բան կը բացատրուի վերջապէս: Աւասիկ որջին բերանը: Գալով անոնց որք հոն կը բնակէին, հոն կը բնակի՞ն տակաւին:

—Սյո՛, որովհետեւ նէլ կը գողայ երբ անոնց վրայ կը հասուի, պատասխանեց Հարրի համոզմամբ: Սյո, որովհետեւ նէլ չուզեր կամ չհամարձակիր խօսիլ:

Հարրի իրաւունք ունենալու էր: Եթէ ամխահանքին խորհրդաւոր բնակները լքած էին զայն, կամ մեռած էին, մատաղատի աղջիկն ի՞նչ պատճառ պիտի ունենար լռութիւն պահելու:

Սակայն ձէյմս Սդար անպատճառ կ'ուզէր թափանցել այս գաղտնեաց: Կը գուշակէր թէ նոր շահագործման ապագայն կրնար անկից կախու մն ունենալ: Ուրեմն վերստին ձեռք առին խստագոյն տնօրինութիւններ: Տեղեկութիւն տրուեցաւ դատաւորաց: Ոստիկաններ գաղտագողի պահուրտեցան Տընտոնալտ-Քեասլի աւերակաց մէջ: Հարրի ինքն իսկ պահուրտեցաւ քանի մը գիշեր, բլրակը ծածկող մացառներուն մէջտեղ: Աւելորդ աշխատութիւն, Բան մը չգտան: Ոչ մէկ մարդկային էակ երեցաւ ծակին մէջ:

Հեղհետէ այն եզրակացութեան յանգեցան թէ չարագործները վերջնապէս թողած էին Նոր-Ապըրֆայլը եւ թէ նէլը մեռած կը կարծէին այն հորին խորն ուր լքած էին զայն: Շահագործուէն առաջ, ամխահանքը կրնար ապահով ապաստան մը լինիլ իրենց, ու և է խուզարկութենէ զերծ: Սակայն, յայնմհետէ, պարագայները նոյն չէին: Իրենց բնակութիւնը դըժուար էր պահել: Ուրեմն բանաւորապէս յուսալու էր թէ ա՛լ երկիւղ չկար ապագային համար:

Բայց ձէյմս Սդար բոլորովին ապահովուած չէր: Հարրի ալ չէր կրնար անձնատուր լինիլ եւ յաճախ կը կրկնէր:

—Նէլ անշուշտ խառնուած է այս բո-
լոր գաղտնիքին : Եթէ ա՛լ վախնալու բան
մը չ՛ունենար , ինչո՞ւ լուռ թիւն պահէր :
Տարակոյս չ՛կայ թէ երջանիկ է մեզ հետ
սպրեւով : Զ՛մեզ ամենքս կը սիրէ՛ : Կը
պաշտէ՛ մայրս : Եթէ իւր անցեւոյն վրայ
լուռ կը մնայ , ըսել է թէ գաղտնի սար-
սափ մը ունի զոր իր խիղճը կ՛արգելու
իրեն երեւան հանել և որ իր վրայ կը
ծանրանայ : Թերեւս ալ , աւելի մեր քան
թէ իրեն օգտին համար , պարտ կը համա-
րի իր անբացատրելի լուռ թենէն դուրս
չ՛ելնել :

Այս գանազան նկատողութեանց պատ-
ճառաւ , համահաճ հաւանութեամբ , ո-
րոշուեցաւ որ խօսակցութեան մէջ մուտ
չ՛գտնէր ինչ որ կրնար իր անցեալն յիշե-
ցնել նորատի ալջկան :

Օր մը սակայն , Հարրի դիպուածաբար
Նէլի տեղեկացուց ինչ որ ձէյմս Ագար ,
իր հայրը , մայրը եւ ինքն իսկ իր միջա-
մտութեան պարտիլ կը կարծէին :

Տօնի օր էր : Բազուկները բանթող կ՛ը-
նէին ինչպէս կոմսութեան երեսին նայն-
պէս եւ ստորերկրեայ գետնին մէջ : Ամե-
նուրեք կը շրջագայէին , երգերը կը թնդա-
յին , քսան տեղ , Նոր-Ապրիլի հնչուն
կամարներուն ներքեւ :

Հարրի և Նէլ տունէն ելած էին եւ
յամրաքայլ կը հետեւէին Մայգոմի լճին
ձախ ափանց : Հոն , ելեկարական լոյսերը
նուազ սաստկութեամբ կը ցլանային , և
իրենց նշոյլները խօլական ձեւերով կը
բեկբեկէին նկարագեղ ժայռերու անկեանց
վրայ : Այս կիսաստուերը լաւագոյնս , կը
յարմարէր Նէլի աչերուն , որք շատ դժ-
ուարաւ կը դիմանային լոյսի :

Ժամ մը քալելէ յետոյ , Հարրի եւ իր
ընկերուհին կանգ առին Սուրբ Ժիլի մատ-
րան հանդէպ , տեսակ մը բնական պատշ-
գամի վրայ , որ կը տիրապետէր լճին ջրե-
րուն :

—Աչերդ դեռ լոյսի չվարժուեցան ,
Նէլ , ըսաւ Հարրի , եւ անշուշտ չպիտի
կրնաս հանդուրժել արեգական պայծա-
ռութեան :

—Ոչ անշուշտ , պատասխանեց դեռա-
տի ալջիկը , եթէ արեգանն այնպէս է
ինչպէս ինձ նկարագրած ես , Հարրի :

—Նէլ , յարեց Հարրի , քեզ խօսած ա-
տենս չ՛կրցայ ճիշդ գաղափար մը տալ իր
չբեղութեան վրայ , ոչ ալ այն տիեզեր-
քին գեղեցկութեանց վրայ զորս քու ա-
չերդ երբեք չեն դիտած : Բայց , ըսէ՛
ինձ , կարելի՞ բան է որ ամխահանքին
խորութեանց մէջ ծնելէ ի վեր , կարելի՞

բան է որ երբեք հողին երեսն ելած չ'ըլ-
լաս :

— Երբեք, Հարրի, պատասխանեց Նէլ,
և չեմ խորհիր թէ մինչեւ իսկ պզտիկ ե-
ղած առենս, հայր մը կամ մայր մը հոն
տարած ըլլան զիս : Տարակոյս չ'կայ թէ
դուրսէն յիշատակ մի պահած պիտի ըլ-
լայի :

— Կը հաւատամ, պատասխանեց Հար-
րի : Մնաց որ, Նէլ, այդ ժամանակ դեռ
չառ ուրիշներ ալ երբեք չէին բաժնուեր
ածխահանքէն : Դուրսի հետ հաղորդա-
կցութիւնք դժուարին էին, եւ ճանչցած
եմ շատ մանկամարդ պզիկներ եւ երի-
տասարդներ սրք, քու տարիքդ հասած,
չէին գիտեր դեռ ինչ որ դուն ալ չես գի-
տեր դուրսի իրերէն : Բայց հիմակ, քանի
մը վայրկեանի մէջ, մեծ թիւնէլէն շոգե-
կառքը կը փոխադրէ զմեզ կոմսութեան
երեսը : Ուստի, Նէլ, անհամբեր կ'սպա-
սեմ այն վայրկենին յսրում ըսես ինձ .
« Եկուր, Հարրի, աչքերս կրնան հանդուր-
ժել ցերեկուան լոյսին եւ կրնամ տեսնել
արեգակը : Կ'ուզե՞մ տեսնել Աստուծոյ
դործը :

— Շատ չանցած պիտի ըսեմ, Հարրի,
կը յուսամ, պատասխանեց դեռատի ազ-
ջիկը : Բնզ հետ պիտի երթամ սքանչա-

նալ արտաքին աշխարհին վրայ, եւ սա-
կայն . . .

— Ի՞նչ կ'ուզես ըսել, Նէլ, հարցուց
Հարրի աշխուժիւ : Կը ցաւի՞ս որ թողած
ես այն խաւարամած անդունդն որուն
մէջ ապրեցար կենացդ առաջին տարիներ-
ընն, եւ ուսկից մենք հանեցինք զքեզ
կիսամեռ վիճակի մէջ :

— Ոչ, Հարրի, պատասխանեց Նէլ : Կը
մտածէի միայն թէ խաւարն ալ գեղեցիկ է :
Եթէ գիտնայի՞ր թէ անոնց խորութեան
վարժուած աչերն ինչե՞ր կը տեսնեն հոն :
Ստուերներ կան որք կ'անցնին եւ որոց
թուիչքին հետեւիլ այնքա՞ն սիրելի է :
Մերթ շրջանակներ կը խառնամանուին
նայուածքիդ առջեւ, որոցմէ դուրս ել-
նել չ'ուզե՞ր մարդ : Ա՞ծխահանքին խորը
սեւ ծակեր կան, տարտամ լոյսերով լե-
ցունս Բաց աստի, ազմուկներ կը լսես սրք
կը խօսին քնդ կը տեսնես, Հարրի, պէտք
է հոն ապրած ըլլալ հասկնալու համար
ինչ որ ես կ'զգամ, ինչ որ չեմ կրնար բա-
ցատրել քեզ :

— Եւ վախ չէի՞ր զգար, Նէլ, երբ մի-
նակ էիի :

— Հարրի, պատասխանեց նորատի ազ-
ջիկը, մինակ եղած առենս էր որ վախ
չէի զգար :

Նէլի ճայնը թեթեւապէս այլայլած էր այս խօսքն արտասանած ատեն: Հարրի սակայն պարտ համարեց քիչ մը աւելի առաջ մղել զինքը, եւ ըսաւ.

—Սակայն այդ երկար ներքնուղիններուն մէջ կարելի էր կորսուիլ. Նէլ Չէլի՞ր վախնար որ մոլորէիր:

—Ոչ, Հարրի. երկար ատենէ ի վեր կը ճանչէի նոր ածխահանքին շողոր ճանբայները:

—Երբեմն երբեմն դուրս չէի՞ր ելներ:

—Այո . . . երբեմն . . . պատասխանեց նորատի աղջիկը վարանելով, երբեմն կուգայի մինչեւ Ապըրֆոյլի հին հանքը:

—Կը ճանչէի՞ր ուրեմն հնաւուրց հիւղակը:

—Հիւղակը . . . այս . . . բայց անոր մէջ բնակողները շատ հեռուն միայն:

—Հայրս եւ մայրս էին անոնք, պատասխանեց Հարրի, ե՛ս էի: Երբեք չէինք ուզած թողուլ մեր հին բնակարանը:

—Թերեւս ատիկա աւելի լաւ լինէր ձեզ համար . . . մրմնջեց դեռատի աղջիկը:

—Ինչո՞ւ համար, Նէլ: Մեր զայն չթողուլու յամառութիւնը չէ՞ր որ մեզ երեւան հանել տուաւ նոր ածխահանքը: Ու այս բանս բարեբաստիկ հետեւանքներ չունեցա՞ւ

ամբողջ ժողովրդեան մը համար որ աստ վերատին ձեռք ձգեց դիւրակեցութիւնը շնորհիւ աշխատութեան, քե՛զ համար, Նէլ, որ ի կեանս դառնալով, քեզ բոլորովին սիրանուէր սրտեր գտար:

—Ինձ համար, պատասխանեց Նէլ աշխուժիւ . . . Այո, ինչ որ ալ պատահի Միւսներուն համար . . . ով գիտէ . . .

—Ի՞նչ կ'ուզես ըսել:

—Ոչինչ . . . ոչինչ . . . Սակայն յայնժամ վտանգ կար նոր ածխահանքին մէջ մտնելու: Այո՛, մեծ վտանգ, Հարրի. Օր մը, անխոհեմներ մտան այս անդունդներուն մէջ: Հեռուն գացին, շատ հեռուն: Մոլորեցան . . .

—Մոլորեցա՞ն, ըսաւ Հարրի Նէլի նայելով:

—Այո . . . մոլորեցան . . . պատասխանեց Նէլ, որուն ճայնը կը դողդոջար: Իրենց կանթեղը մարեցաւ: Չկրցան ձամբանին գտնել . . .

—Եւ հոն, գոչեց Հարրի, ութ երկար օրեր բանտարկուած մնալով, մեռնելու վրայ էին, Նէլ: Եւ եթէ չլինէր գթոտ էակ մը զոր Աստուած զրկեց մեզ, հրեշտակ մը թերեւս, որ գաղտագողի քիչ մը հաց բերաւ իրենց, առանց խորհրդաւոր առաջնորդի մը որ ետքէն մինչեւ անոնց

քով տարաւ իրենց ազատարարները, երբեք չպիտի ելնէին այդ գերեզմանէն:

— Դուն ի՞նչպէս գիտես, հարցուց դեռատի աղջիկը:

— Արովհետեւ այդ մարդիկը, ծէյմս Սդարն էր, հայրս էր... ե՛ր էի, Նէլ:

Նէլ, գլուխը վեր առնլով, բռնեց երիտասարդին ձեռքն, եւ նայեցաւ նմա՛ այնպէս անքթիթ, որ Հարրի խռովեցաւ մինչեւ իր սրտին ալուցը մէջ:

— Դո՛ւն, կրկնեց մատաղահաս աղջիկը:

— Այո, պատասխանեց Հարրի վայրկեան մը լռութենէ յետոյ, եւ այն որում կը պարտինք մեր կեանքը, դո՛ւն էիր, Նէլ: Դո՛ւն միայն կրնայիր լինել:

Նէլ երկու ձեռներուն մէջ խոնարհեցուց գլուխն, առանց պատասխանելու: Երբեք Հարրի այնչափ յուզուած չէր տեսած զնա:

— Անոնք որք զքեզ ազատեցին, Նէլ, յարեց այլալակ ձայնիւ, արդէն քե՛զ կը պարտէին իրենց կեանքն, եւ կը կարծես թէ երբեք կրնան մոռնալ զայդ:

ՃՕՒԱԿԱՆ ՍԱՆԳՈՒՂԻՆ ՎՐԱՅ

Սակայն Նոր Ապրիլի շահագործման աշխատութիւնք մեծ շահերով յառաջ կը տարուէին: Աւելորդ է ըսել թէ ծէյմս Սդար ճարտարապետն և Սիմոն Ֆորտ, — այս ածխաբեր հարուստ գետնին առաջին գտիչներն, — առատապէս կը մասնակցէին այս շահերուն: Հարրի ուրեմն լաւ պատառ մը կը լինէր: Սակայն մըտքէն չէր անցուներ թողուլ ածխահանքը: Իր հօրն յաջորդած էր գործավարի պատօնին մէջ և ժրջանութեամբ կը հսկէր այս հանքահաններու ամբողջ աշխարհին վրայ:

Ծէք Րիան կը պարծենար եւ կը հըրճուէր իր ընկերոջ յաջողութեանն համար: Ինք ալ լաւ վիճակի մէջ էր: Երկուքն ալ յաճախ կը տեսնէին զիրար, թէ՛ տան մէջ, թէ ներսի աշխատութեանց տանն: Ծէք Րիան դիտած էր Հարրիի տածած զգացումները մանկամարդ աղջկան նկատմամբ: Հարրի պատասխան չէր տար, այլ ծէք կոկորդալիբ կը խնդար երբ իր ընկերը գլուխը կը թոթուէր ժխտական կերպով:

Պէտք է ըսել նաեւ թէ ծէք Րիանի

ամէնէն ջերմ փափաքներէն մին էր ընկերակցիլ Նէլի երբ իր առաջին այցելութիւնն ընէր կոմսութեան երեսին վրայ : Կ'ուզէր տեսնել նորա զարմացումներն , իր սքանչացումն հանդէպ այն բնութեան որ ցայն վայր անծանօթ էր իրեն : Կը յուսար որ Հարրի այս պտոյտի միջոցին իրեն հետ տանէր զինքն : Մինչեւ ցայն վայր , սակայն , այդ մասին առաջարկ մը ըրած չէր իրեն , — եւ այս բանս քիչ մը անհանգստութիւն կը պատճառէր իրեն :

Օր մը , ծէք Ռիան կ'իջնէր օդաճգութեան հորերէն մէկէն որոնցմով ածխահանքին ստորին յարկերը կը հաղորդակցէին հողին մակերևոյթին հետ : Այն սանդուղներէ մին առած էր որք , յաջորդական տատանումներով բարձրանալով և իջնելով , թոյլ կուտան վեր ելնել և վար իջնել առանց յոգնութեան : Սարուածքին քսան ճօճումներն իբր հարիւր յիսուն ոտք իջեցուցած էին զինքն , երբ , այն անձուկ գաւթիկին վրայ ուր կանգ առած էր , հանդիպեցաւ Հարրիի , որ դուրսի աշխատութեանց համար վեր կ'ելնէր :

— Դո՞ւն ես , ըսաւ ծէք իր ընկերոջ որ հորին ելեկտրական կանթեղներուն լոյսէն լուսաւորուած էր :

— Այո , ծէք , պատասխանեց Հարրի ,

և գոհ եմ զքեզ տեսնելով : Առաջարկութիւն մը ունիմ քեզ ընելիք . . .

— Բան մը մտիկ չեմ ընեք մինչեւ որ Նէլի վրայ լուր չտաս Էնձ , գոչեց ծէք Ռիան :

— Նէլ աղէկ է , ծէք , և այնչափ աղէկ որ ամիսէ մը կամ վեց շաբաթէն , կը յուսամ որ . . .

— Հետը պիտի ամուսնանաս , Հարրի :

— Զուրցածդ չես գիտեր , ծէք :

— Կարելի է , Հարրի , սակայն գիտեմ թէ ի՞նչ պիտի ընեմ :

— Ի՞նչ պիտի ընես :

— Ե՛ս պիտի ամուսնանամ հետն , եթէ դո՛ւն չամուսնանաս , պատասխանեց ծէք բարձրաքրքիջ խնդալով : Սուրբ Մուսկօն վկայ ըլլայ ինձ , սակայն այդ սիրունիկ Նէլն հաճելի է ինձ : Ծաղկատի և բարեսիրտ արարած մը որ բնաւ բաժնուած չէ հանքէն , ահա կի՛նն որ կը յարմարի հանքահանի մը : Նա որբ է , ինչպէս ես ալ որբ եմ , և , եթէ քիչ մը չմտածես իրեն վրայ և նա գէշ աչքով չնայի ինձ , Հարրի . . .

Հարրի լռութեամբ կը նայէր ծէքի : Կը թողուր որ խօսի , առանց իսկ փորձելու պատասխանել նմա :

— Խօսքերէս չես նախանձիր հարկաւ , Հարրի , ըսաւ ծէք Ռիան աւելի լուրջ ձայնով մը :

—Ո՛չ, ձե՛ք, պատասխանեց Հարրի հանդարտութեամբ:

—Սակայն, եթէ նէլը կինդ չընես, յաւակնութիւն չունիս որ պառաւ աղջիկ մնայ:

—Ես ոչ մէկ յաւակնութիւն ունիմ, պատասխանեց Հարրի:

Սանդուղին մէկ ճօճումն եկաւ յայնժամ բաժնեց երկու բարեկամները, մին վար իջնելու և միւսն վեր ելնելու համար: Սակայն իրարմէ չբաժնուեցան:

—Հարրի, ըսաւ ձե՛ք, կը կարծես թէ լրջութեամբ խօսեցայ քեզ քիչ մը առաջ նէլի մասին:

—Ո՛չ, ձե՛ք, պատասխանեց Հարրի:

—Է՛հ լաւ, հիմա՛ լրջութեամբ պիտի խօսիմ:

—Դո՛ւն, լրջութեամբ խօսիս:

—Իմ պատուական Հարրիս, պատասխանեց ձե՛ք, ես կարող եմ լաւ խորհուրդ տալ բարեկամի մը:

—Տո՛ւր, ձե՛ք:

—Է՛հ լաւ, աւասիկ: Դուն կը սիրես նէլը իրեն արժանի բոլոր սիրով, Հարրի: Հայրդ, ծերունի Սիմոնը, եւ մայրդ, ծերունի Մաճը, իրենց զաւկին պէս կը սիրեն զինքը: Արդ, քեզ շատ քիչ բան կը մնայ ընելիք որպէս զի բոլորովին իրենց

աղջիկը լինի:—Ինչո՞ւ համար չես ամուսնանար իրեն հետ:

—Նէլի զգացումները դիտե՞ս որ այդչափ յառաջ կ'երթաս, ձե՛ք, պատասխանեց Հարրի:

—Ոչ ոք կ'անգիտէ զայնս, ոչ իսկ դուն, Հարրի, եւ ասոր համար է որ ո՛չ ինձմէ կը նախանձիս, ո՛չ ուրիշներէն:— Բայց ահա սանդուղը վար կ'իջնէ, և . . .

—Կեցի՛ր, ձե՛ք, ըսաւ Հարրի բռնելով իր ընկերն, որուն ոտքն ալ դէն թողած էր գաւթիկը՝ շարժուն սանդուղին վրայ հաստատուելու համար:

—Լա՛ւ, Հարրի, գոչեց ձե՛ք խնդալով կտոր կտոր պլտի ընել տաս զիս:

—Լըջօրէն մտիկ ըրէ, ձե՛ք, պատասխանեց Հարրի, որովհետեւ, ես ալ, լըջօրէն կը խօսիմ քեզ:

—Մտիկ կ'ընեմ . . . մինչեւ յաջորդ ճօճումն, բայց ոչ աւելի:

—Ձե՛ք, յարեց Հարրի, պէտք չունիմ քեզմէ պահելու թէ կը սիրեմ նէլը: Իմ ամէննն ջերմ փափաքս է կինս ընել զնա . . .

—Լա՛ւ:

—Սակայն, իր սյս վիճակին մէջ, խըզ ճի խայթ մը կ'ունենամ իրմէ խնդրելու որ անդառնալի որոշում մը տայ:

—Ի՞նչ ըսեւ կ'ուզես, Հարրի:

—Ըսեւ կ'ուզեմ, ձէք, թէ՛ նէլ երբեք թողած չէ ամխահանքին խորութիւններն ուր ծնած է անշուշտ: Գուրսէն բան մը չգիտեր, բան մը չճանչնար: Ամէն բան սովորելու է աչքերով, և թերևս սրտով Ո՞վ գիտէ ի՞նչ պիտի լինին իր մտածումներն երբ նոր տպաւորութիւնք ծնին իր մէջ: Դեռ աշխարհային բան մը չունի, և ինձ կը թուի թէ՛ զինքը խարել է, մինչեւ որ լաւ հասկացողութեամբ որոշած չըլլայ ուրիշ ո և է բնակութենէ նախամեծար համարիլ ամխահանքին բնակութիւնը:—Կը հասկնաս զիս, ձէք:

—Այո . . . անորոյ կերպով . . . կը հասկընամ մանաւանդ թէ՛ դուն ինձ նորէն փախցնել պիտի տաս յառաջիկայ ճօճումը:

—Ձէք, պատասխանեց Հարրի ծանր ձայնով մը, եթէ մինչեւ իսկ այս սարուածներն ա՛լ չբանին, եթէ մինչեւ իսկ այս գաւթիկը պակսի ոտքերուդ տակ, մտիկ պիտի ընես ըսելիքս:

—Կեցցե՛ս, Հարրի: Ես ալ այսպէ՛ս կ'ուզեմ որ խօսին ինձ:—Կ'ըսենք ուրեմն թէ՛ նէլի հետ ամուսնանալէ առաջ էտիմպուրիի մէկ գիշերօթիկ վարժարանը պիտի զրկես զինքը:

—Ո՛չ, ձէք, պատասխանեց Հարրի, ես

պիտի կրնամ դատարարակել այն որ կինս պիտի լինի:

—Եւ այդպէս աւելի լաւ կը լինի, Հարրի:

—Սակայն նախ, ինչպէս ըսի, կ'ուզեմ որ՝ նէլ կատարեալ ծանօթութիւն ունենայ արտաքին աշխարհի: Բաղդատութիւն մը, ձէք: Եթէ կոյր աղջիկ մը սիրէ իր, եւ եթէ գային ըսէին քեզ. «Ամիսէ մը պիտի բժշկուի», հետը ամուսնանալու համար չպիտի՞ սպասէիր իր բժշկուելուն:

—Այո, ի հարկէ, պատասխանեց ձէք Րիան:

—Է՛հ լաւ, ձէք, նէլ տակաւին կոյր է, եւ զինքը կինս ընելէ առաջ, կ'ուզեմ որ գիտնայ թէ՛ զի՛ս, իմ կենացս պայմաններն է որ նախամեծար կը համարի և կ'ընդունի: Կ'ուզեմ որ իր աչքերը վերջապէս բացուին ցերեկուան լոյսին:

—Լաւ, Հարրի, լաւ, խիստ լաւ, գոչեց ձէք Րիան: Հիմակ կը հասկնամ միտքդ: Է՛յ, գործողութիւնը ե՛րբ պիտի կատարուի:

—Ամիսէ մը, ձէք, պատասխանեց Հարրի: Նէլի աչքերը տակաւ առ տակաւ կը վարժուին մեր սկաւառակներուն պայծառութեան: Ասիկա պատրաստութիւն մըն է, Ամիսէ մը, կը յուսամ որ տեսնէ երկիրն եւ անոր սքանչելիքը, երկինքն եւ

անոր շքեղութիւնները: Պիտի գիտնայ թէ բնութիւնը մարդկային նայուածքին տուած է խաւարամած անխահանքին հորիզոնէն աւելի հեռաւոր հորիզոններ:

Բայց, մինչդեռ Հարրի այսպէս կը յափըջատակուէր իր երեւակայութենէն, ձէք Ռիան, գաւթիկը թողլով, ցատքած էր սարուածքին ճօճական սանդուղին վրայ:

— Է՛հ, ձէք գոչեց Հարրի, ո՞ւր ես:

— Բու տակդ, պատասխանեց խնդրով զուարթ երիտասարդը: Մինչդեռ դուն անհունին մէջ կը բարձրանաս. ես անդունդին մէջ կ'իջնեմ:

— Մնաս բարո՛ւ, ձէք, պատասխանեց Հարրի ինքն ալ փաթթուելով վեր ելնող սանդուղին: Կը խնդրեմ որ ոչ մէկու բան մը զուրցես ըսածներուս վրայ:

— Ո՛չ մէկու, գոչեց ձէք Ռիան, բայց պայմանով մը . . .

— Ի՞նչ:

— Ես ալ պիտի ընկերանամ երկուքիդ երբ նէլ առաջին անգամ ելնէ հողին երեսը:

— Այո, ձէք, կը խոստանամ, պատասխանեց Հարրի:

Մարուածքին մէկ նոր տատանումն աւելի մեծ անջրպետ մը եկաւ դրաւ երկու բարեկամներուն մէջտեղ: Իրենց ձայ-

նըն ա՛լ շատ տկար կը հասնէր իրարու: Եւ սակայն, Հարրի դեռ կրցաւ լսել ձէքի բարձրագոյ ձայնը

— Եւ երբ նէլ տեսնէ աստղերն, արեգակն և լուսինը, գիտե՞ս թէ զո՞վ նախամեծար պիտի համարի:

— Ոչ, ձէք:

— Զքեզ, ընկերս, դեռ զքեզ, մի՛շտ զքեզ:

Եւ ձէք Ռիանի ձայնը վերջապէս մարեցաւ վերջին հուրրաի մը մէջ:

Սակայն Հարրի իր բոլոր անգրաւ ժամերը կը նուիրէր նէլի դատարարակութեան: Կարդալ գրեւ սովրեցուցած էր նմա, և մատաղահաս աղջիկն այս ամէնուն մէջ արագ յառաջբիմութիւններ կ'ընէր: Կարծես թէ բնագլմամբ «գիտէր»: Երբեք աւելի աշխոյժ իմացականութիւն մը այնչափ արագ չյառաջբիմեց այսչափ կատարեալ ագիտութեամբ: Զարմացման նիւթ մըն էր այս անոնց համար որք զինքը կը ճանչէին:

Սիմոն և Մաճ ամէն օր եւս առաւել կը յարէին իրենց որդեգրին, որուն անցեալը սակայն միշտ կ'զբաղեցնէր զիրենք: Հասկցած էին Հարրի զգացումները նէլի նկատմամբ, և այս բանս բնաւ անհաճոյ չէր իրենց:

Կը յիշուի թէ ծերունի գործավարն ըսած էր ճարտարապետին, նորա առաջին այցելութեան միջոցին ի հնաւուրց հիւղակն .

— Ինչո՞ւ համար զաւակս ամուսնանայ : Վերի ո՞ր կին կրնայ յարմարիլ երիտասարդէ՛ մը ոյր բոլոր կեանքը պիտի անցնի հանքի մը խորութեանց մէջ :

Է՛ն լաւ : Նախախնամութիւնը չէ՞ր զըրկած իրեն այն միակ ընկերուհին որ իրօք կրնար պատշաճիլ իր զակին : Երկնից մէկ շնորհքը չէ՞ր այդ :

Ուստի եւ ծերունի գործարանը մտադիր էր որ, եթէ այդ ամուսնութիւնը տեղի ունենար, այդ օրը Գուլ-Սիդիի մէջ հանդէս մը տեղի ունենար որ դարագլուխ պիտի կազմէր Նոր-Ապըրֆոյլի հանքահաններուն համար :

Պէտք է ըսել նաեւ թէ ուրիշ մըն ալ ոչ նուազ եռանդեամբ կը փափաքէր Նէլի եւ Հարրիի միութեան : Ճէյմս Սդար ճարտարապետն էր այն : Անշուշտ, ամէն բանէ առաջ, այդ երկու երիտասարդաց երջանկութիւնը կ'ուզէր : Սակայն աւելի ընդհանուր շահ ունեցող շարժառիթ մը գինքը կը մղէր այս ճամբուն մէջ :

Յայտնի է թէ Ճէյմս Սդար ինչ ինչ երկկուզներ պահած էր սրտին խորը, թէ

և ներկային մէջ ոչ մէկ բան կ'արդարացնէր զայնս : Սակայն, ինչ որ եղած էր, կրնար նորէն լինիլ : Ապահովապէս Նէլ միայն գիտէր նոր անխափանքին այս գաղտնիքը : Արդ, եթէ ապագայն նորանոր վտանգներ կը պատրաստէր Ապըրֆոյլի հանքահաններուն, ի՞նչպէս զգոյշ կենալ այդ տեսակ պատահականութեանց դէմ, առանց պատճառը գիտնալու :

— Նէլ չուզեց խօսիլ, կը կրկնէր յաճախ Ճէյմս Սդար, սակայն ինչ որ մինչեւ հիմա ծածուկ պահեց ուրիշներէն, չկրնար ամուսնէն զազտնի պահել : Վտանգը պիտի սպառնայ Հարրիի, ինչպէս ուրիշներուն ալ : Ուրեմն, ամուսնութիւն մը որ երջանկութիւն պիտի տայ հարսնացեւոյց և ապահովութիւն նոցա բարեկամներուն, լաւ ամուսնութիւն մըն է :

Ճէյմս Սդար ճարտարապետն այսպէս կը խորհրդածէր, քիչ շատ տրամաբանութեամբ : Այս խորհրդածութիւնն հաղորդեց նաեւ ծերունի Սիմոնին, որ հասակարժիք եղաւ : Ուրեմն ոչինչ հակառակիլ կը թուէր Հարրիի և Նէլի ամուսնութեան :

Եւ ո՞վ կրնար հակառակիլ : Հարրի եւ Նէլ կը սիրէին զիրար : Ծերունի ծնողքն ուրիշ ընկերուհի չէին երազեր իրենց զակին համար : Հարրիի ընկերները կը նա-

խանձէին նորա երջանկութեան, խոստովանելով հանդերձ թէ արժանի էր աղոր: Մանկահասակ աղջիկն ինքիրմէ միայն կախումն ունէր եւ իր սրտին հաւանութիւնը միայն ունէր ձեռք բերելիք:

Ի այց, եթէ ոչ ոք արգելք լինիլ կը թուէր այս ամուսնութեան, ինչո՞ւ համար, երբ ելեկտրական սկաւառակները կը մարչին հանգստեան ժամուն, երբ խաւարը կը տիրէր գործաւորաց քաղքին վրայ, երբ Գոլ-Սիդիի բնակիչք իրենց տունները կը քաշուէին, ինչո՞ւ համար Նոր-Ապրիլի ամէնէն խաւարամած անկիւններէն մէկէն խորհրդաւոր էակ մը կը սողոսկէր աղջամղջոց մէջ: Ի՞նչ բընազգ կը վարէր այս ուրուականն ինչ ինչ ներքնուզիներու մէջէ որք այնքան նեղ էին զի անանցանելի կը թուէին: Ինչո՞ւ համար այդ առեղծուածային էակն, որուն աչերը կը թափանցէին ամէնէն խոր մըթութիւնը, կուգար սողալով Մալգոմի լըճին ափանց վրայ: Ինչո՞ւ համար այնքան յամառաբար կ'ուզուէր դէպի Սիմոն Փորտի բնակարանն, և այնչափ զգուշութեամբ որ մինչեւ այն ատեն ի դերեւ հանած էր ամէն հսկողութիւն: Ինչո՞ւ համար կուգար ականջ դնել պատուհաններուն և կը ջանար խօսակցութեան կտորներ հաւաքել տան փեղկերուն ետէն:

Եւ, երբ ինչ ինչ խօսքեր կը հասնէին մինչեւ իրեն, ինչո՞ւ համար իր բունցքը կ'երկարէր՝ սպառնալու համար անցորդ բնակարանին: Ինչո՞ւ համար, վերջապէս, սա խօսքերը կը խուսափին իր բարկութենէ կծկուած շրթներէն:

«Նէ եւ նա՛, Երբե՛ք:»

ՎԱՌՆ ԺՁ.

ԱՐԵԳԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ամիս մը յետոյ, — օգոստոս 26 ի երեկոյին էր, — Սիմոն Ֆորտ և Մ'աճ իրենց ամէնէն ջերմ սղջերթները կ'ուզէին չորս զբօսաշրջիկներու որք կը պատրասուէին մեկնիլ տունէն:

Ճէյմս Ուգար, Հարրի և Ճէք Րիան պիտի առաջնորդէին Նելի հոգին երեսն ուր իր ստքը կոխած չէր բնաւ. այդ ճամնչաւէտ միջավայրին մէջ՝ որուն լոյսը տակաւին չէին ճանչեր իր աչերը:

Պտոյտը պիտի տեւէր երկու օր: Ճէյմս Սդար, Հարրիի հետ համաձայնութեամբ, կ'ուզէր որ դուրան անցուած այս քառսուն և ութ ժամերէն յետոյ, մանկահասակ աղջիկը տեսած ըլլար ինչ որ չէր տեսած խաւարամած ամխահանքին մէջ, այ-

սինքն երկրագնդիս զանազան երեւոյթ-
ները, որպէս թէ քաղաքներու, դաշտե-
րու, լեռներու, գետերու, լիճերու, ծո-
ցերու և ծովերու շարժուն համայնա-
պատկեր մը իր աչաց առջեւէն անցնէր:

Արդ, Սկովտիոյ այդ բաժնին մէջ որ
էտիմպուրկի եւ Կլասկովի մէջտեղ կը գլու-
նուի, կարծես թէ բնութիւնն ուզած էր
ճշդիւ ի մի հաւաքել այս երկրոյին սքան-
չելիքներն. իսկ գալով երկնից, այնպէս
պիտի լինէր հոն ինչպէս էր ամենուրեք,
իր յարաշարժ յարափոփոխ ամպերով, ի-
րենց պայծառ կամ քօղածածուկ լուսի-
նով, ճառագայթարձակ արեգակով, բիւ-
րաւոր բիւրանշոյլ աստղերով:

Առաջադրեալ շրջագայութիւնս այն-
պէս կարգադրուած էր որ գոհացնէ այս
ծրագրին բոլոր պայմանները:

Սիմոն Ֆորտ եւ Մաճ շատ գոհ պիտի
լինէին նէլի ուղեկցելով. սակայն, ինչ-
պէս յայտնի է, սիրայօժար չէին թողուր
ածխահանքը, եւ վերջ ի վերջոյ չկրցան
որոշում տալ գէթ օրուան մը համար
բաժնուելու իրենց ստորերկրեայ բնակա-
րանէն:

Ճէյմս Սդար կ'երթար իբր դիտող,
իբր իմաստասէր, շատ հետաքրքիր հոգե-
բանական տեսակէտով դիտելու նէլի միա-

միտ տպաւորութիւններն, — թերեւս իսկ
յանկարծական կերպով իմանալու մաս մը
այն խորհրդաւոր դէպքերէն որոց խառ-
նուած էր իր մանկութիւնը:

Հարրի, ինք, կը հարցնէր իւրովի, ոչ
առանց երկիւզի, թէ իր սիրած եւ մինչեւ
այն ատեն ճանչցած աղջիկէն տարբեր աղ-
ջիկ մը ի յայտ չպիտի՞ գար՝ արտաքին
աշխարհի իրաց այդ արագ ծանօթութեան
միջոցին:

Գալով ձէք Ռիանի, զուարթ էր որ-
պէս սարիկ մը որ իր թռիչքը կ'առ-
նու արեգական առաջին ճառագայթնե-
րուն հետ: Կը յուսար որ իր գիւրահա-
ղորդ զուարթութիւնը պիտի անցնէր իր
ուղեւորութեան քնկերներուն:

Նէլ մտախոհ եւ մտամփոփ էր:

Ճէյմս Սդար որոշած էր, ոչ առանց
պատճառի, որ մեկնումը տեղի պիտի ու-
նենար երեկոյին: Արդարեւ լաւագոյն էր
որ մատաղաստի աղջիկն անգգալի աստի-
ճանաւորմամբ անցնէր դիշերային խաւ-
րէն ցերեկուան պայծառութեան: Այդ
կերպով կէս դիշերէն մինչեւ կէս օր, պի-
տի անցնէր ստուերի եւ լոյսի այս յաջոր-
դական շրջաններէն, որոց իր աչքը պիտի
կրնար վարժուիլ տակաւ առ տակաւ:

Տունէն մեկնելու պահուն, նէլ բռնեց
Հարրիի ձեռքն եւ ըստե նմա.

—Հարրի, ուրեմն անհրաժեշտ է որ թողում մեր ածխահանքը, գէթ քանի մը օրուան համար:

—Այո, նէլ, պատասխանեց երիտասարդն, անհրաժեշտ է, թէ՛ քեզ եւ թէ՛ ինձ համար:

—Սակայն, Հարրի, զիս ձեր քով առնելն ի վեր, այնչափ երջանիկ եմ որչափ կարելի է ըլլալ: Դուռն ամէն բան սովորեցուցիր ինձ: Ասիկակ չի բաւեր: Ես վերը ի՞նչ պիտի ընեմ:

Հարրի նմա նայեցաւ առտնց պատասխանելու: Նէլի յայտնած մտածումները գրեթէ իր ալ մտածումներն էին:

—Աղջիկս, ըսաւ յայնժամ ձէյմս Սդար, կը հասկնամ վարանումդ, սակայն լաւ է որ մեզի հետ դաս: Քու սիրած անձինքըդ ընկերակից են քեզ, և քեզ պիտի վերադարձնեն ածխահանքին մէջ: Այնուհետեւ ազատ ես ածխահանքին մէջ ապրիլդ շարունակելու, ձերունի Սիմոնին, Մաճի և Հարրիի պէս: Տարակոյս չունիմ թէ այդպէս պիտի ընես, և կ'ուրախանամ: Սակայն, գէթ, պիտի կրնաս թողածդ բազդատել առածիդ հետ և ամենայն ազատութեամբ գործել: Եկուր ուրեմն:

—Եկուր, սիրելիդ իմ նէլ, ըսաւ Հարրի:

—Հարրի, պատրաստ եմ քեզ հետեւե-

լու, պատասխանեց նորատի աղջիկը:

Ժամ իննին, թիւնէլին վերջին կառախումբն կ'առնէր կը տանէր Նէլն և իր ընկերները կոմսութեան երեսը: Քսան վայրկեան յետոյ, կը հանէր զանոնք այն կայարանին մէջ ուր կուգար կը կցուէր Նոր-Ապրիլի բանող ճիւղը: Տըմպարդըն-Սդարըլինի երկաթուղին բաժնուած:

Գիշերն արդէն մթին էր: Հորիզոնէն ի գէնիթ, անօսը գորշներ տակաւին կ'ընթանային երկնից բարձրութեանց մէջ, ընդ քարշ տարուելով արեւմտեան հիւսիսային քամիէ մը որ մթնոլորտը կը զովացնէր: Յերեկը գեղեցիկ էր եղած: Գիշերն այնպէս պիտի լինէր:

Երբ Սդարըլինի հասան, Նէլ և իր ընկերները, կառավարէն իջնելով, անմիջապէս դուրս ելան կայարանէն:

Իրենց առջեւ, բարձրաբերձ ծառոց մէջտեղ, կը պարզուէր արահետ մը որ դէպ ի քորթհի ամուսնքը կը տանէր:

Դեռատի աղջկան կրած Փիլիքական առաջին տպաւորութիւնն եղան մաքուր օդը զոր իր թոքերն անյագօրէն ծծեցին:

—Ուժով շնչէ, Նէլ, ըսաւ ձէյմս Սդար, շնչէ այս օդն որ դաշտին բոլոր կենսապարգեւ բոյրերով տոգորուած է:

—Ի՞նչ են այս մեծ ծուխերն որք մեր

գլխուն վերեւ կ'ընթանան, հարցուց Նէլ:

—Ասոնք ամպեր են, պատասխանեց Հարրի, կիսովին խտացած գոլորշիներ են զորս հովը կը մղէ դէպ, արևելեան կողմ:

—Ս.Ն. քսաւ Նէլ, ի՞նչքան պիտի սիրէի յափշտակուել տարուել իրենց լռին յորձանքին մէջ:—Ի՞նչ են այս շողշողուն կէտերն որք կը փայլին ամպերուն ճեղք-ուած քներուն մէջէն:

—Ասոնք աստղերն են որոց վրայ խոսեցայ քեզ, Նէլ Ասոնք նոյնչափ արեգակներ են, թերևս մերինն նման աշխարհներու կեդրոններ:

Համաստեղութիւնք յայնժամ աւելի որոշապէս կը գծուէին երկնակամարին սեաւ կապոյտին վրայ, զոր հովն հետզհետէ կը մաքրէր:

Նէլ կը դիտէր այս հազարաւոր փայլ-փըլուն աստղերն որք կը նշուէին գլխուն վերեւ:

—Բայց, եթէ ասոնք արեգակներ են, աչքերս ի՞նչպէս կրնան դիմանալ անոնց լոյսին:

—Աղջիկս, պատասխանեց ձէյմս Սդար, ասոնք արեգակներ են, արդարև, սակայն անհուն հեռաւորութեան մէջ կը թաւալին: Ս.յս բիւրաւոր աստղերուն ամէնէն մօտն, որուն ճառագայթները կը հասնին

մեզ, Բնար համաստեղութեան սա աստղն է, Վէկա, զոր կը տեսնես ահա գրեթէ ճիշդ գէնիթին վրայ, և տակաւին մեզնէ յիսուն հազար միլիաւ մղոն հեռի է: Իր լոյսն ուրեմն չկրնար մնտուել աչքերուդ: Սակայն մեր արեգակը վաղը պիտի ծագի երեսուն և ութ միլիոն մղոն հեռի, և ոչ մէկ մարդկային աչք կրնայ շեշտակի նայիլ նմա, որովհետև հնոցէ մը աւելի հրատապ է: Բայց եկուր, Նէլ, եկուր:

Սրահետին մէջ մտան: Ձէյմս Սդար նորատի աղջկան ձեռքէն բռնած էր: Հարրի անոր քովէն կը քայլէր: Ձէք Րիան կ'երթար կուգար պզտիկ շան մը պէս որ անհամբեր է իր տերանց դանդաղութեանէն:

Ճամբան ամայի էր: Նէլ կը դիտէր բարձրաբերձ ծառոց ուրուազիծը զորս հովը կ'երերցնէր մութին մէջ: Իրեն աչքին, շարժուն հսկայներու պէս կ'երեւէին ադոնք: Քամիին խարշափիւնը բարձրուղէչ ոստերուն մէջ. օդին հանդարտութեան ատեն խոր լռութիւնն, այդ հորիզոնին գիծն որ աւելի որոշակի կը պարզուէր երբ ճամբան դաշտ մը կը կտրէր, ամէն բան կը համակէր զնա նոր զգացումներով և յինքեան կը ծնուցանէր անջնջելի տըպաւորութիւններ: Նախ հարցումներ ուղ-

զեւէ յետոյ, Նէլ լուռ կը մնար, և իր ընկերակիցք կը յարգէին նորա ըու-
թիւնը: Չէին ուզեր իրենց խօսքերով ազ-
դել նորաւի աղջկան դիւրազգած երեւ-
կայութեան վրայ: Նախամեծար կը հա-
մարէին թողուլ որ գաղափարներն ինքնին
ծնին իր մտքին մէջ:

Ժամն իբր տասնեւմէկուկէսին, հասած
էին Ծորթ-հի ծոցին հարաւային եզերքը:

Հոն կ'սպասէր մակոյցի մը, զոր վար-
ձած էր ձէյմն Սդար: Քանի մը ժամ-
ուան մէջ զինքն եւ ընկերները պիտի տա-
նէր էտիմպուրիկի նաւահանգիստը:

Նէլ տեսաւ փաղփուռն ջուրն որ վէտ ի
վէտ կը ծածանէր իր ոտից ներքեւ եւ
գոգցես գողգոջկոտ աստղերով էր ծած-
կուած:

— Լի՞ճ մ'է այս, հարցուց:

— Ոչ, պատասխանեց Հարրի, ընդար-
ձակ ծովածոց մըն է այս վազուռն ջրե-
րով, գետի մը բերանն է գրեթէ ծո-
վուն մէկ թեւն է: Այս ջուրէն ա՛ռ քիչ
մը ափիդ մէջ, Նէլ, եւ պիտի տեսնես
թէ Մայրօմի լին ջուրին պէս անուշ չէ:

Մանկամարդ աղջիկը ծռեցաւ, ձեռքը
ջուրին մէջ թաթղեց եւ չրթանցը տա-
րաւ:

— Այս ջուրն աղի՛ է, ըսաւ:

— Այո, պատասխանեց Հարրի, ծովը
մինչեւ հոս յառաջացած է, որովհետեւ
մակընթացութիւնը սաստիկ է: Մեր երկ-
րագէղին երեք չորրորդը ծածկուած է
այս աղի-ջրով որուն քանի մը կաթիլը
խմեցիր հիմա:

— Սակայն եթէ գետերուն ջուրը պար-
զապէս ծովուն ջուրն է որ ամպերէն հոն
կը թափի, ինչո՞ւ համար անուշ է, հար-
ցուց Նէլ:

— Որովհետեւ ջուրը իր աղը կը թօ-
թափէ գոլորշիանալով, պատասխանեց
ձէյմն Սդար: Ամպերը չոգիացմամբ կազ-
մուած են եւ անձրեւի ձեւին տակ այս
անուշ ջուրը կը զրկեն ի ծով:

— Հարրի՛, Հարրի՛, գոչեց յայնժամ՝
նորատի աղջիկը, ի՞նչ է այս կարմրորակ
լոյսը որ հորիզոնը կը բոցավառէ: Անտառ
մը կ'այրի:

Եւ Նէլ կէտ մը ցոյց կուտար, արեւ-
ւելեան կղմը գունաւորող ցած մառա-
խուղներուն մէջ:

— Ոչ, Նէլ, պատասխանեց Հարրի, նո-
րածագ լուսինն է:

— Այո, լուսինը, գոչեց ձէք Րիան,
արծաթեայ չքեղ ափսէ մը զոր երկնային
ոգիները կը պտտցնեն երկնակամարին մէջ
եւ որ աստեղային մանր դրամներ կը հա-
ւաքէ:

—Իրա՞ն, ձէք, պատասխանեց ճարտարապետը խնդալով, չէի գիտեր որ այսչափ յարմարութիւն ունիս յանդուգն բաղդատութեանց :

—Է՛հ, պարոն Սդար, իմ բաղդատութիւնս ճիշդ է, Կը տեսնէք ահա թէ աստղերը կ'անհետանան ցորչափ լուսինը կը յառաջանայ : Կ'ենթադրեմ ուրեմն թէ անոր մէջ կ'իյնան :

—Այսինքն թէ, ձէք, պատասխանեց ճարտարապետը, լուսինն է որ իր պայծառութեամբ կը մարէ վեցերորդ մեծութիւն ունեցող աստղերն, եւ աւասիկ ինչու համար անոնք կ'անհետին իր ճամբուն վրայ :

—Այս ամէնն ի՛նչքան գեղեցիկ է, կը կրկնէր Նէլ, որ ա՛լ նայուածքով միայն կ'ապրէր : Բայց ես կը կարծէի թէ լուսինը բոլորովին կ'ըր է :

—Կ'ըր է երբոր լեցուն է, պատասխանեց ձէյմս Սդար, այսինքն երբ արեգական հանդիպակաց կողմը կը գտնուի : Սակայն, այս գիշեր, լուսինն իր վերջին քառորդին մէջ կը մտնէ, եւ մեր ձէք բարեկամին արծաթեայ ափսէն պարզապէս սափրիչի աման մըն է :

—Ա՛հ, պարոն Սդար, գոչեց ձէք Րիան, ի՛նչ անարգ բաղդատութիւն : Ես ալ

կը պատրաստուէի սա յանկերգն հնջեցնել ի պատիւ լուսնին :

Ասող գիշերանց որ ուղղորդ մէջ
Կուգաս գգուել . . .

Բայց ո՛չ : Այժմ ա՛լ անհնար է : Ձեր սափրիչի ամանը ներշնչումս խզեց :

Սակայն լուսինն հետզհետէ կը բարձրանար հորիզոնին վրայ : Իր առջեւ կ'աներեւոյթանային վերջին գոլորչիները : Ձէնիթին վրայ եւ արեւմտեան կողմը, աստղերը տակաւին կը փայլալային սեւ տարածութեան մը վրայ զոր լուսնին պայծառութիւնն հետզհետէ պիտի դժգունէր : Նէլ անխօսուկ կը դիտէր այս սքանչելի տեսարանն, իր աչերն առանց յոգնութեան կը հանդուրժէին այս արծաթի տկար լուսոյն, այլ իր ձեռքը կը դողդղար Հարրիի ձեռաց մէջ եւ իրեն տեղ կը խօսէր :

—Մակոյկ նստինք, բարեկամներս, ըսաւ ձէյմս Սդար : Պէտք է որ Արթուր Սիդի զառիվերները մագլցած ըլլանք արեգական ծագումէն առաջ :

Մակոյկը կապուած էր եզերաց մէկ ցիցին : Նաւաստի մը կը պահէր զայն : Նէլ և իր ընկերներն անդ տեղաւորուեցան : Առագաստը պարզուեցաւ և ուռեցաւ արեւմտեան հիւսիսային քամիին տակ :

Ի՛նչ նոր տպաւորութիւն զգաց յայն-
 ժամ նորատի ազլիկը : Մերթ նաւարկած
 էր Նոր-Ապքըրֆոյլի լճերուն վրայ , սակայն
 թե՛ճակն , որքան մեղմիւ շարժէր Հարրիի
 ձեռաց մէջ , կը մատնէր միշտ նաւավարին
 ճիգն : Աստ , աւաջին անգամ լինելով ,
 Նէլ ինքզինքն յափշտակուած կ'զգար այն-
 պիտի սահումով մը որ օդապարկին արշա-
 ւին պէս հեշտազդեցիկ էր : Ծովածոցը
 լճի մը պէս միապաղպղ էր : Նէլ , դէպի
 ետեւ ընկողմանած , անձնատուր կը լինէր
 այս որորման : Մերթ ընդ մերթ , լուսնի
 ճառագայթ մը կը ցոլար մինչեւ Ֆորթ՛հի
 մակերեւոյթին վրայ , և մակոյկն յայնժամ
 գողցես կ'ընթանար արծաթեայ նշուլա-
 գեղ սփռոցի մը վրայէն : Մակոյկին եր-
 կայնքո՞յն , ալեծածան փոքր կոհակները
 թեթեւ շշուկ մը յառաջ կը բերէին : Հը-
 մայք մըն էր այս :

Ու Նէլի աչերն յակամայս գոցուեցան :
 Տեսակ մը վաղանցուկ թուլութիւն պա-
 տեց զինքը : Գլուխն հակեցաւ Հարրիի
 կուրծքին վրայ , և հանդարտ քնով մը
 քնացաւ :

Հարրի կ'ուզէր արթնցնել զնա , որ-
 պէս զի այս գեղազուարճ գիշերոյն ըս-
 քանչեւ լիքներէն բան մը չկորսնցնէ :

— Թող տուր որ քնանայ , տղաս , ըսաւ

նմա ճարտարապետը : Երկու ժամուան
 հանգիստ զինքը պիտի պատրաստեն ա-
 ւելի լու տանելու ցերեկուան տպաւո-
 րութիւնները :

Առաւօտեան ժամ երկուքին , մակոյկը
 կը հասնէր կրանդընի նաւամատոյցը : Նէլ
 արթնցաւ , երբ մակոյկը ցամաքին դպաւ :
 — Քնացա՞յ , հարցուց :

— Ոչ , ազլիկս , սլատասխանեց ձէյմս
 Սդար : Պարզապէս երազեցիր թէ կը քնա-
 նաս , ուրիշ ոչինչ :

Գիշերը շատ խաղաղ էր յայնժամ : Լու-
 սինը , հորիզոնէն ի գէնիթ կէս ճամբուն
 վրայ , իր ճառագայթները կը տարտղնէր
 երկնից ամէն կողմը :

Կրանդընի փոքր նաւահանգիստը կը
 պարունակէր լոկ երկու երեք ձկնորսի
 նաւակներ , որք մեղմիւ կը տարուբերէին
 ծովածոցին ծփանքներէն : Քամին կը հան-
 դարտէր ցորչափ առաւօտը կը մերձենար :
 Մթնոլորտը , մառախուղներէն գերծ , կը
 խոստանար օգոստոսի այն հեշտանոյշ օ-
 բերէ մին գորս ծովուն մերձաւորութիւնն
 ևս առաւել գեղեցիկ կը դարձնէ : Տեսակ
 մը տաք գոլորչի կը բարձրանար հորիզո-
 նէն , այլ այնչափ նուրբ , այնչափ թա-
 փանցիկ , որ արեգական առաջին ճառա-
 գայթներն ի մի վայրիկեան պիտի ըմպէին

զայնս : Նորատի աղջիկը կրցաւ ուրեմն
դիտել ծովուն այն տեսարանն երբ կը շը-
փոթուի երկինից ծայրագոյն շրջապատին
հետ : Իր աչաց հեռատեսութիւնն աւելի
եւս կը մեծնար այսու , այլ իր նայուածքը
չէր կրեր այն մասնաւոր տպաւորութիւնը
զոր կուտայ Ովկիանն , երբ լոյսը կը թուի
յանհունս երկարածգել անոր սահմանները :

Հարրի բռնեց Նէլի ձեռքը : Երկուքն
ալ հետևեցան ձէյմս Սդարի և ձէք Րիւ-
նի որք կը յառաջանային թափուր փողոց-
ներէն : Նէլի մտածման մէջ , մայրաքա-
ղաքին այս արուարձանը պարզապէս ըստ-
ուերամած տուներու համախմբում մըն էր
որ իրեն կը յիշեցնէր զԳոլ-Սիդի , սա մի-
ակ տարբերութեամբ որ ասոր կամարն
աւելի բարձր էր և փայլիլուն կէտերով
կը շողար : Թեթևոտն կ'ընթանար , և եր-
բէք Հարրի չէր հարկադրուեր իր քայլե-
րը մեղմել զնա չյոգնեցնելու երկիւղիւ :

— Յոգնած չե՞ս , հարցուց նմա , կէս
ժամ քալելէ յետոյ :

— Ոչ , պատասխանեց : Ոտքերս կար-
ծես թէ գետնին չեն դպչիր : Այս եր-
կինքն ա՛յնքան բարձր է մեր վերեւ որ
փափաք ունիմ թռչելու , որպէս թէ թե-
ւեր ունենայի :

— Բռնէ՛ զինքը , գոչեց ձէք Րիւն :

Մենք թող չենք տար մեր պզտիկ Նէլը :
Ես ալ այդ տպաւորութիւնը կ'ունենամ
երբ բաւական ատեն ամխահանքին մէջ
մնամ առանց դուրս ելնելու :

— Ասոր պատճառն այն է , ըսաւ ձէյմս
Սդար , որ մենք զմեզ աւելի ճզմուած
կ'զգանք Գոլ-Սիդին ծածկող թերթաքա-
րային կամարէն : Կը թուի յայնժամ թէ
երկնակամարը խորին անդունդ մ'է ուր
մարդ կը փորձուի սրանալ : Քու զգա-
ցածդ ալ այս չէ՞ , Նէլ :

— Այո , պարոն Սդար , պատասխանեց
դեռատի աղջիկը , ճիշդ այդ է : Տեսակ մը
գլխու պոյոյտ կ'զգամ :

— Կը վարժուիս , Նէլ , պատասխանեց
Հարրի : Կը վարժուիս արտաքին տշխար-
հի այս անհունութեան , եւ թերեւս յայն-
ժամ մոռնաս մեր խաւարին ամխահան-
քը :

— Երբե՛ք , Հարրի , պատասխանեց Նէլ :
Եւ ձեռքն աչերուն դրաւ , իրր թէ
ուզէր իր մտքին մէջ վերակազմել իր թո-
ղած բաներուն յիշատակը :

Քաղաքին անդորր տուներուն մէջտե-
ղէն , ձէյմս Սդար եւ ընկերներն անցան
Լէյթ-Ուոլքէն : Դարձան Գէլքըն-Հիլը ,
ուր կիսաստուերին մէջ տնկուած էին
Դիտարանն եւ Նէլքընի յիշատակարանը :

Հետեւեցան Րէճէնթ փողոցին, կամուրջէ մը անցան, եւ փոքր շրջանով մը հասան Գէնընկէյտի ծայրը:

Քաղաքին մէջ ոչ մէկ շարժում կար տակաւին: Գէնընկէյտ-ըրչի գոթական զանգակատունէն ժամը երկուք կը դարնէր:

Այդ տեղ, Նէլ կանգ առաւ:

— Ի՞նչ է այս շփոթ զանգուածն, հարցուց ցոյց տալով կղզիացեալ շէնք մը որ կը բարձրանար փոքր հրապարակի մը խորը:

— Այս զանգուածը, Նէլ, պատասխանեց ձէյմս Սդար, Սկովտիոյ նախկին վեհապետաց պալատն է, Հոլիրուտը, ուր կատարուած են այնքան մահաբոյր դէպքեր: Հոն, պատմագէտը կրնայ ի յուշածել շատ արքայական ստուերներ, սկըսեալ տարաբաղդ Մարի Սդիւարդէն մինչև Ֆրանսայի ծերունի թագաւորն Շարլ Ժ: Եւ սակայն, հակառակ այս չարաշուք յիշատակներուն, երբ ըլլայ ծագի, Նէլ շատ տխրամած երեւոյթ մը չպիտի գտնես այս բնակարանին: Իր ատամնաւոր չորս խոշոր աշտարակներով, Հոլիրուտ բաւական կը նմանի զբօսական դղեակի մը որ իր տիրոջ քմահաճոյքին համար պահած է իր աւատական հանգամանքը: Սակայն շա-

րունակենք ճամբանիս: Հունա, Հոլիրուտի նախկին արքայարանին շրջապատին մէջ, կը կանգնին Սոլզպրիի այն հոյակապ ժայռերն որոց կը տիրապետէ Արթուր-Սիդ: Հոն պիտի ելնենք: Անոր գագաթէն, Նէլ, աչերդ պիտի տեսնեն արեգական ծագումը ծովուն: Հորիզոնին վերեւէն:

Թագաւորին դարաստանը մտան: Յետոյ, աստիճանաբար բարձրանալով, անցան Վիգդորիա-Տրայվին — կառաց համար բոլորակ սքանչելի ճամբայ մը զոր վէպի քանի մը տողով ձեռք բերելուն վրայ կը պարծենայ Վալթըր Սդոդ:

Արթուր-Սիդ եօթն հարիւր յիսուն ոտք բարձրութեամբ բլրակ մըն է, որուն կըղզիացեալ կատարը կը տիրապետէ շրջակայ բարձրութեանց վրայ: Կէս ժամ չտեսած, դարձդարձիկ ճամբէ մը սրով վերելքը մեծապէս կը դիւրանար. ձէյմս Սդար եւ իր ընկերներն հասան այս սոխւծին գանկին վրայ որում կը նմանի Արթուր-Սիդ երբ արեւմտեան կողմէն դիտուի:

Հոն, չորսն ալ նստան, եւ ձէյմս Սդար որ միշտ հարուստ է սկովտացի մեծ վիպասանէն առնուած յիշատակութեամբք, շատացաւ ըսելով.

— Աւասիկ Վալթըր Սդոդ ի՛նչ գրած

է Էրեմիայի քանոնն ութերորդ գլխուն մէջ: «Եթէ պէտք ըլլար ընտրել տեղ մը ուսկից լաւագոյնս դիտուէր արեւուն ծագիլը եւ մարը մտնելը, ճիշդ այս տեղը կ'ընտրէի:» Սպասէ ուրեմն, Նէլ: Արեգակը քիչ ատենէն կ'երեւի, եւ, առաջին անգամ լինելով, պիտի կրնաս դիտել զայն իր բոլոր շքեղութեանը մէջ:

Նորա աղջկան նայուածքն յայնժամ դարձած էր արեւելեան կողմը: Հարրի, նորա մօտ կեցած, անձկալի ու շաղրութեամբ զինքը կը դիտէր: Արդեօք չափազանց ուժգնութեամբ պիտի ազդուէր արեգական առաջին ճառագայթներէն: Ամէնքն ալ լուռ մնացին: Ճէք Րիան իսկ լուեց:

Արդէն վարդերանգ ամոյն գիծ մը կ'երկարէր հորիզոնին վերեւ, թեթեւ մառախուղներու յատակի մը վրայ: Արթուր-Սիդի ստորոտը, գիշերային միահեծան հանդարտութեան մէջ, էտիմպուրկ, տակաւին թմրած, չփոթ իմն կ'երեւէր: Բանի մը լուսավառ կէտերու աստ անդ կը ծակէին մթութիւնը: Ի յետուստ, արեւմտեան կողմը, հորիզոնը, խօլական ուրազիծերով կտրուած, կը ստՀմանագծէր սեպացեալ բլուրներով լեցուն տարածութիւն մը, որոց իւրաքանչիւրին հրեղէն

ծայր մը պիտի տար ընդհուպ արեգական մէն մի ճառագայթը:

Սակայն, ծովուն շրջապատն հետզհետէ աւելի որոշ գոյներով կը նկարուէր արեւմտեան կողմը: Գոյներուն աստիճանաւորումը հետզհետէ կը յարդարուէր, արեգակնային պայծառութեան տուած կարգին համաձայն: Առաջին մառախուղներու կարմիրն աստիճանաւորմամբ մանիշակագոյնի կը հասնէր մինչեւ գէնիթն: Երկվայրկեանէ յերկվարկեան, գոյներն աւելի սաստիկ երանգներ կ'առնուէին. վարդագոյնը կարմիր կը լինէր, կարմիրն հրագոյն, Լոյսը կը ծագէր այն տեղ ուր տըւնջենային աղեղը կուգար կտրել ծովուն շրջանակը:

Այդ միջոցին, Նէլի նայուածքը բլուրին ստորէն կը պտըտէին մինչեւ քաղաքն, որուն թաղերը կ'սկսէին որոշուել խումբ առ խումբ: Բարձր յիշատակարաններ, քանի մը սրածայր զանգակատուններ կ'երևէին աստ անդ, և իրենց շրջագիծերն աւելի որոշակի կը տեսնուէին: Տեսակ մը լուսեղէն մոխիր կը տարածուէր, անջրպետին մէջ: Վերջապէս, առաջին ճառագայթ մը հանդիպեցաւ նորատի աղջկան աչքին: Այն կանաչ ճառագայթն էր ասի, որ, առաւօտ երեկոյ, ծովէն կը ջղանայ, երբ հորիզոնը մաքուր է:

կէս վայրկեան վերջ, նէլ կ'սղողուէր
և ձեռքը կ'երկարէր դէպի կէտ մը որ կը
տիրապետէր նոր քաղաքին թաղերուն վը-
րայ:

—Կրահ կայ, ըսաւ:

—Ո՛չ, նէլ, պատասխանեց Հարրի,
կրակ չէ: Ոսկեղէն հուր մըն է զոր արե-
գակը կը դնէ Վալթըր Սգոդի յիշատա-
կարանին կատարը:

Եւ, արդարեւ, զանգատան ծայրն, որ
երկու հարիւր սռք բարձր էր, առաջնա-
կարգ հերոսի մը պէս կը շողար:

Լոյսը ծագած էր: Արեւը պոռթկաց:
Իր սկաւառակը տակաւին նամէտ կը թը-
ւէր, որպէս թէ իրօք ծովուն ջրերէն ե-
լած ըլլար: Նախ ճառագայթից բեկբեկ-
մամբ խոչորցած, հետզհետէ ամիոփուե-
ցաւ և բոլորակ ձեւն առաւ: Իր սլայ-
ծառութիւնն, որ ընդհուպ անտանելի ե-
ղաւ, երկնից մէջ վառող հնոցի մը բերնին
պայծառութիւնն էր:

Նէլ ստիպուեցաւ նոյն հետայն դոցել
աչերը: Մինչեւ իսկ հարկադրուեցաւ
մատները դնել իր բարակ կոպերուն վրայ
որք կծկուած էին:

Հարրի ուզեց որ դէպի հանդիպակաց
հորիզոնը դառնայ:

—Ո՛չ, Հարրի, ըսաւ: Պէտք է որ ա-

չերս վարժուին տեսնելու ինչ որ քու ա-
չերդ կրնան տեսնել:

Իր մատներուն մէջտեղէն, նէլ տա-
կաւին կը նշմարէր վարդագոյն լոյս մը որ
կ'սպիտականար ցորչափ արեգակը կը
բարձրանար հորիզոնին վերև: Իր նայուած-
քըն աստիճանաբար կը վարժուէր այսմ:
Յետոյ, կոպերը վեր առաւ, և աչերը
վերջապէս ողողուեցան ցերեկուան լոյսով:

Ջերմեռանդ աղջիկը ծունր դրաւ գո-
շելով:

—Աստուած իմ, ո՛րչափ գեղեցիկ է
քու աշխարհդ:

Նորատի աղջիկն աչերը խոնարհեցուց
յայնժամ եւ դիտեց: Իր ոտից տակ կը
պարզուէր էտիմպուրկի համայնապատկե-
րը,—նոր քաղաքին նոր եւ ուղղագիծ
թաղերը, հին քաղաքին տուներուն չիտթ
զանգուածն եւ փողոցներուն սլանդակ
ցանցը: Բարձրաբերձ շէնքեր կը տիրա-
պետէին այս ամբողջութեան վրայ, իր եր-
կաթակճեայ ապառաժին վրայ կանգուն
դղեակն եւ Գէլտըն-Հիլ, որ իր բոլորչի
կողին վրայ կը կրէ յունական յիշատակա-
րանի մը ժամանակակից աւերակները: Ծա-
ռազարդ սքանչելի ճամբայներ կը ձրգ-
ուէին մայրաքաղաքէն ի դաշտօրէս, Հիւ-
սիսային կողմը, Փորթհի ծովածոցը խո-

րապէս կը մխուէր ծովեզերաց մէջ, որուն վրայ կը բացուէր Լէյթի նաւահանգիստը: Աւելի վեր, կը տարածուէր Ֆայֆի կոմսութեան գեղայարմար ծովեզերքը: Պիրէոնի ճամբուն պէս ուղիղ ճամբայ մը ծովուն կը կցէր Հիւսիսի այդ Աթէնքը: Արեւմտեան կողմէ կ'երկարէին Նիւհէյվընի և Բորդօ-Պէլլոյի գեղեցիկ ափունքն, որոց աւազը դեղին կը ներկուէր մակընթացութեան առաջին կոհակներէն: Արծակ ծովուն վրայ, քանի մը խոշոր մակոյկներ կ'ողբէւորէին ծովախորշին ջուրերըն, և մէկ երկու շողեհաւք երկինքը կը ծածկէին սեւ ծուխի կոնով մը: Յետոյ, անկից անդին, կը պարզուէր անձայրածիր դաշտօրէից կանաչութիւնը:

Փոքր բլրակներ աստ անդ կուգեր կը կազմէին դաշտին մէջ: Հիւսիսային կողմը, Լոմոնտ-Հի լեռն, արեւմտեան կողմը՝ Պէն-Լոմոնտ և Պէն-Լէտի կը ցլլացնէին արեգական ճառագայթներն, որպէս թէ մըշտընջենական սառոյցներ ծածկէին անոնց կատարները:

Նէլ չէր կարող խօսիլ: Երթունքը տարտամ բառեր միայն կը մրմնջէին: Թեւերը կը սարսուային: Գլուխը կը դառնար: Վայրկեան մը, ուժապառ եղաւ: Այդ այնչափ մաքուր մթնոլորտին մէջ, այս

վսեմ տեսարանին առջեւ, զգաց որ կը տկարանար, եւ նուազեալ ինկաւ Հարրիի թեւերուն մէջ, որք պատրաստ էին զինքն ընդունելու:

Այդ դեռատի աղջիկն, ոյր կեանքը մինչեւ այն ատեն անցած էր երկրային զանգուածին ալուցը մէջ, վերջապէս տեսած էր ինչ որ գրեթէ համայն տիեզերքը կը կազմէ, ինչպէս յօրինած են զայն Արարիչն եւ մարդն: Իր նայուածքը, քաղաքին եւ դաշտօրից վրայ սաւառնելէ յետոյ, առաջին անգամ լինելով տարածուած էր ծովուն անհունութեան եւ երկնից անսահմանութեան վրայ:

ՊԼՈՒԾ ԺԷ.

ԼՈՄՈՆՏԻ ԼՃԷՆ ՔԵՏՐԱՅՆԻ ԼԻՃԸ

Հարրի, նէլը թեւերուն մէջ առած, ծէյմս Սդարի եւ ծէք Րիանի առջեւէն վոր իջաւ Արթուր Սիդի զառիվայրերէն: Քանի մը ժամուան հանդիստէ եւ Լամպրէդ'ս-Հօդ էլի մէջ առնուած նախաճաշ մը յետոյ, ուզեցին արչաւանքը լրացնել ընթու երկրին մէջ շրջագայութեամբ մը:

Նէլ իր ուժերը ձեռք ձգած էր: Իր աչերը կրնային յայնմհետէ խոշոր բաց-

ուիլ արեգական լոյսին, եւ թողերը լիա-
լիր ծծեւ այդ կազդուրիչ եւ առողջարար
օգը: Ծառերուն կանաչը, տունկերուն
այլազան երանգները, երկնից կապոյտն,
իր աչաց առջև պարզած էին բոլոր գոյները:

Ճէնըրը Րէյլուէյի կայարանէն կա-
ռախումք նստելով, նէլ եւ իր ընկերները
կլասիօ հասան: Հոն, Գլայտի վրայ նետ-
ուած վերջին կամրջին վրայէն, կրցան
սքանչանալ գետին նաւային հետաքրքրա-
կան շարժման վրայ: Յետոյ, գիշերն ան-
ցուցին ի Գըմրի՛գ Բոյըլ-Հօդէլ:

Հետեւեալ օրը, «էտիմպըրի էնտ կլաս-
իօ-Րէյլուէյի» կայարանէն, կառախում-
քը Տըմպարդընի եւ Պէլլոզի ճամբով արա-
գօրէն պիտի տանէր զիրենք Լոմոնտի
լճին հարաւային ծայրը:

— Բոպ Բուայրի եւ Ֆէրկուս Մաք
կրիկորի երկիրն է այն, գոչեց ձէյմս
Սդար, Վայթըր Սգողի այնչափ բանաս-
տեղծական կերպով հռչակած երկիրը:—
Գուն չե՞ս ճանչեր այն երկիրը, ձէք:

— Իր երգերէն կը ճանչեմ, պարոն
Սդար, պատասխանեց ձէք Րիան, և երբ
երկիր մը այնչափ լաւ երգուած է, սքան-
չելի՛ ըլլալու է:

— Արդարեւ սքանչելի է, գոչեց ճար-
տարապետն, և մեր սիրելի նէլը լաւա-

գոյն յիշատակ մը պիտի պահէ անկից:

— Ձեզի պէս առաջնորդ մը ունենալով
պարոն Սդար, պատասխանեց ձէք, կըր-
կին շահ պիտի ունենանք, որովհետեւ
երկրին պատմութիւնը պիտի պատմէք
մեզ երբ մենք զայն դիտենք:

— Այո, Հարրի, պատասխանեց ճար-
տարապետն, որչափ որ յիշողութիւնս նե-
րէ, սակայն պայմանաւ մը՝ այն է որ ձէք
օգնութեան պիտի հասնի ինձ, երբ պատ-
մելով յոգնիմ, պիտի երգէ՛:

— Ձեր հրաւերը կրկնելու պէտք չիկայ,
պատասխանեց ձէք Րիան՝ թրթռուն խազ
մը արձկելով:

Կլասիօէն ի Պէլլոզ երկաթուղով, ըՍ-
կովտիոյ առեւտրական ոստանին և Լոմոն-
տի հարաւային ծայրին մէջտեղ, հազիւ
քսան մղոն կայ:

Կառախումքն անցաւ Տըմպարդընէն,
արքայական աւան և գաւառագլուխ կոմ-
սութեան, որուն դղեակը, միշտ ամրաց-
եալ ըստ Միութեան դաշնագրին, նկա-
րագեղ կանգնած է երկաթակճեայ խոշոր
ժայռի մը երկու սեպացեալ կատարնե-
րուն մէջտեղ:

Տըմպարդըն կառուցուած է Գլայտի և
Լիվընի իրար միացած տեղը: Այս առթիւ,
ձէյմս Սդար քանի մը մասնաւոր գէպքեր

պատմեց Մարի Սդուարդի արկածալի պատմութենէն : Արդարեւ , այդ աւանէն էր որ մեկնեցաւ երթալու Ֆրանսուս Բ . ի հետ ամուսնանալու և Ֆրանսայի թագուհի լինելու համար : 1815 էն յետոյ , անգլիական նախարարութիւնն անդ որոշեց բանտարկել զՆաբոլէոն . սակայն Ս . Հեղինէ կղզւոյն ընտրութիւնը նախամեծար համարուեցաւ , և աւասիկ ինչու համար Անգլիայ կալանաւորը գնաց մեռնիլ Ատլանտիանի մէկ ժայռին վրայ , ի մեծ օգուտ իր առասպելային յիշատակին :

Քիչ ատենէն , կառախումբը կանգ առաւ ի Պէլլոզ , փայտեայ թումբի մը մօտ որ մինչեւ լճին մակերևոյթը կ'իջնէր :

Շոգենաւ մը , Սէնթէյր , կ'սպասէր լըճին վրայ պտըտող գրօսաշրջիկներուն : Նէլ և իր ընկերներն անդ նստան , իրենց տոմսերն առնել յետոյ ինվէրսնէյտի համար , որ Լոմոնտի լճին հիւսիսային ծայրը կը գտնուի :

Օրը կ'սկսէր գեղեցիկ արևով մը , բոլորովին զերծ այն բրիտանական մառախուղներէն որոցմով կը քօղարկուէ ընդհանրապէս : Այս երեսուն մլոնի ուղեւորութեան ատեն , գիւղանկարին ոչ մէկ մանրամասնութիւնը պիտի խուսափէր Սէնթէյրի ուղեւորներէն : Նէլ , յետասկող-

մը նստած ձէյմս Սդարի և Հարրիի մէջանել , իր ամէն զգայարանքներով կը ծըծէր այն հրաշալի բանաստեղծութիւնն որով այնքան առատապէս համակեալ է ըսկովտիական այս գեղեցիկ բնութիւնը :

Ձէք Րիան կ'երթար կուգար Սէնթէյրի կամուրջին վրայ , անդադար հարցափորձելով ճարտարապետն , որ սակայն պէտք չունէր հարցափորձուելու : Յորչափ Րոպ Րուայի այս երկիրը կը պարզուէր իր աչաց առջեւ , կը նկարագրէր զայն իբր խանդավառ սքանչացող :

Լոմոնտի լճին առաջին ջուրերուն մէջ , նախ երեւացին բազմաթիւ փոքրիկ կըղզիներ կամ կղզեակներ : Կարծես թէ դէս ու դէն ցանուած էին : Սէնթէյր կը քերէր անոնց սեպացեալ ափունքն , եւ կըղզիներուն մէջտեղ կ'երեւէին մերթ ամայի հովիտ մը , մերթ վայրի կիրճ մը , առապար ժայռերով ցցուեալ :

— Նէլ , ըսաւ ձէյմս Սդար , այս կըղզեակներուն իւրաքանչիւրն իր առասպելն ունի , եւ թերեւս իր երգը , ինչպէս այն լեռներն որք կը շրջապատեն լիճը : Առանց յաւակնութեան , կարելի է ըսել թէ այս երկրին պատմութիւնը գրուած է կղզիներու եւ լեռներու այս հսկայական նշանագրերով :

—Պարոն Սդար, ըստ Հարրի, Լոմոն-տի լճին այս մասը գիտէ՞ք ի՞նչ կը յիշեցնէ ինձ :

—Ի՞նչ կը յիշեցնէ, Հարրի :

—Օնդարիայի լճին հազար կղզիները զորս այնքան սքանչելի կերպով նկարագրած է Գուրբըր : Այս նմանութիւնը քու աչքիդ ալ զարկած ըլլալու է, սիրելիդ իմ Նէլ, որովհետեւ քանի մը ատեն առաջ կարդացի քեզ այս վէպը զոր իրաւամբ անուանած են ամերիկացի հեղինակին գլուխ գործոցը :

—Արդարեւ Հարրի, պատասխանեց նորատի աղջիկը, նոյն տեսարանն է այս, եւ Սիւֆէր այս կղզիներուն մէջտեղէն կը սահի, որպէս ձէսըրը Օ—Տուսի նաւն Օնտարիոյի լճին մէջ :

—Լա՛ւ, յարեց ճարտարապետն, ասիկայ կ'ապացուցանէ թէ երկու վայրերն ալ արժանի էին հաւասարապէս երգուելու երկու բանաստեղծներէն : Չեմ ճանչեր Օնտարիոյի այդ հալար կղզիները, Հարրի, բայց կը տարակուսիմ որ անոնց տեսարանը Լոմոնտի այս արշիպիլագոսին տեսարանէն այլազան լինի : Դիտեցէ՛ք այս գիւղանկարը : Աւասիկ Մըրրէյ կղզին, իւր Լէննոքսի հին ամրոցով, ուր բնակեցաւ Ալպանիի ծերունի դքսուհին յետ մահու իր հօրն,

ամուսնոյն, իր երկու որդւոց, որք Յակոբ Ա. ի հրամանաւ գլխատուեցան : Աւասիկ Գլար կղզին, Գրօ կղզին, Գորր կղզին, ոմանք ժեռուտ, վայրի, առանց բուսաւորութեան, այլք ցոյց տալով իրենց կանաչ եւ բոլորակ մակերեւոյթը : Աստ, կուենիներ եւ ցարասիներ : Անդ, դեղին եւ չորցած հաւամրգիներու դաշտեր : Արդարեւ, հաւատալս չի գար թէ Օնդարիոյի հազար կղզիներն այսչափ գեղեցիկ տեսարաններու պէսպիսութիւն մը ընծայեն :

—Ի՞նչպէս կը կոչուի այս փոքր նաւահանգիստն, հարցուց Նէլ որ լճին արեւելեան կողմը դարձած էր :

—Պալմահա նաւահանգիստն է, որ Հայլէնտներու բերանը կը կազմէ, պատասխանեց ձէյմն Սդար : Հոն կ'սկսին մեր Սկովտիոյ բարձր դաւառները : Սա տեսած աւերակներդ, Նէլ, կանանց հին վանքի մը աւերակներն են, եւ սա ցանուցիբ գերեզմանները կը պարունակեն զանազան անդամներ Մաք կրիկորներու ընտանիքէն, որուն անունը տակաւին հռչակաւոր է բոլոր երկրին մէջ :

—Հռչակաւոր այն արեամբ զոր այդ ընտանիքը թափած եւ թափել տուած է, դիտեց Հարրի :

— Իրաւունք ունիս, պատասխանեց ձէյմս Սդար, եւ պէտք է խոստովանիլ թէ ճակատամարտներու տուած հռչակը տակաւին ամէնէն մեծաբարբառն է: Այդ ընթացքին մէջ...

— Եւ երգերով կը յաւերժանան, յարեց ձէյք Րիան:

Եւ, ի հաստատութիւն իր խօսքին, քաջարի տղան հնչեցուց առաջինն տունն պատերազմական հնաւուրց երգի մը որ կը պատմէր Ալեքսանդր Մաք Կրիկորի շահատակութիւններն ընդդէմ Հընֆրի Գուլքուհուրի:

Նէլ մտիկ կ'ընէր, բայց այս կուիւններու պատմութիւններէն տխուր տպաւորութիւն մը միայն կ'ստանար: Ինչո՞ւ համար այդչափ ատեն թափել այդ դաշտերուն վրայ զորս մատաղատի աղջիկն անհուն կը գտնէր, հոն ուր ոչ մէկուն տեղ պիտի պակսէր:

Լճին ափունքն, որք երեք չորս հազար մղոն երկայնութիւն ունէին, Լիւսի փոքր նաւահանգստին մօտերը միմեանց կը մօտենային: Նէլ կրցաւ պահ մը դիտել վաղընջուց դղեկին հին աշտարակն: Յետոյ, Սինգլէյ հիւսիսային կողմն ուղղեց խելքը, եւ գրօսաչրջիկներուն աչքին երեւցաւ Պէն Լոմոնտը, որ իբր երեք հազար ոտք

կը բարձրանայ լճին մակերեւոյթէն:

— Ի՞նչ հիանալի լեռ, գոչեց Նէլ արդեօք իր կատարէն տեսարանն ո՛րչափ գեղեցիկ լինելու է:

— Այո, Նէլ, պատասխանեց ձէյմս Սդար: Տես այդ կատարն ի՞նչ վէտութեամբ կ'անջատի կաղնիներու, ցարասիներու, կուենիներու պուրակներէն որք կը զարդարեն լեռան ստորին գօտին: Ադկից, մեր վաղեմի Կալեդոնիոյ երկու երրորդը կը տեսնուի: Մաք Կրիկոր հոս կը բնակէր սովորաբար, լճին արեւելեան մասին վրայ: Ադկից ոչ հեռու, Յակորեանց եւ Հանովրեանց կուիւններն յաճախ արեամբ ներկած են այս աղետաւոր կիրճերը: Հոն, գեղեցիկ գիշերները, կը բարձրանայ այն աղօտ լուսինը զոր հնաւուրց պատմութիւնք «Մաք Ֆէրլանի լապտերը» կը կոչեն: Հոն, արձագանդները տակաւին կը կրկնեն Րոպ Րուայի եւ Մաք Կրիկոր Գանպէլի անունները:

Պէն Լոմոնտ, որ Կրամբեան լեռանց շղթային վերջին կատարն է, իրօք արժանի է սկովտիացի մեծ փիպասանէն հռչակուած լինելուն: Ինչպէս դիտել տուաւ ձէյմս Սդար, աւելի բարձր լեռներ կան, որոց կատարը ծածկուած է յաւերժական ձիւներով, սակայն աշխարհիս ոչ մէկ կող-

մըն աւելի բանաստեղծական լեռ մը կայ :
— Եւ , յարեց , երբ կը խորհիմ թէ այս
Պէն Լոմոնտան ամբողջովին կը վերաբերի
Մոնդրոզի դքսին : Ն՝ վսեմութիւնը լեռ
մը ունի , ինչպէս Լոնտոնի քաղաքենի մը՝
ածու իր պարտիզակին մէջ :

Այս միջոցին , Սնիշէյը կը հասնէր Թար-
պէթ գիւղը . լճին հանդիպակաց ամուռքին
վրայ , ուր հանեց Ինվըրէյրի գնացող ու-
ղեւորները : Այդ տեղէն , Պէն Լոմոնտ կ'ե-
րեւէր իր բովանդակ գեղեցիութեամբ :
Իր կողերն , որք հեղեղաաններու ընթաց-
քէն ճաթուտած էին , հալած արծաթի
պէս կը ցոլացնէին :

Յորչափ Սնիշէյը կը քերէր լեռան ըս-
տորտան , երկիրն հետզհետէ ապաւեր կը
լինէր : Հազիւ , դէս ու դէն , կ'ըզիացեալ
լեռներ , ի մէջ այլոց մէկ քանի հատ այն
ուռիններէն , որոց ուղեւորով երբեմն կը
կախէին ստորին վրձակի տէր մարդիկը :
— Կանեփը խնայելու համար , դիտել տուաւ
ձէյմս Սդար :

Լիճը սակայն երթալով կը նեղնար ,
դէպի հիւսիս երկարելով : Կողմնակի լեռ-
ներն աւելի սեղմիւ կ'ընդգրկէին զայն :
Շոգենաւը քերեց տակաւին մէկ քանի
կղզիներ և կղզեակներ , Ինվէրուկլաս ,
Հու , ուր կ'երեւէին վրատակներն ամբողջի

մը որ Մաք Ֆէրլաններուն կը պատկանէր :
Վերջապէս , երկու ամուռքը միացան , և
Սնիշէյը կանգ առաւ Ինվէրսլէյտի նաւա-
մատոյցը :

Հոն ր՝ մինչդեռ իրենց նախաճաշը կը
պատրաստուէր , Նէլ և իր ընկերները գը-
նացին այցելել , նաւամատոյցին մօտ , հե-
ղեղատ մը որ բաւական մեծ բարձրութե-
նէ կը թափէր լճին մէջ : Կարծես չթէ հոն
զետեղուած էր այն իբր զարդ , ի հաճոյս
զբօսաշրջիկներուն : Երբ որն կամուրջ մը
ձգուած էր խոովայոյց ջուրերուն վերեւ ,
հեղուկ փոշիի մը մէջտեղ : Այդ տեղէն ,
նայուածքը կ'ընդգրկէր Լոմոնտի մէկ մեծ
մասն , և Սնիշէյը ալ իբր կէտ մը կ'երե-
ւէր նորա մակերևոյթին վրայ :

Նախաճաշն աւարտելէ յետոյ , կը մնար
Քէդրոյնի լիճն երթալ : Փանի մը կառ-
քեր , Պրիաէլպանի ընտանեաց զինանշան-
ներով ,— այդ ընտանիքն որ երբեմն փայ-
տըն և ջուրը կ'ապահովէր փախտական
Բոպ Բուպին ,— ուղեւորներուն տրամադ-
րութեան ներքև էին և իրենց կ'ընծայէին
այն բոլոր հանգստաւէտութիւնն որ անդ-
լիական կառքերուն յատուկ է :

Հարրի Նէլը բազմեցուց կառքին յա-
ւաճակողմն , օրուան նորածեւութեան հա-
մաձայն : Իւր ընկերներն ևս ինք նորա

մօտ նստան : կարմիր նշանազգեստով շքեղ կառավար մը ձախ ձեռքին մէջ առաւ իր չորս ձիերուն երասաններն , եւ կառքն սկսաւ ելնել լեռան կողէն վեր , հեղեղատին ոլոր մոլոր ընթացքը քերելով :

Ուղին շատ առելի էր : Յորչափ կը բարձրանար , շրջակայ կատարներուն ձեւն ալ կը թուէր փոխուիլ : Լճին հանդիպակաց եզրին բոլոր լեռնաշղթայն եւ Արրոքուհարի կատարները վեհափառօրէն կը բարձրանային , տիրապետելով ինժեքակլասի հովտին վրայ : Չախակողմէն կ'երեւէր Պէն Լոմոնտը , ի հանդէս բերելով իր հարաւային կողին զառիվայրը :

Լոմոնտի լճին եւ Քէարայնի լճին մէջտեղ գտնուող երկիրը վայրի երեւոյթ մը ունէր : Հովիտը կ'սկսէր անձուկ կիրճերով որք Սպըրֆոյլի գաւառին կը յանգէին : Այս անուը ցաւագին կերպով նորատի աղջկան յիշեցուց այն արհաւիրալի անդունդներն , որոց խորն անցած էր իր մանկութիւնը : Ուստի ծէյմն Սդար փութաց զնա զուարթացնել իր պատմութիւններով :

Մնաց որ , երկիրն յարմար էր այս բանին : Արդի լճակին եզերքին վրայ է որ տեղի ունեցած են Րոպ Րուայի կենաց գլխաւոր դէպքերը : Հոն կը կանգնէին

կրաքարային ժանտատեսիլ ժայռեր , գայլախաղներով խառն , զորս ժամանակն և մթնոլորտը շաղախի պէս կարծրացուցած էին : Որջերու նմանող ողորմելի խրճիթներ կ'երևէին կիսափուլ գոմերու մէջտեղ : Կարելի չէր ըսել թէ մարդկային էակները՝ բնակեալ էին թէ վայրի գազանները : Բանի մը տղեկներ , որոց մագերն արդէն գունատած էին կլիմային խստութենէն , զարմացկոտ մեծ աշուըներով կը դիտէին կառքերուն անցնիլը :

— Այս երկիրը մասնաւորապէս կարելի է Րոպ Րուայի երկիրն անուանել : Հոս է որ Նիքոլ Նարվի պատուական գիւղապետըն , արժանի դաւակ իր սարկաւազ հօրը , բռնուեցաւ Լէննոքսի կոմսին զինուորներէն ձիչդ այս տեղն է որ կախուած մնաց իր անդրավարտիքին յետոյքէն , որ բարեբաղդաբար սկովտիական լաւ կտաւէ մը շինուած էր , եւ ոչ թէ Ֆրանսայի այն բարակ կտաւներէն : Փորթհի աղբւրներուն մօտ , որք Պէն-Լոմոնտի հեղեղատներէն կ'աճին , կը տեսնուի գեռ այն ծանծաղ տեղը ուսից դիւցազնն անցաւ՝ ճողոպրելու համար Մոնդրօզի դքսին զինուորներէն : Ա՛հ , եթէ գիտնար մեր ածխահանքին խաւարամած ապաւէնները , կրնար անդ զերծ մնալ ա-

մէն հետազոտութիւններէ : Կը տեսնէք , բարեկամներս , կարելի չէ քայլ մը առնուլ այս հրաշալի երկրին մէջ առանց հանդիպելու անցելոյն այս յիշատակներուն որոցմէ ներշնչուած է վալթըր ըՍգոդ , երբ սքանչելի տողերով արձանագրած է Մաք Կրիկորներուն կոչն ի պատերազմ :

—Շատ լաւ կը զուրցէք , պարոն ըՍգար , պատասխանեց ձէք Ռիան , սակայն եթէ իրաւ է որ Նիքոլ Եարվի կախուած մնաց իր անդրավարտիքին յետոյքէն , ի՞նչ կը լինի մեր առածը . «Շատ վարպետ» ըլլալու է այն որ կարենայ Սկովտիացւոյ մը անդրավարտիքն առնուլ :

—Իրաւ որ , ձէք , իրաւունք ունիս , պատասխանեց ձէյմս Սգար խնդալով , եւ ասիկա պարզապէս կ'ապացուցանէ թէ այդ օրը մեր գիւղապետն իր նախնեաց պէս հազուած չէր :

—Սխալեր էր , պարոն Սգար :

—Ես ալ այդպէս կը կարծեմ , ձէք :

Կառքն , հեղեղատին առապար եղերքն ի վեր բարձրանալէ յետոյ , իջաւ ծառազուրկ եւ անջրդի հովտի մը մէջ , որ ոսին հաւամրդիներով միայն ծածկուած էր : Տեղ տեղ , քարի կոյտեր կը բարձրանային բլլլարձեւ :

—Ասոնք +էյը կը կոչուին , ըսաւ ձէյմս Սգար : Ատենօք ամէն անցորդ պարտաւոր էր քար մը նետել հոն , այդ գերեզմաններուն տակ ննջող գիւցագնը պատուելու համար : Սգլից ելած է սա կաէլեան առածը : «Վա՛յ անոր որ +էյըի մը առջեւէն կ'անցնի առանց վերջին փրկութեան քարը նետելու հոն» : Եթէ որդիները պահած լինէին իրենց հարց հաւատքն , այս քարերու կոյտերն այժմ բլլլուրներ պիտի լինէին : Իրօք , այս երկրին մէջ , ամէն բան կը նպաստէ զարգացնելու այն բնական բանաստեղծութիւնն որ ընդածին է լեռնականաց սրտին մէջ : Բոլոր լեռնոտ երկիրներուն մէջ ալ այսպէս է : Երեւակայութիւնն անդ կը բորբոքի այս հրաշալիքներէն , եւ եթէ Յոյները դաշտային երկիր մը բնակէին , երբեք հնարած չպիտի ըլլային նախնի դիցարանութիւնը :

Այս եւ ուրիշ շատ խօսքերու ժամանակ , կառքը կը խորասուզէր անձուկ հովտի մը մէջ , որ շատ յարմար պիտի ըլլար Մէկ Մէրիլլայդի ընտանի ոգիներուն շահատակութեանց : Արքէդի լճակը ձախ կողմ թողուեցաւ , եւ զառիվայր ձամբայ մը ներկայացաւ որ կը տանէր Սգրոնաքլադարի պանդոկը , Բէդբայնի լճին ափանց վրայ :

Հոն, փոքր թու մրի մը առջեւ, կը տատանէր պզտիկ շոգենաւ մը, որ բնականաբար կը կրէր Րոպ-Րոպ անունը: Ուղեւորք անդ մտան անմիջապէս. շոգենաւը մեկնելու կը պատրաստուէր:

Քէդրայնի լիճը տասն մըոն երկայնութիւն ունի, երկու մըոն լայնութեամբ: Լճափանց առաջին ըլրակները դեռ մեծափայելուչ տեսք մը ունին:

—Աւասիկ ուրեմն այն լիճը, գոչեց ձէյմս Սդար, զոր արդարացի կերպով նմանցուցած են երկայն օձաձուկի մը: Կը հաւաստեն թէ երբեք չսառի: Չեմ գիտեր, սակայն պէտք չէ մոռնալ թէ թատերավայրն եղած է Լճի արեւմտակողմէն: Վստահ եմ որ, եթէ մեր ձէք Րիան բարեկամը չորս աչքով դիտէր, տակաւին պիտի տեսնէր անոր մակերեւոյթին վրայ սահիւն գեղանին էլէնս-Տուկլասի թեթեւ ստուերին:

—Անշուշտ, պարոն Սդար, պատասխանեց ձէք Րիան, և ինչո՞ւ չպիտի տեսնէի: Ինչո՞ւ համար այդ սիրուն կինը տեսանելի չպիտի ըլլար Քէդրայնի լճին ջուրերուն վրայ, ինչպէս են ամխահանքին ոգիները Մալգոլմի լճին ջուրերուն վրայ:

Այդ պահուն, հովուական տիկի մը պայծառ նուագը լսելի եղաւ Րոպ-Րոպի յիտասկողմէն:

Հոն, ազգային տարազով Հայէնտըր մը կը նուագէր իր հովուական տիկն որ երեք բամբ ունէր, որոց ամէնէն խոշորը ու կը հնչէր, երկրորդը «է», և ամէնէն փոքրը՝ խոշորին օդով: Գալով սրնգին, որ ութ ծակ ունէր, «սո ճախուր կամ» մը կուտար, որուն ֆան բնական էր:

Հայէնտըրին նուագը պարզ երգ մըն էր, անուշ և մանկական: Կարծես թէ այս ազգային մեղեդիներն ոչ ոք է յօրինած, այլ թէ բնական խառնուրդ մըն են գեփիււրին շունչին, ջրերու մրմունջին, տերեւոց սօսաւիւնին: Յանկերգին ձեն, որ կանոնաւոր անջրպետներով կը կրկնուէր, նորօրինակ էր: Նուագը կը բաղկանար երկու ժամանակով երեք չափէ, և երեք ժամանակով մէկ չափէ, որ տկար ժամանակին վրայ կ'աւարտէր: Հակառակ հնաւուրց երգերուն, ճախուրով էր, և կարելի էր գրել զայն հետեւեալ կերպով, այն թուագիր լեզուով որ կուտայ ոչ թէ խազերն, այլ ձայներուն անջրպետները.

$$\begin{array}{c} \overline{5} \quad | \quad \overline{1 \cdot 2} \quad | \quad \overline{3525} \quad | \quad \overline{1 \cdot 765} \quad | \quad \overline{22 \cdot 22} \\ \hline \overline{5} \quad | \quad \overline{1 \cdot 2} \quad | \quad \overline{3525} \quad | \quad \overline{1 \cdot 765} \quad | \quad \overline{11 \cdot 11} \end{array}$$

Յայնժամ եթէ երջանիկ մարդ մը կար,
այն ալ ձեք Րիանն էր: Ինք գիտէր ըՍ-
կովտիոյ լիճերուն այդ երգն: Ուստի,
մինչդեռ Հայլէնաըըը կ'ընկերակցէր իրեն
իր հովուական տիկով, իր բարձրահնչիւն
ձայնով երգեց օրհներգ մը, որ հնոյն կա-
լեդոնիոյ բանաստեղծական առասպելնե-
րուն նուիրեալ է:

Գեղեցիկ լիճք ալեխաղաղ,
Պահեցէք դուք յաւիտեան
Աւանդավէպքն այն սիրաշաղ,
Գեղեցիկ լիճք ըսկովտեան:

Ձեր ափանց մօտ գեռ նշմարի
Հետքն ողբացեալ այն դիւցադանց,
Այն քաջ արանց՝ զոր Վալթըրի
Քնարն երգած է յերգ գերազանց:
Ահա՛ բերդն ուր վըհուկ կանայք
Պատրաստէին ճաշ փանաքի:
Աստ ցախապատ լայն դաշտորայք
Ուր Ֆինկալի շըջի ոտի:

Ամէն գիշեր այստեղ թնդան
Գիւուկներու խօլ խաղքն ու պար,
Գեմքն երեւի—աստ ի մըթան—
Մաքրակրօնից՝ սաստկատիպար՝
Եւ ժոյռերու մեջ վայրենի՝
Տեսնելու՝ աչք մեր են սովոր
Վափէլէյն որ առ ձեզ տանի
Բզ Ֆըլորայն իւր Մաք Ալվոր:

Լըճին պարիկն անտարակոյս
Ձիահեծան յածի անդ լուռ,
Եւ հեռի չէ՛ Տիանա կոյս
Բոպ-Բուայի փողին ի լուր:
Միթէ լըսուած չէ՞ն հոն եւ հոս
Մարասհրուէր երգերն ու ժգին
Որով ցունց տար արին Ֆերկոս
Հայլէնաներու արձագանգին:

Ս'ըքան որ ալ—դերի՛ բաղդի—
Հեռանամք մեք, լիճն'ը սիրուն,
Ծործորք ու ժայռք, դուք միշտ պիտի
Ներկայ լինիք մեր աչերուն:
Վաղակորոյս տեսիլդ աղ-որ,
Ձե՞ս կարող ետ դառնալ շիտալ՝...:
Կալեդօնիա՛յդ իմ ալեւոր,
Առ քե՛զ մեր սերն եւ յիշատակ:

Գեղեցիկ լիճք ալեխաղաղ,
Պահեցէք դուք յաւիտեան
Աւանդավէպքն այն սիրաշաղ,
Գեղեցիկ լիճք ըսկովտեան: (1)

Երեկոյեան ժամ երեքն էր: Քէդրայնի
Ըին արևմտեան ափունքը կ'երևէին Պէն
Անի եւ Պէն Վէնիւի կրկնակ շրջանակին
մէջ: Արդէն, կէս մղոն հեռի, կը տես-
նուէր այն անձուկ աւազանն որուն խորը
Բոպ-Բուայ ցամաք պիտի հանէր իր Գէլլէն-

(1) Սկովտական երգին այն գեղեցիկ թարգմա-
նութիւնը կը պարտինք Աղեքսանդր Էֆէնտի փա-
նոսեանի հաճոյակատարութեան: (Ծ. Թ.)

տըրի ճամբով Սղըրլինի գնացող ուղեւորները :

Նէլ ուժասպառ եղած էր իր մտքին յարատեւ ձգտումէն : Միակ բառ մը կ'ելնէր շրթունքէն, Աստուած իմ, Աստուած իմ, ամէն անգամ որ սքանչացման նոր նիւթ մը կը ներկայանար իր աչտոյ : Քանի մը ժամուան հանգիստ պէտք էր իրեն, եթէ ոչ ուրիշ բանի գէթ իր մտքին մէջ մշտատեւ կերպով հաստատելու համար այնքան սքանչելեաց յիշատակը :

Այդ միջոցին, Հարրի նորա ձեռքը բռնած էր : Սրտայուզութեամբ նայեցաւ նորատի աղջկան և ըսաւ նմա .

—Նէլ, սիրելիդ իմ Նէլ, ընդհուպ պիտի վերադառնանք մեր խաւարամած բրնակարանը : Հառաչանօք չպիտի յիշես այն ամէն բաները զորս տեսար այս արծակ օդին մէջ :

—Ոչ, Հարրի, պատասխանեց նորատի աղջիկը : Պիտի յիշեմ, բայց երջանկութեամբ պիտի վերադառնամ քեզ հետ մեր սիրեցեալ ածխահանքը :

—Նէլ, հարցուց Հարրի ձայնով մը որուն յուզումն ի զուր կը ջանար ծածկել, կ'ուզե՞ս որ սրբազան կապ մը միացնէ զմեզ Աստուծոյ և մարդկան առջեւ : կ'ուզե՞ս կինս լինիլ :

— կ'ուզեմ, Հարրի, պատասխանեց Նէլ՝ իր վճիտ աչերով նայելով նմա, կ'ուզեմ, եթէ կը կարծես որ կրնամ բաւել կենացդ . . .

Նէլ աւարտած չէր իր խօսքն, որուն մէջ կը բովանդակուէր Հարրիի բոլոր ապագայն, երբ անբացատրելի երեւոյթ մը յառաջ եկաւ :

Բոյ-Բոյ, թէեւ եզերքէն դեռ կէս մղոն հեռի էր, յանկարծական ընդհարում մը կը կրէր : Իր յատակը լճին յատակին բաղխած էր, եւ իր մեքենայն, հակառակ իր բոլոր ճգանց, չկրցաւ անկից ազատել զայն :

Եւ եթէ այս արկածն յառաջ եկած էր, պտոճառն այն էր որ, իր արեւմտեան մասին մէջ, Քէդրայնի լիճը գրեթէ յանկարծ պարզուած էր, որպէս թէ անհուն ծերպ մը բացուած լինէր իր յատակին ներքեւ : Քանի մը երկվայրկեանի մէջ, լիճը չորցած էր, ինչպէս ծովեզերք մը գիշերահաւասարի մեծ տեղատուութեան մը ատեն : Գրեթէ իր բոլոր պարունակութիւնը թափած էր հողին ալուցը մէջ :

— Բարեկամք, գոչեց ձէյմս Սղար, իբր թէ երեւոյթին պտոճառն յանկարծ յայտնուած լինէր իր մտքին, Աստուած պահէ նոր-Ապրիլոյը :

ՎԵՐՋԻՆ ՍՊՍՈՆՆԱԼԻԻՒՄ ՄԸ

Այդ օրը, Նոր-Ապրիլի մէջ, աշխատութիւնը կը կատարուէին կանոնաւորապէս: Հեռուէն կը լսուէր պայթուցիկ փամփուշտներու դղորդն, որք կը փլցնէին ածխարեր երակը: Հոս, բրջի եւ քարուրագի հտրուածներն էին որք վար կ'առնուին զետնածուխն. հոն, ծակիչ գործիներու ճռինչն, որոց սայրը կը ծակէր աւազաքարի կամ թերթաքարի խււերը: Խոռոչային խուլ աղմուկ մը կը տիրէր: Մեքենայներուն ծծած օդը կը խուսափէր օդածգութեան ներքնուղիներէն: Փայտեայ դռներն յանկարծակի կը գոցուէին այս ուժգին մղմանց ազդեցութեամբ: Ստորին փապուղիներուն մէջ, մեքենայներով շարժող վակոնիկներու կառախումբերը կ'անցնէին ժամուան մէջ տանեւհինգ մղոն արագութեամբ, եւ ինքնաշարժ զանգակները կ'ազդարարէին գործաւորաց՝ ապաւէններուն մէջ կծկտիւ վանդակները կ'եղնէին կ'իջնէին անդուլ անդադար, հողին երեսը զետեղուած մեքենայներու հզօր անիւներէն քաշուելով: Հրավառ սկաւառակները սաստկօրէն կը լուսաւորէին Գոլ-Սիդին:

Շահագործումն յառաջ կը տարուէր ուրեմն մեծ գործունէութեամբ: Երակը մաս առ մաս կը պարպուէր վակոնիկներուն մէջ, որք կուգային հարիւրներով թափուիլ սակաւիներուն մէջ, արտահանման հօրերուն խորը: Մինչդեռ հանքահանաց մէկ մասը կը հանգչէր գիշերային աշխատութիւններէն յետոյ, ցերեկուան գործաւորք կ'աշխատէին առանց ժամ մը կորսնցնելու:

Սիմոն Ֆորա եւ Մաճ, իրենց ճաշն աւարտելէ յետոյ, նստած էին տանը բակին մէջ: Ծերունի գործավարն իր սովորական հանգիստը կ'առնուր: Ֆորանայի ընտիր ծխախոտով խճողուած իր ծխափայտը կը քաշէր: Երբ երկու ամուսինները խօսէին, իրենց խօսակցութեան նիւթն էին նէլ, իրենց որդին, ձէյմս, հողին երեսը կատարուած այդ ուղեւորութիւնը: Ո՛ր էին, ի՞նչ կ'ընէին այդ ժամուն: Ի՞նչպէս, առանց անխաճանքէն բաժնուած լինելու ցաւն զգալու, կրնային այսչափ երկար առեւն դուրսը մնալ:

Այդ պահուն, տարապայման սաստկութեամբ դղորդուն մը լսուեցաւ յանձկարծ: Կարծես թէ ահագին ջրվէժ մը կը թափէր անխաճանքին մէջ:

Սիմոն Ֆորա եւ Մաճ ոտք ելած էին ընդստ:

Գրեթէ նոյն հետայն, Մալգոմի լճին ջուրերն ուռեցան: Թաւալուն խոշոր կոհակ մը արշաւեց եղերքին վրայ և եկաւ փշրուիլ տանը պատին դէմ:

Միւնոյն ժամանակ, աղաղակներ կը բարձրանային ամէն կողմէ: Գոլ-Սիդիի մէջ, որ այս յանկարծական ողողման ըստառնալեաց ներքեւ կը գտնուէր:

Բնակիչներն ապաւէն կը փնտռէին մինչեւ իսկ լճին եզերքը գտնուող թերթաքարային բարձր ժայռերուն վրայ:

Սարսափը ծայրագոյն աստիճանի հասած էր: Արդէն հանքահաններու քանի մը ընտանիքներ, խուճապեալ խելայեղ, կը խոյանային դէպ ի թիւնէլը՝ բարձրագոյն յարկերն ելնելու համար: Կարելի էր վախնալ որ ծովը չխուժէր ածխահանքին մէջ, որուն ներքնուղիները կը խորասուզէին մինչեւ Հիւսիսային ջրանցին ներքեւ: Խոռոչն, որչափ ալ ընդարձակ լինէր, բոլորովին կրնար լեցուիլ այդու: Նոր-Ապրըֆոյլի բնակիչներէն ոչ ոք պիտի ճողպրէր մահուընէ:

Բայց, այն պահուն ուր առաջին փախըստականք թիւնէլին բերանը կը հասնին, իրենքզիրենք գտան Սիմոն Ֆորտի դէմ, որ անմիջապէս մեկնած էր տունէն:

—Կեցէ՛ք, կեցէ՛ք բարեկամներս պո-

ռաց ծերունի գործավարը: Եթէ մեր քաղաքն ողողուէր, ջուրը ձեզնէ արագ պիտի վազէր և ոչ ոք պիտի ճողպրէր: Բայց ջուրերը չեն ածիր: Ա՛լ վտանգ չիկայ:

—Հապա բարի աշխատութեանց պարագոյ ընկերները, գոչեցին քանի մը հանքահաններ:

—Անոնց համար վախնալիք բան մը չկայ, պատասխանեց Սիմոն Ֆորտ: Շահագործումը տեղի կ'ունենայ լճին յատակէն մէկ յարկ վեր:

Իրողութիւնն իրարունք պիտի տար ծերունի գործավարին: Ջուրին արշաւանքն յանկարծական կերպով տեղի ունեցած էր. բայց, ընդարձակ ածխահանքին ստորին յարկին մէջ տարածուելով, ուրիշ ազդեցութիւն չէր ունեցած բայց եթէ քանի մը ոտք բարձրացնել Մալգոմի լճին մակերեւոյթը: Գոլ-Սիդի ուրեմն վրտանգի ենթարկուած չէ, և կարելի էր յուսալ թէ ողողումն, ածխահանքին ամէնէն ցած խորութեանց մէջ թափելով, ոչ մէկ զոհ պիտի պատճառէր:

Գալով այդ ողողման, Սիմոն Ֆորտ եւ իր ընկերները չէին կրնար ըսել թէ ներքին աւազանի մը զեղո՞ւմն էր զանգուածին ծերպերուն մէջէն, թէ հողին մէկ գետն իր փլած յատակէն խուժած էր

մինչեւ հանքին վերջին յարկերը: Ամէնքն ալ կը կարծէին նաև թէ պարզ արկած մըն էր այդ, ինչպէս երբեմն կը պատահի ածխահանքերուն մէջ:

Բայց, նոյն իրիկունն իսկ, ամէն բան պարզուեցաւ: Կոմսու թեան լրագիրները կը հրատարակէին պատմութիւնն այն արտակարգ երեւոյթին, որուն թատերավայր եղած էր Քէդրայնի լիճը:

Նէլ, Հարրի, ձէյմս Սդար և ձէք Րիան, որք աճապարանօք տուն դարձած էին, կը հաստատէին այս լուրերն, և մեծ գոհունակութեամբ կ'իմանային թէ Նոր-Սպըրֆոյլի մէջ նիւթական փասաներէ աւելի կորուստ չկար:

Այսպէս ուրեմն, Քէդրայնի լճին յատակն յանկարծ փլած էր: Իր ջուրերը լայն ձեղքուածքէ մը խուժած էին մինչեւ ածխահանքին մէջ: Ակովտիացի վիսպասանին սիրական լճին մէջ, Աճին Տիկնոջ սիրուն օտքերը թրջելու ջափ իսկ ջուր մնացած չէր,—գէթ իր հարաւային մասին մէջ, քանի մը արտավար տարածութեամբ լճակի վերածուած:

Ի՛նչ հռչակ հանեց այս տարօրինակ դէպքը: Անշուշտ առաջին անգամն էր որ լիճ մը քանի մը վայրկեանի մէջ կը պարպուէր հողին ալուցը մէջ: Այժմ կը մնար

միայն աւրել զայն Անգլիոյ քարտէսներէն, մինչեւ որ նորէն լեցնէին զայն,—ընդհանուր հանգանակութեամբ,— նախապէս ձեղքուածքը գոցելէ յետոյ: Վալթըր Սգոդ յուսահատութենէն պիտի մեռնէր,—եթէ տակաւին կենդանի լինէր:

Արկածը դիւրին էր մերժել: Արդարև, ածխահանքին խոռոչին եւ լճին յատակին մէջտեղ, երկրորդական գետիններու յարկը բարակ խաւ մըն էր, զանդուածին յատուկ երկրաբանական տրամադրութեան մը պատճառաւ:

Բայց եթէ այս վլուզումը բնական պատճառի մը արդիւնք կը թուէր, ձէյմս Սդար, Սիմոն և Հարրի Փորտ հարցուցին ինքնին թէ պէտք չէ՞ր չարակամութեան վերագրել զայն: Կասկածները վերըստին ծնած էին իրենց մտաց մէջ աւելի ուժգնութեամբ: Չարագործ ոգին վերըստի՞ն պիտի սկսէր ուրեմն իր ձեռնարկութիւններն ընդդէմ ածխահանքին չահագործողներուն:

Քանի մը օր յետոյ, ձէյմս Սդար տանը մէջ այս մասին կը խօսակցէր ծերունի գործավարին եւ նորա որդւոյն հետ:

—Սիմոն, ըսաւ, ըստ իս, թէ եւ իրողութիւնն ինքնին կը մեկնուի, սա նախադացումն ունիմ թէ, այն պատահար-

ներու դաստիարակէն է որոց պատճառը կը փնտռենք տակաւին :

—Ես ալ ձեզ պէս կը մտածեմ, պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորտ, բայց, եթէ ինձ կը հաւատաք, դուրսը բան մը չըսենք եւ մեր խուզարկութիւնն անձամբ կատարենք :

—Ա՛հ, գոչեց ճարտարագետը, ես առաջուց գիտեմ արդիւնքը :

—Ի՞նչ պիտի ըլլայ :

—Պիտի գտնենք չարագործութեան սպառնացները, սակայն ո՛չ չարագործը :

—Սակայն գոյութիւն ունինա, պատասխանեց Սիմոն Ֆորտ : Ո՛ւր կը պահուի : Միակ մարդ մը, որչափ ալ չար ըլլայ, կրնա՞յ ի գլուխ հանել լիճ մը փլցնելու չափ դժոխային դաղափար մը : Իրաւ որ, ես ալ վերջ ի վերջոյ ձէք Բիանի պէս պիտի հաւատամ թէ ամխառնաբին մէկ ոգին է որ մեզի դէմ նեղացած է իր բռնակարանն արշաւած լինելուս համար :

Աւելորդ է ըսել թէ նէլ կարելի եղածին չափ դուրս թողուած էր այս խորհուրդներէն :

Իր վարմունքը սակայն ցոյց կուտար թէ ինք ալ մասնակից էր իր հայրագրին ընտանեաց մտահոգութեանց : Իր տխրամած դէմքը զինքն յուզող ներքին պայքարներուն նշանը կը կրէր :

Ինչ որ ալ ըլլար, որոշուեցաւ որ ձէյմս Սդար, Սիմոն եւ Հարրի Ֆորտ պիտի երթային փլուզման տեղը եւ պիտի ջանային հասկնալ անոր պատճառները : Ոչ ումեք բան մը խօսեցան իրենց ծրագրին վրայ : Անոնց համար որք չէին գիտեր այս իրողութեանց ամբողջութիւնը, ձէյմս Սդարի եւ իր բարեկամաց կարծիքը բսլրորովին անընդունելի պիտի թուէր :

Քանի մը օր յետոյ, երեքն ալ, մակոյիլի մը մէջ նստած զոր կը վարէր Հարրի, եկան քննել բնական մոյթերն որք կը բռնէին զանգուածին այն մասն որուն մէջ փորուած էր Քէդրայնի լճին յատակը :

Այս քննութիւնն իրաւունք տուաւ իրենց : Մոյթերը փլուզուած էին պայթուցիկ փամփուշտներով : Սեցած հետքերը տակաւին տեսանելի էին :

Փմբեթին կամարներուն մէկ մասին այս անկումը կանխամտածուած, յետոյ ի գործ դրուած էր մարդու ձեռամբ :

—Տարակոյս չկայ որ այսպէս է, ըսաւ ձէյմս Սդար : Եւ ո՞վ գիտէ թէ ի՞նչ պիտի պատահէր, եթէ, փոխանակ այս փոքր լճին, փլուզումն անցը բանար ծովու մը ջրերուն :

—Ս.յո՛, գոչեց ձերունի դործավարն հպարտութեան զգացմամբ, ծով մը միայն

կրնար խղճեւ մեր Ապրիլիոյը : Բայց , նորէն կ'ըսեմ , ո եւ է էակ ի՞նչ շահ կրնայ ունենալ մեր շահագործման քայքայումէն :

—Անհասկանալի է այս , պատասխանեց ձէյմս Սդար : Գուեհիկ չարագործաց խումբ մը չէ այս , որք , իրենց ապաստանած որջէն , երկրին մէջ տարածուին գողնալու և կողոպտելու համար : Երեք տարիէ ի վեր , այդօրինակ չարագործութիւններ երևան կը հանէին իրենց գոյութիւնը : Գարձեալ , ինչպէս երբեմն մտածած եմ , մաքսախոյաններ կամ դրամանենդներ չեն , այս անհուն խոռոչներուն մէկ անձանթ անկեան մէջ պահելով իրենց մեղապարտ արհեստն , հետեւաբար շահ ունենալով զմեզ ասկից վտարելու : Մարդ կեղծ դըրամ շինած կամ ապրանք փախցուցած ատենը չպահեր զայնս : Սակայն ակներև թէ անողոք թշնամի մը երդուած է նոր-Ապրիլիոյի կորուստն , և թէ շահ մը կը մղէ զնա կարելի եղած բոլոր միջոցները փնտռելու՝ յագեցնելու համար մեր նկատմամբ ունեցած ատելութիւնը : Տարակոյս չկայ որ շատ տկար լինելով եւ չկրնալով բացայայտ կերպիւ գործել , մութին մէջ կը պատրաստէ իր թակարդները , սակայն այս գործին մէջ ցոյց տուած հանձարեղութիւնը

սոսկալի էակ մը կ'ընէ զինքը : Բարեկամք , մեր ամէնէս աւելի գիտէ մեր բնակարանին գաղտնիքները , որովհետեւ այսքան երկար ատենէ ի վեր կը ճողոպրի մեր հետազոտութիւններէն : Այս արհեստէն մարդ մըն է , ճարտարներու ճարտարագոյնը , Սիմոն : Իր ըրած գործերն այս ըսածիս ակներեւ ապացոյցն են : Տեսնենք , անձնական թշնամի մը չէ՞ք ունեցած որուն վրայ կարենաք բեռնաւորել ձեր կասկածները : Լաւ փնտռեցէք : Ատելութեան մենամուլութիւններ կան զորս ժամանակը չչիջուցաներ : Չեր կենաց առաջին ժամանակները մտքերնուդ առջեւ բերէք : Այս ամէն պատահարները ցուրտ եւ համբերատար յիմարութեան մը գործն են , եւ հարկ է որ այս կէտին վրայ պըրպըտէք ձեր ամենէն հեռուոր յիշատակները :

Սիմոն Ծորտ չպատասխանեց : Կը տեսնուէր թէ պարկեշտ գործավարը , բերանը բանալէ առաջ , սրբութեամբ կը հարցաքննէր իր բոլոր անցեալը :

Ի վերջոյ գլուխը վեր առնելով .

—Ո՛չ , ըսաւ , առաջի Աստուծոյ , ո՛չ Մաճ , ո՛չ ես , մարդու մը չարիք ըրած ենք : Չեմ կարծեր որ թշնամի մը ունեցած ըլլանք , ո՛չ մէկ հատ :

—Ահ, գոչեց ճարտարապետն, եթէ նէլ ուզէ՛ր վերջապէս խօսիլ:

—Պարոն Սդար, և դուք, հայր, պատասխանեց Հարրի, կը պաղատիմ, մեզ պահենք մեր խուզարկութեան գաղտնիքը: Մի՛ հարցափորձէք իմ խեղճ նէլ: Կ'զգամ որ արդէն անձկութեան մէջ է և կը տանջուի: Ապահով եմ թէ իր սիրտը դժուարաւ կը պահէ գաղտնիք մը որ զինքը կը խեղդէ: Եթէ կը լռէ, պատճառն այն է որ կա՛մ բան մը չունի ըսելիք, կա՛մ պարտ չհամարիր խօսիլ: Չէք կրնար տարակուսիլ մեզ ամենուս նկատմամբ ունեցած սիրոյն վրայ: Վերջէն, եթէ ինձ իմացնէ ինչ որ մինչեւ այժմ գաղտնի կը պահէ, կը հաղորդեմ ձեզ:

—Թող այդպէս ըլլայ, Հարրի, պատասխանեց ճարտարապետն, և սակայն, եթէ նէլ իրօք բան մը գիտէ, այդ լռութիւնն անբացատրելի է:

Եւ ըստ որում Հարրի կը պատրաստուէր բողբոքել:

—Հանդարտ եղիր, յարեց ճարտարապետը, բան մը չպիտի ըսենք անոր որ կինդ պիտի ըլլայ:

—Եւ առանց այլ եւս սպասելու, եթէ կ'ուզէք, հայր իմ:

—Ձաւակս, ըսաւ Սիմոն Ֆորտ, ամիսէ

մը, օրն օրին, ամուսնութիւնդ տեղի պիտի ունենայ:—Նէլի հօր տեղ պիտի բռնէք, պարոն ձէյմս, այնպէս չէ՞:

—Վստահ եղիք վրաս, պատասխանեց ճարտարապետը:

Ձէյմս Սդար եւ իր երկու ընկերները տուն վերադարձան: Իրենց խուզարկութեան մասին բան մը չըսին, եւ ածխահանքին բոլոր մարդոց համար, կամարներուն փլուզումը լսկ արկածի մը հետեւանք նկատուեցաւ: Սկովտիոյ մէջ լիճ մը պակաս կար միայն:

Նէլ տակաւ առ տակաւ վերսկսած էր իր սովորական գրազումները: Կոմսութեան երեսին վրայ կատարուած այդ այցելութենէն պահած էր անջնջելի յիշատակներ՝ զորս Հարրի յօգուտ ի կիր կ'արկանէր նորա դաստիարակութեան համար: Սակայն արտաքին կենաց այդ գիտակցութիւնն ոչ մէկ ցաւ թողած էր ի ներքս ի նա: Որպէս այդ ուղեւորութենէն առաջ, կը սիրէր խաւարամած բնակարանն ռւր ամուսնանալէն յետոյ ևս պիտի շարունակէր բնակիլ, մանուկ և մատաղատի ազջիկ եղած ատեն անդ պարելէ յետոյ:

Սակայն Հարրի Ֆորտի և Նէլի ամուսնութիւնը մեծ աղմուկ յարուցած էր Նոր-Ալլըրֆոյլի մէջ: Խնդակցութիւնները տե-

ղացին ծերո նի գործավարին տան մէջ :
Ճէք Բլան ամէնէն առաջ բերաւ իր շնոր-
հաւորութիւններն, Հեռուէն կը տեսնէին
նաև որ իր լաւագոյն երգերը կը փորձէր
ամուսնութեան հանդիսին համար, որում
պիտի մասնակցէր Գոլ-Սիլիի բոլոր ժողո-
վուրդը :

Սակայն պատահեցաւ որ, ասուսնու-
թեան նախընթաց ամսուն մէջ, Նոր-Ա-
պրիլի օրը այնչափ վնաս կրեց որչափ շէր
կրած մինչեւ այն ատեն : Կարծես նէլի և
Հորոյն ամուսնութեան մերձեցումն աղէտ
աղէտի վրայ կը պատճառէր : Արկածները
կը պատահէին մասնաւորապէս ներսի աշ-
խատութեանց մէջ, առանց ճշմարիտ
պատճառն յայտնի լինելու :

Այսպէս հրդեհ մը լափեց ստորին
ներքնուղւոյ մը տախտակամածն, եւ գը-
տան հրձիգին գործածած կանթեղը :
Հարրի եւ իր ընկերներն իրենց կեանքը
վտանգի ենթարկելով կասեցուցին հըր-
դեհն, որ կ'սպառնար ոչնչացնել ամխա-
հանքն, եւ առ այս յաջողեցան՝ գործածե-
լով միայն հրչէջ գործիներ որք բնածխա-
կան թթուով տոգորեալ ջրով լցուած էին
եւ որոցմէ առատօրէն կար ամխահանքին
մէջ :

Ուրիշ անգամ, հորի մը տախտակները

խզուելով փլուզում մը յառաջ եկաւ, եւ
Ճէյմս Սդար հաստատեց թէ այս տախ-
տակները նախապէս սղոցուած էին : Հար-
րի, որ այդ կէտին վրայ կը հսկէր աշ-
խատութեանց, փլատակներուն տակ մնաց
եւ հրաչքով միայն ազատեցաւ մահուընէ :

Քանի մը ժամ յետոյ, մեքենական զօ-
րութեամբ շարժող թրամուէյին վրայ,
վաղորդներու կառախումբն որոց վրայ
նստած էր Հարրի, խոչընդոտի մը զար-
նուեցաւ եւ տապալեցաւ : Անմիջապէս
տեսան թէ գերան մը դրուած էր ճամ-
բուն մէջտեղ :

Ի մի բան, այս իրողութիւններն այն-
չափ բազմապատկեցան, որ տեսակ մը
սարսափ տիրեց հանքահանաց մէջ : Իրենց
պետերուն ներկայութիւնը միայն աշխա-
տութեանց վրայ կը պահէր զիրենք :

— Բայց այս չարագործներն ամբողջ
խո՞ւմբ մըն են ուրեմն, կը կրկնէր Սիմոն
Փորտ, եւ մէկ հատը չե՞նք կրնար ձեռք
անցունել :

Սուզարկութիւնները վերսկսան : Կոմ-
սութեան ստիկանութիւնը գիշեր ցերեկ
լրտեսեց, սակայն չկրցաւ բան մը երեւան
հանել : Ճէյմս Սդար արգիլեց Հարրիի,
զոր մասնաւորապէս իրեն կէտ նպատակի
ընտրած էր այս չարակամութիւնը, միայ-

նակ երթալ աշխատութեանց կեդրոնէն անդին :

Նոյն տնօրինութիւնը ձեռք առին Նէլի նկատմամբ, ուսկից սակայն կը պահէին, Հարրիի թախանձանաց վրայ, այս բոլոր եղեռնական փորձերն որք կրնային իրեն յիշեցնել անցելոյն յիշատակը: Սիմոն Ֆորտ եւ Մաճ գիշեր ցերեկ կը պահէին զայն տեսակ մը խստութեամբ կամ մանաւանդ վայրագ հոգածութեամբ: Խեղճ աղջիկը կը հասկնար զայս, սակայն բերնէն ո՛չ մէկ դիտողութիւն, ո՛չ մէկ տըրտունջ դուրս ելաւ:

Արդեօք ինքնին կ'ըսէր թէ յօգուտ իրե՞ն էր որ այսպէս կը վարուէին: Այո, հաւանականաբար: Սակայն ինքն ալ այլոց վրայ հսկել կը թուէր, և յայնժամ միայն կը հանդարտէր երբ իր բոլոր սիրականներն հաւաքուած կը տեսնէր տան մէջ: Երեկոյին, երբ Հարրի տուն կը դառնար, նորատի աղջիկը չէր կրնար զսպել խօլ ուրախութեան շարժում մը, որ անհաշտելի էր իր սովորաբար զգուշաւոր բնաւորութեան հետ: Գիշերն անցնելէ յետոյ, ամէնէն առաջ ոտքի վրայ էր: Առաւօտուն նորէն կը մատնուէր իր անհանգստութեան, ներսի աշխատութեանց համար մեկնման ժամուն:

Հարրի կը փափաքէր որ իրենց ամուսնութիւնը կատարուէր լիննար, որպէս զի նորա սիրտը խաղաղի: Իրեն այնպէս կը թուէր թէ չարակամութիւնն, այս անդառնալի գործէն յետոյ անօգուտ լինելով, զինաթափ պիտի լինէր, և Նէլ այն ատեն միայն յապահովի պիտի լինէր երբ իրեն կինը լինէր: Ճէյմս Սդար և Սիմոն Ֆորտ ու Մաճալ մասնակից էին այս անհամբերութեան: Իւրաքանչիւրը կը համրէր օրերը:

Ճշմարտութիւնն այն էր որ իւրաքանչիւրը մահաբոյր նախազգացմամբք պաշարեալ էր: Այդ թաքթաբուր թշնամին, զոր չէին գիտեր ո՛ւր գտնել և ի՛նչպէս նուաճել, անշուշտ անտարբեր չէր Նէլի վերաբերեալ ամէն բաներո՞ւ մասին: Հարրիի և նորատի աղջկան ամուսնութեան այս հանդիսաւոր գործը կրնար ուրե՛մ նոր առիթ մը տալ իր ատելութեան մէկ նոր մեքենայութեան:

Առաւօտ մը, ամուսնութեան հանդիսին համար որոշեալ թուականէն ութ օր առաջ, Նէլ, անշուշտ չարաշուք նախազգացումէ մը մղեալ, յաջողած էր դուրս ելնել տունէն, որուն շրջակայքը կ'ուզէր դիտել:

Սեմին առջեւ հասած ատեն, անբացատրելի անձկութեան աղաղակ մը թըռաւ բերնէն:

Այս ազադակը թնդաց բոլոր բնակա-
կարանին մէջ, եւ ի մի վայրկեան նորատի
աղջկան քով բերաւ Մաճը, Սիմոնը եւ
Հարրին:

Նէշ մահու չափ դժգոյն էր, դէմքն
այլայլած, գիմագծերուն վրայ անբա-
ցատրելի արհաւիրք մը: Խօսելու անկա-
րող, իր նայուածքն յառած էր տան դրան
վրայ զոր նոր բացած էր: Իր կծկեալ
ձեռքն անդ ցոյց կուտար սա տողերն,
որք գիշերը գրուած էին եւ որոց տեսքը
կը սարսափեցնէր զինքը:

«Սիմոն Ծորտ, դուն ինձմէ՛ գողցար
«մեր վաղեմի ածխահանքերուն վերջին
«երակը: Քու զաւակդ Հարրի ինձմէ՛ գող-
«ցաւ նէլը: Վա՛յ ձեզ, վա՛յ ամէնուդ,
«վա՛յ Նոր-Ապըրֆոյի:»

«ՍԻԼՅԱՔՍ»

—Սիլֆա՛քս, գոչեցին միաբերան Սի-
մոն Ծորտ եւ Մաճ:

—Ո՞վ է այս մարդն, հարցուց Հարրի,
ոյր աչքը փոփոխակի հօրմէն կ'երթար
գէտի դեռատի աղջիկը:

—Սիլֆա՛քս, կը կրկնէր Նէլ յուսա-
հատութեամբ, Սիլֆա՛քս:

Եւ իր մարմինն համակ կը սարսուար՝
մրմռալով այդ բառը, մինչդեռ Մաճ, իր
գրկաց մէջ առնլով զինքը, գրեթէ բռնի
իր սենեակը տարաւ:

Ճէյմս Սդար վազած եկած էր: Կրկին
և կրկին անգամ կարդալէ յետոյ սպառ-
նալից պարբերութիւնը:

—Այս գրերը գծող ձեռքն, ըսաւ,
նոյն այն ձեռքն է որ ձերինին հակասա-
կան նամակը գրած էր ինձ, Սիմոն: Այս
մարդը Սիլֆաքս կը կոչուի: Ձեր խռո-
վութենէն կը տեսնեմ թէ կը ճանչէք
զինքը: Ո՞վ է այս Սիլֆաքսը:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԱՊԱՇԽԱՐՈՂԸ

Այս անունն ամբողջ յայտնութիւն մըն
էր եղած ծերունի գործավարին համար:

Տոչարդի գուբին վերջին «ապաշխարո-
ղին» անունն էր այս:

Յառաջագոյն, ապահովութեան կան-
թեղին գիւտէն առաջ, Սիմոն Ծորտ ճանչ-
ցած էր այս վայրագ մարդն, որ, մահն
աչքն առնլով, կ'երթար ամէն օր կրիզուի
մասնական պայթումներ յառաջ բերել:
Տեսած էր այդ տարօրինակ էակն, որ
հանքին մէջ կը թափառէր, միշտ հետն
ունենալով ահագին հարֆա՛կ մը, տեսակ
մը հրէշային բուիճակ, որ կ'օգնէր նորա
վտանգաւոր գործին՝ հրավառ պատրոյգ

մը տանելով հոն ուր Սիլֆաքսի ձեռքը չէր կրնար հասնիլ: Օր մը, այդ ծերունին անյայտացած էր, և իրեն հետ միասին, փոքր որբուհի մը, որ անխահանքին մէջ ծնած էր և որ ա՛լ ուրիշ ազգական չունէր բայց եթէ զինքն, իր մեծ-հօր հայրն: Այդ աղջիկն ակներեւաբար նէլն էր:

Տասնեւհինգ տարիէ ի վեր, երկուքն ալ ապրած էին ուրեմն գաղտնի անդունդի մը մէջ, մինչեւ այն օրն ուր նէլ ազատեցաւ Հարրիի ձեռամբ:

Ծերունի գործավարը, գթութեան եւ բարկութեան զգացման մը միանգամայն մատնուած, ճարտարապետին եւ զաւկին հաղորդեց ինչ որ այդ Սիլֆաքս անուան տեսքն ի յայտ ածած էր նմա:

Այս բանս կը լուսարանէր բոլոր կացութիւնը: Սիլֆաքս այն խորհրդաւոր էական էր որ վայրապար կը փնտռուէր Նոր-Ապրիլի խորութեանց մէջ:

—Այսպէս, զինքը ճանչցած էք, Սիմոն, հարցուց ճարտարապետը:

—Այո, իրօք, պատասխանեց գործավարը: Հորճակի՛ն մարդը: Այն ատեն արդէն բաւական տարիքոտ էր: Ինձմէ տասնեւհինգ քսան տարեկան մեծ ըլլալու էր: Տեսակ մը վայրենի, որ ոչ մէկուն հետ կը խօսէր, ո՛չ ջուրէն կը վախնար ո՛չ կրա-

կէն: Ախորժեւով ընտրած էր ապաշխարողի արհեստն, ուսկից շատեր կը խորշին: Այդ փտանգաւոր արհեստը խանգարած էր իր դաղափարները: Կ'ըսէին թէ չար էր, եւ թերեւս խենդ էր միայն: Իր ուժն հրաշալի էր: Ոչ ոք իրեն չափ կը ճանչնար անխահանքն, — ինձմէ զատ: Կ'ըսէին թէ բաւական դիւրակեաց վիճակ մը ունէր: Իրա՛ւ որ, ես կը կարծէի թէ շատ տարիներէ ի վեր մեռած էր նա:

—Բայց, ըսաւ, ձէյմս Սդար, ի՞նչ կ'իմանայ սա բառերով. «Դուն ինձմէ գողցար մեր վաղեմի անխահանքերուն վերջին երակը:»

—Ա՛հ, ըսեմ, պատասխանեց Սիմոն Ֆորտ: Արդէն երկար ատենէ ի վեր, Սիլֆաքս որուն ուղեղը միշտ խանգարեալ վիճակի մէջ էր ինչպէս ըսի ձեզ, կը պընդէր թէ իրաւունքներ ունի հին Ապրիլի փոյլի վրայ: Ուստի իր բնաւորութիւնն հետզհետէ վայրենի կը լինէր ցորչափ Տոչարդի գուրը— ի՛ր գուրը— կ'սպտուէր: Կարծես թէ բուն իսկ իր աղիքներն էին զորս բրջի մէն մի հարուած կը պատուէր կը քաշէր իր մարմնէն: Դուն յիշելու ես զայս, Մա՛ճ:

—Այո, Սիմոն, պատասխանեց ծերունի Սկովտուհին:

—Այս ամէն բաները միտքս կ'իյնան հիմակ, շարունակեց Սիմոն Ֆորտ, յորմէ հետէ Սիլֆաքսի անունը տեսայ այս դըրան վրայ. բայց, կը կրկնեմ, մեռած կը կարծէի զինքն եւ չէի կրնար երեւակայել թէ այն շարագործ էակն, զոր այնչափ փնտռեցինք, Տոչարդի գուբին նախկին ապաշխարողն ըլլար:

—Արդարեւ, ըսաւ ձէյմս Սդար, ամէն բան կը բացատրուի: Դիպուածը երեւան հանած է Սիլֆաքսի նոր երակին գոյութիւնը: Իր յիմարի եսամոլութեան մէջ, ուզած է անոր պաշտպան հանդիսանալ: Ածխահանքին մէջ ապրելով, գիշեր ցերեկ հոն շրջագայելով, վերահատուեղած է ձեր գաղտնեաց, Սիմոն, և իմացած թէ աճապարանօք զիս կը կանչէիք ձեր տունը: Աղկից, ձերինին հակասական նամակը. աղկից, իմ գալուստէս յետոյ, Հարրիի վրայ նետուած քարն եւ Եարօուի քանահորին սանդուղներուն քայքայումը. աղկից, նոր երակին պատին ծերպերուն խցումը. աղկից վերջապէս, մեր բանտարկութիւնը, յետոյ մեր ազատութիւնն, որ անշուշտ կատարուեցաւ շնորհիւ գթասէր Նէլի, յանգէտս և հակառակ Սիլֆաքսի:

—Դէպքերը պատմեցիք այնպէս ինչ-

պէս պատահած ըլլալու են, պարոն ձէյմս, պատասխանեց Սիմոն Ֆորտ: Ծերունի ապաշխարողն անշուշտ յիմար է հիմակ:

—Ատիկա աւելի լաւ է. ըսաւ Մաճ:

—Չեմ գիտեր, ըսաւ ձէյմս Սդար գլուխը թոթուելով, որովհետեւ իր յիմարութիւնն ահռելի յիմարութիւն մըն է: Ա՛հ, կը հասկնամ որ Նէլ սոսկմամբ միայն կը մտածէ անոր վրայ, և կը հասկընամ նաև որ չ'ուզեր մատնել իր պապը: Ի՛նչ տխուր տարիներ անցուցած ըլլալու է այս ծերունւոյն մաս:

—Շա՛տ տխուր, ըսաւ Սիմոն Ֆորտ, այդ վայրենւոյն և այդ հարֆանկին մէջ տեղ որ իրմ, ոչ նուազ վայրենի է: Այդ թռչունը մեռած ըլլալու չէ: Այս այն թռչունն է անշուշտ որ մեր կանթեղը մարեց, որ քիչ մնաց կտրէր չուանն ուսկից կախուած էին շարրի և Նէլ . . .

—Եւ կը հասկնամ, ըսաւ Մաճ, թէ իր թուան և մեր զուկին ամուսնութիւնը ծայրագոյն աստիճանի հասուցած ըլլայ Սիլֆաքսի սխն և կրկնապատկած անոր կատաղութիւնը:

—Նէլի ամուսնութիւնն այն մարդուն զուկին հետ զոր կ'ամբաստանէ իրմէ գոցած լինելուն համար: Ապրըֆոյլի վերջին երակն, անշուշտ սոստկացուցած ըլ-

լալու է իր գրգուռութիւնն . ըսաւ Սիմոն Ֆորտ :

—Սակայն պէտք է որ համակերպի այս ամուսնութեան , գոչեց Հարրի : Որչափ ալ օտար ըլլայ ընկերական կեանքին , վերջ ի վերջոյ պիտի խոստովանի ինքնին թէ Նէլի նոր կենցաղը լաւագոյն է այն կեանքէն զոր իրեն պատճառաւ կը վարէր անխափանքին անդունդներուն մէջ , վըստահ եմ , պարոն Սդար , որ եթէ կարենայինք ձեռք անցունել զնա , պիտի յաջողէինք խօսք հասկցնել նմա . . .

—Յիմարութիւնը խօսք չհասկնար , խեղճ Հարրիս , պատասխանեց ճարտարապետը : Լաւագոյն է անշուշտ ճանչնալ իր թշնամին , բայց ամէն բան չլիննար իր ո՛վ ըլլալը գիտնալով : Զգոյշ կենանք , բարեկամներս , եւ գործի սկսելու համար , Հարրի , պէտք է հարցափորձել Նէլը : Պէ՛տք է Պիտի հասկնայ թէ հիմակ ա՛լ պատճառ չունի լուռ մնալու : Նոյն իսկ ի շահ իր պապին , պէտք է որ խօսի : Իրեն եւ մեզ համար հաւասարապէս կարեւորութիւն ունի որ կարենանք ի գերեւ հանել նորա չարաչուք ծրագիրները :

—Չեմ տարակուսիր որ , պարոն Սդար , պատասխանեց Հարրի , Նէլ ինքնաբերաբար չգայ ձեր հարցմանց պատասխանե-

լու : Գիտէք հիմակ թէ գիտակցութեամբ , պարտականութեամբ է որ լռեց մինչեւ այժմ : Պարտականութեամբ , գիտակցութեամբ է որ պիտի խօսի երբ որ ուզէք : Մայրս լաւ ըրաւ իր սենեակը տանելով զինքը : Մեծ պէտք ունէր հանդարտելու , սակայն պիտի երթամ բերեմ զինքը . . .

—Աւելորդ է , Հարրի , ըսաւ հաստատ եւ պայծառ ձայնով մը նորատի աղջիկն , որ նոյն վայրկենին տանը մեծ սրահը կը մտնէր :

Նէլ շատ տժգոյն էր :

Իր աչերը կ'ըսէին թէ ո՛րչափ լացած էր . սակայն կը տեսնուէր թէ որոշած էր կատարել այն ձեռնարկը զոր իր ուղղամտութիւնը կը պատուիրէր իրեն :

—Նէ՛լ , գոչեց Հարրի , խոյանալով դէգի մանկահասակ աղջիկը :

—Հարրի , պատասխանեց Նէլ որ շարժումով մը կասեցուց իր խօսեցեալը , հայրըդ , մայրըդ եւ դուն պէտք է որ այսօր ամէն բան գիտնաք : Պէտք է որ դուք ալ վերահասու ըլլաք , պարոն Սդար , այն ամէն բաներուն որք կը վերաբերին այն աղջկան զոր որդեգրեցիք առանց ճանչնալու եւ զոր Հարրի , իր դժբաղդութեան համար , աւա՛ղ , ազատեց անդունդէն :

—Նէ՛լ, գոչեց Հարրի :

—Թող տուր Նէլը որ խօսի, ըսաւ ձէյմս Սդար, լռութիւն պատուիրելով Հարրի :

—Ես ծերունի Սիլֆաքսի թուն եմ, շարունակեց Նէլ: Մայր ճանչցած եմ, բայց միայն այն օրն յորում հոս մտայ, յարեց Մածի նայելով :

—Յրհնեա՛լ ըլլայ այդ օրն, աղջիկս, պատասխանեց պառաւ Սկովտուհին :

—Հայր ճանչցած եմ, բայց միայն այն օրն յորում տեսայ Սիմոն Գորտը, շարա-
յարեց Նէլ, եւ բարեկամ՝ այն օրն ուր Հարրիի ձեռքը ձեռքիս դպաւ : Մեծ հօրս հետ միայնակ ապրեցայ տասնեւհինգ տարի, ամխահանքին ամէնէն հեռաւոր անկիւններուն մէջ : Իրեն հետ ըսելը չափազանցութիւն է : Աւելի շիտակ է ըսել իրմով ապրեցայ, Հազիւ կը տեսնէի զինքը, Երբ հին Ապրիլոյէն անհետացաւ, ապաստանեցաւ այս խորութեանց մէջ զորս ինքը միայն կը ճանչէր : Յայնժամ բարի էր ինձ համար, թէն կը ստկայի իրմէ : Զիս կը սնուցանէր դուրսէն բերած ու տելիքներով, սակայն տարտամ կերպով կը յիշեմ թէ, նախ, իմ մանկութեանս տարիներուն մէջ, ինձ ստնասու ունեցայ այժ մը, որուն կորուստը մեծ ապէս տրի-

րեցուց զիս Մեծ հայրս զիս այնչափ թախ-
ծալից տեսներով, անոր տեղ դրաւ ուրիշ անասուն մը,—չուն մը, ըսաւ ինձ : Դրժ-
բազդաբար, այդ շունը զուարթ էր : Կը հաջէր : Մեծ հայրս չէր սիրեր զուար-
թութիւն : Կը սոսկար ազմուկէն : Լռու-
թիւն սովորեցած էր ինձ, եւ չէր կըր-
ցած սովորեցնել շանը : Խեղճ անասունը գրեթէ անմիջապէս անյայտ եղաւ : Մեծ հայրս իրեն ընկեր ունէր վայրենի թըռ-
չուն մը, հարֆանկ մը, որ նախ սարսափ ազդեց ինձ. բայց այդ թռչունն, հակա-
ռակ ինձ ներշնչած նողկանքին, այնչափ սէր մը կապեց ինձ որ վերջ ի վերջոյ ես ալ համակրեցայ իրեն : Այս կերպով ինձ աւելի լաւ կը հնազանդէր քան իր տիրո-
ջը, եւ այս բանս զիս անհանգիստ կ'ընէր իրեն համար : Մեծ հայրս նախանձօտ էր : Հարֆանկը եւ ես կարելի եղածին չափ կը պահուրտէինք, աւելի շատ ատեն մի-
ասին գտնուելու համար : Կը հասկնայինք թէ այսպէս պէտք էր . . . Սակայն շատ խօսեցայ իմ վրաս : Պէտք է ձեր վրայ խօսիլ . . .

—Ոչ, աղջիկս, պատասխանեց ձէյմս Սդար : Պատմէ իրողութիւններն այնպէս ինչպէս միտքդ կ'իյնան :

—Մեծ-հայրս, շարունակեց Նէլ, միշտ

գէշ աչքով դիտած էր ձեր դրացնութիւնն անխահանքին մէջ։ Սակայն տեղ չէր պակսեր։ Իր ապաստանները ձեզմէ հեռու, շատ հեռու կ'ընտրէր։ Միայն թէ անհաճոյ էր իրեն զգալ որ հոն էիք։ Երբ վերի մարդոց վրայ կը հարցափորձէի զինքը, դէմքը կը մթազնէր, պատասխան չէր տար և երկար ատեն համր կը մնար։ Սակայն իր բարկութիւնն այն ատեն պայթեցաւ երբ նշմարեց թէ ձեր հնաուրց բնակութեամբ չը շատանալով, կ'ուզէք ոտնձգութիւններ ընել իրենին վրայ։ Երբ դու՛մ ըրաւ որ եթէ յաջողէիք մտնել նոր անխահանքին մէջ որ մինչեւ այն ատեն իրեն միայն ծանօթ էր, պիտի կորնչէիք։ Հակառակ տարիքին, իր ոյժը տակաւին տարապայման է, և իր սպառնալիքները դող պատճառեցին ինձ ձեզ և իրեն համար։

—Շարունակէ, նէլ, ըսաւ Սիմոն Ֆորտ նորատի աղջկան որ պահ մը ընդհատած էր խօսքը, լաւագոյնս ամիսփելու համար իր յիշատակները։

—Ձեր առաջին փորձէն յետոյ, շարա-յարեց նէլ, երբ մեծ հայրս տեսաւ որ նոր-Ապրիլի ներքնուղւոյն մէջ մտաք, ծակը գոցեց և այսպէս հոն բանտարկեց զձեզ։ Ստուերի պէս կը ճանչէի զձեզ, տարտամ կերպով տեսած ըլլալով զձեզ

խաւարամած անխահանքին մէջ. սակայն չկրցայ հանդուրժել որ քրիստոնեայնէր անօթի մեռնէին այս խորութեանց մէջ, և յանկարծակի բռնուելու վտանգն աչքս առնլով, յաջողեցայ քանի մը օր քիչ մը հաց և ջուր հայթայթել ձեզ . . . կ'ուզէի դուրս առաջնորդել ձեզ, սակայն այնչափ դժուար էր խաբել մեծ հօրս հսկողութիւնը։ Պիտի մեռնէի՛ք։ Ճէք Րիան և իր ընկերներն հասան . . . Աստուած ուզեց որ այդ օրն իրենց հանդիպիմ, Մինչեւ ձեր քով առի բերի զիրենք, վերադարձին, մեծ-հայրս յանկարծ վրայ հասաւ։ Իր բարկութիւնն ինձ դէմ ահուելի եղաւ։ Կարծեցի թէ իր ձեռաց մէջ պիտի մեռնէի։ Անկից յետոյ, կեանքն անտանելի եղաւ ինձ համար։ Մեծ հօրս գաղափարները բոլորովին խանդարեցան։ Ինքզինքը խաւարի և կրակի թագաւոր կը յայտարարէր։ Երբ կ'իմանար ձեր բրիչներուն հարուածներն այս երակներուն վրայ զորս իբր իրենը կը նկատէր, կը կատողէր և մոլեգնարար կը ծեծէր զիս։ Ուզեցի փախչիլ։ Անհնար եղաւ, այնչափ իր մօտ կը պահէր զիս։ Վերջապէս, երեք ամիս առաջ, խելայեղութեան անբացատրելի տագնապի մը մէջ, զիս իջեցուց այն անդունդն ուր գտաք զիս, և անյայտ եղաւ,

ի զուր կանչելէ յետոյ ՀարՖանկն որ հաւատարմաբար քովս մնաց : Ո՞րչափ ատենէ ի վեր հոն էի , չեմ գիտեր : Սա միայն գիտեմ թէ կ'զգայի որ կը մեռնիմ , երբ դուն հասար , Հարրիդ իմ , և ազատեցիր զիս : Բայց կը տեսնես , ծերունի Սիլֆաքսին թողը չկրնար Հարրի Ծորտի կինը լինիլ , որովհետեւ քու կեանքդ , ձեր ամէնուդ կեանքը վտանգի կը մատնուի այսու :

—Նէ՛լ , գոչեց Հարրի :

—Ոչ , շարունակեց նորատի աղջիկն : Ես գոհողութիւն պիտի ընեմ : Զեր կորստեան առաջքն առնելու մէկ միջոց միայն կայ , այն է որ մեծ-հօրս քով վերադառնամ : Նա բոլոր Նոր-Ապլըրֆոյլի կ'սպառնայ . . . Ներելու անկարող հոգի մըն է նա , և ոչ ոք կրնայ գիտնալ թէ վրէժխնդրութեան սգին ի՛նչ ներշնչած է իրեն : Իմ պարտականութիւնս ակններեւ է : Արարածոց ամենէն թշուառականը պիտի ըլլայի եթէ վարանէի այդ պարտականութիւնս ի գործ դնելու : Մնաք բարո՞վ , շնորհակա՛լ եմ : Երջանկութիւնը ծանօթացուցիք ինձ այս աշխարհին մէջ : Ինչ որ ալ պատահի , խորհեցէք թէ իմ բոլոր սիրտս ձեր մէջ պիտի մնայ :

Այս խօսքերուն վրայ , Սիմոն Ծորտ ,

Մած , Հարրի վշտէն խելայեղ , ոտք ելած էին :

—Ի՛նչ , Նէլ , գոչեցին յուսահատութեամբ , կ'ուզես մեզմէ բաժնուի՛լ :

Ճէյմս Սդար իշխանութեամբ լի շարժումով մը մէկ կողմ քաշեց զիրենք , և ուղղակի Նէլի քով երթալով , նորա երկու ձեռները բռնեց :

—Լաւ , աղջիկս , ըստ , դուն ըսիր ինչ որ պարտէիր ըսել , սոկայն աւասիկ ինչ կը պատասխանենք քեզ : Թող չը պիտի տանք որ մեկնիս , եւ եթէ հարկ ըլլայ , բռնի պիտի պահենք զքեզ : Կը կարծես որ քու վեհանձն առաջարկդ ընդունելու վատութիւնը կրնանք ունենալ : Կ'ընդունիմ որ Սիլֆաքսի սպառնալիքներն երկիւզալի են : Բայց , վերջապէս , միակ մարդ մը ի՞նչ կրնայ ընել , և մեր զգուշութիւնները ձեռք պիտի առնունք : Սոկայն կըրնանս , նոյն խկ յօգուտ Սիլֆաքսի , տեղեկութիւն տալ մեզ իր սովորութեանց վրայ , ըսել մեզ թէ ո՞ւր կը բնակի : Մենք բան մը միայն կ'ուզենք ընել . վնասելու անկարող վիճակի մէջ դնել զինքն , և թերեւս ալ խելքը դըլուխը բերել :

—Անկարելին կ'ուզէք , պատասխանեց Նէլ : Մեծ հայրս ամենուրեք է և ոչ մէկ տեղ : Երբեք չեմ ձանջցած անոր սպա-

ւէնները : Երբեք քննողած չեմ տեսած
 զինքը : Երբ ապաւէն մը գտած էր , միայ-
 նակ կը թողուր զիս և անյայտ կ'ըլլար : Երբ
 այս որոշումը տուի , պարոն Սդար , գի-
 տէի թէ ի՛նչ կրնայիք պատասխանել ինձ :
 Հաւատացէ՛ք ինձ : Մէ՛կ միջոց միայն կայ
 հայրս զինաթափ ընելու , այն է յաջողիմ
 զինքը վերստին դտնելու : Ինք անտեսա-
 նելի է , բայց ամէն բան կը տեսնէ : Կը մտա-
 ծէ՞ք թէ ինչպէս երևան պիտի հանէր ձեր
 ամէնէն ծածուկ մտածումները , պարոն
 Սդարի գրուած նամակէն սկսեալ մինչեւ
 Հարրիի հետ ամուսնութեան ծրագիրն ,
 եթէ ամէն բան գիտնալու անբացատ-
 րելի կարողութիւնը չունենար : Մեծ հայ-
 րըս , որչափ կրնամ դատել , իր յիմարու-
 թեանը մէջ անգամ հզօր մտքի տէր մարդ
 մըն է : Ատենօք , մեծ բաներ կ'ըսէր ինձ :
 Ինձ սովրեցուց զԱստուած և մէկ բանի
 վրայ միայն խաբեց զիս , երբ հաւատացուց
 թէ բոլոր մարդիկ գէշ էին , երբ ուզեց ինձ
 ներշնչել իր ատելութիւնն ընդդէմ բո-
 վանդակ մարդկութեան : Երբ Հարրի այս
 տունը բերաւ զիս , կարծեցիք թէ տգէտ
 էի միայն : Ադկից աւելին էի : Սարսափա-
 հա՛ր էի : Ա՛հ , ներեցէք ինձ , բայց քանի
 մը օր կարծեցի թէ չարերու ձեռքն ին-
 կած եմ և կ'ուզէի փախչիլ ձեր քովէն :

Դուք էիք որ ճշմարտութիւնը պարզեցիք
 մտացս առջեւ , Մ'աճ , ո՛չ թէ ձեր խօս-
 քերով , այլ ձեր կենաց տեսարանով , երբ
 կը տեսնէի զձեզ սիրուած և յարգուած
 ձեր ամուսնէն և զաւակէն : Յետոյ , երբ
 տեսայ աշխատաւորներն , երջանիկ և բարի ,
 որք կը յարգէին պարոն Սդարն , որուն
 գերիները կարծեցի նախ զիրենք , երբ ա-
 ռաջին անգամ տեսայ Ապրիլֆոյլի բոլոր
 ժողովուրդը մատուռ գալ , ծուներ դնել
 անդ , աղօթել առ Աստուած և շնորհակալ
 լինիլ նորա անբաւ բարութեանց համար ,
 այն ատեն ըսի ինքնին «Մեծ հայրս խա-
 բե՛ր է զիս :» Բայց այսօր , ձեր ինձ սով-
 րեցուցածներէն լրսաւորուած , կը մը-
 տածեմ թէ ինքզի՛նքն ալ խաբեր է :
 Ուրեմն վերստին պիտի երթամ այն
 գաղտնի ճամբայներն ուրկից ատենօք
 կ'ուզեկցէի իրեն : Անշուշտ կը հսկէ իմ
 վրայ : Պիտի կոչեմ զինքը . . . պիտի իմա-
 նայ , և , ո՞վ գիտէ թէ , իր քով վերա-
 դառնալով , ճշմարտութեան չպիտի համո-
 զեմ զինքը :

Ամէնքն ալ թող տուած էին որ նորա-
 տի աղջկը խօսի : Ամէն ոք կ'զգար թէ
 լաւ էր իրեն համար սիրտը բանալ իր
 բարեկամաց , այն պահուն ուր , իր վե-
 հանձն պատրանքին մէջ , կը կարծէր որ

աւ յաւէտ պիտի բաժնուէր իրենցմէ :
Բայց երբ, ուժասպառ, արտասուալի,
լռեց Հարրի, դէպի Մաճ դառնալով, ը-
սաւ .

— Մայր, ի՞նչ պիտի մտածէիք այն
մարդուն վրայ որ լքանէր այս ազնիւ աղ-
ջիկը :

— Պիտի մտածէի թէ այդ մարդը վատ
մըն է, պատասխանեց Մաճ, և եթէ իմ
զաւակս ըլլար, կ'ուրանայի, կ'անիծէի
զինքը :

— Նէլ, իմացա՞ր մօրս խօսքերը, յարեց
Հարրի : Ուր որ երթաս, պիտի հետեւիմ
քեզ : Եթէ պնդես մեկնելուդ վրայ, միա-
տեղ պիտի մեկնինք . . .

— Հարրի՛, Հարրի՛, գոչեց Նէլ :

Բայց սրտայուզութիւնը շատ սաստիկ
էր : Տեսան որ նորատի աղջկան շրթունք-
ները կը տոճուենին, և Մաճի թեւերուն
մէջ ինկաւ, որ խնդրեց ճարտարապետէն,
Սիմոնէն և Հարրիէն որ միայնակ թողուն
զինքն անոր հետ :

Գ. Ա. Մ. Խ. Խ. Խ.

Նէլի ԱՄՈՒՍՆՈՒԹԻԻՆԸ

Բաժնուեցան իրարմէ, բայց նախ ո-
րոշուեցաւ որ տանը բնակներն առաջուը-
նէ աւելի զգոյշ պիտի կենային :

Ծերունի Սիլֆաքսի սպառնալիքն այն-
չափ ուղղակի էր որ անհնար էր նկատու-
ղութեան չառնուլ զայն : Կը մտածէին թէ
նախկին սպաշխարողն ահռելի միջոց մը
ձեռք չէ՞ր առնուր ոչնչացնելու համար
բոլոր Ապըրֆոյլը :

Զինեալ պահապաններ դրուեցան ու-
րեմն ամխահանքին զանազան ծայրերը,
գիշեր ցերեկ հսկելու պատուէրով : Ած-
խահանքին օտար ո և է մարդ ձէյմս ըՄ-
գարի առջեւ կը տարուէր, իր ով լինելն
ստուգուելու համար : Գոլ-Սիդիի բոլոր
բնակիչներուն հաղորդեցին այն սպառնա-
լիքներն որոց աւարկայ էր ստորերկրեայ
գաղթականութիւնը : Սիլֆաքս ո և է
զազանի հաղորդակցութիւն չունենալով
ամխահանքին մարդոց հետ, մատնութեան
ո և է երկիւղ չկար : Նէլի տեղեկացու-
ցին ձեռք առնուած բոլոր զգուշական
միջոցներն, և նորատի աղջիկն, առանց
բոլորովին ապահովուելու, քիչ շատ հան-
դարտութիւն գտաւ : Սակայն Հարրիի
որոշումը թէ ուր որ երթայ իրեն պիտի
հետեւէր, ամէն բանէ աւելի նպաստած
էր իրմէ խոստում առնելու թէ ամխահան-
քէն չպիտի փակուի :

Նէլի և Հարրիի ամուսնութեան նա-
խորդ շարթուն, ոչ մէկ միջադէպ վրդո-
վեց նոր Ապըրֆոյլը :

Ուստի և հանքահաններն, առանց շեղելու կազմակերպեալ հսկողութենէն, մուցան այն պանական երկիւղն որ քիչ մնացած էր վտանգի մատնէր շահագործումը:

Սակայն ձէյմս Սդար կը շարունակէր փնտռել տալ ծերունի Սիլֆաքսը: Վրէժ-խընդիր ծերունին յայտարարած լինելով թէ Նէլ բնաւ չպիտի ամուսնանայ Հարրիի հետ, հասկնալի էր թէ ոչ մէկ բանի առաջ պիտի ընկրկէր՝ արգիլելու համար այդ ամուսնութիւնը: Լաւագոյն էր ձեռք ձգել զինքը, խնայելով իր կենաց: Ուստի Նոր-Սպլըրֆոյլի խուզարկութիւնը մանրակրկիտ կերպով վերսկսաւ: Ներքնուղիները պրպտեցին մինչեւ այն վերին յարկերուն մէջ որք յարակից էին Տընտոնալտֆեասլի աւերակներուն, յիրվայն: Իրաւամբ կ'ենթադրէին թէ հնաւուրց դըլեակէն էր որ Սիլֆաքս կը հաղորդակցէր գործի հետ և կը պարէնաւորուէր իր ողորմ կենցաղոյն հարկ եղած նիւթերով, կա՛մ գնելով, կա՛մ գողնալով:

Գալով «Հրեզն կանանց», ձէյմս ըՍդար մտածեց թէ անխահանքին այդ մասին մէջ յառաջ եկող կրիզուի ցոյտ մը կրցած էր բռնկիլ Սիլֆաքսի ձեռամբ եւ այդ երեւոյթն յառաջ բերել: Չէր սխա-

լեր: Սակայն խուզարկութիւնք ի դերեւ ելան:

Ձէյմս Սդար, այդ ամէն վայրկեանի պայքարին մէջ ընդդէմ անըմբռնելի էակի մը, մարդոց ամէնէն դժբաղդն եղաւ՝ առանց սակայն բան մը յայտնի ընելու: Յորչափ կը մօտենար ամուսնութեան օրը, իր երկիւղները կ'առաւելուին, և բացառաբար հաղորդած էր զայնս ծերունի գործավարին, որ իրմէ աւելի մտատանջութեամբ պաշարուեցաւ:

Վերջապէս օրը հասաւ:

Սիլֆաքս կենաց նշան չէր տուած:

Առաւօտուն կանուխ, Գոլ-Սիլբիի բոլոր ժողովուրդն ոտքի վրայ էր:

Նոր-Սպլըրֆոյլի աշխատութիւնք դադրած էին:

Պետք և գործաւորք կ'ուզէին իրենց մեծարանքը մատուցանել ծերունի գործավարին և նորա օրդոյն: Երախտագիտութեան պարտք մըն էր այս առ այն երկու յանդուգն և յարատեւ մարդիկն, որք անխահանքին տուած էին իր առջի բարօրութիւնը:

Հարսանեկան արարողութիւնը պիտի կատարուէր ժամ տասնևմէկին, Ս. Ժիլի մատրան մէջ, որ կ'առուցուած էր Մալգոլմի լճին եզերաց վրայ:

Արուշեալ ժամուն, Հարբի տունէն դուրս ելաւ թեւը մօրը տուած, նէլ եւս Սիմոն Ֆորտի թեւը մտած:

Անոնց կը հետեւէին ծէյնս Ագար, որ առ երեւոյթս անզգած էր՝ այլ սրտին խորէն ամէն բանի կ'սպասէր, և ծէք Քիան, իր հովուական տիկի երածիչտի հագուստին մէջ մեծաշուք:

Յետոյ կուգային հանքին միւս ճարտարապետները, Գոլ Աիդիի երեւելիները, ծերունի դործավարին բարեկամներն, ընկերներն, հանքահանաց այս մեծ ընտանիքին բոլոր անդամներն որք Նոր-Ապրէլ Ֆոյլի յատուկ ժողովուրդը կը կազմէին:

Գուրսը, օգոստոսի այն հրատապ օդերէն մին կը տիրէր, որք մասնաւորապէս տաժանելի են հիւսիսի երկիրներուն մէջ:

Մրրկացեղց օդը կը թափանցէր մինչև ածխահանքին խորութեանց մէջ, ուր բարեխառնութիւնը բարձրացած էր անտոյժ կերպով: Մթնոլորտն անդ կը յազենար ելեկտրականութեամբ, օդածգութեան հորերուն և Մալգոլսի ընդարձակ թիւնելիին մէջէն:

Կարելի էր տեսնել—բաւական հագուստ դէպ երեւոյթ—թէ ծանրաշափն, ի Գոլ-Աիդի, բաւական մեծ քանակութեամբ իջած էր: Այնպէս որ կարելի էր մտքէ ան-

ցունել թէ փոթորիկ մը չպիտի^օ ծագէր այն թերթաքարային գմբեթին ներքե, որ անհուն խոռոչին երկինքը կը կազմէր: Ճշմարտութիւնն այն է սակայն թէ ներսը ոչ ոք կ'զրաղէր դուրսի մթնոլորտային սպառնալիքներով:

Աւելորդ է ըսել թէ իւրաքանչիւրն իր ամէնէն գեղեցիկ զգեստներն հագած էր պարագային յարմար:

Մած կը կրէր հագուստ մը որ հին ժամանակի հագուստները կը յիշեցէր, Հին խաթուններուն պէս ի մը դրած էր գլուխն, և իր ուսերուն վրայ կը տատանէր քառակիներով տեսակ մը մեկնոցակ զոր Ահաբաուհիք կը կրեն բաւական վայելչութեամբ:

Նէլ որոշած էր դէմքին վրայ չըյայտանել մտքին յուզումներն, իր սրտին կ'արգելուր արտփել, իր ներքին անձկութեանց՝ դէմքին վրայ պատկերել, և քաջասիրտ աղջիկն յաջողեցաւ ամէնուն ցոյց տալ հանդարտ և անդոյր դէմք մը:

Պարզութեամբ էր հագուած, և իր հագուստին անչքութիւնը, զոր աւելի սեթեւեթեալ արգու զարդէ նախամեծար համարած էր, աւելցուցած էր իր անձին հըրապոյրը: Իր գլխանուն էր շուք մը, բազմերանգ գոյներով ժապաւէն, որով

ընդհանրապէս կը զարգարուին նորատի
Կալեդոնուհիք :

Սիմոն Յորտ լողիկ մը ունէր զոր սի-
րայօժար պիտի հաղնէր Վալթըր Սեդզի
արժանայարգ Նիքոլ Եարվի գիւղապետն :

Այս ամէն մարդիկն ուղեւորեցան դէ-
պի Ս. Ժիլի մատուռն , որ պերճութեամբ
զարգարուած էր :

Գոլ-Սիդիի երկնից վրայ , ելեկտրա-
կան սիււաւառակներն , աւելի սաստիկ հո-
տանուտներով արծարծեալ , արեգակներու
պէս կը շողային :

Լուսանիւթ մթնոլորտ մը կը ընուր բո-
լոր Նոր-Ապըրֆոյլը :

Մատարան մէջ , ելեկտրական կանթեղ-
ները նոյնչափ սաստիկ լոյսեր կ'արձակե-
ին , և գունաւոր ապակիները կը շողշուր-
շին ճառագայթարձակ :

Պատուելի Ուիլիլմ Լոպսըն երէցն էր
որ պիտի կատարէր արարողութիւնը : Ս.
Ժիլի դրան առջեւ , կ'սպասէր հարսնացե-
լոց գալտեան :

Թափօրը կը մօտենար , մեծվայելչու-
թեամբ դառնալէ յետոյ Մալգոլմի լճին
ափունքէն :

Այդ վայրկենին , երգեհոնը լուեցաւ
և երկու ամուլները , պատուելի Լոպսընի
հետևելով , ուղղուեցան դէպի Ս. Ժիլի
խորանը :

Նախ երկնային օրհնութիւն կարգաց-
ուեցաւ բոլոր ներկայից վրայ . յետոյ Հար-
րի և Նէլ միայնակ մնացին երէցին առջև ,
որ սրբազան գիրքն ի ձեռին բռնած էր :

— Հարրի , հարցուց պատուելի Լոպ-
սըն , կ'ուզէ՞ք կնութեան առնուլ Նէլն , և
կ'երդնո՞ւք յաւիտեան սիրել զնա :

— Կ'երդնում , պատասխանեց երիտա-
սարդն ու ժեղ ձայնով մը :

— Եւ դուք , Նէլ , յարեց երէցը , կ'ու-
զէ՞ք ձեզ ամուսին առնուլ Հարրի Յորտն ,
և . . .

Նորատի աղջիկը ժամանակ չէր ունե-
ցած պատասխանելու , երբ ահագին աղ-
մուկ մը կը թնդար դուրսէն :

Այն ահագին ապաւաժներէ մին , դա-
րատափ կը կազմէր և Մալգոլմի լճին ա-
փանց վրայ կը տիրապետէր մատուռէն
հարիւր քայլ հեռի , յանկարծ բացուած
էր առանց պայթումի , որպէս թէ իւր
անկումն առաջուց պատրաստուած ըլլար :

Անոր ներքեւ , ջուրերը կը գահավի-
ժէին խոր խոռոչի մը մէջ , որուն գոյու-
թիւնն ոչ ոք գիտէր :

Յետոյ յանկարծ , փլած ժայռերուն
մէջէն , երեւցաւ մակոյկ մը , զոր ուժգին
մղում մը նետեց լճին մակերեւոյթը :

Այդ մակոյկին վրայ , ծերունի մը , սե-

ւագոյն փիլոն մը հագած, մազերը խռիւ,
սպիտակ երկայն մօրուքով մը որ կուրծքին
վրայ կ'լյնար, յոտին կանգնած էր:

Ձեռքն ունէր Տէփիի կանթեղ մը, ո-
րուն մէջ կը վառէր սարուածքին մետա-
ղական կտաւէն պաշտպանուած բոց մը:

Միևնոյն ժամանակ, հզօր ձայնով մը,
ծերունին կը գոչէր.

— Կրիզո՛ւն, կրիզո՛ւն, վա՛յ ձեզ, վա՛յ:

Այդ վայրկենին, նախընածխական ջը-
րածնի յայտարար թեթև հոտը ծաւալած
էր մթնօլորտին մէջ:

Եւ եթէ այսպէս կ'ըլլար, պատճառն
այն էր որ ժայռին անկումն անցք բացած
էր մեծ քանակութեամբ պայթուցիկ կա-
զի որ շտեմարանուած էր ահագին խո-
ռօչներու մէջ, որոց բերանը կը խցուէին
թերթաքարերով: Կրիզուի ցայտերը կը
խուսափէին դէպի գմբեթին կամարները,
հինգ վեց մթնօլորտի ճնշման ներքեւ:

Ծերունին գիտէր այս խոռօչներուն
գոյութիւնն, եւ յանկարծակի բացած էր
զայնս, խոռօչին մթնօլորտը պայթուցիկ
ընելու համար:

Սակայն ձէյմս Սդար եւ ուրիշ քանի
մը հոգի, փութանակի բաժնուելով մա-
տուռէն, լճափին վրայ խոյացած էին:

— Գո՛ւրս ելէք ածխահանքէն, գո՛ւրս

ելէք ածխահանքէն, գոչեց ճարտարա-
պետն որ հասկնալով մօտալուտ փտանդն,
եկաւ այդ տազնապագին աղաղակն ար-
ձկել Ս. Ժիլի դուռը:

— Կրիզո՛ւն, կրիզո՛ւն, կը կրկնէր ծե-
րունին, իր մակոյկը մղելով աւելի առաջ
լճին ջուրց վրայ:

Հարրի, իր հետ քաշելով իր խօսեց-
եալն, հայրն և մայրը, վաղվազակի դուրս
ելած էր մատուռէն:

— Գո՛ւրս ելէք ածխահանքէն, գո՛ւրս
ելէք, կը կրկնէր ձէյմս Սդար:

Շատ ուշ էր փախչելու համար: Ծե-
րունի Սիլֆաքսն հոն էր, պատրաստ կա-
տարելու իր վերջին սպառնալիքը, պատ-
րաստ արգիլելու Նէլի և Հարրիի ամուս-
նութիւնը, Գոլ-Սիդիի բոլոր ժողովուրդը
թաղելով ածխահանքին աւերակներուն
ներքեւ:

Իր գլխուն վերեւ կը թռէր ահագին
հարֆանկն, ոյր սպիտակ փետուրները
սեւ կէտերով բժաւորեալ էին:

Բայց յայնժամ, մարդ մը նետուեցաւ
լճին ջուրց մէջ և ուժգնու էեամբ սկսաւ
լողալ դէպի մակոյկը:

Ձէք Ռիանն էր: Կը ջանար հասնիլ յիմա-
րին քով, սա իր քանդիչ գործը կատա-
ելէ առաջ:

Սիլֆաքս տեսաւ անոր դալը : Խորտակեց իր կանթեղին ապսկին , եւ վառ պատրոյգը դուրս քաշելէ յետոյ , օդին մէջ պատուցուց :

Մահու լուսթիւն մը կը տիրապետէր բոլոր զահանդեալ ներկայից վրայ , ձէյմս Ադար , համակերպեալ , կը զարմանար սր անխուսափելի պայթումն արդէն չէր ոչնչացուցած Նոր-Ապրիլոյը :

Սիլֆաքս , դիմագծերը կծկեալ , հասկցաւ թէ կրիզուն , շատ թեթեւ ըլլալով և ստորին խաւերուն մէջ չմնալով , դիզուած էր դէպի կամարին բարձրութիւնները :

Բայց այն ատեն հարֆանկը , Սիլֆաքսի մէկ նշանին վրայ , իր մագիլներուն մէջ առաւ հրձիգ պատրոյգն , որպէս երբեմն կ'ընէր Տոչարդի գուբին ներքնուղիներուն մէջ , և սկսաւ բարձրանալ դէպի բարձր գմբեթը , զոր ծերունին ցոյց կուտար նման ձեռքով :

Իեռ քանի մը երկվայրկեան , և Նոր-Ապրիլոյն ոչնչացած էր . . .

Այդ վայրկենին , նէլ խուսափեցաւ Հարրիի թևերէն :

Հանդարտ և ներշնչեալ միանգամայն , վազեց դէպի լճափունքն , մինչեւ Հուրը ծայրը .

— Հարֆա՛նկ , հարֆա՛նկ , գոչեց պայ-

ծառ ձայնով մը , հո՛ս եկուր , քո՛վս եկուր :

Հաւատարիմ թռչունը պահ մը վարանեցաւ : Բայց յանկարծ , նէլի ձայնը ճանչնալով , թողուց վառ պատրոյգն որ լճին ջուրերուն մէջ ինկաւ , և , լայն շրջանակ մը գծելով , եկաւ կանգնեցաւ նորատի տղջկան ոտից առջեւ :

Թռչունն հասած չէր պայթուցիկ խաւերն որոց մէջ կրիզուն խառնուած էր օդին :

Յայնժամ ահուելի ազաղակ մը որոտաց գմբեթին ներքև : Մերունի Սիլֆաքսի արձակած վերջին ազաղակն էր այդ :

Այն պահուն ուր ձէք Րիան ձեռք պիտի դնէր մակոյկին վրայ , ծերունին , տեսնելով իր վրէժխնդրութեան ի դերեւելնելն , լճին մէջ նետուած էր :

— Ազատեցէ՛ք զինքը , ազատեցէ՛ք , գոչեց նէլ աղեկեզիկ ձայնով մը :

Հարրի իմացաւ : Ինքն ալ ջրին մէջ նետուեցաւ լողալով , եւ ընդհուպ միացաւ ձէք Րիանի եւ քանիցս խորատուկեցաւ :

Բայց իր ջանքերն ապարդիւն մնացին :

Մալգուլի լճին ջուրերն ետ չտուին իրենց որսը : Առ յաւէտ փակուած էին ծերունի Սիլֆաքսի վրայ :

ՆԵՐՈՒՆԻ ՍԻՆԱՍՏՈՒ ԱՌԱՍՊԵԼԸ

Այս դէպքերէն վեց ամիս յետոյ, Հարրիի եւ Նէլի ամուսնութիւնն, որ այնչափ տարօրինակ կերպով ընդհատուած էր, Ս. Թիլի մատրան մէջ կը կատարուէր:

Երբ պատուելի Հոպսըն օրհնեց անոնց միութիւնը, երիտասարդ հարսնացեալը, որք տակաւին սգոյ հագուստներ կը կրէին, առն վերադարձան:

Ճէյմս Սդար եւ Սիմոն Փորտ, յայնմհետէ ամէն մտատանջութենէ զերծ, զուարթութեամբ նախագահեցին ամուսնութենէն յետոյ կատարուած խնջոյքին որ տեւեց մինչեւ յաջորդ օրը:

Այս յիշատակելի պարագայից մէջ էր որ, Ճէք Րիան, իր երաժիշտի զգեստն հագած, օգով ուռեցնելէ յետոյ իր ափիլը, նուագելու, երգելու, և միանգամայն պարելու երբեակ արդիւնքը ձեռք բերաւ, ի ձայն ծափահարութեան բոլոր ներկայից:

Եւ, յաջորդ օրը, ներսի եւ դուրսի աշխատութիւնք վերսկսան ընդ տնօրինութեամբ Ճէյմս Սդար ճարտարագետին:

Հարրի և Նէլ երջանիկ եղան, աւելորդ է ըսել: Այդ երկու սրտերն, որք այնչափ շառուապած էին, իրենց միութեան մէջ գտան

երջանկութիւնն որում արժանի էին:

Գալով Սիմոն Փորտի, Նոր-Ապրիլոյի պատուակալ գործավարը միտքը դրած էր դեռ բաւական ատեն ապրիլ տօնելու համար իր եւ բարի Մածի ամուսնութեան յիսնամեակը:

— Եւ ադկից յետոյ, ինչո՞ւ համար, ոչ ուրիշ մըն ալ, կ'ըսէր Ճէք Րիան. երկու յիսնամեակ, ձեզ համար չափազանց չէ, պարոն Սիմոն:

— Իրաւունք ունիս, տղաս, պատասխանեց հանդարտութեամբ ծերունի գործավարը: Ի՞նչ կայ զարմանալու ո՞ւր, Նոր-Ապրիլոյի կլիմային ներքեւ, այս միջավայրին մէջ որ չճանչնար դուրսի անբարեխառնութիւնները, մարդ երկու հարիւր տարի ապրի:

Փոլ-Սիդիի բնակիչք ներկայ պիտի գտնուէլ՞ն այդ երկրորդ հանդիսին: Ապագայն պիտի ըսէ զայդ:

Ամէն պարագայի մէջ, թուչուն մը, որ արտասովոր երկարեկացութեան մը հասնիլ կը թուէր, ծերունի Սիլֆաքսի հարֆանկն էր:

Միշտ կը պաշտէր խաւարամած ածխահանքին մէջ, Բայց, ծերունիին մահէն յետոյ, թէև Նէլ ջանացած էր իր քով պահել զայն, քանի մը օր յետոյ փախած գացած էր:

Թող որ մարդոց ընկերութիւնն իր նախկին տիրոջ նման հաճելի չէր իրեն, կը թուէր նաև թէ անսակ մը մասնաւոր ոխ պահած էր Հարրիի, և թէ այդ նախանձոտ թռչունը ճանչցած էր և կ'ատէր ի նա նէլի առաջին յափշտակիչն, որուն ձեռքէն ի զուր ազատել ուզած էր նորատի ազջիկն անդունդին վերելքին մէջ:

Այդ ժամանակէն ի վեր, նէլ երկար անջրպետներով կը տեսնէր զնա, Մալգոլմի լճին վերեւ թևատարած:

Իր նախկին բարեկամուհի^ոն կ'ուզէր տեսնել, իր թափանցկոտ նայուածքը կ'ուզէր խորատուզել մինչեւ յատակն այն անդունդին որ կուլ տուած էր Սիլֆաքսը:

Երկու ենթադրութիւններն ալ ընդունուեցան, որովհետեւ հարֆանկն առասպելական բան մը եղաւ, և ձէք Ռիանի ներշնչեց մէկէ աւելի քմահաճ պատմութիւններ:

Այդ զուարթ ընկերոջ շնորհիւն է որ տակաւին սկովտիական տքնութեանց մէջ կ'երգեն ծերունի Սիլֆաքսի, Սպլըֆոյլի ամխահանքերուն նախկին ապաշխարողին. թռչնոյն առասպելը:





Am

W.D.

504

2514

2013

